

ՀԻՇՁԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

# ՀԻՇՁԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ





**ARAM KOSYAN**

**THE HITTITE KINGDOM**  
**(Political history)**

**YEREVAN - 2022**

**ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ**

**ԽԵԹԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**  
**(քաղաքական պատմություն)**

**ԵՐԵՎԱՆ - 2022**

ՀՏԴ 94(394)

ԳՄԴ 63.3(0)31

Ք 845

ՔՈՍՅԱՆ ԱՐԱՄ

Ք 845 ԽԵԹԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (քաղաքական պատմություն) / Ա. Քոսյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 2022.- 252 էջ:

Առաջարկվող աշխատությունը ներկայացնում է հնագույն Փոքր Ասիայում մ.թ.ա. XVII-XIII դարերում գոյություն ունեցած Խեթական պետության ռազմաքաղաքական պատմությունը, երբ երբ առաջավորասիական ճգնաժամի համատեքստում այն դուրս եկավ պատմության ասպարեզից՝ տրոհվելով իր բաղկացուցիչ մասերի:

Աշխատությունը նախատեսված է հին Առաջավոր Ասիայի, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհի վաղ պետականությունների պատմության խնդիրներով զբաղվող մասնագետների համար: Այն կարող է օգտագործվել որպես ուսումնական ձեռնարկ բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ համաշխարհային պատմություն առարկայի դասընթացի համար:

ՀՏԴ 94(394)

ԳՄԴ 63.3(0)31

ISBN 978-9939-9012-5-1

DOI: 10.54503/978-9939-9012-5-1

© ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 2022

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.....	8
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	10
ԳԼՈՒԽ 1	
ՀԻՆ ՓՈՔՐ ԱՍԻՍՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ .....	32
Գրավոր աղբյուրներ .....	33
Հնագիտական աղբյուրներ.....	51
ԳԼՈՒԽ 2	
ՓՈՔՐ ԱՍԻԱՆ ՔԱՂԱՔ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ .....	64
Աշշուրի առևտրական գաղութները.....	65
Փոքր Ասիայի քաղաք-պետությունները.....	68
Կուսսարի արքայատոհմը .....	73
ԳԼՈՒԽ 3	
ՀԻՆ ԽԵԹԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.....	79
ԽԱԹԹՈՒՄԻԼԻՄ I.....	83
Խաթթուսիլիսը Սիրիայում .....	85
Խաթթուսիլիսը Փոքր Ասիայի արևմուտքում և Խաթթիի բնօրրանում.....	86
Կրկին դեպի Սիրիա .....	87
Կուսսարի ժողովը.....	90
ՄՈՒՐՄԻԼԻՄ I.....	93
Մուրսիլիսի սիրիական արշավանքը.....	94
Բաբելոնի նվաճումը.....	95
ԽԱՌՆԱԿ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ. ՏԵԼԵՊԻՆՈՒՄ .....	98
Տելեպինուսի նախորդները .....	98
Տելեպինուսի կառավարումը.....	101
Խաթթին Տելեպինուսի հաջորդների օրոք .....	105
ԳԼՈՒԽ 4	
ՆՈՐ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.....	110
ԹՈՒՂԻՍԱԼԻՅԱՍ II .....	110
Թուղիսալիյաս II-ի գահակալումը.....	110
Խեթական պետությունը Թուղիսալիյաս II-ի գահակալման նախօրեին.....	112

Թուղխալիյասը արևմուտքում և հյուսիսում .....	115
Թուղխալիյասը արևելքում .....	118
Թուղխալիյասը ընդդեմ Միտտանիի .....	120
Վերաբնակեցման քաղաքականությունը .....	122
ԱՌՆՈՒՎԱՆԴԱՍ I .....	124
Արևմտյան Փոքր Ասիան. Մադրուվատտաս .....	125
Կասկական սպառնալիքը. Ձեռնարկումներ անդրտավրոպյան գոտում .....	128
Տագնապալից Արևելքը. Պախիսուվայի ապստամբությունը ..	130
ԹՈՒԴԻՆԱԼԻՅԱՍ III .....	133
“Շրջանաձև ներխուժումը”. Խաթթին փլատակների տակ .....	133
Թուղխալիյաս III-ը և Հայասան .....	138
ՍՈՒՊՊԻԼՈՒԼԻՈՒՄԱՍ I .....	140
Մուպալիլուլիումասի գահակալումը .....	141
Կախյալ երկրների համակարգի ձևավորումը .....	142
Մուպալիլուլիումասը արևելքում .....	149
Մուպալիլուլիումասը և Միտտանիին. Եգիպտական միջադեպը .....	150
ՄՈՒՐՄԻԼԻՍ II .....	157
Տերության վերականգնումը .....	157
Կասկական խնդիրը .....	158
Արևմտյան Փոքր Ասիա. Արցալա .....	160
Մուրսիլիս II-ը և Հայասան .....	163
Մուրսիլիսն ընդդեմ Եգիպտոսի և Ասորեստանի .....	166
Փոքրասիական տարածաշրջանը. դինաստիական խնդիրներ .....	167
ՄՈՒՎԱՏԱԼԼԻՍ II .....	171
Արևմտյան Փոքր Ասիան. Պիյամարադուս .....	171
Խեթերը և Եգիպտոսը. Քադեշի ճակատամարտը .....	172
ՄՈՒՐՄԻԼԻՍ III (ՈՒՐԻՆԻ-ԹԵՇՈՒԲ) .....	177
ԽԱԹԹՈՒՄԻԼԻՍ III .....	180
Կառավարման սկիզբը .....	180

Թարխունտասսայի և Իսուվայի քույր-թագավորությունները.	
Դինաստիական ամուսնությունները .....	182
"Հավերժական բարեկամության" պայմանագիրը.....	185
Խաթթուսիլիսը Արևմտյան Փոքր Ասիայում .....	188
ԹՈՒԴԻՄԱԼԻՅԱՍ IV .....	189
Թուղխալիյասի գահակալումը .....	189
Ներդինաստիական խնդիրներ.....	191
Խաթթին և Ասորեստանը. Նիխրիյայի ճակատամարտը .....	192
Թուղխալիյասը արևմուտքում. "Տրոյական պատերազմը" ...	196
Թարխունտասսայի խնդիրը. Կուրունտայի ապստամբությունը .....	199
Իրավիճակը արևելքում .....	201
ՍՈՒՊՊԻԼՈՒԼԻՈՒՄԱՍ II .....	204
Մուպպիլուլիումասի արշավանքները .....	204
Խաթթիի անկումը .....	206
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....	215
ABBREVIATIONS .....	240
ԱՆՎԱՆԱՑԱՆԿԵՐ .....	242



## ԱՌԱՋԱԲԱՆ

Մարդկային հասարակության պատմության համապատկերում Առաջավոր Ասիան անվիճելի առաջատարն է, որտեղ դեռևս “Նեոլիթյան հեղափոխության” ընթացքում Միջագետքում և Եգիպտոսում ձևավորվեցին առաջին պետականությունները: Իսկ արդեն մ.թ.ա. III-II հազարամյակներում սկսվեց պետականությունների “շքերթը” Փոքր Ասիայում, սիրիա-պաղեստինյան տարածաշրջանում և Միջագետքին հյուսիսից հարող Հայկական լեռնաշխարհի հարավում ու արևմուտքում, որի արդյունքում Առաջավոր Ասիան վերածվեց քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային առումներով զարգացած տարածաշրջանի: Առաջավորասիական քաղաքակրթության անբաժանելի մասն է Փոքր Ասիայում մ.թ.ա. XVIII-XVII դարերում ձևավորված Խեթական պետությունը, որը փոքրասիական մշակութային աշխարհի մի քանի հազար տարի տևած բնականոն զարգացումների արդյունքն էր:

Խեթական պետությունը պատմության մեջ առաջինն էր, որին հաջողվեց մեկ քաղաքական միավորի մեջ ներառել Փոքր Ասիա թերակղզին և պահպանել շուրջ 500 տարի: Այն ձևավորվեց աշխարհագրական-ռելյեֆային և կլիմայական առումներով ոչ հոմոգեն, բազմաէթնիկ և բազմամշակույթ միջավայրում, որտեղ միասնական պետականությունը պահպանելուց գատ, անհրաժեշտ էր նաև ինտեգրման որոշակի մակարդակ ապահովելու այստեղ ապրող և զարգացման ամենատարբեր աստիճանների վրա գտնվող էթնիկ խմբերին:

Առաջարկվող աշխատության մեջ ներկայացվում է Խեթական պետության ռազմաքաղաքական պատմությունը իր սկզբնավորման պահից մինչև մ.թ.ա. XIII դարի վերջերը, երբ առաջավորասիական ճգնաժամի համատեքստում այն դուրս եկավ պատմության ասպարեզից՝ տրոհվելով իր բաղկացուցիչ մասերի:

Աշխատության մեջ հանգամանալի ներկայացվում են Խեթական պետության պատմության գրավոր աղբյուրները, ինչպես նաև ընդհանուր գծերով հնագույն Փոքր Ասիայի հնագիտական պատմությունը սկսած կոմպլեքս հասարակության ձևավորման պահից:

Խեթական քաղաքակրթությունը կարևորագույն նշանակություն ունի Փոքր Ասիայի հարևան Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. II հազարամյակի արևմտյան շրջաններում գոյություն ունեցած քաղաքական միավորների (Հայասա, Ազգի, Իսուվա և այլն) պատմության ուսումնասիրման համար: Գտնվելով խեթերի անմիջական հարևանությամբ, վերջիններս իրենց վրա կրել են խեթական քաղաքակրթության նշանակալից ազդեցությունը: Դրա վկայությունը հայոց լեզվում խեթա-լուվիական լեզուներից կատարված զգալի քանակությամբ փոխառություններն են: Ուսումնասիրությունների ընթացքում պարզվել է նաև, որ Հայկական լեռնաշխարհի արևմուտքում ապրել է խեթա-լուվիական որոշ բնակչություն, որը հետագայում ձուլվել է ձևավորվող հայ ժողովրդի մեջ, նրան թողնելով իր լեզվի և հոգևոր մշակույթի շատ տարրեր:

Մ.թ.ա. XV-XIII դարերի խեթական սեպագիր տեքստերը հանդիսանում են Լեռնաշխարհի արևմուտքի պատմության միակ գրավոր աղբյուրները, որոնք անգնահատելի սկզբնաղբյուրներ են: Ոչ հեռավոր ապագայում նախատեսվում է իրականացնել փոքրասիական-հայկական փոխառնչությունների համալիր ուսումնասիրություն:

Նկատի առնելով այն հանգամանքը, որ խեթական քաղաքակրթության ուսումնասիրության շուրջ մեկդարյա պատմության ընթացքում գրվել են հազարավոր աշխատություններ ամենատարբեր լեզուներով, ինչպես նաև աշխատությունը մեծաքանակ հղումներով չձանրաբեռնելու նպատակով, հնարավորության սահմաններում ներկայացվում է միայն մասնագիտական հրատարակությունների հիմնական մասը: Աշխատությանը կցվում են խեթագիտական ուսումնասիրությունների ցանկը և անձնանունների ու տեղանունների անվանացանկեր և քարտեզներ<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում իմ գործընկեր և բարեկամ, պ.գ.դ. Երվանդ Գրեկյանին աշխատությանը կցված հրաշալի քարտեզների համար: Մեծապես շնորհակալ եմ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի փոխտնօրեն, պ.գ.թ. Գոռ Մարգարյանին և Հին Արևելքի բաժնի աշխատակից Մոնիկա Միրզոյանին անվանացանկերը կազմելու աշխատանքն իրականացնելու համար:

## ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Փոքր Ասիա թերակղզին ընկած է Ասիա աշխարհամասի արևմուտքում՝ Սև, Միջերկրական, Էգեյան և Մարմարա ծովերի միջև: Այն մի ընդարձակ բարձրավանդակ է, որը կազմում է Հիմալայան լեռնաշղթայից Իրանական սարահարթով և Հայկական բարձրավանդակով եկող երկրաբանական բարձրադիր լեռնազանգվածի շարունակությունը դեպի արևմուտք: Թերակղզու կենտրոնական՝ ցամաքային մասը Սև և Միջերկրական ծովերից անջատված է լեռնաշղթաներով, որոնց միջև պարփակված է բարձրադիր սարահարթը՝ միջին հաշվով ծովի մակերևույթից շուրջ 1000 մետր բարձրությամբ: Հյուսիս-արևելքում թերակղզին եզերում են Պոնտական, հարավ-արևելքում՝ Տավրոսի, Անտիտավրոսի և Ամանոսի լեռները: Հյուսիսային և հարավային առափնյա շերտը բարձրադիր է, իսկ արևմտյան ծովափը՝ խիստ կտրտված: Դա հատկապես վառ է արտահայտված թերակղզու միջերկրածովյան առափնյա գոտում: Այստեղ Տավրոսի լեռնաշղթան կարծես վեր է բարձրանում ծովից, բացառությամբ երեք հատվածներից՝ Դաշտային Կիլիկիայի, Անթալիայի և Իսքենդերունի շրջանների: Դեպի Էգեյան ծով սարահարթի բարձրությունը աստիճանաբար նվազում է: Արևմտյան հատվածը իրենից ներկայացնում է արևելքից արևմուտք ուղղված մի քանի գետահովիտներով կտրտված շրջան: Արևելքում փոքրասիական սարահարթը հասնում է մինչև վերինեփրատյան գոտի՝ գետի մեծ կեռմանը և դրանից հարավ մինչև Հայկական Տավրոս:

Փոքր Ասիայի վաղ հնագիտական մշակույթները ստեղծող բնակչությունը կենտրոնացած էր վերոհիշյալ գետահովիտներում, որոնք, շնորհիվ ալյուվիալ (ջրաբերովի) նստվածքների, լիուլի ապահովում էին բնակչության երկրագործական ներուժի կենսագործունեությունը և շարունակական վերելքը:

Փոքր Ասիայի երկրաբանական կառուցվածքի առանձնահատկություններից է խիստ ընդգծված սեյսմիկ ակտիվությունը: Թերակղզին միայնց հետ կապում է երկու ակտիվ սեյսմիկ գոտիներ՝ Հայկական լեռնաշխարհը և Բալկանյան թերակղզին: Այստեղ հնա-

գույն ժամանակներից մինչև օրս վկայված են տարբեր ուժգնության երկրաշարժեր, որոնք իրենց որոշակի ազդեցությունն են ունեցել հասարակության կենսագործունեության վրա: Հատկանշական է, որ երկրաշարժերի հիմնական մասը վկայված է խիտ բնակեցված հովիտներում և հարթավայրերում, որոնք նախքան Խեթական պետության կազմավորումը և դրանից հետո էլ հանդիսանում էին բնակչության խոշոր կուտակումներ վայրեր: Հաշվարկները ցույց են տալիս, որ մ.թ. XI դարից մինչև օրս Փոքր Ասիայի արևմուտքում և Մարմարա ծովի առափնյա գոտում տեղի են ունեցել մեծ ուժգնության 350 ցնցումներ, թերակղզու հյուսիսում մ.թ. II դարից սկսած՝ 200 ցնցումներ, կենտրոնական շրջաններում մ.թ. 1205թ. սկսած՝ 140 ցնցում, նույնքան էլ հարավ-արևելքում՝ սկսած մ.թ. 110թ. (բոլորը Ռիխտերի սանդղակով 7 մագնիտուդ և ավելի ուժգնության):<sup>2</sup>

### **Կլիմա, ռելյեֆ և բնական ռեսուրսներ**

Բնակլիմայական առումով ներկայիս Փոքր Ասիան զգալիորեն տարբերվում է մ.թ.ա. III-I հազ. տիրոջ իրավիճակից: Փոքր Ասիան այս առումով կարելի է տարանջատել չորս կլիմայական գոտիների:<sup>3</sup>

Ա. *Սևծովյան ծովեզերք* – այս շրջանի մի շարք հատվածներում տարեկան տեղումները գերազանցում են 1000 մմ, գրեթե հավասարապես բաշխվելով ողջ տարվա ընթացքում: Ամռանը շատ շոգ չէ, ձմեռը ոչ ցուրտ (ամռան միջին ջերմաստիճանը՝ շուրջ 25, ձմռանը՝ 10):

Բ. *Արևմտյան և հարավային ծովեզերք* – միջերկրածովյան կլիմայական գոտի: Տարեկան տեղումները 1000 մմ և ավելի, սակայն ամռան ամիսներին տեղումները գրեթե բացակայում են: Ամառը շոգ է (27-33 աստիճան):

Գ. *Մարմարա ծովի շրջան* – նման է նախորդ երկու շրջաններին: տարեկան տեղումները կազմում են շուրջ 800 մմ և առկա են ողջ տարվա ընթացքում, սակայն ամռանը համեմատաբար չորային է (ամռան միջին ջերմաստիճանը՝ շուրջ 22, ձմռանը՝ 6):

---

<sup>2</sup> Yakar 2000: 5.

<sup>3</sup> Stu Steinhauer 1970; Van Zeist and Bottema 1991.

Գ. Կենտրոնական Փոքր Ասիա – թերակղզու կենտրոնական մասում՝ Թուրք լճի շրջանում տարեկան տեղումները կազմում են 300-400 մմ, իսկ դրանից դեպի հյուսիս, հարավ և արևելք՝ 400-500 մմ (ամռան միջին ջերմաստիճանը՝ շուրջ 22, ձմռանը՝ - 3):

Այսպիսով, թերակղզու ծովեզերքն ընկած է մերձարևադարձային, իսկ կենտրոնական սարահարթը՝ գերազանցապես ցամաքային կլիմայական գոտում: Լեռնային ռելյեֆը ստեղծում է կլիմայական շրջանների մեծ բազմազանություն: Չորս ծովերի միջև գտնվող և երեք կողմից լեռնաշղթաներով շրջապատված այս տարածքը, ի տարբերություն Էգեյան, Միջերկրածովյան և Սևծովյան ծովեզերքի մերձարևադարձային գոտու և որոշ առանձին շրջանների, ռելյեֆային առումով հումոզեն չէ: Տափաստանային կլիմայական գոտուն բնորոշ սարահարթը տեղ-տեղ ներկայանում է որպես ցածրադիր բերրի գետահովիտներով և իջվածքներով կտրտված լանդշաֆտ, ինչը հասկապես նկատելի է հյուսիսում և արևելքում:<sup>4</sup> Մասնավորապես, այդպիսին են Արևելյան Փոքր Ասիայում ընկած Մալաթիայի և Էլբիստանի հարթավայրերը, որտեղ մեղմ և մթնոլորտային տեղումների շնորհիվ ջրով ապահովված միջավայրը՝ սիրիա-միջագետքյան քաղաքակրթական կենտրոնների հետ կապող առևտրական ուղիների մերձավորության պայմաններում հնարավորություն է ընձեռում նստակյաց երկրագործական տնտեսավարման ինտենսիվ զարգացման և հարևան տարածաշրջանների հետ ակտիվ առևտրատնտեսական փոխհարաբերությունների ծավալման համար:

Փոքր Ասիայի վերը նշված ռելյեֆային-կլիմայական գոտիների առկայությամբ պայմանավորված, տարբեր է նաև թերակղզու բուսական աշխարհը:

Վաղ հողոցենում և նույնիսկ բրոնզեդարում Կենտրոնական Փոքր Ասիայի միջավայրը ամենևին նման չէր այս տարածաշրջանում ներկայումս տիրող իրավիճակին:<sup>5</sup> Հնակլիմայաբանական հետազոտությունները ցույց են տալիս, որ երկրագնդի վերջին մեծ

---

<sup>4</sup> Düring 2011: 8.

<sup>5</sup> Rossignol-Strick 1993; 1995.

սառցակալումից հետո Փոքր Ասիայում գրանցված են կլիմայական իրավիճակների մի քանի հաջորդական խոշոր փուլեր, որոնք չէին կարող իրենց ազդեցությունը չթողնել այստեղի վաղ հասարակությունների զարգացման վրա: Դրանց շարքում առանձնահատուկ տեղ ունի այսպես կոչված “Վաղ հոլոցենի կլիմայական օպտիմումը” (մոտավորապես մ.թ.ա. 8000-5000 թթ.), որը բնութագրվում է որպես խոնավ և տաք ժամանակաշրջան, շատ ավելի բարեխառն քան ներկայումս է, ինչը պետք է նպաստեր վաղ երկրագործական տնտեսավարման ձևավորմանը և վերելքին:

Առատ բուսականությունը, երկրագործության համար բավական նպաստավոր պայմանները և բնական ռեսուրսների առկայությունը (առաջին հերթին տարբեր մետաղների հարուստ հանքավայրերը) Փոքր Ասիան վերածում էին բնակության և վերարտադրողական գործունեության համար նպաստավոր տարածքի: Ասվածի լավագույն ապացույցը «Նեոլիթյան հեղափոխության» ընթացքում և դրանից հետո հնագիտորեն արձանագրված բազմաթիվ հնավայրերն են, որոնց շարքում են հանրահայտ *Չայթալիյոյուք* անվանումը ստացած նեոլիթյան բնակավայրերի համալիրը (մ.թ.ա. VIII-VI հազ.) Կոնյայի հարթավայրում (հարավկենտրոնական Փոքր Ասիա), *Բեյ-ջեսուլթանը*, *Հաջիլարը* և այլն:

Կենտրոնական սարահարթը չնայած ընդհանուր առմամբ ընկած է ցամաքային կլիմայական գոտում (ցուրտ ձմեռ և շոգ ամառ), համեմատաբար լավ է ապահովված ջրային ռեսուրսներով: Սակայն վերջիններս անհավասարաչափ են տեղաբաշխված: Խոշոր, համեմատաբար ջրառատ գետերն ընկած են Կիլիկյան ծովափին և արևմուտքում: Կենտրոնական սարահարթից են սկիզբ առնում և իրենց ստորին հոսանքներում ջրառատ գետերի են վերածվում Հալիսը (Քըզըլըմաք, իսթ. Մարասսանտիյա), Կելկիտը (հայկ. Գայլ գետ), Ջեյհանը, Գյոքսունը, Միանը, Սաքարյան (անտիկ աղբյուրների Սանգարիոս) և Բյոյուք Մենդերեսը (անտիկ աղբյուրների Մեանդրոս): Խոշոր քաղցրահամ լճեր, որոնք ի վիճակի կլինեին ջրով ապահովելու երկրագործության համար պիտանի հարակից տարածքները,

չկան, փոխարենը առկա են մի շարք աղի լճեր, որոնցից ամենախոշորը Թուզն է՝ Հալիսից արևմուտք:

Փոքր Ասիան արտակարգ հարուստ է ամենատարբեր օգտակար հանածոներով, առաջին հերթին՝ մետաղներով:<sup>6</sup> Ներկայումս հայտնի պղնձի, երկաթի, արծաթի և ոսկու մեծաքանակ հանքավայրերի մի մասը շահագործվում էր դեռևս հնագույն ժամանակներից: Դրանց շարքում հատկապես աչքի են ընկնում Դիվրիդիի (միջն. հայկական Տերիկ) և Պոնտական լեռների շրջանում գտնվող բազմաթիվ երկաթահանքերը: Հարուստ պղնձահանքեր կան Փոքր Ասիայի արևմուտքում, Տրապիզոնի շրջանում, հյուսիսկենտրոնական Փոքր Ասիայում, Բոլկարդաղի (Կիլիկյան Տավրոս) և Վերին Եփրատի շրջանում (Էրզանի մադեն): Ոսկու և արծաթի նշանակալից պաշարներ կան նաև պղնձահանքերի շրջանում: Աղի խաշոր կուտակումներ են առկա թերակղզու կենտրոնական մասում՝ Թուզ լճի շրջանում և դրանից հյուսիս:<sup>7</sup>

Հարուստ մետաղահանքերի շահագործման վկայությունը տեղական ծագման մետաղյա իրերի և զենքի մեծ քանակությունն է, որ հայտնաբերվել է Փոքր Ասիայի բազմաթիվ հնավայրերում պղնձե-դարյան փուլից ի վեր:

### **Փոքրասիական տարածաշրջանի զարգացման առանձնահատկությունները**

Հին փոքրասիական քաղաքակրթությունների զարգացման պատմության ընթացքում կարելի է նշմարել երկու կարևոր առանձնահատկություններ, որոնք իրենց կնիքն են դրել ոչ միայն հնագույն փուլերի, այլև այս տարածաշրջանի հետագա ողջ պատմության վրա:

Առաջինը թերակղզու աշխարհագրական դիրքն է մի կողմից սիրիա-միջագետքյան տարածաշրջանի և Հայկական լեռնաշխարհի,

---

<sup>6</sup> Փոքր Ասիայի օգտակար հանածոների հանքավայրերի մասին տես Karajian 1920; De Jesus 1980; Yakar 1984; 1985 (նաև մետաղամշակության մասին); Yener *et al.* 1994 և այլն:

<sup>7</sup> Փոքր Ասիայում մետաղների արդյունահանման և մետաղագործության համալիր նկարագիրը տես Yener 2000:

մյուս կողմից Բալկանյան թերակղզու և Կենտրոնական Եվրոպայի միջև, ինչպես նաև զանազան օգտակար հանածոների առկայությունը, դրանց արդյունահանումը և վերամշակումը, որը դեռևս նեոլիթյան դարաշրջանից պայմանավորել է այստեղ բնակվող ժողովուրդների բազմաթիվ կազմը: Արդեն նեոլիթյան փուլից ընթացող և արդեն պետականությունների գոյության շրջանում հնագիտորեն վկայված զանազան տեղաշարժային ալիքները չէին կարող շրջանցել թերակղզին: Փոքր Ասիան բնական կամուրջ է, Առաջավոր Ասիայի մյուս տարածաշրջանները Եվրոպային կապող միակ ցամաքային ճանապարհը (եթե հաշվի չառնենք շատ ավելի երկար ուղին՝ Կովկասյան լեռնանցքները), որի հետևանքով երկկողմանի երթևեկությունը պարբերաբար թարմացնում էր թերակղզու բնակչության էթնոլեզվական պատկերը: Արդյունքում Փոքր Ասիայում գրավոր աղբյուրներով և հնագիտորեն վկայված են մի շարք լեզվաբնօրինակների կրողներ, որոնք շարունակում էին գոյատևել նաև Խեթական պետության գոյության շրջանում: Յուրաքանչյուր նոր տեղաշարժային ալիք կամ ամբողջությամբ կամ էլ մասնակիորեն նստադրվում էր այստեղ՝ դրանից բխող դրական և բացասական հետևանքներով հանդերձ: Ինչպես հնագիտորեն, այնպես էլ գրավոր աղբյուրներով Փոքր Ասիայում միմյանց հանդիպում էին և հարաբերակցվում ամենատարբեր էթնոմշակութային հանրություններ, ինչը չէր կարող չնպաստել նրանց փոխհարստացմանը և նոր մշակութային իրողությունների ձևավորմանը:

Փոքրասիական քաղաքակրթական աշխարհի հաջորդ կարևոր առանձնահատկությունը կենտրոնական սարահարթի քաղաքական կազմակերպության (այն է՝ պետության) շարունակական ծավալումն էր դեպի մերձարևադարձային կլիմայական գոտում գտնվող և անհամեմատ ավելի նպաստավոր պայմաններով աչքի ընկնող ծովեզրք, ինչպես նաև Տավրոսից հարավ ընկած սիրիական տարածաշրջան: Սա հատկապես լավ է վկայված սկսած խեթական Հին թագավորության գոյության շրջանից: Բազմաթիվ էին խեթերի փորձերը ամուրի հաստատվելու Եգեյան ծովեզրքում և Դաշտային Կիլիկիայում, ինչպես նաև Հյուսիսային Սիրիայում:



Խեթական պետության ծավալումը դեպի նշված տարածաշրջաններ պայմանավորված էր հավելյալ նյութական ռեսուրսների ձեռքբերման անհրաժեշտությամբ, այդ թվում մարդկային, ինչը կանոնավոր կերպով հիշատակվում է արշավանքները նկարագրող տարեգրություններում և այլ տեքստերում: Կենտրոնական Փոքր Ասիայում և մասնավորապես դրա կենտրոնական մասում գտնվող մայրաքաղաք Խաթթուսասի շրջանում ժամանակ առ ժամանակ գրավոր աղբյուրներով վկայված են երաշտի և համաճարակների փուլեր, որոնց աղետալի հետևանքները լրացուցիչ կենսամիջոցներ և մարդկային նոր ռեսուրսներ էին պահանջում: Ոչ պակաս կարևոր նշանակություն ունեին նաև Տավրոսի լեռնաշղթայից հարավ ընկած Միրիայի և Միջագետքի քաղաքային կենտրոններով անցնող ժամանակի աշխույժ առևտրական ուղիների նկատմամբ վերահսկողության հաստատման փորձերը:

Խեթական պետականության կարևոր առանձնահատկությունը նրա դիրքն էր թերակղզում: Խաթթին ցամաքային պետություն էր, որի բնօրրանը և դրան անմիջականորեն հարող շրջանները հեռու էին ծովեզերքից: Ծովը խեթերի համար դեր ուներ այնքանով, որքանով որ տարբեր ժամանակներում նրանց տիրապետությունը տարածվում էր ծովափնյա շրջաններում գոյություն ունեցող քաղաքական միավորների վրա (Կիցցուվատնա, Արցավա, Սեխա գետի երկիր և այլն):

Վերջին առանձնահատկությունը բնական սահմանների գրեթե իսպառ բացակայությունն էր: Հալիս գետը, որը եզերում էր խեթերի բնօրրանը, ոչ մի դեպքում չի կարելի բնական սահման համարել, քանի որ այն հեշտ անցանելի է: Նույնը կարելի է ասել արևմտյան, արևելյան, հյուսիսային և հարավային սահմանների մասին, որտեղ Խաթթին հարևաններից բաժանող լեռնաշղթաներ չկային: Այն հեշտ խոցելի էր բոլոր կողմերից, ինչը մեկ անգամ չէ որ նրա պատմության ընթացքում տեղի էր ունենում, հաճախ հանգեցնելով ճգնաժամային իրավիճակների:

## **Փոքր Ասիայի բնակչությունը**

Փոքր Ասիա թերակղզին ժողովուրդների մի մեծ խառնարան էր, որտեղ դեռևս հնագույն ժամանակներից ապրել են ամենատարբեր լեզվաբնուսանիքների պատկանող մեծաքանակ ժողովուրդներ: Խեթական պետության կազմավորմանը անմիջականորեն նախորդող շրջանի բնակչության էթնիկական պատկանելության վերաբերյալ գրավոր աղբյուրները սահմանափակվում են Աշշուրի առևտրական գաղութների գործունեությունն արտացոլող աղյուսակներում վկայված հատուկ անուններով և որոշ քանակությամբ հասարակ բառերով:<sup>8</sup> Այդ լեզուներն էին՝ խաթերենը, հնդեվրոպական խեթերենը և լուվիերենը, խուրրերենը:

Խեթական պետականության և քաղաքակրթության ակունքներում կանգնած խեթերը և խեթա-լուվիական լեզվախումբը ներկայացնող մյուս ժողովուրդները՝ լուվիացիներ, պալայցիներ, լիկիացիներ, լիդիացիներ, կարիացիներ և այլք (վերջին երեքը՝ մ.թ.ա. I հազարամյակում) զբաղեցնում էին թերակղզու մեծ մասը: Սրանք լայնորեն տարածված էին Փոքր Ասիայի կենտրոնում, արևելքում, հարավում և արևմուտքում արդեն Հին թագավորության կազմավորման շրջանում: Հյուսիսում խեթա-լուվիական տարրը գրեթե չի նշմարվում:<sup>9</sup> Բացառություն է կազմում, թերևս, թերակղզու հյուսիս-արևմուտքը՝ Տրոադան, որտեղ, ըստ "Տրոյական պատերազմին" առնչվող լեզվական նյութերի, առկա է խեթա-լուվիական տարրը, ընդ որում այլ լեզուների կրողների հետ միասին: Մերձսևծովյան առափնյա գոտում, ընդհուպ մինչև դրա հարավային լեռնային շրջանը ապրում էին ոչ-հնդեվրոպական էթնիկ խմբեր (մասնավորապես կասկեր):

Փոքր Ասիայում խեթա-լուվիական ժողովուրդների մուտք գործելու ժամանակի հարցում վերջնականի հավակնող տեսակետ առայժմ գոյություն չունի: Մասնագետների մեծ մասի կարծիքով, խեթերը, լուվիացիները և խեթա-լուվիական մյուս լեզուների կրողները

---

<sup>8</sup> Dercksen 2002; Garelli 1963: 127-168; Goedegebuure 2008 և այլն.

<sup>9</sup> Ску Гиндин 1990:

Փոքր Ասիայում տեղաբնիկներ չէին և հայտնվել էին այստեղ մ.թ.ա. III հազարամյակի ընթացքում Եվրոպայից՝ սևծովյան նեղուցներով, հնարավոր է նաև կովկասյան լեռնանցքներով՝ բրոնզեդարյան փուլի էթնիկական խոշոր տեղաշարժերից մեկի ժամանակ:<sup>10</sup>

Հակառակ գերիշխող կարծիքի, հայտնի հնագետ Ք.Ռենֆրյուն գտնում է, որ խեթա-լուվիական ցեղերը առկա էին Փոքր Ասիայում արդեն նեոլիթյան փուլից, այն է՝ մոտավորապես մ.թ.ա. 7000 թվականից:<sup>11</sup> Նրա տեսակետը հենվում է այն մտայնության վրա, որ Արևմտյան Փոքր Ասիան և Էգեյան ծովի ավազանն են հանդիսացել հնդեվրոպական լեզուների կրողների նախահայրենիքը: Նշենք նաև երկու խոշոր լեզվաբաններ Վ.Վ.Իվանովի և Թ.Վ.Գամկրելիձեի տեսակետը, ըստ որի խեթա-լուվիական ժողովուրդները Փոքր Ասիա են ներթափանցել արևելքից՝ Հայկական լեռնաշխարհից դեռևս մ.թ.ա. IV հազ. վերջերից:<sup>12</sup> Խնդրի այսպիսի տարբերակի օգտին բերվում են հետևյալ փաստարկները: Առաջինը Փոքր Ասիայի արևելյան շրջաններում դեռևս խեթական Հին թագավորության շրջանի տեքստերում հիշատակվող մի շարք արտոնյալ ցեղերը և քաղաքներն են (Մանդա, Սալա, Տամակիյա/Տիմիլկիյա, Խեմնուվա, Տասիսինիյա), երկրորդը քարթվելական լեզուներում և ուրարտերենում խեթերենից կատարված փոխառություններն են: Հաջորդ փաստարկը խեթական մի առասպելն է Արևի մասին, որը բարձրանում է «ծովի այն կողմից»: Ըստ նշված հեղինակների, այդ «ծովը» կարող էր լինել Կասպից ծովը կամ Հայկական լեռնաշխարհի երկու խոշոր լճերից մեկը (Վանը կամ Ուրմիան):

---

<sup>10</sup> Օրինակ, Gurney 1962: 5; Crossland 1971: 845; Mellaart 1981 (լուվիացիներ՝ մ.թ.ա. մոտ. 2300թ. Թրակիայից, իսկ խեթերը՝ 1900թ. շրջանում՝ կովկասյան լեռնանցքներով); տես նաև Steiner 1990; Melchert 2003: 23-26; Watkins 2008: 6; Yakubovich 2009: 8 : Զ.Մալորիի կարծիքով (Mallory 1989: 28), խեթա-լուվիական ցեղերի մուտքը Փոքր Ասիա պետք է տեղի ունենար Վաղ բրոնզեդար II փուլի ավարտին (2700-2600թթ. մոտերքում), երբ թերակղզու տարբեր հատվածներում, հատկապես արևմուտքում գտնվող հնավայրերում վկայված են խոշոր ավերածություններ:

<sup>11</sup> Renfrew 1987: 145-178, 263-289 (հնդեվրոպական լեզուների կրողների տեղաշարժերի համատեքստում խեթա-լուվիացիների՝ Փոքր Ասիայում տարածվելու մասին):

<sup>12</sup> Гамкрелидзе и Иванов 1984: 896-897.

Համենայնդեպս, արդեն մ.թ.ա. III հազ. վերջերին հետագա Խեթական պետության տարածքում զգալի էր հնդեվրոպացի խեթերի և նրանց սերտ ազգակից լուվիացիների դերը:<sup>13</sup> Ընդ որում Փոքր Ասիայում խեթերի նախնական տարածման շրջան է համարվում Կիլիկյան դարպասներից մինչև Վերին Եփրատ ընկած տարածքը, որտեղ էլ պետք է գտնվեր խեթական առաջին պետությունը՝ Կուսսար կենտրոնով (Եփրատից արևմուտք, Մալաթիայի շրջակայքում):<sup>14</sup> Խեթերի նախնական բնակավայրի այսպիսի տեղադրությունը հենվում է ինչպես Խեթական պետության կարևորագույն աստվածությունների անունների բուն հնդեվրոպական ստուգաբանության վրա (օրինակ, Խուրմա քաղաքի աստված Խանտիդասուս՝ "առաջին և հզոր"),<sup>15</sup> այնպես էլ համահունչ է հնդեվրոպական նախալեզվի կրողների տարածման այն սխեմայի հետ, որն առկա է հնդեվրոպական նախահայրենիքի առաջավորասիական վարկածում:<sup>16</sup>

Խեթերին լեզվակից լուվիացիները կենտրոնացած էին թերակղզու հարավում և արևմուտքում: Պալայցիներն ապրում էին թերակղզու հյուսիսում (նրանց անունից էլ հետագայի Բլանեն և Պափլագոնիա մարզերի անվանումները): Լիկիացիները, լիդիացիները և կարիացիները զբաղեցնում էին թերակղզու հարավային և արևմտյան շրջանները:

Մ.թ.ա. II հազ. խեթական գրավոր աղբյուրներում պահպանվել են խեթա-լուվիական երեք լեզուներով տեքստեր, որի հիման վրա կարելի է ենթադրել, որ նույն լեզվախմբի մյուս ներկայացուցիչները միայն Խեթական տերության տրոհումից հետո ընկած ժամանակահատվածում են առանձնացել որպես ինքնուրույն լեզուներ՝ պայմանավորված սեփական պետականությունների կազմավորման հետ: Այդ երեք լեզուներն են՝ *նասիլի* կամ *նեսիլի* (խեթերեն՝ Նեսա/Քանես

---

<sup>13</sup> Goetze 1954; Orlin 1970: 27 և այլն: Հատկանշական է, որ մ.թ.ա. XIX-XVIII դարերի կապադոկիական տեքստերում խեթա-լուվիական անձնանունները ակնհայտորեն գերակշռում են:

<sup>14</sup> Neu 1974: 130 n.319, 133; Singer 1981: 129; Forlanini 1979: 173 (Կուսսարի տեղադրության համար).

<sup>15</sup> Haas 1994: 309.

<sup>16</sup> Гамкрелидзе и Иванов 1984.

քաղաքի անվանումից), *լուվիլի* (լուվիերեն) և *պալաունմիլի* (պալայերեն): Մ.թ.ա. I հազ. խեթա-լուվիական լեզուների մասին խեթական դարաշրջանի աղբյուրները որևէ տեղեկություն չեն պահպանել:

Բացի խեթա-լուվիական ցեղերից, հնագույն Փոքր Ասիայի տարբեր շրջաններում մ.թ.ա. II-I հազարամյակների ընթացքում վկայված են տարբեր լեզվաընտանիքների պատկանող տասնյակ էթնիկ խմբեր:

Հնդեվրոպական լեզվաընտանիքը ներկայացնող թրակա-փոյուգական ցեղերի բնակության վայրը, ըստ անտիկ շրջանի գրավոր ավանդույթի, մ.թ.ա. II հազ. երկրորդ կեսին թերակղզու հյուսիս-արևմուտքն էր: Իսկ Խեթական տերության տրոհմանը հաջորդող շրջանում արևմտակենտրոնական Փոքր Ասիայում Բալկաններից տեղափոխվում են փոյուգացիները՝ հաստատվելով Սանգարիոս գետի հովտում (հետագայի Մեծ Փոյուգիան):

Փոքր Ասիայում բնակվող հնդեվրոպական լեզուներով խոսող էթնիկ խմբերից էին նաև սահմանափակ քանակությամբ հնդարիացիները: Վերջիններիս ներկայությունը վկայված է մի շարք անձնանուններով: Դրանք հիշատակվում են Կիցցուվատնայում (Կիլիկիա), Հյուսիսային Սիրիայում և Վերին Եփրատի ավազանում (Իսուվա): Հնդարիական հստակ ստուգաբանություն ունեն Կիցցուվատնայի մի քանի արքաների անունները (Պադդատիշու, Պարիյավատրի, Մունասսուրա), Թուդիսալիյաս II-ի դեմ մարտնչող Մուվատալլիս I-ին օգնության եկած խուրրիական զորքի հրամանատար Կարտասուրասը,<sup>17</sup> Իսուվայի ցեղապետերից մի քանիսը (Լուպակիուտտա, Արցիուտտա, Ուիտարնա) և այլն: Հնդարիական ծագում պետք է ունենար նաև խեթական դիցարանի Ակնի աստվածությունը:<sup>18</sup> Չնայած քննարկվող դարաշրջանում Առաջավոր Ասիայում հնդարիացիների ներկայությունն ապացուցող մեծաքանակ տեղեկություններ կան ինչպես Փոքր Ասիայից, այնպես էլ Միջագետքից և Սիրիայից,<sup>19</sup> այ-

<sup>17</sup> Այս անվան առնչությամբ Ֆ.Չ.Յ. Չուվիխը տեն Կատեն ուղղակի գրում է "գեղեցիկ հնդարիական անուն" (Houwink ten Cate 1970: 78):

<sup>18</sup> Otten, Mayrhofer 1965.

<sup>19</sup> Այդ հատուկ անունների համահավաքը տես Mironov 1932-33; O'Callaghan 1948: 56-63:

նուամենայնիվ Երկրորդ աշխարհամարտից հետո գիտական հրատարակություններում արմատավորված "արիացի" տերմինի ռասիստական բովանդակությունը ստիպեց մասնագետների մի մասին գերքննադատաբար մոտենալ այդ էթնիկ խմբի գոյությանը և հնդարիական հատուկ անուններն ու հասարակ բառերը մեկնաբանել որպես ժամանակին հնդիրանական լեզուներից խուրրիերենին անցած քարացած բառաձևեր: Ըստ այդպիսի մոտեցման, հնդարիացիներն ապրել են խուրրիների հարևանությամբ շատ դարեր առաջ՝ նախքան իրենց հետագա բնակության վայրեր հասնելը, այդ ընթացքում խուրրիերենին փոխանցելով իրենց լեզվի որոշ քանակությամբ բառեր, այդ թվում անձնանուններ:<sup>20</sup> Սակայն, այնուամենայնիվ, հնդարիալեզու էթնիկ խմբերի առկայությունը Միտտանիում և ընդհանրապես Հյուսիսային Միջագետքում և Առաջավոր Ասիայի մյուս շրջաններում ընդունվում է տարբեր մասնագետների կողմից:<sup>21</sup>

Մյուս հնդեվրոպական էթնիկ խմբերից մ.թ.ա. II հազ. զգալի է վաղ հունալեզու ցեղերի (հոնիացիներ) դերը թերակղզու արևմուտքում, հատկապես Էգեյան ծովափին:

Բացի հնդեվրոպացիներից, Փոքր Ասիայի հնագույն բնակչության շարքում կարևոր դեր են ունեցել խուրրիները, որոնք հիշատակվում են Կիլիկիայում և թերակղզու տարբեր շրջաններում առնվազն կապադովկիական փուլից (մ.թ.ա. XIX-XVIII դդ.), ինչի վկայությունն են որոշ քանակությամբ հատուկ անունները:<sup>22</sup> Աշշուրի առևտրական գաղութների գոյության շրջանում Քանեսից հայտնաբերված աղյուսակներում վկայված են մի շարք խուրրիական անձնա-

<sup>20</sup> Օրինակ, Kammenhuber 1961: 17-18; 1968; 1977: 220-221; Mallory 1989: 42:

<sup>21</sup> Ա.Կամմենհուբերի մոտեցման քննադատությամբ հանդես եկավ Դ.Հոկինսը (Hawkins 1969): Լույսը նաև Գ.Վիլիելմը և Կ.Կյունեն (Wilhelm 1989: 17-19; 1995: 1246-1247; Kühne 1999: 209-210), ովքեր գտնում են, որ քննարկվող ժամանակաշրջանում արիերենը կարող էր խոսակցական լեզու լինել, համենայնդեպ Միտտանիի և որոշ այլ քաղաքական միավորների արքայատոհմերի կառավարման շրջանում: Առաջավոր Ասիայում հնդարիական տարրի առկայության մասին տես նաև Քոսյան 2006; Kosyan 2006b; 2015 (Վերինեփրատյան գոտում մ.թ.ա. XV-XIV դարերում հնդարիական անձնանունների գոյության մասին):

<sup>22</sup> Ակնհայտ խուրրիական ծագում ունեն հետևյալ քաղաքանունները՝ Taišhama, Taia, Hurrama, Ma'ama, ինչպես նաև անձնանունները՝ Zigi, Irwi-Šarri, Eniš(ar)ru, (Lewy 1965: 12-13):

նուններ, սակայն դրանք հիմք չեն տալիս պնդելու, որ այդ տարածքում խուրրիներնը կարող էր խոսակցական լեզու լինել: Այդ անունների կրողները կարող էին լինել հենց աշշուրցի առևտրականները: Բանն այն է, որ Հյուսիսային Միջագետքի բնակչությունը մ.թ.ա. III հազ. վերջերին - II հազ. առաջին դարերում խառը սեմական-խուրրիական էր:<sup>23</sup>

Սակայն ընդհուպ մինչև մ.թ.ա. XVI դարը խուրրիները Փոքր Ասիայի քաղաքական կյանքում առանձնապես նկատելի չէին, թեև թերակղզու արևելյան և հարավ-արևելյան եզրագոտում նրանք հաստատաբար կարևոր դերակատարում ունեին:<sup>24</sup> Խեթական աղբյուրների համաձայն, Հին թագավորության շրջանում Կիցցուվատնան (Կիլիկիա) համարվում էր խուրրիական տարածք: Խուրրիները զանգվածաբար սկսում են ներթափանցել Փոքր Ասիա Հին թագավորության շրջանում և հատկապես XV դարում՝ Խաթթուսասում խուրրիական արքայատոհմի իշխանության գալուց հետո: Թերակղզու տարբեր շրջաններում առկա էին խուրրիական զգալի անկլավներ: Դրա վկայությունն է վերոհիշյալ շրջանների հնավայրերից խուրրիներն լեզվով գրված ծիսական բովանդակության մեծաքանակ սեպագիր տեքստերի առկայությունը (Սապինուվա քաղաքը հյուսիսում – Ժաման. *Օրթաքյոյ*),<sup>25</sup> Կիցցուվատնա-Կիլիկիան, ինչպես նաև բավական մեծ թվով խուրրիական անձանունները:

Մյուս էթնիկ խմբերից կարևոր էին խաթերը թերակղզու կենտրոնական շրջաններում՝ հետագա խեթական պետականության միջուկում: Խաթերը կենտրոնական Փոքր Ասիայի ոչ-հնդեվրոպալեզու բնակիչներն էին, որոնք, ըստ ընդունված տեսակետի, նվաճվեցին եկվոր խեթերի կողմից և Հին Խեթական թագավորության կազմավորման պահին արդեն կորցրել էին իրենց լեզուն և ինքնությունը:<sup>26</sup>

---

<sup>23</sup> Wilhelm 2008.

<sup>24</sup> Հին Փոքր Ասիայում խուրրիական էթնիկ տարրի խաղացած դերի մասին տես Goetze 1940: 5-8; Güterbock 1954; Landsberger 1954; Gurney 1966: 123-124; De Martino 2011b; 2014 և այլն:

<sup>25</sup> Օրինակ, Haas und Wilhelm 1974; Haas und Thiel 1978; Haas 1984; Görke 2010 և այլն:

<sup>26</sup> Gurney 1966: 129.

Ինչ վերաբերում կասկերին, ապա սրանք զբաղեցնում էին թե-րակղզու հյուսիս-արևելքը՝ Պոնտական լեռների շրջանը:<sup>27</sup> Կասկա-կան որոշ բնակչությունն ապրում էր նաև Բարձր Հայքի մի մասում: Ըստ մասնագետների, կասկերենը որոշակիորեն առնչվում է խաթե-րենին կամ արևմտակովկասյան լեզուներին:<sup>28</sup>

Վերոհիշյալ էթնիկական խմբերից բացի, այստեղ ապրել են նաև այլ ժողովուրդներ, որոնց պատկանելության վերաբերյալ որևէ հիմ-նավոր փաստ գոյություն չունի:

### **Խեթական դարաշրջանի Փոքր Ասիայի քաղաքական միավոր-ները**

Փոքր Ասիան Խեթական պետության գոյության շրջանում իրե-նից ներկայացնում էր ամենատարբեր էթնիկ խմբերի և, համապա-տասխանաբար, քաղաքական միավորների խոշոր համայնապատ-կեր՝ Էգեյան ծովեզերքից մինչև վերինեփրատյան գոտի և Սև ծովի հարավային առափնյա շրջաններից մինչև Տավրոսի լեռնաշղթա: Այդ միավորների մի մասը, ըստ խեթական աղբյուրների, քաղաքական կազմակերպման որոշակի մակարդակի վրա գտնվող պետականու-թյուններ էին, որոնք կառավարվում էին ժառանգական արքաների կողմից (Կիցցուվատնա, Արցավա, հետագայում նաև Միրա, Խա-պալլա, Սեխա գետի երկիր և այլն): Սակայն անհամեմատ ավելի շատ էին այնպիսիք, որոնք ակնհայտ տոհմացեղային կառույցներ էին (օրինակ, կասկական ցեղերը, խեթական աղբյուրների Լուկկայի բնակչությունը հարավ-արևմտյան Փոքր Ասիայում՝ Միջերկրական ծովին հարող շրջաններում և այլն):

Խեթական տեքստերի հաղորդած տեղեկությունները թույլ չեն տալիս հստակորեն տարանջատել վերոհիշյալ երկու տիպի միա-վորները: Այստեղ յուրաքանչյուր քաղաքական միավոր հիշատակ-վում է կամ «քաղաք/բնակավայր» (URU) կամ «երկիր» (KUR) նշող ցուցիչով: Ընդ որում «երկիրը» սեպագրական տեքստերում կարող էր

---

<sup>27</sup> Փոքր Ասիայում կասկական էթնիկ տարրի դերի մասին ըստ խեթական աղբյուր-ների տես Schulzer von 1965:

<sup>28</sup> Гиоргадзе 1961: 9-10.



նշանակել ինչպես խոշոր պետություն, այնպես էլ ցեղապետություն: Այդ պատճառով հնարավոր չէ պարզել այդպես հիշատակվող քաղաքական միավորների բնույթը: Խեթական պետության պատմության ընթացքում Փոքր Ասիայում հիշատակվող քաղաքական միավորներից այս ընդարձակ տարածաշրջանում կարևոր դերակատարում ունեին հետևյալները:

### **Արցավա**

Արցավա անվանումը խեթական աղբյուրներում հանդես է գալիս երկու իմաստներով: Առաջին հերթին այն նշանակում էր մի կոնկրետ երկիր՝ բուն Արցավան, որը հանդես է գալիս դեռևս Հին թագավորության արքա Խաթթուսիլիս I-ի տարեգրություններում: Բուն Արցավայի մայրաքաղաքը Էգեյան ծովափին գտնվող Ապասաս քաղաքն էր (անտիկ շրջանի Եփեսոս, ներկայիս Էֆես): Արդեն Հին թագավորության շրջանում հիշատակվող «Արցավա երկրները» ներառում էին Արևմտյան Փոքր Ասիայի նշանակալից մասը: Հյուսիսում այն ընդգրկում էր պատմական Տրոադան, հարավում հասնում էր մինչև Մեանդրոս գետի հովիտ, որտեղ տեղադրվում է Կարկիսան:<sup>29</sup> Արևելքում «Արցավա երկրները» հասնում էին մինչև խեթական աղբյուրների Ստորին երկիր (ներկայիս Կոնյայի հարթավայրը) և Թուզ լճից արևմուտք ընկած շրջաններ:

Արցավա տերմինի այդպիսի լայն իմաստով կիրառությունը վկայում է այն մասին, որ Արցավան Արևմտյան Փոքր Ասիայի մի շարք քաղաքական միավորների հեգեմոնը պետք է լիներ, որոնք հետագայում հիշատակվում են նաև անվանապես՝ Միրա-Կուվալիյա, Խապալլա, Մեխա գետի երկիր, Վիլուսա (Տրոյա): Արցավայի դաշնության մեջ ներառված երկրները զբաղեցնում էին անտիկ աղբյուրներում հիշատակվող Սանգարիոս, Կաիկոս, Հերմոս, Քսանթոս գետերի ավազանները: Երկրագործության համար նպաստավոր պայմաններ ունեցող և մերձարևադարձային ծովեզերքին և հարակից շրջաններում գտնվող երկրների այս ընդարձակ շրջան Արցավան

---

<sup>29</sup> Տեղադրության վերաբերյալ կարծիքները տես Del Monte und Tischler 1978: 77; քաղաքական պատմության համար տես Kinal 1951; Bryce 2003b: 35-40; Alparslan 2015:

վերածում էին տնտեսական և, համապատասխանաբար, ռազմական գզալի ներուժ ունեցող տարածաշրջանի: Դրանով կարելի է բացատրել Խեթական պետության համար Արցաղայի կարևորագույն ռազմավարական և տնտեսական նշանակությունը և նրա շարունակական ջանքերը այստեղ իր ազդեցությունը տարածելու և ամրապնդելու:

Արցաղայի դաշնությունը գոյատևեց մինչև Նոր թագավորության արքա Մուրսիլիս II-ի երրորդ տարվա արշավանքը, երբ այն նվաճվելուց հետո տրոհվեց, որից հետո այս աշխարհագրական անվանումը այլևս դուրս է գալիս կիրառությունից: Արցաղայի տարածքում այսուհետև հիշատակվում են միայն վերոհիշյալ դաշնության անդամ երկրները, որոնց նկատմամբ Խեթական տերությունը հարաբերակցվում էր ամենատարբեր մակարդակներով:

### **Ասսուվա**

Ասսուվա հավաքական անվանումը կրող քաղաքական միավորները, որոնք հանդես են գալիս մ.թ.ա. XV-XIV դարերում, մասնավորապես Թուդիսալիյաս II-ի և նրա հաջորդ Առնուվանդաս I-ի արևմտյան քաղաքականության համատեքստում, զբաղեցնում էին Էգեյան ծովեզերքին հարող շրջանները, հավանաբար, հյուսիս-արևմուտքը: Տարածապես Ասսուվան մասնակիորեն համընկնում էր Արցաղայի դաշնության հետ: Ամենայն հավանականությամբ, Թուդիսալիյաս II-ի կողմից նվաճվելուց և տեղական ազնվականության վերաբնակեցումից հետո Ասսուվան կարող էր կազմել արդեն նոր՝ բուն Արցաղայի կողմից ստեղծված դաշնության մասը: Ասսուվան Թուդիսալիյասից հետո այլևս չի հիշատակվում:

Ասսուվայի անունը դեռևս 1920-ական թվականներին համադրվել է հին հույն և հռոմեացի հեղինակների կողմից հիշատակվող «Ասիա» աշխարհագրական անվան հետ և այդ տեսակետը առ այսօր գրեթե չի վիճարկվում:<sup>30</sup>

---

<sup>30</sup> Forrer 1929: 227.

## **Լուկկա երկրներ**

Այս անվանումը կրող «երկրները» գտնվում էին Փոքր Ասիայի ծայր հարավային գոտում՝ Կիցցուվատնայից և Ստոբիլի երկրից արևմուտք և զբաղեցնում էին թերակղզու ծովեզրյա լեռնային շրջանները: Դա հետագայի Լիկիան էր, ինչպես նաև դրան հարակից Պիսիդիան, Բսավրիան և Լիկաոնիան:<sup>31</sup>

Ինչպես և թերակղզու հյուսիսի կասկական ցեղերը, Լուկկան քաղաքական առումով կազմակերպված չէր մեկ կոնկրետ միավորի մեջ: Մրանք տոհմացեղային փուլում գտնվող լեռնաբնակ ցեղեր էին և Խեթական տերության արտաքին քաղաքական ձեռնարկումներում էական դեր չէին կատարում: Պատճառը թերևս այն էր, որ Լուկկայի տարածքը Խեթական պետության համար տնտեսական ռազմավարական նշանակության չունեցրել էր:

## **Կիցցուվատնա**

Հարավային Փոքր Ասիայում՝ Դաշտային և Լեռնային Կիլիկիայում տեղադրվող այս կարևոր տարածաշրջանը հայտնվում է Խեթական աղբյուրներում արդեն Հին թագավորության ժամանակներից: Այն գտնվում էր Կենտրոնական Փոքր Ասիայից, այն է՝ Խեթական պետության միջուկից դեպի Սիրիա տանող կարևորագույն ուղիների վրա: Կիցցուվատնայում էր տեղադրվում Աշշուրի առևտրական գաղութների գլխավոր հենակետ Քանեսը, ինչպես նաև որոշ այլ բնակավայրեր: Կիցցուվատնան կարևոր դերակատարում ուներ ժամանակի քաղաքական դաշտում: Դրա բնակչությունը խառն էր՝ լուվիացիներ, խուրիներ և այլք: Կիցցուվատնայում իշխող արքայատոհմի ներկայացուցիչների անունները արտացոլում են բնակչության էթնոլեզվական խառը կազմը: Այստեղ աղբյուրները հիշատակում են ինչպես հնդարիական, այնպես էլ խեթական արքայանուններ:

Կիցցուվատնան Հին թագավորության շրջանում, գտնվելով Խեթական պետության և Միտտանիի արտաքին քաղաքական հետաքրքրությունների կիզակետում, որոշ ժամանակ պահպանում էր իր հարաբերական ինքնուրույնությունը, սակայն արդեն մ.թ.ա. XV

---

<sup>31</sup> «Լուկկա երկրներին» առնչվող աղբյուրների մասին տես Bryce 1992; 2003b: 40-44:

դարի երկրորդ կեսին դարձավ Խաթթիից կախյալ թագավորություն, իսկ շուտով կորցրեց նաև իր ինքնուրույնությունը, վերածվելով Տերոյության բաղկացուցիչ մասի:<sup>32</sup>

### **Կասկական գոտին**

Կասկական բազմաթիվ ցեղերը, որոնց բնակության արեալը սկսվում էր մայրաքաղաք Խաթթուսասից մի քանի տասնյակ կիլոմետր դեպի հյուսիս ընկած շրջաններից և ընդգրկում էր Սև ծովի հարավային մերձափնյա գոտին՝ անտիկ շրջանի Պափլագոնիայից տարածվելով դեպի հյուսիս-արևելյան Փոքր Ասիա, Խեթական պետության պատմության գրեթե ողջ ընթացքում հիշատակվում են որպես իրական և պոտենցիալ հակառակորդներ: Կասկական վտանգը, որի առաջին իրական դրսևորումը արտացոլված է Թուդիսալիյաս II-ի և Առնուվանդաս I-ի տեքստերում, ուղեկցեց Խաթթիի պատմությունը բոլոր հետագա արքաների կառավարման շրջանում:<sup>33</sup>

Կասկերն ապրում էին տոհմացեղային փուլում: Առաջին կասկական ցեղը, որտեղ անցում կատարվեց դեպի արքայական կառավարման համակարգ, Տիբիան էր թերակղզու հյուսիս-արևելքում մ.թ.ա. XIV դարի վերջերին՝ Մուրսիլիս II-ի օրոք: Պարբերաբար կրկնվող ասպատակությունները նրանց կենսապահովման կարևոր բաղադրիչն էին և մեկ անգամ չէ որ կասկերը ավերում և թալանում էին Խեթական պետության սահմանամերձ երկրագործական շրջանները, իսկ երբեմն էլ նույնիսկ հասնում մինչև մայրաքաղաք: Վկայված են նաև մայրաքաղաքի գրավման դեպքեր: Կասկական ցեղերի նկատմամբ Խաթթիի արքաների փոխհարաբերությունները կապված էին մեծ բարդությունների հետ թեկուզ այն պատճառով, որ միասնական կասկական պետականության բացակայությունը թույլ չէր տալիս դրանք ուղղորդել դեպի դիվանագիտական դաշտ (նվաճում՝

---

<sup>32</sup> Կիցցուվատնայի զբաղեցրած տարածքի քննարկումը տես Hawkins and Weeden 2017; քաղաքական պատմության, Խաթթիի հետ նրա փոխհարաբերությունների մասին տես Goetze 1940; Novák 2010:

<sup>33</sup> Խեթական տեքստերում կասկական ցեղերի և Խաթթիի հետ նրանց փոխհարաբերությունների մասին տես Schuler von 1965; Glatz and Matthews 2005; Singer 2010 և այլն:

դրան հետևող պայմանագրային փոխհարաբերություններ): Յուրաքանչյուր ցեղ գործում էր ինքնուրույն, երբեմն էլ մի քանիսը միավորվում էին միացյալ արշավանք կազմակերպելու նպատակով: Իհարկե, խեթական արքաներն օգտագործում էին կասկական ցեղերից հավաքագրված վարձկան ջոկատներ (ինչպես, օրինակ, Քադեշի ճակատամարտում), սակայն դա չէր խանգարում մյուս ցեղերին իրականացնել իրենց համար սովորական դարձած ասպատակություններ:

Այդ իրավիճակն ավելի քան հետաքրքիր է այն առումով, որ խեթերը, նվաճելով Փոքր Ասիայի մեծ մասը, այնուհետև ծավալվելով մինչև Կենտրոնական Սիրիա և այլ շրջաններ, այդպես էլ չկարողացան լուծել իրենց անմիջական հարևանների սպառնալիքի խնդիրը: Կասկական ցեղերի զբաղեցրած տարածքը գերազանցապես դժվարամատչ լեռնային գոտի էր, երկրագործության համար սահմանափակ հողային ռեսուրսներով, որը մի կողմից դրդում էր նրանց կենսապահովման միջոցներ փնտրել հարավում, միևնույն ժամանակ բարդացնում էր նրանց նկատմամբ մշտական վերահսկողությունը և պատժիչ արշավանքների իրականացումը:

Խեթական տեքստերից պարզ է դառնում, որ միավորված կասկական ցեղերը, ընդ որում ոչ բոլորը, ի վիճակի էին մարտադաշտ դուրս բերել 5-9 հազար զինվոր և մինչև 800 մարտակառք, ինչը լուրջ ներուժ էր:

Փոքր Ասիայի տարածքում Խեթական պետության բնօրրանը տարբեր կողմերից եզերող վերոհիշյալ քաղաքական միավորները իրենցից ներկայացնում էին այն արտաքին քաղաքական միջավայրը, որոնց հետ փոխհարաբերությունները կազմում էին Խաթթիի ռազմաքաղաքական պատմության կարևորագույն բաղադրիչը:

### **ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԱԲԱԺԱՆՈՒՄԸ**

Ներկա ուսումնասիրության շրջանակներում հին Փոքր Ասիայի քաղաքական պատմությունը ներկայացվում է համաձայն մասնագիտական գրականության մեջ առայժմ գերիշխող փուլաբաժանման:<sup>34</sup>

---

<sup>34</sup> Archi 2003; Bryce 2005: 5-6 և այլն.

ա. Քաղաք-պետությունների դարաշրջան (մ.թ.ա. III հազարամյակի երկրորդ կես – մ.թ.ա. XVIII դար - XVII դարի առաջին կես),

բ. Հին Խեթական թագավորություն (մ.թ.ա. XVII դարի կեսեր - XV դարի առաջին կես),

գ. Նոր Խեթական թագավորություն (մ.թ.ա. XV դարի կեսեր - մոտ. 1200թ.):

### ԽԵԹԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՔԱՅԱՑԱՆԿԸ<sup>35</sup>

Խեթական պետության պատմության ուսումնասիրության կարևոր խնդիրներից են արքայացանկի վերականգնումը, ինչպես նաև արքաների կառավարման հստակ ժամանակահատվածները, որոնք մինչև օրս վերջնականապես պարզված չեն: Ավանդաբար Խեթական պետության պետության պատմությունը ընդունված էր տրոհել երեք փուլերի՝ Հին, Միջին և Նոր թագավորություններ, այնպես ինչպես հին Եգիպտոսի պատմությունը: Սակայն վերջին երկու տասնամյակներում միտում է նկատվում հրաժարվելու Միջին թագավորության շրջանը առանձնացնելու հարցում: Դրա փոխարեն նախկին Միջին թագավորությունը դիտարկվում է որպես Նոր թագավորության մասը, և այն ստացել է "Վաղ կայսրություն" անվանումը:<sup>36</sup> Ըստ այդ մտտեցման, Նոր թագավորության պատմության առաջին փուլը սկսվում է Թուդիսալիյաս II-ի կառավարման շրջանից:

Նմանապես, ներկայումս մասնագիտական շրջանակներում կան որոշ տարաձայնություններ խեթական արքաներից ոմանց կառավարման հարցում: Հատկապես առ այսօր լուծված չէ Թուդիսալիյաս անունը կրող արքաների քանակի խնդիրը: Եթե Անիտտասից հետո, մինչև Լաբարնա աղբյուրներում հիշատակվող արքաներից Սանախուտտա քաղաքի արքա Թուդիսալիյասին դիտարկենք որպես այդ անունը կրող արքաներից առաջինը (տես «Հին թագավորություն»), ապա «Վաղ կայսրության» հիմնադիր պետք է համարել

<sup>35</sup> Խեթական արքայացանկը տրվում է ըստ հետևյալ հրատարակությունների՝ Wilhelm und Boese 1987; Bryce 2002: XI; 2005: XV-XVI; Miller 2013: XI համադրման:

<sup>36</sup> Steu, օրինակ, De Martino 2010c: 186:

Թուղխալիյաս II-ին: Նմանապես առայժմ առկախ է մնում Խաթթուսիլիս II-ի խնդիրը, ում ոմանք ենթադրաբար տեղադրում են Թուղխալիյաս III-ից առաջ:<sup>37</sup>

Թ.Բրայսի ներկայացրած արքայացանկում մ.թ.ա. 1500-1400թթ. միջև տեղադրվում են 6 արքաներ (Ալլուվամնայից մինչև Մուվատալլիս I), ինչը թերևս բավական շատ է, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ նշված արքաների կառավարումն ընդհատվել է պալատական դավադրությունների հետևանքով: Յուրաքանչյուրին միջին հաշվով 15 և ավելի տարիներ հատկացնելը արդարացված չէ: Այնինչ Թուղխալիյաս II-ը, Առնուվանդաս I-ը և Թուղխալիյաս III-ը տեղադրվում են մ.թ.ա. 1400-1350թթ. միջև, այն դեպքում երբ սրանք պետք է անհամեմատ ավելի երկար կառավարեին:

Ստորև ներկայացվող Խեթական պետության արքայացանկում նշված բոլոր տարեթվերը պայմանական են, և, բացառությամբ որոշ արքաների, խիստ մոտավոր են, քանի որ բուն խեթական տեքստերը որևէ հիմք չեն տալիս հստակեցնելու արքաների կառավարման ժամանակահատվածները: Այդ տարեթվերի ճշգրտումը հիմնականում կախված է համաժամանակյա միջազետքյան և եգիպտական պատմության ժամանակագրությունից:

### **Հին թագավորություն**

Լարարնա – մոտ. 1650թ. սահմաններում

Խաթթուսիլիս I - 1650–1620 (թոռը?)

Մուրսիլիս I - 1620–1590 (թոռը)

Խանտիլիս I - 1590–1560 (քրոջ ամուսինը)

Ցիդանտաս I (որդեգիրը)

Ամմունաս - 1560–1525 (որդին)

Խուցցիյաս I (դստեր ամուսինը)

Տեխպինուս - 1525–1500 (Ամմունասի որդին)

Ալլուվամնա (դստեր ամուսինը)

---

<sup>37</sup> Խաթթուսիլիս II-ի գոյության օգտին տես Houwink Ten Cate 1997; սակայն տես Bryce 2005: 141 այն մասին, որ որևէ խեթական տեքստում հստակ տեղեկություն չկա այդ անունով արքայի գոյության մասին:

Տախուրվախիլի (բռնագավթիչ)  
Խանտիլիս II - XV դարի սկիզբ – 1400 (Ալլուվամնայի որդին?)  
Ցիդանտաս II (որդին?)  
Խուցցիյաս II (որդին?)  
Մուվատալլիս I (բռնագավթիչ)

### **Նոր թագավորություն**

Թուղխալիյաս II - XV դարի վերջեր - XIV դարի սկիզբ (Խուցցի-  
յա II-ի որդին?)

Առնուվանդաս I - XIV դարի սկիզբ – 1380/1370 (որդեգիրը՝  
դասեր ամուսինը)

Թուղխալիյաս III (որդին?)

Մուպպիլուլիումաս I - 1350–1322 (որդին)

Առնուվանդաս II - 1322–1321 (որդին)

Մուրսիլիս II - 1321–1295 (եղբայրը)

Մուվատալլիս II - 1295–1272 (որդին)

Ուրխի-Թեշուբ/Մուրսիլիս III - 1272–1267 (որդին)

Խաթթուսիլիս III - 1267–1237 (հորեղբայրը)

Թուղխալիյաս IV - 1237–1228 (որդին)

Կուրունտա - 1228–1227 (Ուրխի-Թեշուբի եղբայրը)

Թուղխալիյաս IV - 1227–1209 (Խաթթուսիլիս III-ի որդին)

Առնուվանդաս III - 1209–1207 (որդին)

Մուպպիլուլիումաս II – 1207-1200/1190 (եղբայրը)



## ԳԼՈՒԽ 1

### ՀԻՆ ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Մինչև XX դարի սկզբները Փոքր Ասիա թերակղզու հնագույն քաղաքակրթությունների պատմությունը մնում էր անհայտ գիտությանը: Երբ 1834թ. ֆրանսիացի ճանապարհորդ Շ.Տեքսյեն հայտնաբերեց ինթական մայրաքաղաք Խաթթուսասի ավերակները Բողազքոյ բնակավայրի մոտակայքում, նա չէր էլ կարող պատկերացնել, որ գտնվել է հնագույն Առաջավոր Ասիայի հզորագույն պետություններից մեկի մայրաքաղաքը: Իսկ որոշ ժամանակ անց Միրիայի Համա քաղաքում հիերոգլիֆային մի արձանագրության հայտնաբերումը ստիպեց մասնագետներին ենթադրելու, որ ինթերը բնակվել են հենց այս շրջանում: Այդ ենթադրությունը հենվում էր նաև Աստվածաշնչի մի շարք հիշատակությունների վրա, որտեղ ասվում էր, որ ինթերն ապրում էին Պաղեստինից հյուսիս, ի թիվս մի շարք այլ ժողովուրդների (քանասանցիներ, արամեացիներ և այլք):

Աստվածաշնչյան տեղեկությունները վերաբերում էին Քանաանում բնակվող *հեթ* անվանումը կրող տարբեր անձանց:<sup>38</sup> Իսկ Գիրք Ծննդոցում ասվում է, որ Հեթը Քանաանի որդին էր (Գիրք 15): Մակայն դրանց հետ միասին այնտեղ նշվում է նաև, որ «ինթերի երկիրը» գտնվել է ավելի հյուսիս՝ դեպի Եփրատ ընկած շրջանում:<sup>39</sup>

Մասնագետների տեղեկությունները հին Փոքր Ասիայի մասին սահմանափակվում էին անտիկ աղբյուրներում հիշատակվող Փոյուզիայով, Լիդիայով և Լիկիայով, որոնց այս կամ այն կերպ անդրադարձել էին հունահռոմեական պատմիչները և աշխարհագիրները: Ու թեև XIX դ. երկրորդ կեսից, սեպագրի վերծանությունից հետո, ասորեստանյան և բաբելոնյան աղբյուրներում մասնագետները բազմիցս հանդիպում էին «Խաթթի երկրի» հիշատակություններին, սակայն դրանք հնարավորություն չէին ընձեռում ոչ տեղադրելու այն, ոչ էլ դատելու հնագույն Առաջավոր Ասիայում այդ պետության խաղացած դերի մասին:

<sup>38</sup> Խեթերի վերաբերյալ Հին Կտակարանում տեղ գտած տեղեկատվության համահավաքը տես Bruce 1947:

<sup>39</sup> Bruce 1947: 6.

## ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

### **Խեթական սեպագիր աղբյուրները և դրանց ուսումնասիրությունը**

Հին Փոքր Ասիայի պատմության ուսումնասիրությունը հենվում է երկու տիպի աղբյուրների վրա՝ գրավոր և հնագիտական: Գրավոր աղբյուրները գերազանցապես ներկայացված են խեթական սեպագիր և հիերոգլիֆային տեքստերով: Խեթական պետության պատմության ուսումնասիրման համար կարևոր նշանակություն ունեն համաժամանակյա ասորեստանյան, բաբելոնյան, միտաննական և եգիպտական աղբյուրները:

Խեթական սեպագիր տեքստերը ի հայտ եկան միայն 1906թ. սկսած, երբ գերմանացի հնագետ Հ.Վինկլերը Մաքրիդի բեյի և Օ.Պուխտայնի հետ միասին անսպասելի հայտնագործություն կատարեց թերակղզու կենտրոնում՝ Անկարայից շուրջ 150 կմ արևելք գտնվող Բողազքոյ կոչվող բլրի (ներկայումս վերանվանվել է Բողազքալե) վրա: Հայտնաբերվեցին շուրջ 10.000 կավե սալիկներ, որոնք, տեղում մասնագետներ չունենալու պատճառով ուղարկվեցին Գերմանիա՝ ուսումնասիրելու նպատակով: Սեպագիրը այդ հայտնագործության պահին վաղուց արդեն ընթերցված էր, սակայն գտածոների միայն չնչին մասն էր հասկացվում, այն է մասնագետներին լավ հայտնի աքքադերեն լեզվով գրվածները: Մյուսներն ընթերցվում էին, սակայն դրանց լեզուն անհայտ էր մնում մինչև 1915թ., երբ չեխ արևելագետ Բ.Հրոզնին պարզեց այդ լեզվի հնդեվրոպական բնույթը: Նորահայտ լեզվին շուտով տրվեց «խեթերեն» անվանումը (գերմաներեն Hethitisch, անգլերեն՝ Hittite, ռուսերեն՝ хеттский և այլն), քանի որ դրանցում բազմիցս հիշատակվում էր «Խաթթի երկիրը»:

Խեթական սեպագիր տեքստերը իրենց բովանդակությամբ տարբեր են (տարեգրություններ, ինքնակենսագրական տեքստեր, պայմանագրեր, հրահանգներ պաշտոնյաներին, ծիսապաշտամունքային ոլորտ, գուշակություններ, աղոթքներ, երագներ, առասպելներ և այլն): Դրանց ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգամանորեն հետազոտելու խեթական քաղաքակրթության պատմության ամենատարբեր բնագավառները: Առ այսօր հայտնի տեքստերի ճնշող մեծամասնությունը գրված է խեթերենով, սակայն կան զգալի քանա-

կույթամբ խուրիներեն, լուվիերեն, աքքադերեն, խաթերեն և շումերերեն տեքստեր: Արքունիքում և խոշոր քաղաքների ու տաճարների դպրասներում աշխատում էին ժամանակի առաջատար ժողովուրդների լեզուներին տիրապետող գրիչներ, ովքեր հարկ եղած դեպքում կազմում էին տեքստեր նաև այդ լեզուներով:

Հայտնաբերված հազարավոր արձանագրությունները ինքնագիր եղանակով կամ գիտական տառադարձամբ հրատարակվել են մի շարք ժողովածուներով:<sup>40</sup> Այդ աշխատանքն ընթանում է առ այսօր, քանի որ պեղումները շարունակվում են ինչպես Բողազքոյում, այնպես էլ Փոքր Ասիայի այլ հնավայրերում: Հրատարակվել են շուրջ 30 հազար արձանագրություններ, որոնք գերազանցապես բեկորային տեսքով են: Ամբողջական վիճակով պահպանված արձանագրությունների քանակը շատ փոքր է: Հիմնական մասը կազմում են տարբեր կցաբեկորներից հավաքված տեքստերը:

Խեթերեն լեզվի և արձանագրությունների ուսումնասիրմամբ զբաղվել և զբաղվում են այնպիսի հանրաճանաչ մասնագետներ, ինչպիսիք են Հ.Վինկլերը, Է.Ֆոռեթը, Յ.Ֆրիդրիխը, Ա.Գյոթցեն, Է.Կավենյակը, Ֆր.Կոռնելիուսը, Հ.Գ.Գյուտերբոկը, Օ.Գըրնին, Հ.Օտտենը, Է.Լարոշը, Ա.Արկին, Վ.Իվանովը, Օ.Կարրուբան, Հ.Քլենգելը, Գ.Վիլհելմը, Գ.Բեքմանը, Ս. դե Մարտինոն և այլք: Խեթական սեպագիր արձանագրությունների և հարևան երկրներից հայտնի համաժամանակյա գրավոր աղբյուրների հիման վրա կատարվել են հիմնարար ուսումնասիրություններ Խեթական տերության քաղաքական, տնտեսական և մշակութային պատմության վերաբերյալ:<sup>41</sup>

Խեթական պետականության կազմավորմանը նախորդող փուլի՝ քաղաք-պետությունների պատմության վերաբերյալ անգնահա-

---

<sup>40</sup> KBo; KUB; HT; Weidner 1923; Forrer 1922-1926; ABoT; IBoT. Տեքստերի դասակարգումը ըստ բնագավառների տես Laroche 1971; Košak 2005 (նաև պարբերաբար թարմացվող էլեկտրոնային տարբերակը՝ Hethitologische portal).

<sup>41</sup> Հրատարակվել են խեթական դարաշրջանի Փոքր Ասիայի պատմությունն ամփոփող բազմաթիվ հետազոտություններ (Cavaignac 1950; Gurney 1966; Lloyd 1967; Cornelius 1973; Klengel und Klengel 1975; Macqueen 1986 (առաջին հրատ.՝ 1975); Lehmann 1986; Ардзинба 1988; Гюоградзе 1989; Masson 1994; Klock-Fontanille 1998; Bryce 2002; 2005 (առաջին հրատ.՝ 1998); Klengel *et al.* 1999; Goetze 2008a; 2008b; 2008c; Քոսյան 2013 և այլն):

տելի սկզբնաղբյուրներ են այսպես կոչված “կապադովկիական աղյուսակները”: Դրանք Քանեսի (Ժամանակակից *Քյուլթեփե*՝ Կայսերի քաղաքից շուրջ 20 կմ հյուսիս-արևելք) պեղումներից հայտնաբերված՝ աքքադերենով գրված տասնյակ հազարավոր սեպագիր սալիկներն են, որոնք ներկայացնում են մ.թ.ա. XIX-XVIII դդ. Փոքր Ասիայի տարբեր շրջաններում գոյատևած՝ Աշշուրի պետության առևտրական գաղութների գործունեությունն արտացոլող տեքստեր:

1930-ական թվականներից սկսվեց և հաջորդող տասնամյակներում հիմնականում ավարտվեց հնագույն Փոքր Ասիայի պատմության գրավոր աղբյուրների մեկ այլ խմբի՝ հիերոգլիֆային գրի վերծանությունը:<sup>42</sup> Խեթական պետության գոյության վերջին շրջանում հիերոգլիֆային գրով գրվում էին մի շարք արքաների ժայռագիր արձանագրությունները: Իսկ դրա տրոհումից հետո հիերոգլիֆային գիրը հանդիսանում էր Փոքր Ասիայում և հարակից շրջաններում կազմավորված պետականությունների, այսպես կոչված «Ուշ իտեթական» կամ «Լուվիական» պետությունների (մ.թ.ա. XII-VIII դդ.) պաշտոնական գիրը: «Հիերոգլիֆային լուվիերեն» անվանումը ստացած լեզուն հանդիսանում է իտեթա-լուվիական լեզվախմբի լեզուներից մեկը: Դրան առավել մոտ է դեռևս Խեթական պետության գոյության ընթացքում մայրաքաղաքի և այլ կենտրոնների գրիչների կողմից օգտագործվող «սեպագիր լուվիերենը»:

Խեթական պետության պատմության վերաբերյալ կարևորագույն տեղեկություններ են պարունակում համաժամանակյա եգիպտական, միտոսանական, ասորեստանյան, բաբելոնյան և ուգարիտյան տեքստերը,<sup>43</sup> որոնք վերաբերում են այդ երկրների և իտեթերի փոխհարաբերություններին:

Ուսումնասիրությունները պարզեցին, որ Խեթական պետությունը, սկզբնապես կազմավորվելով Փոքր Ասիայի՝ Հալիս գետի հոսանքով պարփակված կենտրոնական շրջաններում, գոյատևել է

---

<sup>42</sup> Meriggi 1929-30; 1932; 1934; 1962; 1966; 1967, 1975a, 1975b; Bossert 1948; 1960; Gelb 1931-1942; Laroche 1960; Hawkins - Morpurgo-Davies and Neumann 1974; Hawkins 2000 և այլն:

<sup>43</sup> Breasted 1906-1907; Gardiner 1960; Moran 1992 (եգիպտական); Grayson 1987 (ասորեստանյան և բաբելոնյան), նաև Ասորեստանի և Բաբելոնիայի արքաների՝ իտեթական արքաներին ուղարկված նամակները; Nougayrol 1956 (ուգարիտյան) և այլն:

շուրջ 500 տարի՝ վերածվելով Առաջավոր Ասիայի հզորագույն տե-  
րության, որի բուն տարածքը և ազդեցության գոտիները տարածվում  
էին Էգեյան ծովից մինչև Հայկական լեռնաշխարհի արևմտյան  
շրջանները (Վերին Եփրատի ավազանը) և Սև ծովից մինչև Հարա-  
վային Միրիա ընկած ընդարձակ տարածաշրջանում: Տերության  
տրոհումից հետո (մոտ. մ.թ.ա. XIII դ. վերջ – XII դ. սկիզբ) Խաթթի  
մի մասում ձևավորվեցին նրա ժառանգորդ հանդիսացող “Ուշ ին-  
թական” բազմաթիվ մանր պետություններ, որոնք իրենց հերթին գո-  
յատնեցին ևս շուրջ 500 տարի՝ վերջնականապես նվաճվելով  
սկզբում Լիդիայի, այնուհետև՝ Ասորեստանի և Աքեմենյան Իրանի  
կողմից մ.թ.ա. VIII-VII դդ.:

Խեթական սեպագիր աղբյուրների ուսումնասիրության գործում  
իրենց ավանդն ունեն նաև հայ մասնագետները: Նրանց ուշադրու-  
թյան կենտրոնում հիմնականում գտնվել են Հայկական լեռնաշխար-  
հի վերաբերյալ իսթական սեպագրական և հիերոգլիֆային լուվիա-  
կան աղբյուրների տեղեկությունների ուսումնասիրությունը, ինչպես  
նաև իսթա-հայկական լեզվամշակութային փոխառնությունները:  
Առաջինը Բ.Հրոզնու աշակերտ, արևմտահայ մասնագետ Ն.Մարտի-  
րոսյանն էր:<sup>44</sup> Հայաստանյան իսթագետների շարքում խոշոր ներ-  
դրում ունի ակադ. Գր.Ղափանցյանը, որի ուսումնասիրությունները  
հիմք հանդիսացան հայ իսթագիտության հետագա զարգացման հա-  
մար: Նրա «Հայասան - հայերի բնօրրանը» հիմնարար աշխատու-  
թյունը<sup>45</sup> նվիրված է Հայկական լեռնաշխարհի պատմության հետա-  
գոտմանը ըստ իսթական սեպագիր աղբյուրների: Գր.Ղափանցյանի  
կողմից իսթերենի և հայերենի փոխհարաբերությունների խնդիրը  
շարունակեց զարգացնել ակադ. Գ.Ջահուկյանը իր տարբեր ուսում-  
նասիրություններում:<sup>46</sup>

Լուրջ ավանդ ունեն Վ.Խաչատրյանը, որի ուսումնասիրություն-  
ներն ընդգրկում են Հայկական լեռնաշխարհի և Փոքր Ասիայի տե-  
ղանունները և հայաստանյան վաղ քաղաքական միավորների

---

<sup>44</sup> Մարտիրոսյան 1957; 1961:

<sup>45</sup> Капанцян, 1948.

<sup>46</sup> Ջահուկյան (Jahukyan, Джаукян) 1961; 1967; 1987; 1988; 1990. Խեթա-հայկական լեզ-  
վական առնչությունների խնդրում կարևոր ներդրում ունի ամերիկացի հնդեվրոպա-  
բան-հայագետ Ջ.Գրեպինը (Greppin 1980; 1981; 1982; 1991 և այլն):

պատմությունը ըստ խեթական աղբյուրների, ինչպես նաև բուն խեթագիտական խնդիրներ,<sup>47</sup> Ն.Մկրտչյանը, ում հետազոտություններն ընդգրկում են խեթա-հայկական լեզվական փոխհարաբերությունները<sup>48</sup> և Լ.Բարսեղյանը, ով հետազոտել է Հայկական լեռնաշխարհի կարևոր քաղաքական միավորներից Հայասալի տեղադրության և պատմության խնդիրները:<sup>49</sup> Հայ խեթագետների հաջորդ սերունդը ներկայանում է Ա.Առաքելյանի<sup>50</sup>, Լ.Գոլովյովայի<sup>51</sup>, Ա.Քոսյանի,<sup>52</sup> Հռ.Հարությունյանի,<sup>53</sup> Ռ.Ղազարյանի,<sup>54</sup> Հ.Հմայակյանի<sup>55</sup> և Մ.Խանգաղյանի<sup>56</sup> ուսումնասիրություններով:

Գրավոր աղբյուրների տվյալները լրացվում են Փոքր Ասիայի տարբեր շրջաններում կատարված և այժմ էլ ընթացող սիստեմատիկ հնագիտական պեղումների ընթացքում հայտնաբերված նյութերով: Խեթական դարաշրջանի տասնյակ հնավայրերի հիմնավոր ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռում վերականգնելու այդ քաղաքակրթության ստեղծած մշակութային արժեքները: Այդպիսի հետազոտություններ են ընթանում առ այսօր խեթերի մայրաքաղաք Խաթթուսասում (*Բողազքյոյ/Բողազքալէ*) և այլ հնավայրերում (*Քյուլթեփե, Ալիշարիյոյուք, Ալաջահիյոյուք, Աջեմիյոյուք, Քուշաքլը, Բնանդըքթեփե, Մաշասիյոյուք* և այլն)<sup>57</sup>:

### **Աշշուրի առևտրական գաղութների շրջանի աղբյուրներ**

Խեթական Հին թագավորությանը նախորդող դարաշրջանի պատմության աղբյուրների գերակշիռ մասը պահպանվել է Աշշուրի

---

<sup>47</sup> Хачатрян 1963; 1964; 1971; 1998.

<sup>48</sup> Մկրտչյան 1969; 1970; Mkrtchyan 1974; Мкртчян 1976.

<sup>49</sup> Բարսեղյան 1963a; 1963b; 1964.

<sup>50</sup> Аракелян 1975a; 1975b; 1978; 1983.

<sup>51</sup> Головлева 1978.

<sup>52</sup> Քոսյան 1997ա; 1997բ; 1999; 2000; 2001; 2002ա; 2002բ; 2004ա; 2004բ; 2004գ; 2005; 2006; 2008; 2016ա; 2016բ; 2017; 2018; Քոսյան և այլք 2018; Косян 2016; 2020; Kosyan 1993; 2006a; 2006b; 2009; 2011; 2014; 2015; 2017a; 2017b; 2018; 2019; 2020; 2021 և այլն:

<sup>53</sup> Арутюнян 1992a; 1992б.

<sup>54</sup> Ղազարյան 2005; 2007; 2009; 2013ա; 2013բ; 2016; 2017ա; 2017բ; 2017գ; 2019;ա; 2019բ; 2020; Казарян 2019; Ghazaryan 2016a; 2016b; 2016c; 2016d; 2017a; 2017b; 2017c:

<sup>55</sup> Հմայակյան 2004; 2007; 2016; 2017:

<sup>56</sup> Խանգաղյան, 2004; 2007:

<sup>57</sup> Bittel 1950; 1970; Koşay 1951; 1973; Bittel, Naumann 1952; 1957; Neve 1987; Gorny 1990; Steiner 1993; Özgüç 1971; 1977; 1988; 1999 և այլն:

անտրական գաղութների գործունեությունն արտացոլող հազարավոր սեպագիր տեքստերում:<sup>58</sup> Վերջիններիս թիվը ներկայումս անցնում է 22 հազարից:<sup>59</sup>

Ավելի վաղ շրջանի մասին որոշ տեղեկություններ կան Աքքադի արքաներ Սարգոն I-ի և Նարամսինի տեքստերում, որտեղ ներկայացված են վերջիններիս արշավանքները դեպի Փոքր Ասիա: Մրանց հաղորդած տեղեկություններին պետք է հավելել նաև հին խեթական շրջանի երկու տեքստեր: Հետագայի խեթական սեպագրական աղբյուրներում այս ժամանակաշրջանի պատմությունը որևէ կերպ արտացոլված չէ, բացառությամբ մի առասպելաբանական բնույթի տեքստից:

1. Սարգոնի արշավանքը նկարագրող տեքստը (այսպես կոչված «Ռազմի արքան», արքադ. *šar tamhari*): Ներկայացնում է փոքրասիական Բուրուշխաթթում պետության արքա Նուր-Դագանի դեմ կազմակերպված արշավանքը, որի նպատակը այս բնակավայրում ապրող արքադցի առևտրականներին պաշտպանելն էր: Տեքստը պահպանվել է նաև խեթական մայրաքաղաք Խաթթուսասում մի քանի տարբերակներով՝ արքադերեն և խեթերեն:<sup>60</sup> Հնարավոր է, որ Սարգոնի արշավանքը իրոք կարող էր պատմական հիմքեր ունենալ:<sup>61</sup>

2. Աքքադի արքա Նարամսինի տեքստը դեպի Փոքր Ասիա կազմակերպած արշավանքի մասին: Այն ներկայացնում է Նարամսինի հաղթանակը 17 արքաների նկատմամբ, որոնց շարքում հիշատակվում են Քանեսի և Խաթթիի արքաները:<sup>62</sup>

---

<sup>58</sup> Lewy 1926; Matouš und Matoušová-Raymová 1984; Durand 1997; Donbaz 1989; Bilgiç 1990; Bilgiç and Bayram 1995; Michel 2001; 2011; Veenhof 2010; Günbattı 2004 և այլն:

<sup>59</sup> Michel 2011: 319.

<sup>60</sup> CTH 310 = Խեթերեն տարբերակի կրկնօրինակները՝ KBo III 9; KBo III 10; KBo XIII 46; KBo XXII 6; KBo XII 6; KUB XLVIII 98 (հրատ.՝ Güterbock 1938: 45-49; 1969; Rieken 2001; Groddek 2008: 13-19 [տառադարձում]) և այլն: Պահպանվել է մ.թ.ա. XIII դարում կատարված պատճենի տեքստով:

<sup>61</sup> Güterbock 1983: 26-27.

<sup>62</sup> CTH 311 = KBo III 16-20; KBo III 8; KBo III 13; KBo XXII 85; KUB XXXI 1; KBo LVIII 38; IBOT 4.7 (հրատ.՝ Güterbock 1934: 69-79; Gurney 1955). Պահպանվել է մ.թ.ա. XIII դարում կատարված պատճենի տեքստով:

3. Մաւամայի արքա Անոււմ-Խիբբիի նամակը՝ ուղղված Քանեսի արքա Վարշամային («Անոււմ-Խիբբի»):<sup>63</sup>

4. «Քանեսի թագուհին և Յալպա քաղաքի պատմությունը» անվանումը կրող տեքստը («Յալպա»):<sup>64</sup>

Աշշուրի առևտրական գաղութների գործունեությունն արտացոլող տեքստերը բովանդակությամբ բաժանվում են հետևյալ խմբերի՝ առևտրական գործարքների վերաբերյալ նամակներ, իրավաբանորեն ձևակերպված պայմանագրեր (հիմնականում պարտքի ձևակերպում), առևտրական գործունեությանն առնչվող ցուցակներ (իրեր, կենդանիներ և այլն), Փոքր Ասիայից Աշշուր ուղարկվող թանկարժեք մետաղների մասին տեղեկանքներ և այլն:<sup>65</sup>

Նամակների շարքում իր բովանդակությամբ առանձնանում է մեկը՝ գրված փոքրասիական Մաւամա քաղաքի կառավարիչ (տեքստում՝ rubâ'am "իշխան") Անոււմ-Խիբբիի կողմից՝ ուղղված Քանեսի կառավարիչ Վարշամային:<sup>66</sup> Փաստացի, սա մի եզակի նամակ է, որտեղ արտացոլված են երկու փոքրասիական քաղաք-պետությունների փոխհարաբերությունները:

Բուն խեթական դարաշրջանի պատմության հիմնական աղբյուրները կազմում են մայրաքաղաք Խաթթուսասից և այլ բնակավայրերից հայտնաբերված սեպագիր տեքստերը: Ստորև կներկայացնենք այն տեքստերը, որոնք հանդիսանում են Խեթական պետության պատմության հիմնական սկզբնաղբյուրները:

### **ՀԻՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

Խեթական Հին թագավորության պատմության ուսումնասիրման աղբյուրագիտական հենքը կազմում են մի քանի հիմնական տեքստեր, որոնք պահպանվել են գերազանցապես ավելի ուշ շրջանում կազմված արտագրությունների տեսքով: Փաստացի դրանք

<sup>63</sup> CTH 2 = KBo XII 3; KUB XXXVI 99; KBo L 2 (հրատ.՝ Balkan 1957).

<sup>64</sup> CTH 3 = KBo III 38 (կրկնօրինակներ՝ KBo XII 18; KBo XII 19; KBo XII 63; KBo XIX 92; KBo XXII 2; KUB XXIII 23) և այլն (հրատ.՝ Otten 1973): Պահպանվել է մ.թ.ա. XIII դարի պատճենի տեսքով:

<sup>65</sup> Steu Veenhof, Eidem 2008: 50-54.

<sup>66</sup> Balkan 1957; նաև Orlin 1970: 97-99.



բնագրային արժեք ունեն, չնայած, հնարավոր է, նախնական տեքստերը որոշ խմբագրման են ենթարկվել քաղաքական նկատառումներից ելնելով: Հին թագավորության աղբյուրների շարքին են դասվում նաև դրա կազմավորմանը նախորդող շրջանի աղբյուրները, այն է՝ Կուսսարի արքայատոհմի կառավարման ժամանակահատվածը, քանի որ վերջին շրջանի ուսումնասիրությունները թույլ են տալիս անմիջական կապ տեսնելու այդ փուլի և Հին թագավորության միջև:

### **Կուսսարի արքայատոհմ**

Կուսսարի արքա Անիտտասի տեքստը, որտեղ նկարագրվում է Նեսա (Քանես) քաղաքի նվաճումը Կուսսարի արքա Պիթխանայի որդի Անիտտասի կողմից ("Անիտտաս")<sup>67</sup>:

### **Խաթթուսիլիս I**

1. "Խաթթուսիլիսի Տարեգրությունները", որտեղ ներկայացված են նրա կառավարման առաջին հինգ (հնարավոր է, վեց) տարվա արշավանքները:<sup>68</sup> Վերջիններս ընդգրկում են արքայի մղած պատերազմները Փոքր Ասիայում և Սիրիայում: Պարզ չէ, արդյոք տարեգրություններում արտացոլված են արքայի կառավարման առաջին տարիների արշավանքները, ինչպես ենթադրում է մասնագետների մեծ մասը, թե սա նրա բոլոր պատերազմների առավել նշանակալից իրադարձությունների ամփոփ շարադրանքն է:<sup>69</sup>

---

<sup>67</sup> CTH 1 = Պահպանվել է երեք տարբերակներով KBo III 22; KUB XXVI 71; KUB XXXVI (+) 98a (+) 98b (վերջին տարբերակի հավանական կցարեկորները՝ KBo XXII 5; KUB III 22; KBo L 1) (հրատ.՝ Neu 1974; Bryce 1983: 21-49 [թարգմ.]). Տեքստը պահպանվել է Հին խեթական շրջանի բնագրով և մ.թ.ա. XIII դարի պատճենի տեսքով (գրվել է Անիտտասից շուրջ 150 տարի հետո – Neu 1974: 3-9):

<sup>68</sup> CTH 4 = KBo X 1; KBo X 2 (կրկնօրինակներ՝ KUB XXIII 31; IBoT III 134 (+) KUB XXIII 41; VBoT 13 + KUB LVII 48; KUB LX 6 + KUB XXIII 33 (+) XXIII 20); KBo X 3). Հրատ.՝ Imparati-Saporetti 1965; Bryce 1983: 49-99 (թարգմ.); Houwink ten Cate 1983; 1984 (տեքստաբանական քննությունը): Տեքստը պահպանվել է մ.թ.ա. XIII դարի պատճենի տեսքով՝ խեթերեն և արքադերեն գուգահեռ տարբերակներով:

<sup>69</sup> Kempinski and Košak 1982: 109.

2. Տարեգրությունների ոճով շարադրված տեքստ, որտեղ ներկայացված են արքայի ձեռնարկումներն ընդդեմ խուրրիների:<sup>70</sup> Հնարավոր է, պատկանում է Մուրսիլիս I-ին:

3. Խաթթուսիլիսի “Հռչակագիրը”:<sup>71</sup>

4. Խաթթուսիլիսի “Քաղաքական կտակը”:<sup>72</sup> Այստեղ արքան հիմնավորում է Մուրսիլիսին գահաժառանգ նշանակելու անհրաժեշտությունը, ինչպես նաև տեղեկություններ են հաղորդվում նրա նախնիներից Լաբարնասի մասին:

5. Հյուսիսսիրիական Ուրշու քաղաքի պաշարումը նկարագրող Խաթթուսիլիսի տեքստը (“Ուրշու”):<sup>73</sup>

6. Խաթթուսիլիսի պատերազմները Սիրիայում, մասնավորապես ընդդեմ Յամհադի (“Հալեպ”):<sup>74</sup>

7. Տեքստ խուրրիների դեմ մղված պատերազմների մասին:<sup>75</sup> Հնարավոր է, պատկանում է Մուրսիլիս I-ին:

8. “Պուխանուի ժամանակագրությունը” և պատերազմը խուրրիների դեմ:<sup>76</sup> Հնարավոր է, պատկանում է Մուրսիլիս I-ին:

9. Կան նաև զգալի քանակությամբ տեքստեր կազմված ուշ շրջանում, որտեղ ներկայացված են Խաթթուսիլիսի, Մուրսիլիս I-ի և Խանտիլիս I-ի գործունեությունն արտացոլող տեղեկություններ:<sup>77</sup>

---

<sup>70</sup> CTH 13 = KBo III 46 + KUB XXVI 75 (կրկնօրինակ՝ KBo III 53 + KBo XIX 90 (+) KBo III 54). Հրատ. Kempinski – Kořak 1982; De Martino 1992: 24-28. պահպանվել է մ.թ.ա. XIII դարի պատճենի տեսքով:

<sup>71</sup> CTH 5 = KBo III 27 (հրատ. Sommer und Falkenstein 1938). պահպանվել է մ.թ.ա. XIII դարի պատճենի տեսքով:

<sup>72</sup> CTH 6 = KUB I 16 + KUB XL 65 (հրատ. Sommer und Falkenstein 1938; նաև Bryce 1983: 98-131 [թարգմ.]). պահպանվել է մ.թ.ա. XIII դարի պատճենի տեսքով:

<sup>73</sup> CTH 7 = KBo I 11 (հրատ. Güterbock 1938: 114-139; Marazzi 1986: 25-44).

<sup>74</sup> CTH 8 և 9 = KBo III 34 (կրկնօրինակներ՝ KBo III 35; KBo III 36; KUB XXXVI 104 և այլն) (հրատ. Kühne 1972: 242-249; Soysal 1989: 10-16, 83-86): Պահպանվել է համաժամանակյա և մ.թ.ա. XIII դարում կատարված պատճենների տեսքով:

<sup>75</sup> CTH 17.1 = KBo III 60 (հրատ. Güterbock 1938: 104-113; Soysal 1988: 107-128).

<sup>76</sup> CTH 16 = KUB XXXI 4 + KBo III 41 (կրկնօրինակ՝ KBo XII 22; KBo XIII 78; KBo III 40 (կրկնօրինակ՝ KBo XIII 78; KBo III 43 (+ KUB XXXI 4 + KBo III 41); KBo III 42 (+) KBo III 40 (հրատ. Soysal 1987: 173-253).

<sup>77</sup> Steu Klengel 1999: 41-43.

## **Մուրսիլիս I<sup>78</sup>**

Մի շարք տեքստերի վերագրումը Մուրսիլիսի կառավարման շրջանին ներկայումս հարցականի տակ է: Տեքստերում առկա էական վնասվածքների պատճառով հնարավոր չէ պարզել արդյոք դրանք պատկանել են Մուրսիլիսին թե Խաթթուսիլիս I-ին (տես վերը համ. 2, 7, 8): Մուրսիլիսը հիշատակվում է նաև Խաթթուսիլիսի որոշ տեքստերում (համ. 3, 4):

Մուրսիլիսի գործունեության մի շարք դրվագներ արտացոլված են հետագա շրջանի արքաների օրոք կազմված տեքստերում:<sup>79</sup>

1. "Հավաքական աղյուսակ" պայմանական անվանումը կրող տեքստը (կազմված է Խանտիլիս I-ի օրոք), որտեղ ներկայացված են Խաթթուսիլիս I-ի, Մուրսիլիս I-ի և Խանտիլիս I-ի օրոք տեղի ունեցած որոշ իրադարձություններ:<sup>80</sup>

2. "Տելեպինուսի հռչակագիրը". առկա են, մասնավորապես, Մուրսիլիսի կողմից Հալեպը և Բաբելոնը գրավելու ու թալանելու, ինչպես նաև Խանտիլիսի կողմից նրա սպանվելու մասին տեղեկություններ (տես ստորև):

3. Մուրսիլիս II-ի աղոթքը ուղղված Արիննա քաղաքի արևի աստվածուհուն, որտեղ հիշատակվում է Հալեպի և Բաբելոնի նվաճումը:<sup>81</sup>

4. Դեպի Բաբելոնիա կազմակերպած արշավանքը հիշատակվում է նաև միջազգետրյան տեքստերում:<sup>82</sup>

## **Ամմունաս**

Ամմունաս I-ի ժամանակագրությունը, որտեղ ներկայացված են արքայի կառավարման շրջանում նրա մղած պատերազմները Փոքր Ասիայի տարբեր շրջաններում:<sup>83</sup>

---

<sup>78</sup> Մուրսիլիսի կառավարումն արտացոլող տեքստերի նկարագիրը տես Klengel 1999: 59-64:

<sup>79</sup> Այդ տեքստերի հրատարակությունը տես Soysal 1989:

<sup>80</sup> CTH 11 = KBo III 57 (կրկնօրինակ՝ KUB XXVI 72). հնագրական չափանիշներից ելնելով ենթադրվում է, որ գրված կամ արտագրված է մ.թ.ա. XIII դարում:

<sup>81</sup> CTH 376 = KUB XXIV 3 + 544/u + KUB XXXI 44 (հրատ.՝ Gurney 1940; Lebrun 1980: 155-179).

<sup>82</sup> Բաբելոնյան ժամանակագրություններ՝ Grayson 1975: 45-49 և 156 (համ.20)(Güterbock 1934: 79-86):

## Տելեպինուս

1. Տելեպինուսի “Նոչակագիրը”. նախորդող դարաշրջանի արքաների գործունեության համառոտ, ժամանակագրական եղանակով շարադրված նկարագիրը<sup>84</sup>:

2. **KBo XII 8.** – տեքստ, որտեղ ներկայացված են Տելեպինուսի կառավարման շրջանի իրադարձությունները<sup>85</sup>:

3. Պայմանագիր կնքված Կիցցուվատնայի արքա Իսպուտախսու-լի հետ (“Իսպուտախսու”):<sup>86</sup>

Տելեպինուսի կառավարման շրջանին անդրադարձներ կան նաև ավելի ուշ շրջանի որոշ տեքստերում:<sup>87</sup>

Տելեպինուսից հետո Հին թագավորության պատմության վերաբերյալ առկա գրավոր աղբյուրները իրենց պահպանած օգտակար տեղեկատվության առումով անհավասարաչափ կերպով են բաշխվում: Դրանց շարքում ներկայացված են Տելեպինուսի հաջորդ Տախուրվախիլից մինչև Մուվատալլիս I ընկած ժամանակահատվածն ընդգրկող տեքստերը (մ.թ.ա. XV դարի առաջին կես): Սրանց թիվը խիստ սահմանափակ է, համապատասխանաբար նաև տեղեկատվության քանակը: Հաճախ այս փուլում իշխած արքաների մասին ավելի կարևոր տեղեկություններ են պահպանել շատ ավելի ուշ շրջանի տեքստերը (օրինակ, Խաթթուսիլիս III-ի): Սրանք գերազանցապես ներկայացնում են երկրի ներքին կյանքում տեղ գտած այս կամ այն իրադարձությունը (օրինակ, հողի նվիրատվության ակտեր):

1. Տախուրվախիլի և Կիցցուվատնայի արքա Էխեյայի պայմանագիրը (“Էխեյա”):<sup>88</sup>

---

<sup>83</sup> CTH 18 = KUB XXVI 71 (կրկնօրինակ՝ KUB XXXVI 98b) և KBo III 59. Տեքստը պահպանվել է մ.թ.ա. XIII դարում կատարված պատճենի տեսքով:

<sup>84</sup> CTH 19 = KUB III 85 և դրա աքթադերեն կրկնօրինակը (խեթերեն կրկնօրինակների՝ KBo III 1 + 5 + KBo III 68 + KBo XII 7)[հրատ.՝ Hoffmann 1984; Bryce 1983: 131-161՝ թարգմ.].

<sup>85</sup> CTH 20 = KBo XII 8 և տեքստի զուգահեռ տարբերակը՝ KBo XII 9 (հրատ.՝ Carruba 1974; Hoffmann 1984: 63-67).

<sup>86</sup> CTH 21 = KUB IV 76 (կրկնօրինակ՝ KUB XXXI 82 [աքթադ.]; KUB XXXI 81; KBo XIX 36 և 37 [խեթ.]). հրատ.՝ Devicchi 2015: 63-65).

<sup>87</sup> Steu Klengel 1999: 77-78.

2. Յիդանտաս II-ի և Կիցցուվատնայի արքա Պիլլիայի պայմանագիրը ("Պիլլիյա"):<sup>89</sup>

3. Խուցցիյաս II-ի և Կիցցուվատնայի արքա Պադդատիշուի պայմանագիրը ("Պադդատիշու"):<sup>90</sup>

4. KUB XXXIV 40+41 (Խաթթիում գահակալական պայքարի մասին, գահը բռնազավթող Մուվատալլիս I-ի սպանությունը Կանտուցիլիսի և Խիմուիլիի կողմից):<sup>91</sup>

## ՆՈՐ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Խեթական Նոր թագավորության (երբեմն կիրառվում է նաև "կայսերական դարաշրջան" տերմինը) պատմության աղբյուրները խիստ բազմաքանակ և բազմազան են: Դրանք ներառում են ոչ միայն բուն իսթական սեպագրական տեքստերը, որոնց հիմնականում մ.թ.ա. XIII դարում ավելանում են նաև իսթական մի շարք արքաների հիերոգլիֆային լուվիերենով գրված կոթողային արձանագրությունները, այլև համաժամանակյա ասորեստանյան, բաբելոնյան, միտանական և եգիպտական աղբյուրները: Նոր թագավորության քաղաքական պատմության ուսումնասիրության համար առանձնահատուկ նշանակություն ունեն հետևյալ սկզբնաղբյուրները:

1. Թուլխալիյաս II-ի և Առնուվանդաս I-ի "Տարեգրությունները":<sup>92</sup>

2. Արևմտյան Փոքր Ասիայի իսթահպատակ կառավարիչներից Մադդուվատտասի գործունեությունը ("Մադդուվատտաս"):<sup>93</sup>

---

<sup>88</sup> CTH 29 = KBo XXVIII 107-109 և KBo XXVIII 109 + KUB III 13. աքքադերենով գրված այս պայմանագիրը պահպանվել է խիստ վնասված տեսքով:

<sup>89</sup> CTH 25 = KUB XXXVI 108 (հրատ.՝ Otten 1951; Del Monte 1981).

<sup>90</sup> CTH 26 = KUB XXXIV 1 + KBo XXVIII 105a+105b (հրատ.՝ Beckman 1996: 11-13); պայմանագրի վերագրումը Խուցցիյաս II-ին (Beal 1986: 437) հնարավոր չէ վստահաբար ընդունել (Klengel 1999: 98):

<sup>91</sup> CTH 271.

<sup>92</sup> CTH 142, 143 = KUB XXIII 27; KUB XXIII 11; KUB XXIII 12; KBo XII 35; KUB XXIII 18 (Թուլխալիյաս II); KUB XXIII 21; KUB XXIII 14; KUB XXIII 116; KUB XXIII 49; KUB XXIII 26; KUB XXIII 65 (Առնուվանդաս I)( իսթերեն, հրատ.՝ Carruba 1977: 156-165, 166-171): Թուլխալիյասի և Առնուվանդասի կառավարման շրջանի իրադարձություններն արտացոլող տեքստերի ամբողջական ցանկը տես Klengel 1999: 103-109, 116-121.

3. Թուղխալիյաս II-ի և Կիցցուվատնայի արքա Մունասսուրայի միջև կնքված պայմանագիրը ("Մունասսուրա"):<sup>94</sup>

4. "Պախխուվացի Միտաս" պայմանական անվանումը կրող հրահանգ-պայմանագիրը ("Միտաս"):<sup>95</sup>

5. Պայմանագիր Առնուվանդաս I-ի և Իսմերիգայի ժողովրդի միջև ("Իսմերիգա"):<sup>96</sup>

6. Առնուվանդաս I-ի և թագուհի Ասմունիկայի աղոթքը ուղղված Արևի աստվածուհուն,<sup>97</sup> որտեղ հիշատակվում է կասկերի հարձակումների հետևանքով հյուսիսի մի շարք քաղաքների, այդ թվում՝ պաշտամունքային խոշոր կենտրոն Ներիկի տաճարների ավերումը:

7. Մ.թ.ա. XIII դարի իսթական արքա Խաթթուսիլիս III-ի "Հոչակագիրը" Պիրվա աստծո *խեկուր* կոչվող տաճարը հարկերից ազատելու մասին:<sup>98</sup> Այստեղ ներկայացվում են Թուղխալիյաս III-ի կառավարման շրջանում տեղ գտած նվաճված երկրների ապստամբությունները և արշավանքները դեպի Խաթթի (այսպես կոչված "Շրջանաձև ներխուժում"):

---

<sup>93</sup> CTH 147 = KUB XIV 1 + KBo XIX 38 (խեթերեն, հրատ.՝ Götze 1928; Beckman 1996: 144-151 [N.27]).

<sup>94</sup> CTH 41 և 131 – Պահպանվել է աքքադերեն (չորս) և իսթերեն (երկու) տարբերակներով՝ աքքադերեն տարբերակ A – KBo I 5; B – KUB III 4; C – KBo XXVIII 106; C – KBo XXVIII 75; իսթերեն տարբերակ A – KUB VIII 81 + KBo XIX 39; B – KUB XXXVI 127 (հրատ.՝ Weidner 1923: 88-111; Del Monte 1981: 215-229; Beckman 1996: 13-22 [N.2][թարգմ.]); պայմանագրի վերագրումը Թուղխալիյաս II-ին՝ Beal 1986; Wilhelm 1988.

<sup>95</sup> CTH 46 = KUB XXIII 72+ (խեթերեն, հրատ.՝ Gurney 1948; Kosyan 2006a; Քոսյան և այլք 2018: 10-44 [նաև բոլոր կցաբեկորների ցանկը և տեղը միասնական տեքստում]; Reichsmuth 2011).

<sup>96</sup> CTH 133 = KUB XXVI 41 (+) KUB XXIII 68 (+ ABoT I 58) + KUB XXIII 113 (խեթերեն, հրատ.՝ 1969– Košak 1970).

<sup>97</sup> CTH 375 = KUB XVII 21+, KUB XXXI 124+, KUB XXIII 115; KUB XXIII 17; KUB XXXI 117+ (խեթերեն, հրատ.՝ Von Schuler 1965: 152-167; Lebrun 1980: 132-154 [ամբողջական հրատ.] Singer 2002: 40-43 [թարգմ.]); Տեքստը պահպանվել է մի քանի խմբագրություններով:

<sup>98</sup> CTH 88 = KBo VI 28 + KUB XXIII 123 և KUB XXXI 15)(խեթերեն, ամբողջական հրատ.՝ Քոսյան 2016: 69-81): Բոլոր կողմերից իսթական պետության վրա թշնամական երկրների հարձակման մասին պատմող հատվածը տես Forrer 1926.I: 35-36 (ԴԿ 6-18); Goetze 1940: 21-26 (ԴԿ 6-15); Манахьян 1956: 78; Խաչատրյան 1998: 53 և այլն:

8. “Մուպպիլուլիումսաի գործունեությունը” անվանումը կրող տեքստը, որտեղ նկարագրվում են Թուղխալիյաս III-ի արշավանքները, որոնց նպատակը հակառակորդ երկրների հարձակումների հետևանքով կորցրած տարածքների վերանվաճումն էր:<sup>99</sup>

9. Թուղխալիյաս III-ի նամակը առաքված Տապիզգա քաղաքում գտնվող խեթական պաշտոնյային,<sup>100</sup> որտեղ հանձնարարվում է տարբեր շրջաններից գորբեր հավաքել դեպի Հայասս արշավանք կազմակերպելու նպատակով (“Ջորահավաք”):

10. Խեթական արքայի և Տապիզգայում գտնվող պաշտոնյաների նամակագրությունը կապված տարբեր խնդիրների հետ:<sup>101</sup>

10. Առնուվանդաս I-ի և կասկերի հետ կնքված պայմանագրի բեկորներից մեկը, որտեղ հիշատակվում է արևելյան շրջաններում իրականացված գորահավաքը:<sup>102</sup> Այստեղ անվանապես հիշատակվում են Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հյուսիս-արևմտյան շրջաններից հավաքված պայմանագրային զինվորները (կամ ջուկատների հրամանատարները):

11. Պայմանագիր Թուղխալիյասի և Հայասայի կառավարիչ Մարիյասի միջև,<sup>103</sup> որը կնքված է Կումմախայի ճակատամարտից որոշ ժամանակ անց նվաճված (կամ հպատակեցված) Մարիյասի հետ (“Մարիյաս”):

---

<sup>99</sup> CTH 40 (խեթերեն, տեքստը հավաքված է մի քանի տասնյակ կցաբեկորներից, որոնց ցանկը, միակցումը և հրատ. Güterbock 1956): Հայագիտական ուսումնասիրություններում այս տեքստի մասնակի հրատարակությունները տես Хачатрян 1971: 149-152 (այստեղ սխալմամբ երևու տեքստ վերագրված են Խաթթուսիլիս III-ին՝ KUB XIX 10 և 11), նաև տույն աշխատության մեջ՝ տարբեր զլխաբառերի տակ զետեղված թարգմանությունները; Խաչատրյան 1998: 55-58 (հասվածական թարգմ.): Քոսյան 2016ա: 86-104.

<sup>100</sup> CTH 188 = Alp 1991: 298-301 (N.96)(խեթերեն, նաև՝ Քոսյան 2001: 233-245 [կից պատմագիտական մեկնաբանություններով]); Hoffner 2009: 162-166 (թարգմ.).

<sup>101</sup> CTH 186 – Ներկայացված է մեծաքանակ նամակներով (խեթերեն, հրատ.՝ Hagenbuchner 1989; Alp 1991; Hoffner 2009 և այլն).

<sup>102</sup> CTH 140 = KUB XXVI 62 (խեթերեն, հրատ.՝ Schuler von 1965: 142-145; Քոսյան 2004գ).

<sup>103</sup> CTH 42 (IV սյունակ) = KBo V 3+ և KBo XIX 44+ (խեթերեն, բազմաթիվ կցաբեկորների համահավաքը և հրատ.՝ Friedrich 1930: 130-136 և 191-163; Akdoğan 2009; Քոսյան 2016: 59-67).

12. Պայմանագիր Սուպպիլուլիումաս I-ի և Միտտանիի արքա Շատտիվազայի միջև («Սուպպիլուլիումաս - Շատտիվազա»):<sup>104</sup> Պայմանագիրը կնքվել է Միտտանին նվաճելուց և այնտեղ խեթերից կախյալ պետության նախկին արքա Տուշրաթթայի որդի Շատտիվազային արքա նշանակելուց հետո:

13. Պայմանագիր Միտտանիի արքա Շատտիվազայի և Սուպպիլուլիումաս I-ի միջև («Շատտիվազա - Սուպպիլուլիումաս»):<sup>105</sup>

14. Պայմանագիր Սուպպիլուլիումաս I-ի և Հայասայի կառավարիչ Խուկկանասի միջև («Խուկկանաս»):<sup>106</sup> Կնքված է դեպի Հայասա խեթական արքայի արշավանքին հաջորդած՝ Խուկկանասին Հայասայի կառավարիչ նշանակելուց հետո, հավանաբար, Սուպպիլուլիումասի կառավարման վաղ շրջանում, նախքան միտտանական արշավանքների սկիզբը:

15. Պայմանագիր Սուպպիլուլիումաս I-ի և Կարգամիսի քույր թագավորության արքա Շարրի-Կուշուխի (= Պիյասսիլի) միջև («Պիյասսիլի»):<sup>107</sup>

16. Պայմանագիր Սուպպիլուլիումաս I-ի և Ուգարիտի արքա Նիքմադու II-ի միջև («Նիքմադու»):<sup>108</sup>

17. Պայմանագիր Սուպպիլուլիումաս I-ի և Նուխաշշեի արքա Տետտեի միջև («Տետտե»):<sup>109</sup>

---

<sup>104</sup> CTH 51 = Պահպանվել է աքքադերեն և խեթերեն տարբերակներով: Աքքադերեն՝ տարբերակ A - KBo I 1; տարբերակ B - KBo I 2; տարբերակ C - KUB III 1a-d + KBo XXVIII 111+112+114+113; խեթերեն տարբերակ՝ KUB XXI 18 + KUB XXVI 34 (հրատ.՝ Weidner 1923: 2-27 [աքքադ.]; Laroche 1969 [խեթերեն]; Beckman 1996: 38-44 [N.6A])(թարգմ.); Քոսյան և այլք 2018: 79-84 [հատված. հրատ.].)

<sup>105</sup> CTH 52 = Պահպանվել է աքքադերեն և խեթերեն տարբերակներով: Աքքադերեն՝ KBo I 3 + KUB III 17 (հրատ.՝ Weidner 1923: 36-57); խեթերեն՝ KUB XXIII 50 + KBo L 18 + HT 2 + KBo VIII 80 (հրատ.՝ Beckman 1993; Beckman 1996: 44-50 [N.6B][թարգման.].)

<sup>106</sup> CTH 42 = KBo V 3+ և KBo XIX 44+ (խեթերեն, բազմաթիվ կցաբեկորների համահավաքը և հրատ.՝ Friedrich 1930: 103-131 և 137-161; Akdoğan 2009; Քոսյան 2016: 59-67); Beckman 1996: 22-30 [N.3][թարգմ.]; Klinger 2005: 106ff.; Քոսյան 2016: 16-67 [ամբողջական հրատարակություն]:)

<sup>107</sup> CTH 50 = KUB XIX 27 (խեթերեն).

<sup>108</sup> CTH 46 = RŞ 17.340 և RŞ 17.369 (աքքադերեն, հրատ.՝ Nougayrol 1956: 48-52; Beckman 1996: 30-32 [N.4] [թարգմ.].)



18. Պայմանագիր Մուպպիլուիումաս I-ի և Ամուրրուի արքա Ազիբուի միջև (“Ազիբու”):<sup>110</sup>

19. Մուրսիլիա II-ի տարեգրությունները (“Տարեգրություններ”):<sup>111</sup>

20. Պայմանագիր Մուրսիլիա II-ի և Ամուրրուի արքա Դուպպի-Թեշուբի միջև (“Դուպպի-Թեշուբ”):<sup>112</sup>

21. Պայմանագիր Մուրսիլիա II-ի և Ուգարիտի արքա Նիքմեպպի միջև (“Նիքմեպպ”):<sup>113</sup>

22. Պայմանագիր Մուրսիլիա II-ի և Խապալլայի արքա Տարգասնալլիսի միջև (“Տարգասնալլիս”):<sup>114</sup>

23. Պայմանագիր Մուրսիլիա II-ի և Միրա-Կուվալիյայի արքա Կուպանտա-Կուրունտայի միջև (“Կուպանտա-Կուրունտա”):<sup>115</sup>

---

<sup>109</sup> CTH 53 = Պահպանվել է թվով հինգ աքքադերեն տարբերակներով՝ A - KBo I 4 + KUB III 10(+); B - KUB III 2; C - KBo I 16; D - KUB III 3; E - KBo XXVIII 98 (աքքադերեն, հրատ.՝ Weidner 1923: 58-71; Del Monte 1986: 142-155; Beckman 1996: 50-54 [N.7] [թարգմ.]).

<sup>110</sup> CTH 49 – Պահպանվել է աքքադերեն և խեթերեն տարբերակներով: Աքքադերեն A - KUB III 7 + 122 + KUB IV 94; B - KUB III 19 + KUB XLVIII 71; C - KBo XXVIII 140; D - Bo 9200; E - KBo XXVIII 118; F - Bo 9201; խեթերեն տարբերակը՝ KBo X 12 (+) 13 (+) 12a (հրատ.՝ Weidner 1923: 70-75, 146-149[աքքադ.], խեթերեն՝ Freydank 1959; Del Monte 1986: 116-141 [աքքադերեն և խեթերեն]; Beckman 1996: 32-37 [N.5] [թարգմ.]).

<sup>111</sup> CTH 61 – Տեքստը հավաքված է մեծաքանակ կցաբեկորների համակցմամբ (Տարեգրությունները պահպանվել են երկու տարբերակներով՝ “10 տարվա” և “Ընդարձակ” [Götze 1933 [խեթերեն, կցաբեկորների տեղը, լիակատար հրատ. և տեքստաբանական մեկնաբանություններ]; Grelois 1988; Ղազարյան 2013ա]):

<sup>112</sup> CTH 62 = Պահպանվել է խեթերեն և աքքադերեն տարբերակներով: Աքքադերեն՝ KUB III 14; խեթերեն՝ A - KBo V 9; B - KUB III 119 (+) KUB XIV 5 (+) KUB XIX 48 + KUB XXIII 26 (+) KUB XXII 39; C - KUB XXI 49 (հրատ.՝ Weidner 1923: 76-79 [աքքադ.]; Friedrich 1926: 1-48, 179-181 [խեթերեն]; Del Monte 1986: 156-177 [աքքադերեն և խեթերեն]; Beckman 1996: 54-59 [N.8] [թարգմ.]).

<sup>113</sup> CTH 66 = Պահպանվել է երեք տարբերակներով՝ տարբերակ A - RŠ 17.338 + 17.349B + 17.407 + 17.342 + 17.351A + 17.39 + 17.374; տարբերակ B - RŠ 17.353 + 17.357 + 17.04 + 19.101 + 17.450; տարբերակ C - RŠ 21.53 (աքքադերեն, հրատ.՝ Nougayrol 1956: 84-101, 287-289; Kestemont 1974; Del Monte 1986; Lebrun 1992: 43-47 [թարգմ.]; Beckman 1996: 59-64 [N.9] [թարգմ.]).

<sup>114</sup> CTH 67 = KBo V 4 (խեթերեն, հրատ.՝ Friedrich 1926: 52-94; Beckman 1996: 64-69 [N.10] [թարգմ.]).

<sup>115</sup> CTH 68 (խեթերեն, պահպանվել է 11 տարբերակներով, հրատ.՝ Friedrich 1926: 95-179; Beckman 1996: 69-77 [N.11] [թարգմ.]).

24. Պայմանագիր Մուրսիլիս II-ի և Սեխա գետի երկրի արքա Մանապա-Թարխունտասի միջև («Մանապա-Թարխունտաս»):<sup>116</sup>

25. Պայմանագիր Մուվատալլիս II-ի և Վիլուսայի արքա Ալաքսանդրուսի միջև («Ալաքսանդրուս»):<sup>117</sup>

26. Պայմանագիր Մուվատալլիս II-ի և Հալեայի արքա Տալմի-Շարրումայի միջև («Տալմի-Շարրումա»):<sup>118</sup>

27. Ռամգես II-ի կոթողային արձանագրությունը Քադեշի ճակատամարտի մասին («Քադեշ»):<sup>119</sup>

28. Խաթթուսիլիս III-ի<sup>120</sup> տեքստը, որտեղ ներկայացված են Ուրիխ-Թեշուբի և Խաթթուսիլիսի հարաբերությունները, որոնք ավարտվեցին առաջինի գահազրկմամբ («Արդարացում»):<sup>121</sup>

29. Պայմանագիր Խաթթուսիլիս III-ի և Ռամգես II-ի միջև («Հավերժական բարեկամություն»):<sup>122</sup>

30. Պայմանագիր Խաթթուսիլիս III-ի և Ամուրրուի արքա Բենտեշինայի միջև («Բենտեշինա»):<sup>123</sup>

---

<sup>116</sup> CTH 69 = Պահպանվել է չորս տարբերակներով՝ տարբերակ A - KUB XIX 49 + KUB XXVI 36 (+) KBo XIX 70 (+) KUB XXIII 25 + KBo XXIII 41 + KBo XIX 71 + KBo XXII 34 + KBo XIX 72; տարբերակ B - KUB XIX 50 + KUB XXVI 59 + KUB XIV 26 + KUB XLVIII 74 + KUB XL 39; տարբերակ C - KUB XXXI 83; տարբերակ D - KUB XL 43 (խեթերեն, հրատ.՝ Friedrich 1930: 1-41; Beckman 1996: 77-81 [N.12][թարգմ.]).

<sup>117</sup> CTH 76 = Պահպանվել է վեց տարբերակներով՝ տարբերակ A - KUB XXI 1 + KUB XIX 6 + KBo XIX 73 + FHL 57 + KBo XIX 73a; տարբերակ B - KUB XXI 5 + KBo XIX 74; տարբերակ C - KUB XXI 2 + KUB XLVII 95 (+) KUB XXI 4 + KBo XII 36; տարբերակ D - KUB XXI 3; տարբերակ E - HT 8; տարբերակ F - KBo XIII 205 (խեթերեն, հրատ.՝ Friedrich 1930: 42-102; Beckman 1996: 82-88 [N.13] [թարգմ.]).

<sup>118</sup> CTH 75 = Պահպանվել է հինգ տարբերակներով՝ տարբերակ A - KBo I 6; տարբերակ B - KUB III 6; տարբերակ C - KUB III 5; տարբերակ D - KBo XXVIII 120; տարբերակ E - KUB XLVIII 72 (հրատ.՝ Weidner 1923: 80-89; Beckman 1996: 88-90 [N.14] [թարգմ.]).

<sup>119</sup> Gardiner 1960.

<sup>120</sup> Խաթթուսիլիս III-ի ժամանակներից պահպանված տեքստերի հրատարակությունը տես Únal 1974:

<sup>121</sup> CTH 81 - Կցաբեկորների ցանկը, դրանց տեղը միասնական տեքստում և հրատ. տես Otten 1981.

<sup>122</sup> CTH 91 - Պահպանվել է երեք տարբերակներով՝ տարբերակ A - KBo I 7 + KBo XXVIII 115 (+) KUB III 121; տարբերակ B - KBo I 25 + KUB III 11 + VBoT 6 + KUB XLVIII 73; տարբերակ C - KUB III 120 (հրատ.՝ Weidner 1923: 112-123; Edel 1997; Lebrun 1992: 48-53 [թարգմ.]; Beckman 1996: 90-95 [N.15] [թարգմ.]).

31. Պայմանագիր Խաթթուսիլիս III-ի և Թարխունտասսայի արքա Ուլմի-Թեշուբի միջև (“Ուլմի-Թեշուբ”):<sup>124</sup>

32. Բաբելոնի արքա Կադաշման-Տուրգուի նամակը Խաթթուսիլիս III-ին (“Կադաշման-Տուրգու”):<sup>125</sup>

33. Պայմանագիր Թուդիսալիյաս IV-ի և Ամուրրուի արքա Սաուզամուվասի միջև (“Սաուզամուվաս”):<sup>126</sup>

34. Պայմանագիր Թուդիսալիյաս IV-ի և Թարխունտասսայի արքա Կուրունտայի միջև (“Կուրունտա”):<sup>127</sup>

35. Թուդիսալիյաս IV-ի նամակը ուղղված Ախիսիյավայի արքային (“Միլավատայի նամակը”):<sup>128</sup>

36. Թուդիսալիյաս IV-ի ժայռագիր հիերոգլիֆային արձանագրությունը (“Յալբուրթ”):<sup>129</sup>

37. Թուդիսալիյաս IV-ի ժայռագիր հիերոգլիֆային արձանագրությունը (“Էմիրգագի”):<sup>130</sup>

38. Պայմանագիր Թուդիսալիյաս IV-ի և Իսուվայի արքայի (?) միջև կամ նրան հասցեագրված նամակ (“Նիխրիյա”):<sup>131</sup>

39. Սուպալիլուլիումաս II-ի ժայռագիր հիերոգլիֆային արձանագրությունը (“Չյուդբուրգ”):<sup>132</sup>

40. Էլ Ամարնայի նամակները (“Ամարնա”):<sup>133</sup>

---

<sup>123</sup> CTH 92 = KBo I 8+ KUB III 8 + KBo XXVIII 116 + KBo XXVIII 117 (աքքադերեն, հրատ.՝ Weidner 1923: 124-135; Del Monte 1986: 178-187; Beckman 1996: 108-118 [N.16] [թարգմ.]).

<sup>124</sup> CTH 106 = KBo IV 10 + KUB XL 69 + KBo L 60 (խեթերեն, հրատ.՝ Hout van den 1995; Beckman 1996: 104-108 [N.18B] [թարգմ.]).

<sup>125</sup> CTH 174 = KUB III 71 (աքքադերեն, հրատ.՝ Hagenbuchner 1989: 302-303 [N.206]).

<sup>126</sup> CTH 105 – Պահպանվել է երկու տարբերակներով՝ տարբերակ A – 93/w (+) KUB XXIII 1 + KUB XXXI 43 (+) KUB XXIII 37 (+) 720/v (+) 670/v; տարբերակ B – 1198/u + 1436/u + 69/281 + KUB VIII 82 (խեթերեն, հրատ.՝ Kühne – Otten 1971; Beckman 1996: 98-103 [N.17] [թարգմ.]).

<sup>127</sup> CTH 106.I.1 = Bo 86/299 (խեթերեն, հրատ.՝ Otten 1988; Beckman 1996: 108-118 [N.18C] [թարգմ.]).

<sup>128</sup> CTH 182 = KBo XVIII 117 + KUB XLVIII 90 + KUB XIX 55 (խեթերեն, հրատ.՝ Hoffner 1982: 130-137; Bryce 1985: 13-23; Hoffner 2009: 313-321 [թարգմ.] և այլն):

<sup>129</sup> Hawkins 1992.

<sup>130</sup> Hawkins 1995a: 86-103.

<sup>131</sup> CTH 123 = Bo IV 14 (խեթերեն, հրատ.՝ Stefanini 1965).

<sup>132</sup> Hawkins 1995a: 21-65.

<sup>133</sup> Moran 1992.

## ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Փոքր Ասիայի տարածքի հնագիտական ուսումնասիրությունները, ի տարբերություն Եգիպտոսի և Միջագետքի, սկսվեցին շատ ավելի ուշ: Ճակատագրի բերումով, առաջին պեղված հնավայրը խեթերի մայրաքաղաք Խաթթուսասն էր: Փոքրասիական տարածաշրջանի հնավայրերի սիստեմատիկ հետազոտությունը լայն թափ առավ Երկրորդ աշխարհամարտից որոշ ժամանակ անց: Ներկայումս հնագիտական ուսումնասիրություններն ընթանում են միաժամանակ բազմաթիվ հնավայրերում: Ստացված արդյունքները վկայում են այն մասին, որ թերակղզին բավական խիտ բնակեցված է եղել առնվազն նեոլիթյան դարաշրջանից: Ընդ որում այդ հնավայրերի մի մասը որոշ ընդմիջումներով շարունակել է գոյատևել նաև խեթական դարաշրջանում: Շատ դեպքերում ակնհայտ է մինչխեթական և խեթական դարաշրջանների միջև մշակութային շարունակականությունը:

### **Փոքր Ասիան նեոլիթում և էնեոլիթում**

Փոքր Ասիա թերակղզին Առաջավոր Ասիայի երեք հնագույն քաղաքակրթական կենտրոններից մեկն է, որը նշանակալից ավանդ ունի Առաջավոր Ասիայի վաղ քաղաքակրթական կենտրոնների կայացման և հետագա ծավալման գործում: Այստեղ ձևավորվեցին “Նեոլիթյան հեղափոխության” և դրան հաջորդող մշակութային համալիրներ, որոնց նշանակությունը դուրս է գալիս փոքրասիական տարածաշրջանի սահմաններից: Թերակղզու տարբեր հատվածներում “Նեոլիթյան հեղափոխության” ընթացքում և հատկապես դրա ավարտին ի հայտ եկած կենտրոնները մի շարք առումներով ակնհայտորեն ժամանակի առաջատար մշակութային համալիրներն էին, մասնավորապես մետաղամշակության ոլորտում:

Մինչև 2000-ական թվականների սկզբները հնագույն Փոքր Ասիայի քաղաքակրթական կենտրոնների ուսումնասիրությունն ընթանում էր ըստ առանձին հնավայրերի կամ միմյանց մոտ համալիրների հետազոտության ուղիով: Մակայն արդեն շուրջ երկու տասնամյակ հանդես են եկել ընդհանրացնող ուսումնասիրություններ,

որոնք թույլ են տալիս իմաստավորելու փոքրասիական մշակութային աշխարհը իր ներքին զարգացումների և համաժամանակյա քաղաքակրթական իրողությունների համատեքստում:<sup>134</sup>

Նեոլիթյան փուլում նստակյաց երկրագործական-անասնապահական տնտեսավարման և պաշտամունքային համակարգի ձևավորման ակնառու կենտրոններից էին *Չաթալիոյուք* (հարավային Փոքր Ասիայում, ժաման. Կոնյա քաղաքից հարավ-արևելք), *Հաջիլար* (հարավ-արևմտյան Փոքր Ասիայում՝ ժաման. Բուրդուր քաղաքից 25 կմ հարավ-արևմուտք), *Բեյջեսուլթան* (Փոքր Ասիայի արևմուտքում, Բյոյուք Մենդերես գետի կեոմանի շրջանում՝ ժաման. Չիվրիլ քաղաքից 5 կմ հարավ-արևմուտք), Մերսին (*Յուսուլթեկիե*), *Տարսուս* (Դաշտային Կիլիկիայում, ծովից 20 կմ հեռավորության վրա), *Քանես* (*Էյուլթեկիե*) և մյուս հայտնի հնավայրերը:

### ***Չաթալ հյոյուք***<sup>135</sup>

Նեոլիթյան փուլի Փոքր Ասիայի այս կարևորագույն հնավայրը գտնվում է ժաման. Կոնյա քաղաքից շուրջ 50 կմ հարավ-արևելք Չարշամբաչայ գետով ոռոգվող բերրի հարթավայրում: Այն թվագրվում է մ.թ.ա. VIII հազ. վերջերով – VI հազ. կեսերով: Ընդ որում VII հազ. կեսերից մինչև հնավայրի կենսագործունեության ավարտը հստակ թվագրվում է ռադիոածխածնային վերլուծության շնորհիվ (C 14): Հնավայրում արձանագրված են շինարարական գործունեության 18 հաջորդական շերտեր, ինչը վկայում է բնակչության կայուն կենսագործունեության մասին:

*Չաթալիոյուքը* ներկայանում է որպես միմյանց մոտ գտնվող մի շարք բլուրների վրա տեղադրված բնակավայրերի համալիր: Սրանցից առավել խոշորը օվալաձև արևելյան բլուրն է (450x275մետր, բարձրությունը 17.5 մետր), որտեղ, ըստ մոտավոր հաշվարկների, կարող էր բնակվել 5-7 հազար մարդ: Բոլոր բլուրների վրա կառուցված տները շարված էին մեկը մյուսին հպված. փողոցներ որպես այդպիսիք գոյություն չունեին: Արևելյան բլրի մշակութային շերտի

<sup>134</sup> Տե՛ս, օրինակ, Sagona and Zimansky 2009; Bachhuber 2011; Düring 2011 և այլն:

<sup>135</sup> Պեղումների արդյունքները տես Mellaart 1954; 1967:

հաստությունը հասնում է 19 մետրի, ինչը ավելին է քան Առաջավոր Ասիայի համաժամանակյա որևէ այլ հնավայր:

*Չաթալհյոյուքի* բնակչության կյանքում ակնառու դեր ունեին կրոնական հավատալիքները, ինչի վկայությունն են հայտնաբերված մեծ քանակությամբ Մայր աստվածության արձանիկները, ինչպես նաև բնակելի տների մի մասում պատերից կախված խորհրդանշական իրերը, այդ թվում կենդանիների գլուխները: Մա էգալիտար հասարակություն էր, և որևէ փաստ չի արձանագրված, որը կվկայի սոցիալական շերտավորման օգտին:

### *Հաջիլար*<sup>136</sup>

Այս ոչ մեծ հնավայրը գտնվում է ժաման. Հաջիլար գյուղից շուրջ 1.5 կմ արևմուտք, Անթալյա քաղաքից հյուսիս և զբաղեցնում է մոտավորապես 150 մետր տրամագծով և 5 մետր բարձրության բլուրը:

Հնավայրի կենսագործունեությունը սկսվում է մոտ. մ.թ.ա. 7000 թվականից և ընդգրկում է երեք փուլեր՝ 1. մինչկերամիկական նեոլիթյան, որին երկար ընդմիջումից հետո հաջորդում է 2. ուշ նեոլիթյան շերտը (*Հաջիլար IX-VI = 5750-5600թթ.*), այնուհետև՝ առանց ընդմիջման՝ 3. Վաղ էնեոլիթյան շերտը (*Հաջիլար V-J*): Հնավայրի կենսագործունեությունն ավարտվում է մոտ. մ.թ.ա. 5000թ.:

Մինչկերամիկական շերտն աչքի չի ընկնում հարուստ ինվենտարով: Հայտնաբերված ցորենի մնացորդները վկայում են բնակչության երկրագործական կենցաղավարման մասին: *Հաջիլարի* բնակչության կյանքում արմատական փոփոխությունների վկայությունն է հաջորդ՝ ուշ նեոլիթյան փուլի ավարտական շերտը: Հայտնաբերվել են խոշոր կացարաններ, միագույն, երբեմն գունազարդ խեցեղեն, կավե արձանիկներ և քարից պատրաստված անոթներ, նաև ցորենի և մթերքի մեծ քանակություն: *Հաջիլարի* Վաղ էնեոլիթյան փուլի վերջին՝ II և I շերտերը վկայում են հասարակության կյանքում տեղի ունեցած էական փոփոխությունների օգտին: Այդ մասին կարելի է ենթադրել բնակավայրի պարսպապատման, ինչպես նաև գունազարդ

---

<sup>136</sup> Mellaart 1970.

խեցեղենի պատրաստման նոր ավանդույթների ի հայտ գալու փաստի հիման վրա:

### *Բեյջետուլթան*<sup>137</sup>

Այս ընդարձակ բնակավայրը (600 x 400 մետր), որը բնակեցվում է առնվազն ուշ խակոլիթյան փուլից (մոտ. մ.թ.ա. 3800-3400 թթ.), գոյատևել է մինչև Ուշ բրոնզեդարի ավարտը, այն է՝ Խեթական տերության անկումը: Առ այսօր նույնականացված են բնակության 40 շերտեր, որոնք ընդգրկում են այս խոշոր ժամանակահատվածի բոլոր փուլերը, ներառյալ նաև մարդկային գործունեության բացակայության որոշ շրջաններ: *Բեյջետուլթանի* բնակության փուլերի պատկերը այսպիսին է.

XL-XX փուլեր – Ուշ խակոլիթ

XIX-VI – Վաղ բրոնզեդար

V-IV – Միջին բրոնզեդար

III-I – Ուշ բրոնզեդար

Վերոհիշյալ փուլերից V-IV-ը համապատասխանում են Աշշուրի առևտրական գաղութների գոյության շրջանին: Երկհարկանի, փայտից և հում աղյուսից կառուցված շինությունը վկայում է այն մասին, որ *Բեյջետուլթանը* պետք է լիներ տեղական կառավարչի նստավայր: Բնակավայրի կարևորությունը կարելի է բացատրել նրա հարմար աշխարհագրական դիրքով Կենտրոնական Փոքր Ասիայից դեպի Էգեյան ծովեզերք և, մասնավորապես, Տրոադա տանող ճանապարհին:

*Բեյջետուլթանի* վերջին երեք շերտերը համապատասխանում են Ուշ բրոնզեդարին և Վաղ երկաթեդարին, երբ այս տարածքն ընկած էր նախ խեթերի արևմտյան ուղղությամբ ծավալման ճանապարհին, այնուհետև՝ նրա ազդեցության գոտում, ի վերջո ավարտվելով Խեթական տերության տրոհումից հետո Փոքր Ասիայում ընթացող արմատական փոփոխությունների համատեքստում: Հնարավոր է, այս տարածքը ընդգրկված էր խեթական աղբյուրներից հայտնի Արցավա

---

<sup>137</sup> Պեղումների արդյունքները տես Lloyd and Mellaart 1962; Lloyd 1972; Mellaart and Murray 1995; հնավայրի նկարագիրը տես Burney 2004: 38-40; Bryce 2009: 122-123.

ընդհանրական անվանումը կրող քաղաքական միավորների կազմում:

### *Մերսին*<sup>138</sup>

Դաշտային Կիլիկիայի Մերսին քաղաքի հյուսիս-արևմտյան մասում գտնվող այս հնավայրը զբաղեցնում է շուրջ 250 մետր տրամագծով տարածք: Բնակեցված էր դեռևս նեոլիթյան փուլից: Հնավայրում առանձնացվել են բնակության 33 փուլեր՝ նեոլիթից մինչև միջնադար: Դեռևս նեոլիթում *Մերսինի* բնակչությունը առևտրական կապեր ուներ Կենտրոնական Փոքր Ասիայի և լևանտյան ծովեզերքի հետ, իսկ խակոլիթում այդ կապերն էլ ավելի են ընդարձակվում՝ ներառելով նաև Միջագետքը:

Միջին բրոնզեդարում *Մերսինը* վերածվում է խոշոր քաղաքական և տնտեսական կենտրոնի, ինչի վկայությունը տպավորիչ ամրաշինությունն է: Խեթական տիրապետության շրջանում *Մերսինի* դերը զգալիորեն աճում է պայմանավորված Արևելյան Միջերկրականից (Եգիպտոս և Լևանտ) դեպի Կենտրոնական Փոքր Ասիա տանող ծովային և ցամաքային հարմար ճանապարհի վրա գտնվելով: *Մերսինը* խեթական դարաշրջանում գտնվում էր Կիցցուվատնայի կազմում:

Խեթական տերության տրոհումից հետո էլ *Մերսինը* շարունակեց գոյատևել: Այդ պահից ի վեր նկատելի են եզեյան մշակութային աշխարհի հետ սերտ առնչությունները:

### *Տարսուս*<sup>139</sup>

Այս հնավայրը բնակեցված է եղել դեռևս նեոլիթյան փուլից և արդեն Վաղ բրոնզեդարում իրենից ներկայացնում էր խոշոր պարսպապատ բնակավայր, որը սերտ առևտրական կապեր ուներ Կիպրոսի, Սիրիայի և Միջագետքի քաղաքային կենտրոնների հետ: Բնա-

---

<sup>138</sup> Պեղումների արդյունքները տես Garstang 1953; Bryce 2009: 468 (հնավայրի համառոտ նկարագիրը):

<sup>139</sup> Goldman 1956; Özyar 2005 (ed.); հնագիտական տարբեր փուլերի համառոտ նկարագիրը տես Bryce 2009: 692.



կավայրի կարևորության վկայությունը դրա բնակիչների մի մասի տպավորիչ կացարաններն են (մի մասը երկհարկանի), ինչը ակնհայտորեն առևտրատնտեսական գործունեության լայն ծավալների արդյունքը պետք է լիներ: *Տարսուլը* շարունակեց գոյատևել նաև Միջին բրոնզեդարում, իսկ Ուշ բրոնզեդարում այն հայտնվեց Խեթական տերության տիրապետության ներքո: Խեթական տերության տրոհման շրջանի խառնակ իրադրության պայմաններում բնակավայրը լքվեց, սակայն շուտով՝ Վաղ երկաթեդարում կրկին բնակեցվեց: *Տարսուլը* մ.թ.ա. IX-VII դարերում բազմիցս հայտնվում է Ասորեստանի արտաքին քաղաքականության թիրախում:

### **Փոքր Ասիան Վաղ և Միջին բրոնզեդարում**

Մ.թ.ա. III հազ. - II հազ. սկզբներին, դատելով հնագիտական ուսումնասիրությունների տվյալներից, խիտ բնակեցված մի տարածաշրջան էր, որը ներկայացված է մեծաքանակ հնավայրերով: Ի տարբերություն համաժամանակյա միջագետքյան և եգիպտական վաղ քաղաքային կենտրոնների, որոնք ձևավորվեցին Եփրատի, Տիգրիսի և Նեղոսի առափնյա գոտիներում՝ շնորհիվ արհեստական ոռոգման համակարգի վրա հիմնված երկրագործության, Փոքր Ասիայում բնակչության կենտրոնացումն այլ եղանակով էր ընթանում: Այստեղ, Կենտրոնական սարահարթում բնակավայրերը հիմնվում էին բնական ամրությունների և դրանց շրջակայքի երկրագործական տարածքներում, որտեղ արհեստական ոռոգման համակարգի անցկացման կարիք չէր զգացվում, քանի որ բնական տեղումները բավարար էին: Երկրագործության հետ մեկտեղ Փոքր Ասիայում կարևորագույն դեր ուներ մետաղների արդյունահանումը և վերամշակումը, ինչի հիման վրա բնակչության կյանքում առանձնահատուկ տեղ էին զբաղեցնում անասնապահությունը, արհեստագործությունը և առևտուրը: Կապված մետամշակության և ընդհանրապես արհեստագործության վաղ զարգացման հետ, այստեղ առավել քան նկատելի է բնակչության կյանքում երկու ոլորտների արտադրանքի տարածումը փոխանակային առևտրի միջոցով: Մի առանձնահատկություն, որն արդեն մ.թ.ա. III հազ. վերջին քառորդում և

հաջորդ հազարամյակի սկզբներին պիտի ընկներ Փոքր Ասիայի և սիրիա-միջագետքյան քաղաքակրթական աշխարհի միջև ակտիվ փոխհարաբերությունների հիմքում ի դեմս Աշշուրի փոքրասիական առևտրական գաղութների գործունեության:

Այս ժամանակաշրջանում Կենտրոնական Փոքր Ասիայում պարզորոշ նկատվում են համեմատաբար խոշոր ցեղային բնակավայրերի շուրջը քաղաքական կենտրոնացման միտումներ: Սակայն, ի տարբերություն Տավրոսի լեռնաշղթայից հարավ ընկած գոտու, որն ընդգրկված էր այսպես կոչված "Մեծ Միջագետքի" քաղաքական և տնտեսական դաշտում (*Մամասո, Թիթրիշիտյուք, Քազանեհյոյուք* և այլն), բուն փոքրասիական տարածաշրջանում "քաղաքները" փոքր էին և դրանց ազդեցությունը շրջակայքում գտնվող տոհմային բնակավայրերի նկատմամբ հնազիտորեն թույլ է նշմարվում:<sup>140</sup> Այսպես, եթե *Քազանեհյոյուքը* (Ուրֆայի շրջանում) զբաղեցնում էր շուրջ 100 հա տարածք, իսկ *Թիթրիշիտյուքը`* 43 հա, ապա Կենտրոնական Փոքր Ասիայի բնակավայրերի տարածքը միջինացված հաշվարկներով կազմում էր շուրջ 10 հա: Անհամեմատ ավելի մեծ տարածք էին զբաղեցնում ապագա Խեթական պետության բնօրրանից դուրս գտնվող բնակավայրերը (*Քյուլթեփեն`* 50 հա, *Բեյջեսուլթանը`* 30-40, *Աջեսիտյուքը`* 56): Այստեղից բխում է, որ ուրբանիզացիոն գործընթացները խեթերի բնօրրանում (Հալիսի հոսանքով պարփակված շրջանում) Վաղ և Միջին բրոնզեդարում զգալիորեն զիջում էին Տավրոսի գոտուն, ինչը կարելի է բացատրել այս տարածաշրջանի՝ քննարկվող ժամանակաշրջանի առևտրատնտեսական հարաբերություններում ներգրավվածության ցածր մակարդակով: Մի իրավիճակ, որը սկսեց փոխվել արդեն մ.թ.ա. III հազ. վերջերից, երբ Կենտրոնական Փոքր Ասիան ներառվեց Աշշուրի առևտրական գաղութների գործունեության ոլորտը:

### **Խեթական դարաշրջանի Փոքր Ասիայի նյութական մշակույթը**

Փոքր Ասիայի հնավայրերի մի զգալի մասը շարունակեց գոյատևել մ.թ.ա. III հազ. վերջերից հետո էլ, ներառյալ նաև Խեթական պե-

---

<sup>140</sup> Çevik 2007; Sagona and Zimansky 2009: 175-176.

տության գոյության շրջանում: Դրանց շարքում ինթական դարաշրջանի պատմության ուսումնասիրման համար առաջնահերթ կարևորություն են ներկայացնում հետևյալ հնավայրերը՝ *Բողազքյոյ/Բողազքալեն, Ալաջահյոյոյքը, Մաշատհյոյոյքը, Ինանդըքթեփեն* (Հալիսից արևմուտք՝ Չանքըրըի շրջանում),<sup>141</sup> *Օրթաքյոյք, Քուշաքլըն, Օյմասաղաչը* (Մամսունի շրջանում՝ Վեզիրքյոյփոյու քաղաքի մոտ),<sup>142</sup> *Արսլանթեփեն* (Մալաթիայի մոտ), *Նորշունթեփեն, Քորուջութեփեն* (Վերին Եփրատի ավազանում՝ հայկ. Շոփքում), *Ջերաբլուսը, Ջինջիրլին* (Հյուսիսային Սիրիայում) և այլն:

Խեթական պետության բնօրրանը Հալիսի ոլորանով պարփակված տարածքն էր (ներկայիս Չորումի շրջանը), որտեղ էլ գտնվում էր մայրաքաղաք Խաթթուսաար: Բնօրրանում գտնվում էին մի շարք հնավայրեր, որոնք կարևոր դեր ունեին Խեթական պետության կազմավորման արշալույսին և գոյության ընթացքում:

### ***Քանես***

Գտնվում է Կայսերի քաղաքից 21 կմ հյուսիս-արևելք՝ 20 մետր բարձրությամբ բլրի վրա:<sup>143</sup> Բլրի բնակեցված տարածքը տպավորիչ է (տրամագիծը՝ 550 մետր):

Բնակավայրի կենսագործությունը սկսվում է Վաղ բրոնզեդարից և շարունակվում մինչև հռոմեական դարաշրջան (ունի բնակության 18 շերտեր, որոնցից հատկապես կարևոր են չորսը): Վերելքը Միջին բրոնզեդարի երկու շերտերն են (II և Ib), երբ Քանեսը վերածվում է Կենտրոնական Փոքր Ասիայի կարևորագույն քաղաքական կենտրոններից մեկի: Դա Աշշուրի առևտրական գաղութների գործունեության փուլն էր, իսկ Քանեսը աշշուրցիների գլխավոր կենտրոններից էր: Քաղաքը պաշտպանված էր երկու օղակաձև պարիսպներով: Քանեսը ինթական տիրապետության շրջանում վերածվում է երկրորդական նշանակության բնակավայրի: Մինչև այն պահը, երբ

<sup>141</sup> Պեղումներն իրականացրել էր Ռ.Թեմիզերը (տես Özgüç 1988):

<sup>142</sup> Պեղումների արդյունքները տես Czichon *et al.* 2011; 2016: Հայտնաբերվել են սեպագիր աղյուսակների բեկորներ:

<sup>143</sup> Պեղումների արդյունքները տես Özgüç 1950; 1953; 1971; 1986; հնագիտական համառոտ նկարագիրը տես Burney 2004: 160-164; Bryce 2009: 365-366.

Խեթական տերության տրոհումից հետո այն դառնում է ետխեթական դարաշրջանում ասորեստանյան աղբյուրներում այստեղ հիշատակվող՝ Թաբալ ընդհանրական անվանումը կրող փոքր պետականություններից մեկի կենտրոնը:

### ***Ալաջահյոյուք***

Գտնվում է Չորում քաղաքից 45 կմ հարավ՝ խեթական մայրաքաղաք Խաթթուսասից 25 կմ հյուսիս-արևելք և զբաղեցնում է շուրջ 7 հա տարածք: Այն բնակեցված է եղել դեռևս ուշ էնեոլիթից և, որոշ ընդմիջումներով հնավայրի կենսագործունեությունը շարունակվել է մինչև միջնադար:<sup>144</sup>

Հնավայրի վերելքը սկսվում է Վաղ բրոնզեդար II փուլում (մ.թ.ա. III հազ. երկրորդ կես), երբ հայտնվում են “արքայական” դամբարանները՝ թաղման աննախադեպ հարուստ ինվենտարով: Մասնագետները հակված են *Ալաջահյոյուքի* այս փուլի կրողներ համարել հնդեվրոպալեզու “կուրգանցիներին”, քանի որ նախորդ դարաշրջաններում Փոքր Ասիայում այդ նոր մշակույթի որևէ նախատիպ գոյություն չի ունեցել:<sup>145</sup>

Իր նշանակությունը *Ալաջահյոյուքը* պահպանեց նաև խեթական դարաշրջանում, ակնհայտորեն որպես պաշտամունքային կենտրոն: Այն ամրացված էր պարսպով, հայտնաբերվել են կառավարչի նստավայրը և մի շարք տաճարներ: Այստեղից գտնվել են բարձրաքանդակներ, Թուդխալիյաս IV-ի շրջանի հիերոգլիֆային լուվիական արձանագրությունը և այլ հուշարձաններ: Մասնագետների կարծիքը *Ալաջահյոյուքի* նույնականացման առնչությամբ տարբերվում է: Սա կարող էր լինել խեթական դարաշրջանի Փոքր Ասիայի կարևորագույն պաշտամունքային կենտրոն Արիննան, հնա-

---

<sup>144</sup> Koşay 1944; 1951; Koşay and Akok 1973; հնագիտական համառոտ նկարագիրը տես Burney 2004: 9-12; Bryce 2009: 20-22.

<sup>145</sup> Ենթադրվում է, որ տվյալ դեպքում կարող էր ընթանալ բնակչության տեղաշարժ Հյուսիսային Կովկասից դեպի Կենտրոնական Փոքր Ասիա (Sagona and Zimansky 2009: 216-217):

րավոր է նաև երկու այլ բնակավայրերից որևէ մեկը՝ Ցիպպականդան կամ Անկուվան:<sup>146</sup>

### ***Ալիշարիտյուք***

Գտնվում է խեթերի մայրաքաղաք Խաթթուսասից 170 կմ հարավ-արևելք:<sup>147</sup> Հնավայրն ընկած է բլրի վրա (տրամագիծը շուրջ 400 մետր): Սկսվել է բնակեցվել դեռևս խալկոլիթից, իսկ Աշշուրի առևտրական գաղութների գոյության շրջանում այստեղ գտնվում էր նաև միջագետքցիների առևտրական կետ: Այստեղից հայտնաբերվել են գաղութների գործունեությունն արտացոլող աքքադերեն սեպագիր աղյուսակներ: Բնակավայրը պաշտպանված էր 5-6 մետր հաստության պարսպով: Հնարավոր է, բնակավայրը լքվել է առևտրական գաղութների գործունեության ավարտական փուլում:

### ***Քուշաքը***

Այս հնավայրը գտնվում է Միվասի նահանգում՝ Միվաս քաղաքից 60 կմ հարավ, խեթերի մայրաքաղաքից մոտավորապես 200 կմ հարավ-արևելք:<sup>148</sup> Այն զբաղեցնում է շուրջ 18 հա տարածք, որն ընդգրկում էր միջնաբերդը և բնակավայրը և որոնք ամրացված էին 1.5 կմ երկարությամբ պարսպով: Յուրաքանչյուր 25 մետրի վրա տեղակայված էին աշտարակներ:

Այստեղից հայտնաբերված թվով 45 ծիսապաշտամունքային բնույթի սեպագիր աղյուսակների<sup>149</sup> շնորհիվ պարզվել է, որ սա խեթական աղբյուրների Սարիսաս քաղաքն է, հիմնադրված մ.թ.ա. XVI դարում: Քաղաքը կառուցված է տիպիկ խեթական ճարտարապետության և ամրաշինության ավանդույթներին համապատասխան: Սարիսասայի դիրքը խեթերի բնօրրանի հարավ-արևելյան ծայրամասում թույլ է տվել ենթադրելու, որ այն մի յուրատեսակ սահմանամերձ կետ էր, որը վերահսկում էր հարավ-արևելքից եկող արտաքին

---

<sup>146</sup> Կարծիքների համար տես Popko 2000: Արիննա անունը կրում էին Փոքր Ասիայի տարբեր շրջաններում գտնվող առնվազն չորս բնակավայրեր (տես Del Monte und Tischler 1978: 32-36):

<sup>147</sup> Պեղումների մասին տես Von der Osten 1937:

<sup>148</sup> Պեղումների արդյունքները տես Müller-Karpe 1998; 2002:

<sup>149</sup> Հրատ. Wilhelm 1997:

ուժերի տեղաշարժերը (մասնավորապես Միտտանիի): Պեղումները թույլ են տվել ենթադրելու նաև Սարիսասյի տնտեսական զգալի ներուժի մասին: Միայն հացահատիկի պահպանման համար նախատեսված գլխավոր պահեստը կարող էր տեղավորել շուրջ 820 տոննա, ինչը բավարար էր մեկ տարով ապահովելու շուրջ 5000 մարդու կարիքները:<sup>150</sup>

Մ.թ.ա. XII դարի վերջերին, Խաթթիի անկման շրջանում Սարիսասն լրջորեն ավերվել և լքվել է, որից հետո այստեղ վկայված է փոքր գյուղատիպ բնակավայր:

### ***Մաշատիյոյ***

Գտնվում է Թոքաթի նահանգում, Խաթթուսասից շուրջ 116 կմ արևելք, Զիլե քաղաքից 20 կմ հարավ:<sup>151</sup> Քաղաքն ընդգրկում էր շուրջ 450 x 225 մակերեսով տարածք (10 հա), որի միջին մասում տեղակայված էր շրջակա հարթավայրից շուրջ 29 մետր բարձրացող միջնաբերդը: Դատելով այստեղից հայտնաբերված մեծաքանակ սեպագիր աղյուսակներից (թվով 116), հանդիսանում էր կարևոր ռազմավարչական և տնտեսական կենտրոն, որը գտնվում էր Խաթթիի հակառակորդ կասկական ցեղերի զբաղեցրած տարածքի անմիջական հարևանությամբ: Տեքստերի հիմնական մասը (թվով 96) նամակներ են՝ գրված խեթական արքայի (Թուդիալիյաս III) կողմից տեղական կառավարչին և այլ պաշտոնատար անձանց և հակառակը: *Մաշատիյոյից* հայտնաբերված տեքստերի շնորհիվ պարզվել է, որ դա խեթական Տապիզգա քաղաքն էր:

### ***Օրթաքոյ***

Գտնվում է Չորումի նահանգում՝ Չորում քաղաքից 55 կմ հարավ-արևելք, Խաթթուսասից 60 կմ հյուսիս-արևելք:<sup>152</sup> Զբաղեցնում է շուրջ 9 քառ. կմ տարածք:

---

<sup>150</sup> Bryce 2009: 622-623.

<sup>151</sup> Պեղումների արդյունքները տես Özgüç 1977; 1978; 1982: Սեպագիր տեքստերի հրատարակությունը՝ Alp 1991:

<sup>152</sup> Հնագիտական նկարագիրը տես Süel 2002:

Այստեղից հայտնաբերվել են ավելի քան 3000 սեպագիր աղյուսակներ, որոնց հիմնական մասը նամակներ են, այդ թվում գրված խեթական արքայի և թագուհու կողմից: Աղյուսակների մոտավորապես 25 տոկոսը խուրրիերենով գրված ծիսապաշտամունքային բնույթի տեքստեր են, ինչը վկայում է խուրրիական զգալի ազդեցության օգտին: Կան նաև աքքադերեն և խեթերեն-խաթերեն երկլեզվյա տեքստեր: Արքայական գույգին պատկանող նամակների առկայությունը կարող է վկայել այն մասին, որ տարվա ընթացքում ինչ-որ ժամանակ նրանք պետք է անցկացնեին այստեղ: Ենթադրվում է, որ խոսքը Թուդիսալիյաս III-ի մասին է,<sup>153</sup> ով կասկերի կողմից Խաթթուսասի գրավումից հետո որոշ ժամանակ ստիպված էր տեղափոխվել այլ վայր:

*Օրթաքոյ* հնավայրը նույնականացվել է խեթական աղբյուրների Մապիևուվա քաղաքի հետ, որը խեթական տեքստերում հաճախակի հիշատակվում է որպես ծիսապաշտամունքային կենտրոն և խեթական զորքի ռազմական բազա (մասնավորապես Մուրսիլիս II-ի օրոք): Հանդիսացել է կարևոր վարչական կենտրոն, որի ենթակայության տակ են գտնվել շրջակայքի մի շարք բնակավայրեր, հնարավոր է, նաև Տապիզգան (*Մաշատիյոյ*):

\*\*\*

Հին Փոքր Ասիայում դեռևս նեոլիթյան դարաշրջանում ձևավորված քաղաքակրթական կենտրոնների բնականոն զարգացման արդյունքը մ.թ.ա. III հազարամյակի վերջերին և II հազարամյակի սկզբներին այստեղ ձևավորված մեծաքանակ քաղաք-պետություններն էին, որոնք մ.թ.ա. XVIII-XVII դարերում միավորվեցին նորաստեղծ Խեթական պետության շուրջը: Անժխտելի է Խեթական պետության դերը որպես փոքրասիական տարածաշրջանի քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային իրողությունների միավորողի: Արդեն մ.թ.ա. XVI դարում խեթերը դուրս եկան թերակղզու շրջանակներից և մուտք գործեցին սիրիա-միջագետքյան տարածաշրջան,

---

<sup>153</sup> Bryce 2009: 616-617.

իսկ ավելի ուշ՝ մ.թ.ա. XIV-XIII դարերում վերածվեցին Առաջավոր Ասիայի հզորագույն ռազմաքաղաքական ուժի: Խեթերի քաղաքական ազդեցությունը տարածվում էր Էգեյան ծովափից մինչև Վերին Եփրատի ավազան, Հյուսիսային Միջագետք և Կենտրոնական Մի-րիա: Իր շուրջ 500-ամյա գոյության ընթացքում Խեթական պետու-թյունը հանդիսանում էր Առաջավոր Ասիայի աշխարհաքաղաքա-կան դաշտի կարևորագույն դերակատարներից մեկը:

Տևական և համընդգրկուն են հին Փոքր Ասիայի քաղաքական և հոգևոր-մշակութային աշխարհի և Հայկական լեռնաշխարհի հնա-գույն հասարակությունների միջև փոխհարաբերությունները: Դրանք ընթանում էին Լեռնաշխարհի արևմուտքում, այնտեղ, որտեղ գրավոր աղբյուրներով վկայված են մեր տարածաշրջանի առաջին պետականությունները՝ Հայասան, Ազգին, Իսուվան, Ալզին և այլն: Այդ փոխհարաբերությունները լավագույնս արտացոլվել են հայոց լեզվի բառապաշարում և կրոնապաշտամունքային ոլորտում: Հին փոքրասիական լեզվամշակութային շերտի առկայությունը հայկա-կան իրականության մեջ կարող է վկայել խեթա-լուվիական լեզուներ-ի կրողների մասնակի հայացման օգտին՝ վաղ հայկական պետու-թյունների կազմավորման և ամրապնդման ընթացքում: Այս առու-մով խեթա-լուվիական էթնիկ տարրը կարելի է դիտարկել որպես հայ ժողովրդի ֆիզիկական և հոգևոր-մշակութային բաղադրա-տարրերից մեկը:



## ԳԼՈՒԽ 2

### ՓՈՔՐ ԱՍԻԱՆ ՔԱՂԱՔ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Մ.թ.ա. II հազարամյակի սկզբները հին Փոքր Ասիայի պատմության մեջ այն կարևոր փուլն էր, որը բնորոշվում է դեռևս նախորդ հազարամյակի կեսերից ձևավորված քաղաք-պետությունների լայն ցանցի առկայությամբ, ինչպես նաև լայն միջազգային կապերի ձևավորմամբ ի դեմս այստեղ Հյուսիսային Միջագետքի Աշշուրի պետության կողմից ստեղծված առևտրական գաղութների հիմնադրման և ծավալման:

Աշշուրի գործունեությունն արտացոլող հազարավոր կավե սալիկները թույլ են տալիս եզրակացնելու, որ այս դարաշրջանում Կենտրոնական Փոքր Ասիայում, մասնավորապես, Հալիս գետի հոսանքով պարփակված շրջանում և դրա հարևանությամբ գոյություն ունեին բազմաթիվ քաղաքական միավորներ (այսպես կոչված քաղաք-պետություններ): Այդ պետությունները Աշշուրի տեքստերում նշվում էին "երկիր" բառով (աքքադերեն՝ *matu*): Ըստ այդ աղբյուրների, ինչպես նաև Նեսա քաղաքի արքա Անիտտասի արձանագրության մեջ ("Անիտտաս", տես ստորև), վերջիններիս միջև փոփոխակի հաջողություններով մշտական պայքար էր ընթանում առաջնայնության կամ տարածքների ընդարձակման նպատակով:

Դատելով փոքրասիական պետությունների կառավարիչների և այլ անձանց անուններից, այս շրջանի Փոքր Ասիան բազմաթիվ բնակչություն ուներ: Տեղական ծագման խթա-լուվիական և խաթական անուններ կրող կառավարիչների հետ մեկտեղ այստեղ ներկայացված են նաև խուրրական և նույնիսկ սեմական անուններ: Խթական անուններից հիշատակելի են հետևյալները՝ *Aššiyat*, *Halki*, *Pirwa*, *Tarawa*, *Šiwat*, նաև թեոֆոր ծագման *Runda*, *Šanda*, *Tarhunda* և այլն:<sup>154</sup> Խաթական անուններ են *Aniškīpil*, *Kazapali*, *Kudarili* և այլն:<sup>155</sup> Բավական շատ էին նաև խուրրիական անունները, որոնց հիմնա-

<sup>154</sup> Garelli 1963: 133-152.

<sup>155</sup> Garelli 1963: 152-155.

կան մասը, հնարավոր է, Հյուսիսային Միջագետքից այստեղ եկած աշշուրցի առևտրականներ էին: Քաղաք-պետություններից միայն Մաամայի կառավարիչ Անուն-խիրբիի անունն էր խուրրիական, ինչը կարող է վկայել այստեղ որոշակի խուրրիական անկլավի գոյության օգտին: Այս պետության համար առաջարկված տեղադրությունը Փոքր Ասիայի արևելքում կամ հարավ-արևելքում<sup>156</sup> կարող է բացատրել դրա կառավարիչ ոչ խեթա-լուվիական անունը: Այստեղ, մի տարածքում, որը մոտ էր հետագայի Միտտանիին և գտնվում էր Փոքր Ասիայից դեպի Հյուսիսային Միջագետք տանող ճանապարհի վրա, այն է՝ խեթերի բնօրրանից դուրս գտնվող շրջանում իրոք կարող էին ապրել խուրրիներ:

Անձնանունների մեջ խեթա-լուվիական անունների խիստ մեծ քանակը վկայում է այն մասին, որ արդեն այս փուլում խեթերը Կենտրոնական Փոքր Ասիայում բացահայտորեն գերակշռում էին և հանդիսանում էին ապագա Խեթական պետության բնօրրանի հիմնական էթնիկ խումբը:

### **Աշշուրի առևտրական գաղութները**

Արդեն մ.թ.ա. XX-XVIII դարերում հարավ-արևելյան և հարավային ու Կենտրոնական Փոքր Ասիայում ի հայտ է գալիս հյուսիսամիջագետքյան առևտրական գաղութների հոծ շղթա, որի գործունեության հիմքում ընկած էր հիմնականում մետաղների և մետաղագործական արտադրանքի արտահանումը դեպի Աշշուր:<sup>157</sup> Աշշուրցիներին հատկապես գրավում էին այս տարածաշրջանի հարուստ մետաղական ռեսուրսները, որոնց կարիքը Միջագետքում խիստ զգացվում էր: Նրանց կողմից արտահանվող մետաղների շարքում հատկապես մեծ տեղ ունեին արծաթը, ոսկին և պղինձը: Առևտրական գործարքները հիմնականում իրականացվում էին կանխիկ գումարով, առաջին հերթին՝ արծաթով: Աշշուրի կառավարությունը վերահսկում էր գաղութների գործունեությունը, հարկ եղած դեպքում

---

<sup>156</sup> Ժամանակակից Էլբիստանի հարթավայրում կամ կապադովիական Կոմանայի շրջանում (Balkan 1957: 33; Nashef 1991: 83):

<sup>157</sup> Փոքր Ասիայում Աշշուրի գաղութների գործունեության մասին տես Lewy 1965.; Orlin 1970; Larsen 1975 և այլն:

աջակցելով նաև ֆինանսապես: Փոխարենը Միջազգետքից ներկրվում էր գործվածքեղեն, հագուստ, բուրդ և անագ, ինչը փոքրասիացիներին խիստ անհրաժեշտ էր բրոնզի արտադրության համար: Միջազգետք ներկրվող մետաղների շարքում հիմնական մասը կազմում էր պղինձը, որն անհրաժեշտ էր աշտարակներին բրոնզի ստացման համար: Ըստ էության, առևտրական գաղութների գործունեությունը երկու կողմերի համար էլ փոխշահավետ էր: Ըստ այդմ էլ Աշտարի մի քանի տասնյակի հասնող առևտրական գաղութները նշանակալից դեր խաղացին Փոքր Ասիայի վաղ քաղաքային կենտրոնների ձևավորման և զարգացման գործում: Հենց այս գաղութների գործունեության ավարտին էլ սկսվում է փոքրասիական քաղաքային կենտրոնների վերելքը և պայքարը քաղաքական ազդեցության համար, ինչի արդյունքում այստեղ ձևավորվեց Կուսսարի պետությունը (տես ստորև):

Աշտարի առևտրական գաղութների գործունեությունը Կենտրոնական Փոքր Ասիայում և Հայկական լեռնաշխարհի արևմուտքում թվագրվում է մ.թ.ա. XX-XVIII դարերով: Անվանապես հիշատակվող գաղութների քանակը, ըստ տեքստերի, հասնում էր 21-ի:<sup>158</sup>

Գաղութներն իրենց կառուցվածքով և գործառույթներով երկու տիպի էին: Առաջինը և հիմնականը այսպես կոչված *կարումներն* էին, որոնք փոքրասիական բնակավայրերի տարածքում հիմնված առևտրական թաղամասեր էին: *Կարում* բառը թարգմանվում է որպես "առևտրի համար նախատեսված տարածք, այնտեղ ապրող և գործող անձինք, ներառյալ այդ համայնքը կառավարող մարմինը":<sup>159</sup> Հաջորդը *վաբարտումներն* էին (հանդիպում են նաև *ուբարտում* և *վաբարտում* գրելաձևերը)՝ Հյուսիսային Միջազգետքից Փոքր Ասիա տանող ճանապարհների երկայնքով ընկած ամրացված կետեր, որոնց նպատակը առևտրական երթևեկի անվտանգության ապահովումն էր:<sup>160</sup>

---

<sup>158</sup> Bryce 2005: 21; Michel 2008.

<sup>159</sup> Orlin 1970: 25.

<sup>160</sup> Տեքստերում հիշատակվում են ավելի քան 40 "քաղաքներ" (ցուցակը տես Orlin 1970: 75-76):

Իհարկե, փոքրասիական գաղութների շարքում էականորեն առանձնանում է Քանեսը շնորհիվ առաջին հերթին այն հանգամանքին, որ այստեղից է հայտնաբերվել կապադովկիական աղյուսակների ճնշող մեծամասնությունը: Քանեսի գաղութը ներկայացնում է բնակչության երկու շերտեր: Առաջինը (**II** շերտ) սկսվում է **XX** դարի վերջերից և գոյատևում մինչև **XIX** դարի երկրորդ կեսը, երբ դրա գործունեությունն ավարտվում է հրդեհով: Այնուհետև շուրջ **30** տարի այն լքվում է, որից հետո կրկին բնակեցվում է (**Ib** շերտ՝ **XIX** դարի վերջ - **XVIII** կեսեր): Այս շերտի գործունեությունը նույնպես ավարտվում է հրդեհով, որից հետո քաղաքն այլևս չի բնակեցվում: **Ib** շերտը ժամանակագրորեն համընկնում է Աշշուրի առևտրական գաղութների գործունեության ավարտի հետ:<sup>161</sup>

Քանեսի գաղութն ընկած էր շուրջ **20** մետր բարձրություն ունեցող բլրի ստորոտին, որից վերև գտնվում էր տեղական բնակավայրը իր կառավարչի նստավայրով: Քանեսի Վաղ բրոնզեդարյան բնակավայրը ներկայացնող **III** շերտն ավարտվել էր հրդեհով, որին որոշ ժամանակ անց փոխարինում է Միջին բրոնզեդարյան **II** շերտը: Թե ինչ իրադարձությունների հետևանքով էր ավարտվել նախորդ շերտը, պարզ չէ:

Աշշուրի առևտրական գաղութները ստեղծվում էին Աշշուրի իշխանությունների և փոքրասիական քաղաք-պետությունների կառավարիչների միջև կնքված պայմանագրերի հիման վրա: Աշշուրցի առևտրականները հաստատվում էին փոքրասիական քաղաքներում առանձին թաղամասերով և այստեղ զբաղվում զանազան առևտրական գործարքներով: Ճանապարհը Միջագետքից Փոքր Ասիա և հակառակը ընթանում էր քարավանային եղանակով՝ առևտրականների մեծ խմբերով: Որպես փոխադրամիջոց էին ծառայում ավանակները և ջորիները, նաև հարկ եղած դեպքում՝ նավակները:

Աշշուրի առևտրական գաղութները իրենցից ներկայացնում էին հստակ և արդյունավետ կերպով գործող համակարգ, որն իր ժամանակի համար և դեռ դրանից շատ ավելի ուշ շրջանում եզակի

---

<sup>161</sup> Bryce 2005: 24.

երևույթ էր: Առանց հարկադրանքի, այն է՝ ռազմական ուժի կիրառման, աշշուրցիները կարճ ժամանակում Փոքր Ասիայում ստեղծվեցին մի հզոր "առևտրական տերություն": Աղբյուրներում որևէ ակնարկ չկա փոքրասիական քաղաքներում աշշուրյան զինուժի առկայության օգտին:<sup>162</sup> Դա կարող է վկայել հօգուտ այն ենթադրության, որ, որ, բացառությամբ որոշ մասնավոր դեպքերի, փոքրասիացիների և միջազգետքցիների փոխհարաբերությունները գերազանցապես խաղաղ համագործակցության բնույթ էին կրում:

### **Փոքր Ասիայի քաղաք-պետությունները**

Վաղ բրոնզեդարի վերջին փուլում Փոքր Ասիայում ընթացող ուրբանիզացիոն գործընթացները հանգեցրին բնակավայրերի լայն ցանցի ստեղծմանը և դրանց միջև առևտրատնտեսական փոխհարաբերությունների ընդլայնմանը: Դրա արդյունքը մեծաքանակ քաղաք-պետությունների կազմավորումն էր, որոնց գոյության մասին ընդարձակ տեղեկություններ են հաղորդում Աշշուրի առևտրական գաղութների գործունեությունն արտացոլող աքքադերեն լեզվով գրված տեքստերը:

Փոքր Ասիայում առաջին պետական կազմավորումները հայտնվեցին դեռևս մ.թ.ա. III հազ. երկրորդ կեսին՝ թերակղզու կենտրոնական և արևելյան շրջաններում, որոնց մասին հիշատակություններ կան Աքքադի արքաներ Սարգոն I-ի և Նարամսինի տեքստերում: Արդեն մ.թ.ա. III հազ. կեսերից Փոքր Ասիայի մի շարք շրջաններում նկատվում է անցում վաղ պետականության դարաշրջան, մի գործընթաց, որի դրսևորումը քաղաք-պետությունների (ցեղապետությունների) հանդես գալն էր: Պետականության հետագա զարգացման և տնտեսության նշանակալից աճի վկայությունն է այս դարաշրջանի փոքրասիական հնավայրերի ուսումնասիրությունը: Կոթողային կառույցների առկայությունը, արհեստների, և հատկապես մետաղագործության զարգացումը, ամրացված բնակավայրերի ի հայտ գալը վկայում են հարստության կուտակման և զգալիորեն առաջացած սոցիալական շերտավորման մասին: Այս ամենի արդ-

---

<sup>162</sup> Orlin 1970: 52.

յունքում նկատվում են ակտիվ առևտրական փոխառնչությունների հետքեր հատկապես էգեյան և առաջավորասիական մշակութային աշխարհների հետ:<sup>163</sup>

Ք.ա. XX դարի վերջերից դեպի Փոքր Ասիա ուղղված Աշշուրի առևտրական գաղութային համակարգի ընդլայնման փուլում այս վաղ պետականությունները սերտ հարաբերություններ հաստատեցին միջագետքյան աշխարհի հետ: Փոքր Ասիայի պատմության այս փուլում (հնագիտական տերմինաբանությամբ՝ Միջին բրոնզեդար) Աշշուրի առևտրական գաղութների գործունեությունն արտացոլող սեպագրական աղբյուրները ներկայացնում են կենտրոնական և հարավ-արևելյան Փոքր Ասիայում առկա մեծաքանակ քաղաքներ, որոնց հետ աշշուրցի առևտրականները սերտ փոխհարաբերություններ ունեին: Աշշուրի առևտրականների գործունեությունն արտացոլող բազմահազար տեքստերում պահպանվել են Փոքր Ասիայի մի զգալի մասում գոյություն ունեցող բնակավայրերի անվանումներ, որոնց տարածքում կամ մերձակայքում գործում էին Աշշուրի գաղութները: Այս բնակավայրերում իրականացված պեղումների շնորհիվ հայտնաբերված ավելի քան 21 հազար սեպագիր աղյուսակները թույլ են տալիս վերականգնելու մ.թ.ա. II հազ. սկզբներին այս տարածաշրջանում տիրող քաղաքական իրավիճակը: Աղյուսակները հայտնաբերվել են հիմնականում երեք վայրերից՝ Քանեսից (ժաման. *Քյուլթեփե*, Կայսերիի շրջակայքում,) Խաթթուսից (հետագայի խեթերի մայրաքաղաք Խաթթուսասը) և *Ալիշարիյոյուքից* (Խաթթուսասից ոչ հեռու):

Աշշուրի առևտրական տեքստերը թույլ են տալիս մոտավորապես գծելու Փոքր Ասիայում առնվազն մ.թ.ա. II հազ. սկզբներին գոյություն ունեցող քաղաքական միավորների քարտեզը: Տեքստերում այդ միավորները կոչվում են “երկիր” (*mātu*), որոնք կառավարվում էին “իշխանների” կողմից: Դրանք էին՝ Բուրուշխաթթումը (հետագայի խեթ. Պուրուսխանդա, Կենտրոնական Փոքր Ասիայում, ներկայիս Թուրքիա լճից հարավ-արևելք՝ *Աջեմիյոյուք* հնավայրը), Քանեսը

<sup>163</sup> Փոքր Ասիայում նկատվող ուրբանիզացիոն գործընթացների մասին հանգամանորեն տես Acaroglu 1970.

(հետագայի իւեթ. Նեսա՝ *Քուլթեփե*) Վախսուսանան (ներկայիս Նիյ-դե քաղաքի շրջանում), Յալպան (նաև Յալպուվա, Հալիսի գետաբերանի շրջանում), Խուրբաման (իւեթ. աղբյուրների Խուրմա), Կուսսարը, Խախխումը, Դուրխումիտը (իւեթ. Դուրմիտտա) և այլն:<sup>164</sup>

Փոքրասիական քաղաք-պետությունների իրավական կարգավիճակը և նրանց ներքին աստիճանակարգությունը դեռևս այնքան էլ պարզ չեն: Աշշուրի առևտրական աղյուսակներում այդ կառավարիչների կարգավիճակը տարբեր տերմիններով է հանդես գալիս:<sup>165</sup> Սովորաբար նրանք կոչվում էին *rubâ-um* "իշխան", սակայն երբեմն կիրառվում է նաև *bêl âlim* "քաղաքի տեր" տերմինը: Որոշ դեպքերում նրանք կոչվում են նաև *šarru* "արքա", որը *rubâ-um*-ի համարժեքն է: Հատկանշական է, որ *šarru*-ն երբեմն հանդես է գալիս որպես *rubâ-um*-ից կախյալ կառավարիչ (օրինակ, Քանեսի երկրորդ՝ **Ի** փուլում): Իսկ *ահա* Բուրուշխաթթումի կառավարիչը կրում է *rubâ-um rabî-um* "մեծ իշխան" տիտղոսը, որը, անկասկած, վկայում է նրա շատ բարձր կարգավիճակի մասին (կառավարիչ, ով գերակայություն ուներ "իշխանների" նկատմամբ): Այդպիսի տիտղոս էր կրում նաև Քանեսի տիրակալ Անիտտասը:

Աշշուրի գաղութների գործունեության շրջանը, դատելով առկա գրավոր աղբյուրներից, ակնհայտորեն փոքրասիական տարածաշրջանում պետականությունների ձևավորման և զարգացման փուլ էր: Փոքրասիական քաղաքները, որոնց տարածքում կամ մերձավորությամբ գտնվում էին Աշշուրի գաղութները, կենտրոնացած էին հիմնականում Հալիսի ավազանում՝ գետի հոսանքով պարփակված տարածքում (օրինակ, Խաթթուսը, Հալիսից հարավ (Քանեսը, Վախսուսանան) և արևմուտք (Բուրուշխաթթում-Պուրուսխանդան): Միջազգեպից եկող ճանապարհի (կամ ճանապարհների) երկայնքով գտնվում էին Վասխանիյան, Նենասսան և Ուլլամման:

---

<sup>164</sup> Փոքրասիական քաղաք-պետությունների պատմության ամփոփ ուսումնասիրությունը տես Lewy 1962; Garelli 1963; Lewy 1965; Orlin 1970; Veenhof 1972; 1998; Larsen 1975; Michel 2008; Torri 2009 և այլն:

<sup>165</sup> Այդ տերմինների մասին տես Orlin 1970: 73-74:

Հաշվի առնելով տեքստերում հիշատակվող՝ տարբեր կարգավիճակ ունեցող "քաղաքների" մեծ քանակությունը, նրանց միջև ենթադրվող կախյալ կամ ոչ կախյալ հարաբերությունները, կարելի է ենթադրել, որ ակնհայտորեն գործ ունենք տոհմացեղային հենքի վրա ձևավորված ցեղապետությունների հետ: Որևէ կերպ հնարավոր չէ պատկերացնել, որ տվյալ փուլում կարող էր առկա լինել մեկ կենտրոնի կողմից ղեկավարվող քաղաքական կառույց: Ավելին, նույն տեքստերում կան հատակ տեղեկություններ այն մասին, որ փոքրասիական քաղաք-պետությունների փոխհարաբերությունները հաճախ լարվածությունից վերածվում էին բացահայտ առճակատման:

Այսպես, ըստ Անիտասի տեքստի, մ.թ.ա. XIX դարի կեսերին Քանեսը գրավվել և ավերվել էր հյուսիսում գտնվող Ցալպա քաղաքի կառավարիչ Ուխնայի կողմից: Հնարավոր է, այս արշավանքի արդյունքում էր դադարել Քանեսի աշշուրյան գաղութի II փուլը: Այս նույն շրջանում Աշշուրի կառավարչի կողմից Քանես ուղարկված մի նամակում, ինչպես նաև Տավինիայից առաքված մեկ այլ նամակում խոսվում է Վախսուսանայում, Տավինիայում և այլ փոքրասիական քաղաքներում տեղի ունեցող ինչ-որ իրադարձությունների մասին, որոնց հետևանքով տուժել էին միջագետքյան առևտրականները:<sup>166</sup> Որ վերոհիշյալ բախումներն ու խառնակ իրավիճակը չէին սահմանափակվում միայն նշված քաղաքներով, պարզ է դառնում արդեն Քանեսի վերաբնակեցումից որոշ ժամանակ անց (**Թ** փուլի սկզբում): Այս անգամ հակադիր կողմերում հայտնվեցին Քանեսի կառավարիչ Ինարը և հարավ-արևելքում գտնվող Մա-ամայի կառավարիչ Անու-խիրբին: Վերջինիս նամակը՝ ուղղված Քանեսի կառավարիչ Վարշամային լավ պատկերացում է տալիս ոչ միայն սույն իրադարձության, այլև ընդհանրապես փոքրասիական քաղաք-պետությունների միջև փոխհարաբերությունների բնույթի մասին:<sup>167</sup>

Նամակից պարզ է դառնում հետևյալը: Ինչ-որ ժամանակ առաջ, օգտվելով անհայտ հակառակորդի կողմից Մա-ամայի նվաճումից,

<sup>166</sup> Veenhof, Eidem 2008: 136-140.

<sup>167</sup> Անու-խիրբինի նամակի և դրա պատմական ետնախորքի մասին տես Miller 2001b.



Վարչամային ենթակա Տախսամա քաղաքի կառավարիչը ներխուժել էր նրա տարածք և ասպատակել 12 բնակավայրեր: Անում-խիրբին որպես օրինակ վկայակոչում է Վարչամայի հոր՝ Ինարի օրոք տեղի ունեցած մի իրադարձություն: Ըստ տեքստի, երբ Ինարը 9 տարի պաշարել էր Խարչամնա քաղաքը, մա-ամացիները չէին օգտվել հարմար առիթից որպեսզի ասպատակեն Քանեսի տարածքը: Անում-խիրբին հարցնում է Վարչամային, թե ինչու նա չի վերահսկում իր ենթակա Տախսամայի կառավարչին, միաժամանակ հարցնելով արդյոք վերջինս ցանկանում է իրենց հավասար արքա դառնալ: Այնուհետև կողմերը պարտավորվում են վերականգնել երկու պետությունների միջև գոյություն ունեցող ճանապարհների անվտանգությունը:

Այս նամակը արտակարգ կարևոր տեղեկություններ է պարունակում, որոնց հիման վրա կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների:

ա. Վերոհիշյալ երկու պետությունները բաղկացած էին մի շարք կախյալ քաղաքական միավորներից (տոհմացեղային կառույցներ), որոնց նկատմամբ վերահսկողությունը միշտ չէ որ կայուն էր:

Բ. Կախյալ միավորները հաճախ կարող էին ինքնուրույն քաղաքականություն վարել հարևան քաղաք-պետությունների հանդեպ:

Գ. Հնարավոր է, տեքստում հիշատակվող ճանապարհների անվտանգությունը վերաբերում էր Աշշուրի գաղութների հետ իրականացվող առևտրին, ինչը տնտեսական մեծ նշանակություն ուներ երկուսի համար էլ:

Վերոհիշյալ համատեքստում լիովին հասկանալի է դառնում այն իրավիճակը, որի կանխատեսելի վերջաբանը Կուսսարի արքայատոհմի գործունեությունն էր մ.թ.ա. XVIII դարի կեսերին, այն է՝ Կուսսարի կառավարիչ Պիթխանայի կողմից Քանեսի նվաճումը և նրա որդի Անիտասաի հետագա նվաճումները: Փաստացի, Կենտրոնական Փոքր Ասիայում միասնական պետականության ստեղծման առաջին հաջողված փորձը պետք է համարել Կուսսարի ծավալումը, որը, սակայն, կարճատև բնույթ ուներ:

## Կուսսարի արքայատոհմը

Մ.թ.ա. XVIII դարում Փոքր Ասիայում տեղական պայքարը քաղաք-պետությունների միջև հանգեցրեց Կուսսարի արքայատոհմի հաղթանակին Նեսայի նկատմամբ, որին հաջորդեցին այլ նվաճումներ: Այդ իրադարձությունների մասին պահպանվել է Նեսան գրավող Կուսսարի արքա Պիթխանայի որդու տեքստը: Ենթադրվում է, որ վերջինս գրված է եղել խեթերեն, այսինքն սա խեթերեն լեզվով ամենավաղ տեքստն է,<sup>168</sup> որը պահպանվել է շուրջ 150 տարի հետո կատարված պատճենի միջոցով (“Անիտասա”):<sup>169</sup>

Անիտասաի տեքստը հաղորդում է Նեսա քաղաքի (= Քանես) վրա ձեռնարկված զիշերային հարձակման և գրավման մասին: Ըստ տեքստի, Կուսսարի արքա Պիթխանան չէր վնասել քաղաքի բնակչությանը և նույնիսկ չէր պատժել բնակիչներին: Անիտասաը այսպես է ներկայացնում իր հոր արշավանքը.

*"Կուսսարի արքան մեծ զորքով եկավ քաղաքից և Նեսան վերցրեց զիշերային հարձակմամբ: Նա բռնեց Նեսայի արքային, բայց չվնասեց Նեսայի բնակիչներին: Ավելին, նա (Պիթխանան – Ա.Ք.) նրանց (նեսացիներին – Ա.Ք.) իրեն մայրեր և հայրեր դարձրեց":*<sup>170</sup>

*"Մայրեր և հայրեր դարձնել"* արտահայտությունը տարբեր մեկնաբանություններ է ստացել: Ումանց կարծիքով, նեսացիները և կուսսարցիները պատկանել են միևնույն էթնիկ խմբին (հնդեվրոպական):<sup>171</sup> Թ.Բրայսը գտնում է, որ արդարացված չէ բառացի մեկնաբանել այդ արտահայտությունը: Հավանաբար, Պիթխանան ցանկացել է Նեսայի բնակիչներին ցուցադրել մեծահոգի արքայի իր կերպարը, հասկացնելով, որ նրանք իր համար հավատարիմ ենթականեր են լինելու:<sup>172</sup> Մակայն առավել հավանական թվում այն ենթադրությունը, որ տվյալ պարագայում գործ ունենք տոհմացեղային փուլին հատուկ այն մտայնության դրսևորման հետ, ըստ որի յուրաքանչյուր

<sup>168</sup> Neu 1974: 3-9.

<sup>169</sup> Hoffner 1980: 291.

<sup>170</sup> Neu 1974: 10-11.

<sup>171</sup> Orlin 1970: 73; Singer 1981: 128; 1995: 343.

<sup>172</sup> Bryce 2005: 36.

անձ, անկախ կարգավիճակից, համարվում էր օտար: Թերևս, Պիթխանան ցանկացել է նշել, որ ինքը այսուհետև Նեսայի բնակչության մասն է կազմելու (որդեգրման միջոցով):

Նեսան դարձավ Պիթխանայի, իսկ հետո նաև Անիտասաի մայրաքաղաքը: Պիթխանայից հետո Անիտասաը հաջողությամբ շարունակեց հոր նվաճողական քաղաքականությունը: Նա գրավեց Յալպան (Յալպուվա), Պուրուսխանդան, Մալատիվարան, Ուլլամման և Խաթթուսը, փաստորեն նորաստեղծ պետության մեջ ներառելով Հալիսի ողջ ներքին ավազանը և նույնիսկ դրանից դուրս ընկած որոշ տարածքներ: Երկու քաղաքների արքաները՝ Յալպայի Պիյուստին և Խաթթուսի Խուցցիյասը դաշինք կազմեցին, սակայն Անիտասաը նախ գրավեց Յալպան ու գերեց դրա արքային, այնուհետև գրավեց ու ավերեց Խաթթուսասը: Հատկանշական է Խաթթուսասի հարցում արքայի դիրքորոշումը: Նա աստվածային պատժի սպառնալիքով արգելեց հետագայում այդ քաղաքը վերաբնակեցնել, ինչը, սակայն, կատարվեց Հին թագավորության հիմնադիր Լաբարնասի կողմից: Ահա այսպես է Անիտասաը ներկայացնում Խաթթուսին վերաբերող իր որոշումը, որին հավելվում է տեղեկությունը այնտեղ մոլախոտ ցանկելու մասին.

*“Հետո, երբ այնտեղ (Խաթթուսում – Ա.Բ.) սով էր, իմ աստվածուհի Խալմասուխոր այն սովեց ինձ: Գիշերը ես այն ուժով վերցրեցի և դրա տարածքում մոլախոտ ցանեցի: Ով ինձնից հետո արքա դառնա և Խաթթուսը կրկին բնակեցնի, թող Երկնքի Ամպրոպի աստվածը նրան ոչնչացնի”*<sup>173</sup>

Անիտասաի արարքը Խաթթուս-Խաթթուսասի հանդեպ հնարավոր է բացատրել միայն Նեսայի և այդ քաղաքի միջև նախկինում առկա ծայրաստիճան թշնամական հարաբերությունների համատեքստում: Սակայն ճակատագրի բերումով հետագայում Հին թագավորության հիմնադիր Լաբարնան Խաթթուսասը դարձրեց իր մայրաքաղաքը:

---

<sup>173</sup> “Անիտասա” (Neu 1974: 12-13).

Անիտտասին հասկապես լուրջ դիմադրություն ցույց տվեց Սալատիվարան, որի հնագանդեցման համար պահանջվեցին երկու արշավանքներ: Սալատիվարայի անհնագանդությունը, թերևս, ավելի խոր հիմքեր ուներ, ինչը դրսևորվեց մեկ անգամ ևս Անիտտասի կառավարման ավարտին, ինչպես նաև հետագայում՝ Հին թագավորության արքա Խաթթուսիլիս I-ի օրոք:

Իր պետության մայրաքաղաք Անիտտասը դարձրեց Նեսան, ընդունելով “արքայից արքա” տիտղոսը (rubā’um rabi’um), որը մինչ այդ պատկանում էր Պուրուսխանդայի արքային: Արդյունքում Անիտտասը մեկ պետության մեջ միավորեց թերակղզու կենտրոնական մասը: Նախկինում նման խոշոր քաղաքական կազմավորում Փոքր Ասիայում գոյություն չուներ: Անիտտասի պետության միջուկը համապատասխանում է հետագայի իտալական Հին թագավորության բնօրրանին, այն է՝ Հալիսի հոսանքով պարփակված շրջանին, ինչը կարող է վկայել նախորդող շրջանում ձևավորված քաղաքական իրավիճակի ակնհայտ շարունակականության օգտին:

Ժամանակագրորեն այս իրադարձությունը համընկնում է Փոքր Ասիայում Աշշուրի առևտրական գաղութների անկման հետ (Քանես-Նեսայի Ib փուլի ավարտը), որը հետևանք էր Հյուսիսային Միջագետքում խուրրիական իշխանությունների հզորացման և խուրրիական ցեղերի տեղաշարժերին Հայկական Տավրոսի արևմտյան հատվածի երկայնքով, ինչպես նաև Համմուրայիի օրոք Բաբելոնի վերելքի, որի գերիշխանությունը ստիպված էր ընդունել նույնիսկ Աշշուրը:<sup>174</sup> Ամենայն հավանականությամբ, Անիտտասի նվաճումները և կարճ ժամանակով միասնական պետության ստեղծումը չէին կարող պատճառ դառնալ Աշշուրի առևտրական գաղութների գործունեության ավարտի համար, ինչը հաճախ վկայակոչվում է մասնագետների կողմից:<sup>175</sup> Աշշուրի գաղութները, չտիրապետելով ռազմական ներուժի, ի վիճակի չէին որևէ կերպ միջամտելու, առավել ևս

---

<sup>174</sup> Օ.Գըրնին այդ իրադարձությունը կապում է Անիտտասի նվաճումների հետ (Gurney 1966: 20-21); Լ.Օրլինի կարծիքով, անկումը տեղի է ունեցել Աշշուրի արքա Իշմե-Ղազանի օրոք (Orlin 1970: 182-183):

<sup>175</sup> Yakar 1981: 108; Bryce 2005: 40.

խոչնդոտելու Անիտտասի պետության ծավալմանը: Ավելին, նրանց կարևորագույն դերը ժամանակի սիրիա-միջագետքյան աշխարհի և Փոքր Ասիայի միջև ընթացող սերտ առևտրատնտեսական փոխհարաբերություններում ավելի քան ձեռնտու պետք է լիներ նորաստեղծ պետությանը:

Անիտտասի հաջողություններն անցողիկ էին: Նվաճումների միջոցով ստեղծված այդ ընդարձակ պետությունը երկար չգոյատևեց: Նրա կառավարման ինչ-որ մի պահ Նեսան նվաճվեց և ավերվեց Սալատիվարա քաղաքում իշխող անանուն հակառակորդի կողմից: Հնարավոր է, հենց նրա կառավարման վերջին շրջանում կամ քիչ ավելի ուշ այն տրոհվեց, ներքին հանգամանքների կամ արտաքին միջամտության հետևանքով: Պարզ չէ թե արդյոք վերջիններիս շարքում պետք է ընդգրկել խուրրիներին, որոնք չափազանց ակտիվ էին Հյուսիսային Միջագետքում և Հյուսիսային Սիրիայում մ.թ.ա. XVIII-XVII դարերում, այն է՝ Աշշուրի առևտրական գաղութների գործունեության ավարտական փուլում և դրան հաջորդող շրջանում: Խուրրիների ստվար էթնիկ զանգվածի առկայությունը վերոհիշյալ ընդարձակ տարածքում (Հյուսիսային Սիրիայից մինչև Ջագրոսի լեռնաշղթա, այն է՝ «Բերրի կիսալուսնի» ողջ երկայնքով) արձանագրված է բազմաթիվ աղբյուրներում:<sup>176</sup>

Անիտտասի պետության անկման և Աշշուրի առևտրական գաղութների գործունեության ավարտի հաջորդ հնարավոր պատճառը կարող էին լինել Միջագետքի հյուսիսում և դրա անմիջական հարևանությամբ սկսված հնդիրանական էթնիկ տարրի տեղաշարժերը, որոնք հանգեցրին Հայկական Տավրոսի լեռնաշղթայի և դրանից հարավ ընկած շրջաններում նոր պետական կազմավորումների ձևավորմանը:<sup>177</sup> Միտտանիում և կասսիտական Բաբելոնիայում հնդարիական արքայատոհմերի գոյության փաստը<sup>178</sup> կարող է վկայել

---

<sup>176</sup> Խուրրիական անձնանունների ստվար քանակություն է արձանագրված *Ալալա-խում, Չագար Բագարում* (Աշնակկում?), *Թել ար-Ռիմախում, Գասուրում* (Նուզի) և այլուր (տես Wilhelm 1989: 12-15):

<sup>177</sup> Այդ մասին տես Wilhelm 1989: 17:

<sup>178</sup> Միտտանիի հնդարիական արքայատոհմի գոյությունը ներկայումս գրեթե համատարած կերպով ընդունվում է (Wilhelm 1989: 17-19; 1995: 1246-1247; Kühne 1999: 209-210 և այլն):

Հյուսիսային Միջագետքում և դրա հարևանությամբ հնդարիացիների խաղաղացած կարևոր դերի մասին: Համենայնդեպս կասսիտական Բաբելոնիայի արքաների անունները ընդհուպ մինչև մ.թ.ա. XIII դարի երկրորդ կեսը, երբ Բաբելոնիան նվաճվեց Սուրբեստանի կողմից և այստեղ հաստատվեց ասորեստանյան ծագման արքայատոհմի իշխանությունը ի դեմս Ադադ-շումա-իդդինայի, սեմական չեն և առնչվում են հնդարիական լեզվական աշխարհի հետ:

Համենայնդեպս, առաջավորասիական հերթական ճգնաժամային փուլի ավարտին Առաջավոր Ասիայում արձանագրված պետականությունների կազմավորման կամ, ավելի ճշգրիտ՝ վերակազմավորման շրջանում ամենուրեք պարզորոշ վկայված են նկատելի քաղաքական ցնցումներ և բնակչության շարժունակություն: Դրանց շարքում կարելի է նշել, խուրրիներից և հնդիրանցիներից գատ, նաև Հյուսիսային Միջագետքում Տերքայի (ժաման. *Թել Աշարա* հնավայրը) կառավարիչ Շամշի-Ադդադի կողմից Աշշուրի քաղաք Էկալլատումի գրավումը և Հին ասորեստանյան թագավորության ստեղծումը:<sup>179</sup> Այս լայն համատեքստում էլ, թերևս, պետք է դիտել Անիտտասի պետության տրոհումը:

Կուսսարի արքայատոհմի կողմից Նեսան գրավելուց հետո Կենտրոնական Փոքր Ասիայի քաղաքական միավորման, Անիտտասի պետության անկման, ինչպես նաև Կուսսարի և խեթական Հին թագավորության միջև շարունակականության շուրջ ընդունված տեսակետը ներկայումս որոշակիորեն վերանայվել է:<sup>180</sup> Մասնավորապես, ձևակերպվել է մի տեսակետ, ըստ որի Նեսայի գրավումը և ավերումը չի կարելի մեկնաբանել որպես Անիտտասի պետության վերացում: Ավելին, ենթադրվում է, որ Անիտտասին հաջորդել էին ևս մի քանի արքաներ՝ Ջուզգու, Թուդիսայիյաս, PU.LUGAL-մա (անվան առաջին բաղադրիչի ընթերցումը պարզ չէ), Պավախտելմախ, Լաբարնա: Վերջինս Հին թագավորության արքա Խաթթուսիլիս I-ի հայրն էր: Ընդ որում, բացառությամբ առաջին արքայի, մյուսները միմյանց հետ կապված են սերտ ազգակցական կապով (հայր-որդի

<sup>179</sup> Wilhelm 1989: 14-15.

<sup>180</sup> Steiner 1989; 1992; Forlanini 1995; 2007; 2008; 2010; Beal 2003.

կամ եղբայրներ): Խնդրի այսպիսի մեկնաբանության դեպքում հստակ ժամանակագրական կապ կարող է ստեղծվել Կուսսարի արքայատոհմի և Հին թագավորության միջև: Խեթերը Անիտտասին և Կուսսարի արքայատոհմին դիտում էին որպես իրենց նախնիներ:<sup>181</sup> Խաթթուսիլիս I-ը իր մի տեքստում որպես իր նախնի հիշատակում է Թուդիալիյասին, նշելով նաև Պավախտելվախի և Լաբարնայի միջև պայքարը գահակալության համար:<sup>182</sup>

Կուսսարի արքայատոհմի անկման շրջանի իրադարձությունները, ինչպես նաև խուրրիների, հնդարիացիների և այլ էթնիկ խմբերի տեղաշարժերը մ.թ.ա. XVIII դարի ընթացքում կարող են միանգամայն նոր մեկնաբանություն ստանալ համեմատաբար վերջերս Հայկական լեռնաշխարհի արևմուտքում՝ մերձեփրատյան գոտում իրականացված հնագիտական ուսումնասիրությունների լույսի ներքո:<sup>183</sup> Դրանք հստակ ցույց են տալիս, որ մ.թ.ա. XVIII դարի ընթացքում բուն Եփրատի և Արածանիի միախառնման շրջանում գտնվող որոշ հնավայրեր ժամանակավորապես անցել են ջրի տակ (*Իսիկուշադը, Ղեղիքսենթեփե* և այլն), ինչը, անկասկած, պետք է Եփրատի մակարդակի կտրուկ բարձրացման հետևանքը լիներ:<sup>184</sup>

Ամեն դեպքում պարզ է միայն այն, որ վերոհիշյալ իրադարձությունից մի քանի տասնամյակ անց Կենտրոնական Փոքր Ասիայում արդեն միանգամայն այլ իրավիճակ էր տիրում:

Ամփոփելով մ.թ.ա. XIX-XVIII դարերի Փոքր Ասիայի պատմությունը, կարելի է եզրակացնել, որ նշված դարաշրջանը ակնհայտորեն հանդիսանում էր քաղաքական տրոհվածության փուլ: Գոյություն ունեին մի շարք համեմատաբար խոշոր քաղաք-պետություններ, որոնց միջև ընթացող պայքարը ի վերջո հանգեցրեց Նեսայի արքայատոհմի հաղթանակին և քիչ անց սկիզբ դրեց Հին խեթական թագավորությանը:

---

<sup>181</sup> Torri 2009: 16.

<sup>182</sup> Այդ մասին տես “Հին թագավորություն” գլխում:

<sup>183</sup> Sevin 1995: 2-3; Sevin 1998; Konyar 2006.

<sup>184</sup> Այդ մասին տես Kosyan 2014: 280-281:

### ԳԼՈՒԽ 3 ՀԻՆ ԽԵԹԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Խեթական Հին թագավորության պատմության սկիզբը թաղված է խավարի մեջ: Արդյոք այն պետք է սկսել Քանեսի փուլից, այն է՝ Պիթխանայի և Անիտասի կառավարումից, թե շատ ավելի ուշ շրջանից, երբ պետության մայրաքաղաք է հռչակվում Խաթթուսարը: Մասնագետներից ոմանք գտնում են, որ Խաթթուսիլիս I-ը և նրա արքայատոհմը կարող էին ծագել հենց Կուսսարի կառավարիչներից: Պատահական չէ, որ Խաթթուսիլիսը գահին իրեն հաջորդ նշանակելիս հենց այդ քաղաքում էր հավաքել ազնվականությանը (տես ստորև):

Եվ չնայած տեքստերում հիշատակություններ կան Լաբարնայից առաջ իշխած արքաների մասին<sup>185</sup>, սակայն մասնագետները հենց նրան են համարում առաջինը: Բանն այն է, որ *լաբարնա* բառը ավելի ուշ ժամանակներում հանդիսանում էր խեթական արքաների տիտղոսը,<sup>186</sup> բացի այդ այս անձնանունը հետագայում խեթական արքայացանկում այլևս հանդես չի գալիս: *Լաբարնա* բառը նույն Խաթթուսիլիսը, ինչպես և հետագա բոլոր խեթական արքաները, օգտագործում էին որպես տիտղոս, որից էլ կարող էր առաջ գալ այդ շփոթը: Այն խեթական արքաների հիմնական տիտղոսի՝ *tabarna*-ի հնչյունական մի տարբերակն է: Վաղ շրջանի մասնագետները գտնում էին, որ *լաբարնան* խեթերի կողմից Փոքր Ասիայի բնիկ բնակչության՝ խաթերից փոխառված բառ է կամ անձնանուն:<sup>187</sup> Սակայն հետագայում նոր՝ հնդեվրոպական ստուգաբանություն առաջարկվեց ինչպես այդ բառի, այնպես էլ դրա հետ կապված *տավանանայի* (խեթական թագուհիների տիտղոսի) առնչությամբ:<sup>188</sup>

<sup>185</sup> Խաթթուսաում Լաբարնայից առաջ իշխած արքաների ցանկի վերականգնման մասին տես Forlanini 1995: 130; 2007: 273-279; Beal 2003 և այլն: Այսպես կոչված “խաչաձև կնիքի” վրա գրված արձանագրության մեջ առկա է Խուցցիյաս արքայանունը, որը ժամանակագրորեն նույնպես կարող է տեղադրվել Խաթթուսիլիս I-ից ավելի վաղ շրջանում (Dinçol *et al.* 1993: 105-106): Այս խնդիրն առայժմ լուծված չէ:

<sup>186</sup> Այս տեսակետն առաջ է քաշել Հ.Օտտենը (Otten 1968: 104):

<sup>187</sup> Kammenhuber 1959: 7; Bin-Nun 1975: 32.

<sup>188</sup> Puhvel 1989: 360-361; Tischler 1988: 355; 1993: 118; Melchert 2003: 18-20.



Սակայն Խաթթուսիլիս I-ի և նրա նախորդների օրոք թե *լաբարանան*, թե *տավանանանան* հանդիսանում էին անձնանուններ, մի հանգամանք, որն առկա է այսպես կոչված "խաչաձև կնիքում", որի մի քանի դաջվածքներ հայտնաբերվել են Խաթթուսասի պեղումների ընթացքում Պ.Նեվեի կողմից:<sup>189</sup> Այստեղ որպես արքայական զույգ հիշատակվում են Լաբարնան և Տավանանան:<sup>190</sup> Սա կարող է հիմք համարվել հոգուտ այն ենթադրության, որ ժամանակի ընթացքում այդ անձնանունները դարձել են արքաների և թագուհիների տիտղոսներ:<sup>191</sup>

Իր նախորդների մասին Խաթթուսիլիս I-ը ուղղակիորեն նշում է հետևյալը. *“Իմ պապը Լաբարնասին հռչակեց որպես գահաժառանգ Սանախուիտտա քաղաքում, [բայց հետո] նրա ծառաները և քաղաքի բնակիչները անսացին նրա խոսքը և Պավախտեղմախին գահ բարձրացրին”*:<sup>192</sup>

Ներկայումս Հին թագավորության հիմնադիր արքայի և նրա անմիջական հաջորդների առնչությամբ տարբեր մասնագետների կողմից առաջարկվել է հետևյալ վերականգնումը: Ըստ դրա, Անիտտասից ինչ-որ ժամանակ անց կառավարած՝ աղբյուրներից հայտնի առաջին արքան Խուցցիյասն էր, ում հաջորդել էր Թուդիալիյաս I-ը: Այս երկուսը կառավարում էին Սանախուիտտա քաղաքում՝ Խաթթուսասից հյուսիս-արևելք: Ինչ վերաբերում է Խաթթուսիլիս I-ին, ապա նրա պապը՝ Լաբարնաս I-ը, նախքան իշխանության գալը, հանդիսանում էր Սանախուիտտայից կախյալ Խուրմա քաղաքի կառավարչի որդին: Դեռևս պատանեկան տարիքում Լաբարնասը որդեգրվել էր Թուդիալիյասի կողմից, ամուսնացել նրա դստեր՝ Տավանանայի հետ և այնուհետև նշանակվել արքա Սանախուիտտայում:

Անիտտասի և Հին թագավորության միջև ժառանգականության խնդրին անդրադարձած մասնագետները թեկականորեն ենթադրում

---

<sup>189</sup> Կնիքի դաջվածքների վրա արձանագրված խեթական արքաների և թագուհիների անունների քննարկումը տես Dincol *et al.* 1993:

<sup>190</sup> Dincol *et al.* 1993: 94, 104-105.

<sup>191</sup> Gurney 2008: 235.

<sup>192</sup> “Քաղաքական կտակը” (Sommer und Falkenstein 1938: 12-15):

էին, որ Անիտտասից հետո նրա պետությունը կարող էր գոյատևել՝ շարունակականություն ապահովելով ընդհուպ մինչև Խաթթուսիլիս I-ը:<sup>193</sup> Խաթթուսիլիսի «Քաղաքական կտակի» հիման վրա կարելի է առաջարկել առնվազն հետևյալ հերթականությունը՝ Խաթթուսիլիս I-ի պապը – Լաբարնասը (ուսկառվարումը կասկածի տակ է) – Խաթթուսիլիս I-ը: Ավելին քան այսքանը, առայժմ հնարավոր չէ հիմնավորել:

Կուսսարի արքայատոհմի կողմից Նեսան գրավելուց հետո Կենտրոնական Փոքր Ասիայի քաղաքական միավորման, Անիտտասի պետության անկման, ինչպես նաև Կուսսարի և խեթական Հին թագավորության միջև շարունակականության շուրջ նախկինում գերիշխող տեսակետը ներկայումս որոշակիորեն վերանայվել է:<sup>194</sup> Մասնավորապես, ձևակերպվել է մի տեսակետ, ըստ որի Նեսայի գրավումը և ավերումը չի կարելի մեկնաբանել որպես Անիտտասի պետության վերացում: Ավելին, ենթադրվում է, որ Անիտտասին հաջորդել էին ևս մի քանի արքաներ՝ Զուզգու, Թուդխալիյաս, ԲՄ-շարքումա, Պավախտելմախ, Լաբարնաս I (վերջինս Խաթթուսիլիս I-ի հայրն էր): Ընդ որում, բացառությամբ առաջին արքայի, մյուսները միմյանց հետ կապված են սերտ ազգակցական կապով (հայր-որդի կամ եղբայրներ): Խնդրի այսպիսի մեկնաբանության դեպքում հստակ ժամանակագրական կապ կարող է ստեղծվել Կուսսարի արքայատոհմի և Հին թագավորության միջև:

Կուսսարի արքայատոհմից մինչև Խաթթուսիլիս I ընկած ժամանակահատվածի միջև շարունակականության խնդիրը սերտորեն առնչվում է Կենտրոնական Փոքր Ասիայում և հարակից շրջաններում ձևավորված պետության բնույթի և վարչական կառուցվածքի հարցի հետ: Այս խնդիրը ներկայումս հատուկ չի ուսումնասիրվել գրավոր աղբյուրների սակավության, երբեմն էլ ուղղակի բացակայության պատճառով: Սակայն մինչև Խաթթուսիլիս I-ը ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ առկա սուղ տեղեկությունների համադ-

---

<sup>193</sup> Wilhelm und Boese 1987: 117; Klengel *et al.* 1999: 33-38 և այլն:

<sup>194</sup> Steiner 1989; 1992; Forlanini 1995; 2007; 2008; 2010; Beal 2003.

րությունը վկայում է այն մասին, որ Անիտոսասի պետության գոյության շրջանում և դեռ դրանից շատ ավելի ուշ ապագա Խեթական պետությունը իրենից ներկայացնում էր հարաբերականորեն ինքնուրույն քաղաքական միավորների մի ամբողջություն, որտեղ աղբյուրներում հիշատակվող վերը նշված արքաները (Խուցցիյաս, Թուդիսալիյաս և այլք) հանդիսանում էին այսպես կոչված *primus inter pares* սկզբունքով իշխող կառավարիչներ: Այս կամ այն քաղաք-պետության կառավարիչը գերակայություն էր ապահովում մյուսների նկատմամբ ռազմական ներուժի վրա հենվող հեղինակության շնորհիվ, մինչև այն պահը, երբ որևէ մեկին հաջողվում էր վիճարկել նրա իշխանությունը:

Վաղ շրջանի խեթական պետականության այդպիսի կառուցվածքի մասին է ակնարկում Տելեպինուսի “Հոչակագրի” համապատասխան հատվածը, որտեղ խոսվում է Լաբարնասի (I) գործունեության մասին.

*“Նախկինում Լաբարնասը մեծ արքա էր: Նրա որդիները, եղբայրները, ամուսնության միջոցով ազգականները, արյունակիցները և զինվորները միավորված էին: Երկիրը փոքր էր, բայց նա ուր էլ որ գնում էր ճակատամարտելու, իր հզորությամբ հնազանդեցնում էր իր թշնամիների երկրները: Նա ավերեց երկրները և զրկեց ուժից, և նա ծովը սահման դարձրեց: Եվ երբ նա ճակատամարտից վերադարձավ, նրա որդիներից յուրաքանչյուրը գնաց երկրի տարբեր մասեր՝ Խուպիսնա, Տուվանուվա, Լանդա, Յալլարա, Պարսուխանդա և Լուսնա, և նա կառավարեց երկիրը ...”*<sup>195</sup>

Գրեթե միևնույն ոճով է ներկայացվում Խաթթուսիլիս I-ի (Լաբարնա II) գործունեությունը:

Որդիներին գրավված շրջանների կառավարիչներ նշանակելու մասին տեղեկությունը կարելի է մեկնաբանել բառացի, ինչպես նաև այլընտրական եղանակով: Հիշյալ Լաբարնասը, նախքան արքա հռչակվելը հանդիսանում էր Խուրմա քաղաքի կառավարչի որդին, ով որդեգրվել էր Թուդիսալիյասի կողմից որպես նրա փեսա (տես վե-

---

<sup>195</sup> Տելեպինուսի “Հոչակագիրը” (Hoffmann 1984: 12-15).

րը): Ընդ որում նա արքա էր հռչակվել ոչ թե իր հարազատ քաղաքում, այլ Սանախուիտտայում և նույնիսկ ոչ Խաթթուսատում՝ իւեթերի ապագա մայրաքաղաքում: Սանախուիտտան, որը լավ հայտնի էր Աշշուրի առևտրական գաղութների շրջանից, հետագայում՝ Խեթական պետության գոյության ողջ շրջանում այլևս որևէ էական դեր չունեցող մի քաղաք էր: Նրա միակ կարևոր հիշատակությունը հենց “Հռչակագրի” վերոհիշյալ տեղեկությունն է:

Այսպիսով, Պիթխանա-Անիտտասի շրջանից մինչև Լաբարնաս I-ի գահակալումը ընկած ժամանակահատվածում հիշատակվում են առնվազն չորս քաղաքներ, որոնք հանդիսացել են այս տարածաշրջանի խոշոր քաղաքական կենտրոններ կամ մայրաքաղաքներ՝ Կուսսար, Նեսա, Սանախուիտտա և Խուրմա: Հետագայի իւեթական ավանդությունը հենց սրանց հետ է առնչում իր պետականության ակունքները: Հավանական կլիներ ենթադրել, որ “Հռչակագրում” վկայակոչվող Լաբարնայի որդիների նշանակումը որպես նվաճված երկրների կառավարիչներ կարող էր արտացոլել վերոհիշյալ և այլ քաղաքների միավորումը մեկ քաղաքական կենտրոնի շուրջը: Արքայի որդիների տակ կարելի է հասկանալ նաև նրա հետ արյունակցական կապերով չկապված տեղական ցեղապետ-կառավարիչների: Հատկանշական է, որ “Հռչակագրում” անվանապես հիշատակվում են միայն Կենտրոնական Փոքր Ասիայի քաղաքները, այսինքն հենց դա էր հանդիսանում Խեթական պետության բնօրրանը:

## ԽԱԹԹՈՒՄԻԼԻՍ I

Ինչպես էլ որ լուծվի Հին թագավորության հիմնադրի խնդիրը, փաստ է, որ Խեթական պետության հզորացման և տարածքային նվաճումների սկիզբը դրվեց հենց Խաթթուսիլիս I-ի կառավարման շրջանում:<sup>196</sup> Նրա օրոք էր, որ Խեթական պետությունը, նվաճելով Փոքր Ասիայի մեծ մասը, փորձեց ընդարձակվել թերակղզու սահ-

---

<sup>196</sup> Խաթթուսիլիսի կառավարման շրջանի մասին տես Melchert 1978; Klengel 1999: 43-59; Miller 1999; Bryce 2005: 68-95:

մաններից դուրս: Խաթթուսիլիսը մայրաքաղաքը Կուսսարից տեղափոխեց Խաթթուսաս,<sup>197</sup> որն էլ մնաց որպես այդպիսին մինչև Խեթական պետության տրոհումը մ.թ.ա. XIII դարի վերջերին: Նոր մայրաքաղաքի պատվին արքան ընդունեց իր անունը, որ նշանակում էր «Խաթթուսասցի»:

Խաթթուսասը գտնվում էր բնականից լավ պաշտպանված բլրի վրա, մի հարթավայրում, որը լավ ապահովված էր ջրով և ռազմավարական կարևոր դիրք ուներ Կենտրոնական Փոքր Ասիայում: Այստեղից շատ հարմար էր իրականացնել տարբեր ուղղություններով կազմակերպվող արշավանքները, ինչպես նաև վերահսկել իրադրությունը թերակղզու նվաճված շրջանների նկատմամբ: Նոր մայրաքաղաքի դիրքի միակ խոցելի տեղը հյուսիսն էր, որը ստիպում էր կասկական ցեղերի մշտական հարձակումներին դիմագրավելու նպատակով ամրությունների շրջա ստեղծել: Սակայն Խաթթուսիլիսի կառավարման շրջանում կասկերը դեռևս չեն հիշատակվում, ինչը նշանակում է, որ նման սպառնալիք այդ պահին առայժմ գոյություն չուներ:

Իր կառավարման հենց առաջին տարում Խաթթուսիլիսը ձեռնարկեց երկու արշավանքներ, մեկն ընդդեմ ավանդական հակառակորդ Սանախուիտտա քաղաքի, որը նախկինում լուրջ խնդիրներ էր ստեղծել Կուսսարի արքայատոհմի համար, մյուսը՝ ընդդեմ հյուսիսարևմուտքում՝ Հալիսի գետաբերանի շրջանում ընկած Յալպա քաղաքի<sup>198</sup>: Առաջին արշավանքը մեծ հաջողություն չբերեց, քանի որ արքան կարողացավ գրավել և ավերել միայն այդ պետության բնակավայրերի մի մասը: Այնուհետև նա գրավեց Յալպա քաղաքը, որի տաճարի գույքը բռնագրավվեց ու հանձնվեց Խաթթիի տարբեր աստվածների տաճարներին: Այնուամենայնիվ, Յալպան հետագայում էր շարունակում էր անհնազանդություն դրսևորել, ինչը վկայված է թե Խաթթուսիլիսի, թե նրա հաջորդների օրոք:

---

<sup>197</sup> Կարծիք կա այն մասին, որ մայրաքաղաքը Խաթթուսաս էր տեղափոխել Խաթթուսիլիսի նախորդներից մեկը (Kempinski and Košak 1982: 99):

<sup>198</sup> Խաթթուսիլիսի "Տարեգրությունները" (Bryce 1983: 50-51).

## **Խաթթուսիլիսը Միրիայում**

Իր կառավարման երկրորդ տարում արքան արշավեց դեպի Տավրոսից հարավ ընկած հյուսիսսիրիական Յամհադ պետություն (կենտրոնը՝ ժամանակակից Հալեպ քաղաքը) և տարածաշրջանի խուրրիական իշխանություններ՝ Ուրշու, Իգակալիս, Կարգամիս, Ալալախ, Ուգարիտ, Էմար, Խախիտում, Էբլա, Թունիպ և այլն: Յամհադը հանդիսանում էր Հյուսիսային և Կենտրոնական Միրիայի քաղաքական միավորների հեգեմոնը, որից կախման մեջ էին գտնվում կամ նրա դաշնակիցներն էին վերոհիշյալ քաղաք-պետությունները:

Խեթերի առաջին հարվածը հասավ Յամհադին ենթակա, Օրոնտես գետի ուղղանի շրջանում ընկած Ալալախին (ներկայիս *Թել Աչանա*) քաղաքը գրավվեց և ավերվեց: Այնուհետև արքան շարժվեց դեպի Վարսուվա (աքքադ. տեքստերում՝ Ուրշու), Իգակալիս և Տասխինիյա քաղաքներ. ըստ տեքստի, դրանք ավերվել և թալանվել էին: Սակայն ավելի ուշ շրջանում կազմված մի տեքստում ներկայացված տեղեկատվությունը թույլ է տալիս եզրակացնել, որ առնվազն Վարսուվայի պարագայում Խաթթուսիլիսը մեծ խնդիրներ էր ունեցել:<sup>199</sup> Այնտեղ ասվում է այն մասին, որ խեթական զորավարների գործողությունները չէին գոհացրել արքային: Նրանք չգիտեին թե ինչպես պետք է պաշարել ամրոցը, ինչի արդյունքում հակառակորդը կանոնավոր կապ էր պահպանում արտաքին աշխարհի հետ:

Խեթերի առաջին սիրիական արշավանքը որևէ իրական օգուտ չտվեց Խեթական պետությանը: Ալալախի և մյուս քաղաք-պետությունների ավերումը և վերցված ռազմավարը ընդամենը անցողիկ հաջողություն էր: Ուրշուի տևական պաշարումը ցույց տվեց, թե ինչպիսի բարդ խնդիրների հետ կարող էր Խաթթուսիլիսը բախվել, եթե իր առջև նպատակ դներ տիրապետություն հաստատել այս տարածաշրջանում: Չնայած Հյուսիսային Միրիայի և Միջագետքի պետությունները միավորված չէին մեկ պետականության շրջանակներում, այնուամենայնիվ զգալի ռազմական ներուժ ունեին: Ժամանակը ցույց տվեց, որ այստեղ խեթերը առայժմ հիմնավորվելու որևէ հնարավորություն չունեին:

---

<sup>199</sup> Gurney 1990: 148-149.

## **Խաթթուսիլիսը Փոքր Ասիայի արևմուտքում և Խաթթիի բնօր- րանում**

Գրեթե նույն իրավիճակն է արձանագրված Խաթթուսիլիսի՝ արևմտյան ուղղությամբ ձեռնարկված արշավանքի ընթացքում: Նրա “Տարեգրության” մեջ սիրիական պատերազմին հաջորդող տարում հիշատակվում է արշավանքը դեպի Արցավա՝ հարավ-արևմտյան Փոքր Ասիայում: Մա այս քաղաքական միավորի (ավելի ճշգրիտ՝ փոքր քաղաքական միավորների միության) առաջին հիշատակու- թյունն է ընդհանրապես խեթական աղբյուրներում: Արշավանքի մա- սին պատմող հատվածից կարելի է եզրակացնել, որ այն կարող էր ընդամենը ավարառուական կամ, թերևս, պատասխան արշավանք լինել՝ ավելի վաղ արցավացիների ինչ-որ գործողությունների հետևանքով: Տեքստը նշում է միայն “կովերի և ոչխարների ձեռքբե- րումը” որպես ռազմավար: Այնուամենայնիվ, հնարավոր է, որ նույ- նիսկ այս արշավանքի պահին կամ ավելի ուշ շրջանում Արցավան կարող էր գտնվել Խաթթիի գերիշխանության տակ:<sup>200</sup>

“Տարեգրության” մեջ դեպի Արցավա ընթացած արշավանքին հաջորդում է խուրրիների հարձակման մասին տեղեկությունը, ըստ որի Խեթական պետության ողջ տարածքն անցնել էր ապստամբած երկրների ձեռքը, բացի մայրաքաղաքից: Թե որքանով է այս տեղե- կությունը համապատասխանում իրականությանը, դժվար է ասել:<sup>201</sup> Գ. Վիլհելմի կարծիքով, այն չափազանցություն է և պայմանավորված էր արքայի ցանկությամբ ուռճացնելու իր հաջողությունները խուր- րիների հարձակմանը դիմագրավելու և վերոհիշյալ ապստամբու- թյունները ճնշելու գործում: Ամեն դեպքում հավանական է թվում, որ խուրրիների արշավանքը ուղղակի պատասխանն էր երկու տարի առաջ դեպի Սիրիա Խաթթուսիլիսի կազմակերպած արշավանքի: Թերևս, այն ակնհայտորեն ավարառուական նպատակ էր հետա- պնդում: Ինչ վերաբերում է Խաթթիում հիշատակվող ապստամբու- թյուններին, ապա դրանք կարող էին տեղ գտնել արևմուտքում ար- քայի տևական բացակայության ընթացքում:

---

<sup>200</sup> Bryce 2005: 74 (այսպիսի ենթադրության համար հղվող տեքստային նյութի համար):

<sup>201</sup> Wilhelm 1989: 21.

Վերադառնալուն պես Խաթթուսիլիսը անմիջապես վերագրավեց երկրի կենտրոնական շրջաններում գտնվող ապստամբ քաղաքները (Նենասսա, Ուլմա-Ուլլամմա, Սալախսուվա), իսկ հաջորդ տարում արքան ուղևորվեց դեպի իր մշտական հակառակորդ Սանախուիտտա քաղաք: Վեց ամիս տևած պաշարումից հետո քաղաքը գրավվեց, որից հետո մյուս բոլոր ապստամբ քաղաքները կամովին հնազանդվեցին: Այսպիսով, Խաթթուսիլիսին հաջողվեց վերանվաճել այն բոլոր շրջանները, որոնք նախկինում գտնվում էին Խաթթի տիրապետության ներքո: Այս գործողությունների ընթացքում խուրիների դեմ ձեռնարկված ռազմական գործողությունների մասին որևէ հիշատակության բացակայությունը վկայում է հոգուտ այն ենթադրության, որ վերջիններս ուղղակի կազմակերպել էին ավարառուական արշավանք և ժամանակին վերադարձել իրենց երկրներ:

### **Կրկին դեպի Սիրիա**

Կարգավորելով փոքրասիական գործերը, Խաթթուսիլիսը ձեռնամուխ եղավ հյուսիսսիրիական տարածաշրջանի նվաճմանը: Այդ արշավանքի մասին հիշատակվում է նրա “Տարեգրություններում”:

Անցնելով Տավրոսի լեռնաշղթան, արքան շարժվեց Պուրանա գետի<sup>202</sup> երկայնքով և Ատալուր լեռան (հավանաբար, Ամանոսի լեռները կամ դրա հյուսիսային հատվածը)<sup>203</sup> մոտ պարտության մատնեց Խասսուվայի զորքին, որին օգնության էր եկել Յամհադից ժամանած զորաջոկատը: Տեքստում հիշատակվող տեղանունների հստակ տեղադրության անհնարինության պատճառով հնարավոր չէ ճշգրտորեն որոշել արշավանքի երթուղին:

Պարտության մատնելով հակառակորդին, Խաթթուսիլիսը սկսեց գրավել և ավերել Խասսուվայի քաղաքները, իսկ հետո նվաճեց Խախիսա (Խախիսում)<sup>204</sup> քաղաքը, որը փորձել էր աջակցել ար-

---

<sup>202</sup> Այս գետի համար առաջարկվել են տարբեր տեղադրություններ՝ Եփրատ, Օրոնտես, Աֆրին կամ Պիրամոս (ներկայիս Ջեյհան) (տես Cornélius 1973: 25; Laroche 1980: 205; Del Monte und Tischler 1978: 98; Forlanini 1979: 171-172; Freu 1980: 202 և Del Monte 1992: 208-209):

<sup>203</sup> Տես Del Monte und Tischler 1978: 54 և Forlanini 1979: 172:

<sup>204</sup> Հավանաբար, ժամանակակից *Լիդարիյոյուք* հնավայրը կամ Սամասոր (տես Del Monte und Tischler 1978: 61-62):



քայի թշնամիներին: Հավանաբար, Խաթթուսիլիսի համար այս հաշտությունները մեծ նշանակություն ունեին, քանի որ տեքստի համապատասխան հատվածում նա իրեն համեմատում է Աքքադի նվաճող արքա Սարգոն I-ի հետ, ով նույնպես կտրել-անցել էր Եփրատը Խաթթուսիլիսից շատ դարեր առաջ:

*“Ես, մեծ արքաս, թաքարնան, անցա այն (Եփրատը - Ա.Ք.) ոտքով, և իմ գորքը ոտքով անցավ այն իմ ետևից”:*

Պարզ չէ, արդյոք Խաթթուսիլիսի նվաճումները Միրիայում սահմանափակվում էին միայն վերոհիշյալ քաղաքներով: Համենայնդեպս բացառված չէ, որ խեթերի արշավանքի աշխարհագրությունն ավելի լայն է եղել, քան ներկայացված է "Տարեգրություններում": 1990-ական թվականներին հայտնաբերված Հյուսիսային Միջագետքում գտնվող Տիկունանի քաղաք-պետության<sup>205</sup> արքա Տունիյային (այլ աղբյուրներում՝ Տունիպ-Թեշուբ) ուղղված Խաթթուսիլիսի նամակում<sup>206</sup> խոսվում է համատեղ ռազմական գործողություններ իրականացնելու մասին: Նամակի տեքստում ուղղակիորեն ասվում է, որ Տիկունանին հանդիսանում էր խեթական արքայի հպատակը և նրա արքան պարտավորվում էր օգնել իրեն Խախիսումի դեմ պատերազմում: Այդ դեպքում, հնարավոր է, խեթերի արշավանքն ընդգրկել էր Խասսուվայից ավելի արևելք ընկած տարածքները, այն է՝ մոտավորապես ժամանակակից Դիյարբաքրի շրջանը: Մրա հիման վրա կարելի է ենթադրել, որ Խաթթուսիլիսը փորձում էր սիրիական տարածաշրջանում դաշնակիցներ փնտրել ընդդեմ Յամհադի թագավորության և նրա դաշնակիցների:

Խաթթուսիլիսի սիրիական երկրորդ պատերազմի արդյունքում, ամենայն հավանականությամբ, խեթերը չկարողացան ամուր կերպով հաստատվել գրավված տարածքներում: Այստեղի քաղաքներում չկազմակերպվեցին խեթական կառավարիչների կողմից ղեկա-

---

<sup>205</sup> Նույնն է ինչ Մարիի արքա Յամախ-Ադդուին ուղղված Աշշուրի արքա Իշմե-Դագանի նամակում (Durand 1997: 128-129 [N.31]) հիշատակվող Տիգունանի քաղաքը Եփրատի և Տիգրիսի միջև (ժամանակակից Դիյարբաքրի շրջանում):

<sup>206</sup> Տեքստի առաջին հրատարակությունը տես Salvini 1994; նաև Hoffner 2009: Այդ նամակի հետ կապված Խաթթուսիլիսի սիրիական արշավանքի խնդիրների մասին տես Miller 2001a:

վարվող վարչական միավորներ: Ավելին, Հյուսիսային Սիրիայի առավել հզոր պետությունը՝ ամորեական Յամհադը չնվաճվեց Խաթուսիլիսի կողմից, թեև նրա գործը աջակցում էր Խասսուվային վերջինիս պաշարման ժամանակ:

Ընդհանուր առմամբ, Խաթուսիլիսը անհաջողություն կրեց իր սիրիական պատերազմներում: Հավանաբար, խեթերի արշավանքների նպատակը Սիրիայով անցնող առևտրական ճանապարհների հաղորդակցվելն էր և դրանց նկատմամբ վերահսկողություն սահմանելը: Հնարավոր է, որ Խաթուսիլիսը փորձում էր այս եղանակով կայուն կապ ապահովել Միջագետքից արտահանվող անագի առևտրի նկատմամբ, որը բերվում էր Էլամից կամ հեռավոր Աֆղանստանից, ինչը տնտեսական կարևորագույն նշանակություն ուներ բրոնզի արտադրության համար: Նախկինում, դեռևս Աշշուրի առևտրական գաղութների գործունեության ավարտից հետո այդ կապը Միջագետքի հետ արգելափակվել էր:<sup>207</sup> Կարծիք է արտահայտվել այն մասին, որ Խաթուսիլիսի սիրիական արշավանքները ոչ թե այս տարածաշրջանում ամուր հաստատվելու ձգտումն էր, այլ այստեղի երկրագործական ներուժի նկատմամբ վերահսկողությունը:<sup>208</sup> Հյուսիսային Սիրիայի խուրրիական քաղաքական միավորների կողմից Խաթուսիլիսի հարավային շրջանների նկատմամբ հնարավոր ոտնձգությունները կանխելը նույնպես կարող էին արշավանքի դրդապատճառ դառնալ:<sup>209</sup>

Սիրիական երկրորդ արշավանքից հետո Խաթուսիլիսը ձեռնարկեց մի քանի արշավանքներ ևս, նախ դեպի Արցալա, այնուհետև՝ կրկին Սիրիա: Դրանց մասին տեղեկությունները գալիս են տարբեր աղբյուրներից և կցկտուր են: Մասնավորապես, այդ մասին հիշատակվում է այսպես կոչված “Հալեպի պայմանագրում”՝ կնքված Մուվատալլիս II-ի և Հալեպի արքա Տալմի-Շարրումայի միջև, որի պատմական ներածականում ներկայացվում է Խաթուսիլիսի կողմից Հալեպի նկատմամբ տարած հաղթանակը:<sup>210</sup> Դատելով

---

<sup>207</sup> Bryce 2005: 81-82.

<sup>208</sup> Mieroop van 2007: 121.

<sup>209</sup> Bryce 2014: 26-27.

<sup>210</sup> CTH 75 = KBo I (համապատասխան հատվածը՝ Gurney 1973: 243):

այդ տեղեկություններից, արքան զգալի հաջողություններ էր արձանագրել Յամհադի դեմ պատերազմում, սակայն որոշ ժամանակ անց մահացել էր, թերևս, սիրիական արշավանքի ժամանակ ստացած վերքերից: Մուրսիլիս I-ի մի տեքստը կարծես ակնարկում է, որ Խաթթուսիլիսը մահացել է Յամհադի դեմ պատերազմի ընթացքում:

Դեպի Սիրիա ուղղված արշավանքները նկարագրող տեքստերում հիշատակվում են որոշ քաղաքներ, որոնք հետագայի խեթական աղբյուրներում անմիջականորեն առնչվում են Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավ-արևմտյան շրջանների, մասնավորապես Իսուվայի (հայկ. Ծոփք) հետ: Դրանք են՝ Ալխան (Մալաթիայի շրջանում),<sup>211</sup> Խինձուտան (հայկ. Անձիտ/Հանձիտ՝ Ծոփքում),<sup>212</sup> Խազգան և, հնարավոր է, Արմատանան (Իսուվայի մերձակայքում):

Դատելով աղբյուրներից, այս փուլում խեթական արքան իր առջև խնդիր չէր դրել նվաճելու վերինեփրատյան տարածաշրջանը: Ավելի քան հնարավոր է, որ վերոհիշյալ բնակավայրերը կամ ընկած էին դեպի Սիրիա տանող ճանապարհին կամ դրանց մերձավորությամբ, որոնց մերձակայքով անցել էր Խաթթուսիլիսը:

### **Կուսսարի ժողովը**

Իսկ այդ ընթացքում, սիրիական երկրորդ կամ նույնիսկ հետագա արշավանքների շրջանում, Խաթթուսիլիսը ստիպված էր զբաղվել մի կարևոր ներպետական խնդրով, այն է՝ արքայատոհմի ներսում ընթացող գահակալական պայքարով: Արքայի երկարատև պատերազմների ընթացքում, նրա բացակայության ժամանակ, հասունանում էր մի դավադրություն, որը կազմակերպել էին նրա մերձավորները:

Խաթթուսիլիսի “Քաղաքական կտակը” ներկայացնում է խեթական արքայատոհմի նախնական մայրաքաղաք Կուսսարում Խաթթուսիլիսի կյանքի վերջին շրջանում գումարված ժողովը, որին մաս-

---

<sup>211</sup> De Martino 2012: 377.

<sup>212</sup> Քոսյան 2004ա: 57; De Martino 2012: 378.

նակցում էին *պանկուսի*<sup>213</sup> անդամները և <sup>LÚ.MEŠ</sup>DUGUD կոչվող<sup>214</sup> բարձրաստիճան պաշտոնյաները: Կուսասրի ժողովի գումարման պատճառները բխում էին արքայատոհմի ներսում երկար տարիներ տիրող լարված մթնոլորտի հետևանքներից:

Պարզվում է, որ արքայի որդիները, ովքեր նշանակվել էին նվաճված երկրների կառավարիչներ, անհնազանդություն էին դրսևորում: Նրանցից առնվազն երկուսը՝ Տապպասսանդա քաղաքում կառավարող Խուցցիյասը և Ցալպայում կառավարող Խակկարայիլիսը ապստամբել էին և արքան ստիպված էր եղել ճնշել դրանք ու պաշտոնանկ անել իր որդիներին: Հետագայում խոշոր ապստամբություն էր ծագել հենց մայրաքաղաքում՝ արքայադստեր գլխավորությամբ: Դստեր անունը չի պահպանվել, ինչը բացատրվում է ոչ թե տեքստի վնասվածքներով, այլ որոշակի միտումի արդյունք է: Տեքստից կարելի է եզրակացնել, որ Խաթթուսիլիսի որդիների և դստեր ապստամբության պատճառը գահաժառանգման հարցն էր: Ճնշելով ապստամբությունը, արքան դստերը զրկեց նրա կարգավիճակից բխող բոլոր արտոնություններից և վտարեց մայրաքաղաքից: Մեփական ժառանգների նկատմամբ անվստահությունը, կապված վերջիններիս դավադիր ծրագրերի և ապստամբությունների հետ, ստիպեց Խաթթուսիլիսին գահաժառանգ հռչակել իր քրոջ որդուն, սակայն տեսնելով վերջինիս վրա արքայատոհմի անդամների մեծ ազդեցությունը և իր անձի հանդեպ ցուցաբերած անտարբերությունը, հրաժարվեց այդ ծրագրից և նրան ևս վտարեց մայրաքաղաքից, ինչը մեծ դժգոհություն առաջ բերեց քրոջ մոտ: Խաթթուսիլիսը որդեգրեց իր թոռանը՝ դեռևս պատանի Մուրսիլիսին և Կուսասրի ժողովում պար-

---

<sup>213</sup> Խեթերեն panku- բառը բառացի նշանակում է “ժողովուրդ, ամբողջություն” (տես Hoffner 1997: 88-92): Այն արքայի խորհրդակցական մարմինն էր, որի մեջ ներառված էր, ըստ Գ.Բեքմանի (Beckman 1982), պետության վարչական ապարատի ղեկավարությունը, այլ ոչ տոհմային ավագանու վերնախավի ներկայացուցիչները: Այնուամենայնիվ, այս մեկնաբանությունը դեռևս հետազոտության կարիք ունի, հատկապես այն պարագայում, երբ խեթական տեքստերում բազմիցս հանդիպում է արքային կից գործող ևս մեկ բարձրագույն մարմին՝ teliya-ն, որը, Գ.Բեքմանի կարծիքով, գրեթե նույն իմաստն ունի ինչ *պանկուսը*:

<sup>214</sup> “Քաղաքի կառավարիչ: բարձրաստիճան պաշտոնյա” (Tischler 2001: 219):

տաղրեց խեթական ազնվականությանը համաձայնվել նշանակել թագաժառանգ:

Մուրսիլիսի հռչակումը որպես գահաժառանգ թշնամաբար ընդունվեց արքայատոհմի մեծ մասի, մասնավորապես արքայի քրոջ և/կամ դստեր կողմից: Տեքստերը թույլ չեն տալիս ենթադրելու արքայի դեմ այս առթիվ սկսված ապստամբության մասին, սակայն Խաթթուսիլիսի մի տեքստից բխում է, որ իրավիճակը ծայրաստիճան լարված է եղել:

*“Ապագայում ոչ ոք թող չարտասանի տավանաննայի (թագուհի՝ արքայի քույրը, դուստրը կամ կինը - Ա.Ք.) անունը ...: Թող ոչ ոք թող չարտասանի նրա որդիների կամ դուստրերի անունը: Եթե Խաթթիի բնակիչը արտասանի նրանց անունը, թող նրա կոկորդը կտրեն և նրան իր դարպասի վրա կախեն”:*

Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, արքայի մերձավորների նկրտումները հասնելու իշխանության շարունակվեցին նաև Մուրսիլիս I-ի գահակալությունից հետո: Դրա արդյունքում Մուրսիլիսը դեպի Բաբելոն կազմակերպած հաղթական արշավանքից վերադառնալուց որոշ ժամանակ անց գոհ գնաց պալատական դավադրության:

Խաթթուսիլիս I-ի կառավարման շրջանի իրադարձությունները վկայում են այն մասին, որ երիտասարդ Խեթական պետությունը թեև մեծ ջանքեր էր գործադրում ընդարձակվելու իր բնօրրանից դուրս՝ տարբեր ուղղություններով, սակայն ակնհայտորեն դեռևս չէր տիրապետում անհրաժեշտ ռեսուրսների: Խաթթուսիլիսի բոլոր արշավանքները տրվում էին մեծ դժվարությամբ, և լավագույն դեպքում դրանք ավարտվում էին ժամանակավոր հաջողությամբ: Ավելին քան ռազմավարի ձեռքբերումն էր, հագիվ թե հնարավոր լինի ենթադրել: Հետագայում, Նոր թագավորության շրջանում խեթական արքաները նույնպես բազմիցս փորձում էին իրենց անմիջական ազդեցությունը տարածել Խաթթուսիլիսի արշավանքների նպատակակետ հանդիսացող տարածաշրջանների նկատմամբ, և հասան դրան միայն ուժերի գերագույն լարման շնորհիվ:

Խաթթուսիլիսի ջանքերը տարածապես ընդարձակելու իր պետության սահմանները, թվում է, ի սկզբանե դատապարտված էին անհաջողության, քանի որ նույնիսկ հաջող արշավանքներին չէին հաջորդում քաղաքական ինտեգրմանն ուղղված միջոցառումները: Այս և հետագայում տարբեր արքաների օրոք գրված տեքստերում որևէ ակնարկ չկա նվաճված երկրների կառավարիչների հետ կնքված պայմանագրերի մասին, ինչը անհրաժեշտ պայման էր նվաճումներին իրավական ձևակերպում տալու հարցում: Այդ էր պատճառը, որ նվաճված երկրները որևէ պարտավորություն չունեին Խաթթի արքայի հանդեպ և առաջին իսկ հնարավորության դեպքում ապստամբում էին և հրաժարվում իրենց վրա դրված պարտավորությունների կատարումից: Նույնը կարելի է ասել Փոքր Ասիայի տարբեր շրջաններում Խաթթուսիլիսի կողմից որպես կառավարիչներ նշանակված նրա որդիների մասին:

Ավելին, Խաթթին Խաթթուսիլիս I-ի օրոք նույնիսկ կայուն վերահսկողություն չունեի իր բնօրրանում՝ Հալիսի ավազանում: Դրա վկայությունը, թերևս, սիրիական առաջին արշավանքից հետո այստեղ նրա դեմ ծագած ապստամբությունն էր, որի ճնշման ընթացքում վերջնականապես նվաճվեց Մալատիվարա քաղաքը:

Ամփոփելով պետք է եզրակացնել, որ զուտ ռազմական ուժով ստեղծված Խաթթուսիլիսի պետությունը չէր կարող երկար գոյատևել, ինչը դրսևորվեց Հին թագավորության արքաների մեծ մասի կառավարման շրջանում:

## ՄՈՒՐՍԻԼԻՍ I

Մուրսիլիս I-ը բարդ ժառանգություն ստացավ Խաթթուսիլիս I-ի կառավարման վերջին տարիներին ընթացող ներքաղաքական վայրիվերումների հետևանքով: “Խաթթուսիլիսի կտակը” աներկբայորեն վկայում է պետության ներսում ընթացած դինաստիական պայքարի, ապստամբությունների և արյունահեղության մասին: Նույնիսկ հիշատակվում մայրաքաղաքում սկսված ապստամբությունը: Փաստացի, Մուրսիլիսի գահակալման նախօրեին երկրում Խաթթուսիլիսի

դեմ ծավալվել էր քաղաքացիական պատերազմ և նա դժվարությամբ կարողացել էր գոնե ժամանակավորապես հասնել հաջողության: Ըստ էության, Մուրսիլիսը մեծաքանակ հակառակորդներ ուներ ինչպես արքայատոհմի ներսում, այնպես էլ տոհմային ազնվականության շրջանում:

Մուրսիլիս I-ի կառավարման շրջանի վերաբերյալ սակավաթիվ տեղեկություններ են պահպանվել: Դրանց հիման վրա պարզվում է, որ նա շարունակեց պապի ակտիվ արտաքին քաղաքականությունը և նույնիսկ որոշ առումներով գերազանցեց նրան:

### **Մուրսիլիսի սիրիական արշավանքը**

Ադրյուրների սակավության պատճառով դժվար է պարզել ադրյոք Մուրսիլիսը սկսել էր արշավանքը Յամհադի թագավորության դեմ իր պապի կողմից նրա կյանքի վերջերին ստացած հանձնարարությամբ, թե դրա համար կային այլ դրդապատճառներ: Ըստ նրան հաջորդած Խանտիլիս I-ի տեքստի, որտեղ համառոտ շարադրված են Խաթթուսիլիս I-ի և Մուրսիլիս I-ի արշավանքները,<sup>215</sup> վերջինս ցանկանում էր վրեժ լուծել իր պապի արյան համար:

Հայտնի է, որ Խաթթուսիլիսի սիրիական արշավանքներից հետո, նախքան Մուրսիլիսի գահակալումը, Հյուսիսային Սիրիայի և հարակից շրջանների խուրրիները սկսել էին շարժվել դեպի հյուսիս և նույնիսկ հասել էին Կիլիկյան լեռներում գտնվող կարևոր պաշտամունքային կենտրոն Լուխուցանտիյա (Լավացանտիյա):<sup>216</sup> Նրանք նաև գրավել էին Տավրոսի գոտու մի շարք շրջաններ՝ Խամսան, Խասսումը, Խատրան (վերջինս հետագայի Բուսվայի հարավում):<sup>217</sup> Խուրրիական իշխանությունները Խաթթուսիլիս I-ի օրոք հաղիսանում էին Յամհադի դաշնակիցները, ինչը կարող է նշանակել, որ վերջինիս արքա Համմուրայի II-ը ինքն էր որոշել նախահարձակ լինել և գրավել Կիլիկյան Տավրոսի լեռնանցքները, դրանով իսկ փակելով խեթերի հնարավոր հարձակման ճանապարհները:

---

<sup>215</sup> Soysal 1989: 57-58.

<sup>216</sup> Հստակ տեղը պարզ չէ, մոտավորապես տեղադրվում է Տավրոսի լեռնաշղթայի արևելքում (Del Monte und Tischler 1978: 237-238):

<sup>217</sup> Шелестин 2014: 61-62.

Իր կառավարման հենց սկզբում նա անցավ Տավրոսի լեռները և պարտության մատնեց Յամհադին (Տելեպհնուսի “Հռչակագիրը”): Հաղթանակը վճռական էր, քանի որ նրա մայրաքաղաք Հալեպը գրավվեց և մեծ ռազմավար տարվեց Խաթթուսաս: Գրավվեց և ավերվեց Յամհադի տիրապետության տակ գտնվող հայտնի քաղաք Էբլան, ինչպես նաև Յամհադի բոլոր կարևոր քաղաքները: Ենթադրվում է, որ Մուրսիլիսի արշավանքի ժամանակ նրան աջակցություն էր ցույց տվել Նինվեի շրջանում իշխող խուրրիական կառավարիչ Պիցիկարան:<sup>218</sup> Թերևս, սա այս թագավորության ավարտն էր, քանի որ Հալեպի մասին՝ որպես Միլիայում Խաթթիի հակառակորդի, աղբյուրները հետագայում այլևս ոչ մի տեղեկություն չեն հաղորդում:

### **Բաբելոնի նվաճումը**

Յամհադի նվաճումը Մուրսիլիս I-ի կողմից և հաղթանակը նրա սիրիական դաշնակիցների նկատմամբ լուրջ հաջողություն էր, քանի որ դրանով վերջ տրվեց Կիլիկյան Տավրոսի հարավակողմից նախկինում պարբերաբար ընթացող հարձակումներին, որոնք սպառնում էին Խեթական պետության հարավային տիրույթների անվտանգությանը: Մակայն արքան մտադիր չէր կանգ առնել:

Յամհադի խնդիրը հիմնավորապես լուծելուց հետո նա հայացքն ուղղեց դեպի արևելք: Հյուսիսային Միլիայից դեպի Միջագետք ընկած տարածքում այս շրջանում գոյություն ունեին մեծաքանակ խուրրիական և սեմական մանր իշխանություններ, որոնց մի մասը նախկինում գտնվում էր Յամհադի ազդեցության տակ և Խաթթուսիլիս I-ի օրոք ընդգծված հակախեթական դիրքորոշում ուներ:

Մուրսիլիսի բաբելոնյան արշավանքի նպատակների մասին աղբյուրները ոչինչ չեն հաղորդում: Մուրսիլիսի աննախադեպ բաբելոնյան արշավանքի դրդապատճառները, որը հաջորդեց սիրիականին, առ այսօր պարզված չեն:<sup>219</sup> Հնարավոր է, այն կազմակերպվել էր կասսիտների առաջարկով:<sup>220</sup> Ենթադրվում է նաև, որ բաբելոնյան

---

<sup>218</sup> Шелестин 2014: 68-70.

<sup>219</sup> Մասնագետների կողմից այս արշավանքի դրդապատճառների վերաբերյալ կարծիքները տես Шелестин 2014: 76:

<sup>220</sup> Հնարավոր պատճառների մասին տես Klengel 1999: 65-66:



արշավանքի միջոցով Մուրսիլիսը ձգտում էր դաշինք ստեղծել ապագայում Հյուսիսային Միջագետքում և Սիրիայի հյուսիսում խորրիական քաղաքական միավորների դեմ ծրագրվող պատերազմի դեպքում:<sup>221</sup> Առաջարկվել են նաև այլ կարծիքներ. 1. Յամհադի նկատմամբ տարած հաղթանակից հետո արքայի հեղինակության հետագա աճը, 2. Սիրիական արշավանքի ժամանակ Բաբելոնիայի ռազմական օգնությունը Յամհադին, 3. Ավարառուական նկատառումներից ելնելով: Համենայնդեպս պարզ է մի բան, որ Մուրսիլիսը հազիվ թե նպատակ ուներ ամրապնդվելու իր պետությունից հարյուրավոր կիլոմետրեր հեռու ընկած երկրում, այն դեպքում երբ Խեթական պետության և Բաբելոնիայի միջև գտնվում էին տասնյակ քաղաքական միավորներ և գրեթե անհնար էր վերահսկել նորանվաճ շրջանները:

Մուրսիլիսն իր արշավանքի ժամանակ դաշնակիցներ ուներ, որոնց շարքում, հավանաբար, Միջին Եփրատի շրջանում գտնվող ամորեական Խանա իշխանությունը կամ Հյուսիսային Միջագետքի կասսիտները:

Ամեն դեպքում Մուրսիլիսն աննախադեպ հեռահար արշավանք կազմակերպեց դեպի Բաբելոնիա, կտրել-անցնելով շուրջ 800 կմ Հալեպից մինչև Բաբելոն քաղաք: Արքան նվաճեց քաղաքը, վերջ տալով այստեղ իշխող ամորեական արքայատոհմի իշխանությանը և որպես ռազմավար գերեվարեց Բաբելոնի գերագույն աստված Մարդուկի և մեկ այլ աստված Ծարպանիտի արձանները:

Մուրսիլիսի պատերազմների համառոտ ամփոփումը տրված է ուշ շրջանի արքա Տելեպինուսի տեքստում. *“Եվ նա (Մուրսիլիսը) գնաց Հալեպ և Հալեպյն ավերեց ու այնտեղից Հալեպի ռազմագերիներին և բարիքները Խաթթուսաս բերեց: Իսկ հետո նա գնաց Բաբելոն և Բաբելոնն ավերեց: Նա նաև խուրրիներին ոչնչացրեց և Բաբելոնի ռազմագերիներին ու բարիքները Խաթթուսասում պահեց”*:<sup>222</sup>

---

<sup>221</sup> Bryce 2005: 99.

<sup>222</sup> Hoffmann 1984:18-19.

Մուրսիլիսի այս երկու նվաճումների մասին հիշատակում է նաև մ.թ.ա. XIV դարի խեթական արքա Մուրսիլիս II-ը,<sup>223</sup> ինչպես նաև ավելի ուշ շրջանի բաբելոնյան ժամանակագրությունը:<sup>224</sup> Աղբյուրը չի հիշատակում խեթական արքայի անունը, սակայն նշում է, որ այդ իրադարձությունը տեղի էր ունեցել Համմուրապիի որդի Սամսուդիտանայի՝ գործող հարստության վերջին ներկայացուցչի օրոք: Այդ արշավանքից հետո Բաբելոնիայում ավարտվեց Համմուրապիի արքայատոհմի տիրապետությունը և շուտով այստեղ իշխանության եկան Միջագետքի հյուսիսում ոչ շատ վաղուց հաստատված կասսիտները, որոնք էլ Սամսուդիտանայից հետո իրենց ձեռքը վերցրեցին իշխանությունը և հիմնեցին կասսիտական Բաբելոնիայի պետությունը:

Մուրսիլիսի սիրիական և բաբելոնյան արշավանքները մեծապես նպաստեցին Մերձավոր Արևելքի քաղաքական քարտեզի վերաձևավորմանը: Պատմության ասպարեզից դուրս եկան երկու կարևոր պետություններ՝ Յամհադն ու Համմուրապիի Բաբելոնիան, փոխարենը Միջագետքում կազմավորվեց կասսիտական Բաբելոնիան, իսկ Միլիայում նախկին հեզեմոն Յամհադի և նրա դաշնակիցների փոխարեն հետագայում ձևավորվեցին բազմաթիվ մանր քաղաքական միավորներ, որոնք արդեն մ.թ.ա. XV-XIV դարերում հանդիսանում էին երեք խոշոր քաղաքական ուժերի արտաքին քաղաքականության թիրախը (Եգիպտոս, Միտտանի և Խեթական պետություն):

Բաբելոնիայից վերադառնալուց որոշ ժամանա անց Մուրսիլիսը գոհ գնաց իր քրոջ՝ Խարապսիլիի ամուսին Խանտիլիսի և վերջինիս որդեգիր Յիդանտասի կազմակերպած դավադրությանը: Այս պահից սկսած Խեթական պետությունը հայտնվում է տասնամյակներ տևած անկայուն ներքաղաքական իրավիճակում, որի գլխավոր առանձնահատկությունը գահաժառանգման հստակ համակարգի բացակայության բացասական հետևանքներն էին: Միմյանց հաջորդած արքաների մեծ մասը իշխանության էր գալիս նախորդի սպա-

---

<sup>223</sup> Sfu Gurney 1940: 31:

<sup>224</sup> Grayson 1975: 156.

նության հետևանքով: Արքայատոհմի ներսում, նաև տոհմային ազնվականության շարքերում մշտական պայքար էր գնում հանուն իշխանության:

## **ԽԱՌՆԱԿ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ. ՏԵԼԵՊԻՆՈՒՄ**

### **Տելեպինուսի նախորդները**

Խանտիլիս I-ի և նրան հաջորդած արքաների կառավարման վերաբերյալ տեղեկությունների հիմնական մասը պահպանվել է ավելի ուշ շրջանից եկող Տելեպինուսի “Հռչակագրում”:

Ընդհանուր առմամբ Խանտիլիս I-ը շարունակեց Մուրսիլիսի արտաքին քաղաքականությունը, իհարկե ավելի նվազ աշխարհագրական ընդգրկմամբ: Նա ստիպված էր պատերազմներ մղել երկու ճակատներով՝ սիրիական տարածաշրջանի խուրրիական իշխանությունների և հյուսիսի կասկերի դեմ: Մասնավորապես, նա արշավեց դեպի Սիրիա, որտեղ, հավանաբար, Մուրսիլիսի մահից հետո տեղ էին գտել հակախեթական տրամադրություններ և անհրաժեշտություն կար վերականգնելու Խաթթիի գերիշխանությունը:

Խեթական գորքը արշավեց դեպի սիրիական քաղաքներ Աշտատա, Խուրպանա և Կարգամիս: Արշավանքի ընթացքում նշված քաղաքներում տեղակայվեցին խեթական կայազորներ, որից հետո արքան ետ վերադարձավ: Հավանաբար, այս արշավանքի նախաձեռնումը պայմանավորված էր նաև խուրրիների առաջխաղացմամբ, քանի որ այս շրջանում վերջիններս նվաճեցին երկրի մեծ մասը՝ գերեվարելով խեթական թագուհուն իր որդիների հետ միասին:<sup>225</sup>

Լարված էր իրավիճակը նաև հյուսիսում, որտեղ կասկերը նվաճել և ավերել էին խեթերի կարևորագույն պաշտամունքային կենտրոններից մեկը՝ Ներիկը (Հալիսի ստորին հոսանքներում՝ մերձսևծովյան գոտում): Խանտիլիսը գրավեց մի շարք բնակավայրեր, վերա-

---

<sup>225</sup> Խարապսիլիի և նրա որդիների սպանությունը խուրրիների կողմից, հնարավոր է, չի համապատասխանում իրականությանը: Առաջարկվել է այդ տեղեկությունը մեկնաբանել որպես իր ամուսնու՝ Խանտիլիսի դեմ թագուհու դավերի արդյունք (Шелестин 2014: 94): Այդ դեպքում թագուհու և նրա որդիների սպանությունը կարող էր կազմակերպել հենց արքան:

կանգնելով իր ազդեցությունը այս շրջանում: Բացի այդ, պետության առավել հեշտ խոցելի շրջաններում կառուցվեցին ամրություններ:

Խանտիլիսին հաջորդած Ցիդանտաս I-ը, ով մինչ այդ արդեն հասցրել էր սպանել Խանտիլիսի որդուն և նրա ընտանիքի անդամներին, որոշ ժամանակ անց ինքն էլ զոհ գնաց նոր դավադրության, այս անգամ իր որդու՝ Ամմունասի կողմից:

Ամմունասի կառավարումն անցավ լարված իրավիճակում, ինչի մասին հաղորդում են նրա “Ժամանակագրությունը” և Տելեպինուսի “Հռչակագիրը”. սրանցից առաջինը պահպանվել է բավական մեծ վնասվածքներով (“Ամմունաս”):<sup>226</sup> Այստեղ որպես Ամմունասի հակառակորդներ հիշատակվում են Փոքր Ասիայի տարբեր շրջաններում տեղադրվող երկրներ, որոնք հայտնի են նաև հետագա ժամանակներում և հանդիսանում էին Խաթթիի արտաքին քաղաքականության հիմնական թիրախները: Դրանք են՝ Ադանիյան (հետագայի Ադանան՝ Դաշտային Կիլիկիայում), Արցավիյան (Արցավան Արևմտյան Փոքր Ասիայում), Սալլապան և Պարդովատան (Խաթթիի բնօրրանից դեպի արևմուտք), ինչպես նաև թերակղզու հյուսիսարևելքում և արևելքում գտնվող կասկական Տիբիյան և Խախիսան (Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում՝ Վերին Եփրատի գոտում, թերևս ժաման. *Լիդարիոյուք* հնավայրը):

Դատելով Ամմունասի կառավարումը լուսաբանող երկու աղբյուրներից, պարզ է դառնում, որ վերոհիշյալ ուղղություններում խեթական արքայի ձեռնարկումները հազիվ թե կարելի է համարել հաջողված: Հաջողությունները զուգորդվում էին անհաջողություններով: Այդ իրավիճակը խոսուն կերպով ներկայացնում է Տելեպինուսի “Հռչակագիրը”.

*“Որ արշավանքի որ գորքը գնում էր, այն հաջողությամբ չէր վերադառնում”:*<sup>227</sup>

Աղբյուրների հավաստմամբ, Խաթթին զրկվեց Ադանիյայից և Արցավայից: Ամմունասի օրոք Խեթական պետության քաղաքական հետաքրքրությունների հարավ-արևելյան հատվածում արդեն

<sup>226</sup> Ամմունասի կառավարման վերաբերյալ տես Шелестин 2015:

<sup>227</sup> Bryce 1983: 135.

ստեղծվել էր անբարենպաստ իրավիճակ, որի պատճառը Միտտանիի խուրրիների աննախադեպ ակտիվությունն էր: Միտտանիի արքա Պարատտարնան, էթե ոչ նրա նախորդը, կարողացել էր հիմնավորվել Կիցցուվատնայում (Կիլիկիա) և այնտեղ ստեղծել քույր-թագավորություն: Այս շրջանի խեթական աղբյուրները հիշատակվում են Կիցցուվատնայի արքա Պիլլիային, ով Պարատտարնայի ժամանակակիցն էր: Այսուհետև խեթերին Սիրիայից բաժանող Տավրոսի լեռնաշղթան գտնվում էր Միտտանիի և նրա դաշնակից Կիցցուվատնայի հսկողության տակ: Տնտեսական առումով խեթերի առջև ստեղծված արգելապատնեշը դեպի կենսական նշանակություն ունեցող սիրիա-միջագետքյան տարածաշրջան, անկասկած, բացասաբար պիտի անդրադառնար Խաթթիի հետագա վիճակի վրա: Ոչ պակաս ծանր էին նաև երկրում սկսված երաշտի հետևանքները:

Ամմունասը, ըստ աղբյուրների, ստիպված էր կազմակերպել մի շարք արշավանքներ տարբեր ուղղություններով բուն Փոքր Ասիայում, որոնց նպատակը, հավանաբար, պետության տարածքային ամբողջականության ապահովումն էր: Չնայած, հնարավոր է, այդ արշավանքների մի մասը ավելի շուտ պաշտպանողական բնույթ էր կրում:

Տելեպինուսի կառավարման նախօրեին Խաթթուսիլիս I-ի և Մուրսիլիս I-ի արշավանքների շնորհիվ ստեղծված ընդարձակ պետությունը գերազանցապես սահմանափակվում էր Խաթթիի բնօրրանով՝ մայրաքաղաքի շրջակայքով և որոշ այլ տարածքներով: Հարավ-արևելքից խուրրիները, հյուսիսից և հյուսիս-արևելքից կասկական ցեղերը, իսկ արևմուտքից Ասսուվա անվանումը կրող մանր պետականությունների միությունը պարբերաբար ասպատակում և ավերում էին երկիրը: Առանձին պահերի Խեթական պետությունը սկսում էր վերածվել երկրորդական նշանակության քաղաքական ուժի:

Ամմունասի մահից հետո Խաթթիում գահակալական պայքար սկսվեց, ինչի մասին հանգամանայի տեղեկություններ է հաղորդում Տելեպինուսի “Հռչակագիրը”: Արքայական թիկնազորի հրամանատար Ցուրուի հանձնարարությամբ նրա որդին՝ “Ոսկե նիզակակիր”

Տախտուրվախիլին, սպանեց Ամմունասի որդիներինց մեկին՝ Տիտտիին իր ընտանիքի անդամների հետ միասին: Իսկ մեկ այլ անձնավորություն՝ պալատական Տարուխսուն սպանեց Ամմունասի մյուս որդուն՝ Խանտիլիսին: Այդ գործողությունների թիկունքում կանգնած էր Ամմունասի փեսան՝ նրա դուստրերից մեկի ամուսին Խուցցիյասը, ով էլ արդյունքում հռչակվեց արքա:

Իր իշխանությունը կայունացնելու համար անհրաժեշտ էր վերացնել Ամմունասի ընտանիքի բոլոր անդամներին և նա փորձեց սպանել նաև իր քրոջ ամուսին Տելեպինուսին՝ Ամմունասի մյուս որդուն: Սակայն Տելեպինուսը կարողացավ ժամանակին կանխել մահափորձը և նույնիսկ հեղաշրջում կազմակերպեց, որի արդյունքում Խուցցիյասը գահազրկվեց և իր հինգ եղբայրների հետ միասին արքայությունից հեռացվեց:

### **Տելեպինուսի կառավարումը**

Տելեպինուսի անվան հետ են կապված Խեթական պետության պատմության երկու կարևոր իրադարձություններ, որոնք զգալիորեն կայունացրեցին իրավիճակը և հիմք դրեցին նրա հետագա վերելքին:

Ենթադրվում է, որ գահաժառանգման նոր կարգի հաստատումը զգալիորեն պայմանավորված էր Տելեպինուսի կառավարման ինչ-որ մի պահ տեղ գտած նոր դավադրություններով: Նախ անհայտ պատվիրատուի հանձնարարությամբ ուն Տարուվան սպանեց արքայական Խուցցիյասին և նրա հինգ եղբայրներին, որից հետո Տարուվան և Ամմունասի որդիներին սպանող Տախտուրվախիլին ու Տարուխսուն *պանկուսի* կողմից մահվան դատապարտվեցին: Յանկանալով վերջ դնել սպանությունների շղթային և տուրք չտալ վրեժի զգացմանը, Տելեպինուսը ներեց նրանց և մահապատիժը փոխարինեց արքայով: Սակայն դրանով պալատական դավադրությունները չավարտվեցին: Որոշ ժամանակ անց անհայտ անձինք սպանեցին նաև Տելեպինուսի կնոջը՝ Թագուհի Բատապարիյային և որդուն՝ Ամմունասին:

Առաջինը գահաժառանգման նոր կարգն էր.

*“Այսուհետև Խաթթուսատում ոչ ոք չպիտի չարիք պատճառի արքայական տոհմի որդուն և նրան խոցի դաշույնով: Թող արքա*

դառնա միայն արքայի որդիներից առաջինը: Եթե արքայի որդիներից առաջինը չկա, ապա թող արքա դառնա նա, ով երկրորդն է: Իսկ եթե արքայի որդիներից ոչ մեկը չկա, ապա թող արքա դառնա նա, ով կնության կվերցնի (արքայի) առաջին դստերը<sup>228</sup>: Արքան միաժամանակ խստիվ արգելեց արքունիքի անդամներին և բոլոր բարձրաստիճան պաշտոնյաներին զերծ մնալ դավադրություններից ու սպանություններից, նրանց որպես օրինակ բերելով վերոհիշյալ Տարուվային, Տախուրվաիլիին և Տարուխսուին: Այսուհետև յուրաքանչյուր անձ պարտավոր էր կանխել արքայատոհմի անդամների դեմ նյութվող ցանկացած դավադրություն: Օրենքով պատժամիջոց էր սահմանվում արքայատոհմի անդամների սպանության համար: Այդպիսի անձանց չէր կարելի սպանել այնպես ինչպես դա եղել էր նախկինում, այլ նրանց հարցը քննարկման դնել *տուլիյայում*: Հետաքրքիր նորույթ էր հանցագործի նկատմամբ պատժի սահմանումը: Վերջինիս ընտանիքի անդամները պատասխանատու չէին համարվում հանցագործի արարքի համար: Նրանց չէր կարելի պատժել կամ ունեցվածքը բռնագրավել: Հատկանշական է, որ հանցանք գործած արքայատոհմի անդամին մահապատժի ենթարկելիս անհրաժեշտ էր հարցնել սպանվածի ժառանգի կարծիքը: Նա պետք է որոշել սպանել թե ինչպե՞լ հանցագործի կյանքը:<sup>229</sup>

“Հռչակագիրը” աստվածային պատիժ էր սահմանում նաև արքայատոհմի ներսում սև մոգությամբ զբաղվողների նկատմամբ: Մասնավորապես ասվում էր, որ նրա նյութած չարիքի դիմաց հենց ինքը և իր տունը կպատժվեն: Տելեպինուսի տեքստի այս եզրափակիչ հատվածի առկայությունը վկայում է այն մասին, որ սև մոգությունը լայնորեն տարածված երևույթ էր Խաթթիում, այդ թվում հենց հասարակության վերնախավում: Մոգական գործողության միջոցով քաղաքական հակառակորդներին վնասելու ցանկության դեպքերը քիչ չեն նաև հետագայում՝ Նոր թագավորության շրջանում (հատկապես Մուրսիլիս II-ի օրոք): Խեթական օրենքներում արձանագրված են մի

---

<sup>228</sup> Bryce 1983: 136-137.

<sup>229</sup> Bryce 1983: 137-139.

շարք հողվածներ, ըստ որոնց մոգությամբ զբաղվողը աներկբայորեն պետք է մահապատժի ենթարկվեր:<sup>230</sup>

Տելեպինուսի օրենքը իրավամբ արքայական իշխանության հաղթանակն էր տոհմային ավագանու և, ըստ էության, տոհմատիրական կարգերի մնացուկների նկատմամբ: Այսուհետև արքան ինքը պետք է որոշեր և ավագների խորհրդի ձևական հաստատմանը ներկայացներ գահի ժառանգորդին, այլ ոչ թե այդ հարցը դներ քննարկման: Ընդ որում կարգը սահմանում էր արքայական իշխանության ուղղակի ժառանգում արական գծով՝ ի դեմս գործող արքայի որդիների: Չնայած հետագայում էլ արքաների դեմ դավադրությունները շարունակվում էին, սակայն խոշոր ազնվականության ձեռքից նրանց ունեցած արտոնությունը վերցվեց, համենայնդեպս դրա համար իրավական հիմքեր ստեղծվեցին:

Տելեպինուսի օրոք էր, որ սկսվեց օրենքների ժողովածուների կազմումը:<sup>231</sup> Թերևս, այն միասնական, համընդգրկուն օրենսգիրք չէր, ինչպես Բաբելոնիայում Համմուրայիի օրոք, սակայն օրենքների հավաքման և գրառման գործընթացն արդեն իսկ վկայում է Տելեպինուսի կողմից խեթական հասարակության կյանքում կայունացման սաղմեր ներմուծելու քաղաքականության մասին:

Արտաքին քաղաքականության ասպարեզում Տելեպինուսի ուշադրության կենտրոնում էր իր նախորդների օրոք պետության տարածքների վերանվաճման գործը: Նա կարողացավ իր իշխանությունը տարածել նախկինում կորսված փոքրասիական մի շարք շրջանների վրա (Մամուխա, Մարիստա, Լավացանտիյա, Խուրմա, Մուկցիա, Պարսուխանդա = Պուրուսխանդա, Խուլայա գետի երկիր): Վերոհիշյալ քաղաքների և երկրների տեղադրությունը հուշում է, որ Տելեպինուսը գործում էր Փոքր Ասիայի թե արևելքում, թե արևմուտքում: Նա նաև պայմանագիր կնքեց Կիցցուվատնայի արքա Իսպուտախուի հետ: Այնուհետև արքան մուտք գործեց Հյուսիսային Սիրիա, հասնելով մինչև Խասսուվա:

---

<sup>230</sup> Hoffner 1997: 189. Սև մոգության հետ կապված խեթական տեքստերի քննությունը տես Miller 2010:

<sup>231</sup> Խեթական օրենքների հրատարակությունը տես՝ Neufeld 1951; Imperati 1964; Hoffner 1997:



Հատկապես կարևոր էր Կիցցուվատնայի հետ պայմանագրային հարաբերությունների հաստատումը: Նախկինում Խաթթիից կախյալ այս պետությունը Ամմունասի օրոք դուրս էր եկել խեթերի ազդեցության ոլորտից, որով կապը Հյուսիսային Սիրիայի հետ զգալիորեն վտանգվել էր: Խաթթիից Կիցցուվատնայի անկախանալու ժամանակի հարցում չկա միասնական կարծիք: Ըստ ոմանց, դա տեղի էր ունեցել Ամմունասի օրոք:<sup>232</sup> Սակայն այլ տեսակետի է Գ.Վիլհելմը, ով այդ իրադարձությունը թվագրում է Խանտիլիս I-ի ժամանակներով:<sup>233</sup>

Տելեպինուսի մղած պատերազմների արդյունքում Խեթական պետության դրությունը զգալիորեն բարելավվեց: Խաթթի բնօրրանը՝ Հալիսով պարփակված շրջանը ամբողջությամբ ներառվեց պետության կազմում: Բացի այդ, որոշ նվաճումներ իրականացվեցին հարավ-արևմուտքում (Ստորին երկիր = ներկայիս Կոնյայի հարթավայր) և արևելքում (ընդհուպ մինչև Եփրատի հոսանքի շրջանը):

Տելեպինուսի կառավարումը հանգեցրեց խեթական Հին թագավորության ներքաղաքական կյանքի որոշակի կայունացման: Խաթթիի արքաները աստիճանաբար սկսեցին զբաղվել նաև պետության արտաքին դրության բարելավման հարցերով: Փորձեր էին կատարվում, սկսած Տելեպինուսից, ընդարձակելու ազդեցության գոտիները, որոնք կորսվել էին երկրում տիրող տևական ներքաղաքական ճգնաժամի հետևանքով: Դա տվեց իր արդյունքները, սակայն այնուամենայնիվ չդադարող գահակալական կռիվները զգալիորեն խոչընդոտում էին այդ գործընթացին:

Միայն մ.թ.ա. XV դարի երկրորդ կեսին – XIV դարի սկզբներին Խեթական պետությունը մուտք գործեց մի նոր որակական փուլ, որի բնորոշ առանձնահատկությունը արքայական իշխանության հիմքերի ամրապնդումն էր, վերջինիս ժառանգաբար փոխանցման պրակտիկայի հետագա խորացումը: Դրա հետ մեկտեղ Խաթթին կրկին սկսեց վերականգնել Հին թագավորության առաջին արքաների սկտիվ արտաքին քաղաքականության ավանդույթները, անցնելով ուղ-

---

<sup>232</sup> Gurney 1973b: 661; Beal 1986: 426.

<sup>233</sup> Wilhelm 1989: 23.

ղակի տարածքային նվաճումների, մի միտում, որը անվերապահորեն գերիշխում էր հետագա բոլոր ժամանակներում, ընդհուպ մինչև անկումը: Այս փուլում հստակ գծագրվեցին Խաթթիի արտաքին քաղաքականության բոլոր նախապատվությունները՝ ա) կայուն ներկայություն Հյուսիսային Միրիայում՝ Տավրոսի լեռնաշղթայի բոլոր անցումների նկատմամբ ուղղակի վերահսկողության պայմաններում, որը թույլ կտար ակտիվորեն միջամտելու սիրիա-միջագետքյան տարածաշրջանի քաղաքական կյանքին, բ) շարունակական ջանքեր՝ ուղղված Արևմտյան Փոքր Ասիայի մանր քաղաքական կազմավորումների ավանդաբար վառ ընդգծված անջատողական միտումների կանխարգելմանը կամ վերացմանը, գ) Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանների նկատմամբ ուղղակի գերիշխանության ապահովում: Վերոհիշյալ գերակայությունների ուղղությամբ Նոր թագավորության առաջին արքաներ Թուղխալիյաս II-ի և նրա հաջորդ Առնուվանդաս I-ի ջանքերը, իհարկե, չէին կարող լիարժեք հաջողություն ապահովել, սակայն լավ հիմքեր ստեղծեցին նրանց հաջորդների համար:

### **Խաթթիի Տելեպինուսի հաջորդների օրոք**

Տելեպինուսի “Հռչակագիրը”, որը նպատակ ուներ ամրապնդել արքայական իշխանությունը, դրան հաղորդելով հստակ կանոնակարգված ժառանգական բնույթ, առանձնապես շատ բան չփոխեց նրա մահին հաջորդող տասնամյակների ընթացքում: Նախկինի պես շարունակվում էին պալատական դավերը գահաժառանգման համար, որոնք մի շարք դեպքերում ավարտվում էին գահի բռնագավթմամբ: Այդպես եղավ հենց Տելեպինուսի մահից հետո, երբ գահն անցավ ոմն Տախուրվախիին, ում պատկանելությունը արքայատոհմին խիստ կասկածելի է:<sup>234</sup> Ամենայն հավանականությամբ, Տախուրվախին նույնն է ինչ “Հռչակագրում” բազմիցս հիշատակվող նույնանուն անձը՝ “Ոսկե նիզակակիր” (LÚ <sup>CS</sup>ŠUKUR.GUŠKIN) Տախուրվախիին՝ արքայական թիկնագործի հրամանատար Յուրուի որդին, ով նախկինում արդեն մեղադրվել էր սպանության համար պանկուսի կողմից,

---

<sup>234</sup> Klengel 1999: 88.

սակայն Տելեպինուսը ներել էր նրան: Վերջինս շրջանցեց գահի օրինական հավակնորդ Ալլուվամնային՝ Տելեպինուսի դուստր Խարապսեկիի (տեքստերում նաև՝ Խարապսիլի) ամուսնուն: Տելեպինուսի որդի Ամմունասը մահացել էր դեռևս նրա կենդանության օրոք և, ըստ գահաժառանգման կարգի, Ալլուվամնան գահի օրինական հավակնորդն էր:

Շատ քիչ բան է հայտնի Տախուրվաիլիի կառավարման շրջանի մասին: Միակ տեղեկությունը այն է, որ նա շարունակում էր Տելեպինուսի քաղաքականությունը Կիցցուվատնայի նկատմամբ: Պահպանվել է նրա և Կիցցուվատնայի արքա Էխեյայի միջև կնքված պայմանագիրը, թեև դրա վնասված տեքստը թույլ չի տալիս ասելու ավելին, քան այն, որ պայմանագիրը կնքված է եղել հավասարազորության սկզբունքով:

Տախուրվաիլին հաջորդած մի քանի արքաների կառավարման վերաբերյալ տեղեկությունները խիստ սահմանափակ են: Տեքստերը հիմնականում արքաների կողմից այս կամ այն անձին տրված հողի նվիրատվական ակտեր են՝ կնքված արքայական կնիքներով: Բնչ վերաբերում է ներքաղաքական հարցերին և հարաբերություններին հարևան պետությունների հետ, ապա պահպանված պայմանագրերը Կիցցուվատնայի երկու արքաների հետ, տեքստերի վնասված վիճակով պայմանավորված, թույլ չեն տալիս հիմնավոր եզրակացությունների հանգելու:

Ալլուվամնան, ում գահն անցավ Տախուրվաիլիի մահից հետո, հնարավոր է, երկար չէր կառավարել, քանի որ արդեն բավական առաջացած տարիքում էր: Հայտնի է, որ դեռևս Տելեպինուսի օրոք նա արդեն ամուսնացած էր և որդի ուներ, ով հետագայում փոխարինեց նրան՝ Խանտիլիս II-ը: Միակ տեղեկությունը պահպանվել է Մուրսիլիս II-ի «Տարեգրություններում», որտեղ հպանցիկ հիշատակվում է նրա և կասկերի միջև ինչ-որ թշնամական հարաբերությունների մասին:<sup>235</sup> Վերջիններս հենց այս փուլում են հիմնավորապես մուտք գործում իեթական սեպագրական ավանդույթ որպես Խաթթիի մշտական և անհանգիստ հարևաններ, որոնց նկատմամբ կիրառվող

---

<sup>235</sup> Այդ մասին տես Schuler von 1965: 28-29:

միջոցառումները, ինչպես ցույց տվեցին հետագա ավելի քան երկու հարյուր տարվա իրադարձությունները, գերազանցապես ժամանակավոր հաջողություն կարող էին ապահովել:

Արդեն Ալլուվամնայի որդի Խանտիլիս II-ի օրոք իրավիճակը հյուսիսում սկսում է կտրուկ բարդանալ: Կասկերի շարունակական հարձակումների հետևանքով խեթերը կորցրեցին իրենց կարևորագույն պաշտամունքային կենտրոն Ներիկը՝ Հալիսի գետաբերանի շրջանում, ինչպես նաև Տիլիուրա քաղաքը: Կասկական սպառնալիքի լրջության մասին է վկայում այն, որ Խանտիլիսը ստիպված էր ամրացնել մայրաքաղաք Խաթթուսասը և հարակից քաղաքները: Հարավային ուղղությամբ Խաթթին առայժմ խնդիրներ չունեի, քանի որ շարունակվեցին բարիդրացիական հարաբերությունները Կիցցուվատնայի հետ, որի արքա Պադդատիշուի հետ կնքվեց պայմանագիր: Դրանով կարգավորվում էին երկու պետությունների միջև սահմանային խնդիրները, այդ թվում՝ բնակչության տեղաշարժերի և դրանց հետևանքով սահմանների խախտման դեպքում կիրառվելիք փոխադարձ միջոցառումները: Կողմերը պարտավորվում էին ետ վերադարձնել սահմանախախտ բնակչությանը: Արդյոք վերոհիշյալ բնակչությունը երկու պետությունների սահմանների մոտակայքում ապրող շարժունակ ցեղեր էին թե խոսքը այլ բանի մասին է, պարզ չէ: Կիցցուվատնայի հետ փոխհարաբերությունները շարունակվեցին նաև Խանտիլիսի հաջորդ Ցիդանտաս II-ի օրոք: Նրա և Կիցցուվատնայի արքա Պիլլիայի միջև կնքվեց պայմանագիր, որտեղ պետք է արտացոլված լինեին միևնույն սահմանային խնդիրները: Դժբախտաբար, պայմանագրի տեքստը չափազանց վնասված է, որպեսզի հնարավոր լինի հստակ պատկերացում կազմել այնտեղ արտացոլված հարցերի մասին:

Ցիդանտասի հաջորդ Խուցցիյաս II-ի կառավարման վերաբերյալ աղբյուրները գրեթե ոչինչ չեն հաղորդում, բացառությամբ նրա օրոք կազմված հողի նվիրատվության մասին մի քանի ակտերից:

Ամփոփելով Տելեպինուսի մի շարք հաջորդների կառավարման օրոք Խեթական պետության վիճակը, մասնավորապես արտաքին քաղաքականության ասպարեզում, անհրաժեշտ է նշել, որ այս փու-

լում Խաթթիի ակտիվությունը հասել էր նվազագույնի: Որքանով որ թույլ են տալիս առկա աղբյուրները, խեթական արքաների գործունեությունը սահմանափակվում էր միայն փոքրասիական տարածաշրջանի երկու ուղղություններով: Նրանց ակտիվությունը մեծ էր հարավում, որտեղ պարբերաբար Կիցցուվատնայի հետ փոխհարաբերությունները կարգավորվում էին հավասարագոր պայմանագրերով, որոնց կնքման հարցում հիմնական դրոպապատճառը սահմանային խնդիրներն էին: Սակայն հյուսիսում վիճակը շատ ավելի լուրջ էր, ինչը պայմանավորված էր կասկական ցեղերի վտանգավոր ասպատակություններով: Կասկերի կողմից հյուսիսային շրջանների նվաճումը անմիջական սպառնալիք ստեղծեց նույնիսկ խեթերի մայրաքաղաքի համար:

Ամփոփելով խեթական Հին թագավորության դարաշրջանը, կարելի է հանգել մի շարք եզրակացությունների:

Հին թագավորությունը խեթական հասարակության պատմության այն փուլն էր, երբ նրա տարածքում նախկինում գոյություն ունեցող քաղաք-պետությունները միավորվեցին Կուսսարից ծագող և Խաթթուսասում կառավարող արքայատոհմի շուրջը: Դա մի տևական և բարդ գործընթաց էր, որն ուղեկցվում էր տոհմային ազնվականության անջատողականությամբ, պարբերաբար կրկնվող ապստամբություններով և խոշոր ազնվականության կողմից իրականացվող դավադրություններով, ինչը լավագույնս վկայված է Խաթթուսիլիս I-ի “Քաղաքական կտակում”: Ի վերջո այդ գործը մեծ դժվարությամբ հաջողվեց իրականացնել Խաթթուսիլիս I-ին: Սակայն Խաթթուսիլիսից հետո սկիզբ առավ շուրջ մեկ դար տևած քաղաքական անկայունության, դավադրությունների շարունակական շարք, որի առաջին գոհը Մուրսիլիս I-ն էր: Այդ իրավիճակի հիմնական պատճառը արքայական իշխանության, միապետության ինստիտուտի սաղմնային վիճակն էր: Արքայի իշխանությունը հենվում էր նրա անձնական հատկությունների և ռազմական ուժի վրա: Պետության կազմում ներառված նախկին քաղաք-պետությունների ժառանգաբար իշխող կառավարիչները և նույնիսկ արքայատոհմի անդամները հաճախ անհնազանդություն էին դրսևորում գործող արքայի հան-

դեպ: Ըստ էության Հին թագավորությունը անցումային շրջան էր ցեղապետությունից դեպի կենտրոնացված ամուր պետականություն:

Բանավոր օրենքների գրառման միջոցով Տելեպինուսի կողմից իրականացված բարեփոխումների արդյունքը միապետության և խոշոր հաշվով արքայական իշխանության ամրապնդումն էր, սակայն ոչ հաղթանակը, քանի որ Նոր թագավորության շրջանում էլ արքայատոհմի ներսում պայքարը հանուն իշխանության ժամանակ առ ժամանակ շարունակվում էր:

Հին թագավորության շրջանում արքայական իշխանության թուլության վկայություն կարելի է համարել ավելի ուշ, արդեն Նոր թագավորության հիմնադիր Թուդիսալիյաս II-ի հրահանգները, որոնք ուղղված էին արքայատոհմի անդամներին և ազնվականությանը,<sup>236</sup> և պարտավորեցնում էին վերջիններիս խստորեն հետևել արքայի կողմից սահմանված վարվելակերպին ռազմական գործողությունների ընթացքում: Ըստ հրահանգների, բոլոր վերոնշյալ անձինք պարտավոր էին անվերապահորեն հետևել իրենց պարտականությունների կատարմանը, նույնիսկ խոսքով չանվանարկել արքային, չսեփակացնել զինվորներին հասանելիք հացը և այլ մթերքները: Իսկ մարզերի կառավարիչներն իրավունք չունեին դատավարության ընթացքում առաջնորդվելու անձնական շահերից ելնելով (տեքստը նկատի ունի կաշառք վերցնելը):

Թուդիսալիյասի հրահանգներից կարելի է եզրակացնել, որ նախկինում՝ Հին թագավորության շրջանում թվարկված երևույթները կարող էին բավական տարածված լինել, և այդ հանգամանքը ստիպում էր Նոր թագավորության հիմնադրին լուրջ գործունեություն ծավալելու արքայական իշխանությունն ամրապնդելու ուղղությամբ:

---

<sup>236</sup> Stü Miller 2013: 144-181:

## **ԳԼՈՒԽ 4**

### **ՆՈՐ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

Ինչպես և Հին թագավորության արքաների մեծ մասի պարագայում, անցումը Նոր թագավորության նույնպես ընթացավ դավադրության և զինված պայքարի միջոցով: Նոր թագավորությունը Խեթական պետության պատմության որակական նոր փուլ էր: Դրա առաջին իսկ արքայից սկսած էական քայլեր ձեռնարկվեցին ներսից պետության քաղաքական կառույցի և արքայական իշխանության ամրապնդման ուղղությամբ: Հատկապես Թուդիսալիյաս II-ի և նրա հաջորդ Առնուվանդաս I-ի օրոք արքայական հրահանգների տեսքով ստեղծվեցին պետական ապարատի, ազնվականության, բանակի, արքունիքը սպասարկող անձնակազմի և այլ անձանց գործունեությունը կարգավորող հանձնարարական-օրենքներ: Այդպիսի տեքստերը թույլ են տալիս ենթադրելու պետության ներքին կյանքում գոյություն ունեցող հրատապ խնդիրների առկայություն մասին:

Պակաս կարևոր չէր նաև Խեթական պետության կողմից նախկինում կորսված տարածքների վերականգնման և միջազգային ասպարեզում սասանված հեղինակության վերականգնման խնդիրը:

Խեթական պետության հետագա պատմության վերջին երկու դարերը նշանավորեցին դրա աստիճանական վերելքը և վերածումը ժամանակի հզորագույն տերության:

## **ԹՈՒՂԻՍԱԼԻՅԱՍ II**

### **Թուդիսալիյաս II-ի գահակալումը**

Հին թագավորության վերջին արքա Խուցցիյաս II-ի կառավարումն ընդհատվեց նրա սպանությամբ, որի կազմակերպիչը արքայի թիկնազորի հրամանատար Մուվատալլիսն էր, ով գահ բարձրացավ որպես Մուվատալլիս I: Սակայն որոշ ժամանակ անց գահը բռնազավթողը սպանվեց դավադրության հետևանքով, որը գլխավորում էին երկու բարձրաստիճան անձինք՝ Կանտուցիլիսը և Խիմուլիին:<sup>237</sup>

---

<sup>237</sup> Bryce 2005: 121.

Հնարավոր է, որ սրանք Մուվատալլիսի կողմից սպանված նախկին արքա Խուցցիյաս II-ի որդիներն էին: Մուվատալլիսի սպանությանը հաջորդեց պատերազմը դավադիրների և Մուվատալլիսի կողմնակիցների միջև, որոնց առաջնորդում էր *GAL.MEŠEDI*-ի (“Գլխավոր թիկնապահ”) պաշտոնը զբաղեցնող Մուվասը, ով, հնարավոր է, Մուվատալլիսի որդին էր: Պայքարն ավարտվեց Մուվասի և նրա դաշնակիցների պարտությամբ: Վերջիններիս շարքում տեքստը հիշատակում է խուրրիներին: Արքա հռչակվեց օրինական արքայատոհմի ներկայացուցիչ Թուդիսալիյաս II-ը,<sup>238</sup> ով ապստամբության ղեկավարներից մեկի՝ Կանտուցիլիսի որդին էր:<sup>239</sup> Նրա գահակալման հետ է կապված Խեթական պետության և մշակույթի պատմության մի կարևոր իրադարձություն:

Դեռևս Հին թագավորության վերջին շրջանում Տավրոսի գոտուց դեպի Կենտրոնական Փոքր Ասիա սկսվել էր խուրրիների աստիճանական ներթափանցումը (գլխավորապես խաղաղ ճանապարհով), որի արդյունքում այստեղ ձևավորվել էին խուրրիական անկլավներ:<sup>240</sup> Ենթադրվում է, որ Խաթթուսասի խուրրիական արքայատոհմը պետք է ծագեր Տապիզգա քաղաքից շուրջ 80 կմ արևելք ընկած Սապինուվա քաղաքից:

Խեթական ծառայության մեջ գտնվող խուրրիական ազնվականությունը շուտով հասավ զգալի դիրքի և ազդեցության: Ինչ-որ մի պահ, խեթական արքայատոհմի հետ ինտեգրման շնորհիվ, ի դեմս Թուդիսալիյասի, խուրրիական արքայատոհմը վերցրեց իշխանությունը Խաթթուսում և պահեց այն ընդհուպ մինչև Խեթական պետության տրոհումը: Այս առումով հատկանշական է, որ այսուհետև խեթական արքաները, նախապես կրելով խուրրիական անուններ, գահ բարձրանալիս ստանում էին խեթական դինաստիական անուններ: Այս կարծիքը, որը ձևակերպել էին դեռևս Ի.Գելբը և Հ.Գ.Գյուտերբոկը,<sup>241</sup> առ այսօր ընդունվում է մասնագետների կողմից: Այսպես,

---

<sup>238</sup> Ապստամբության նկարագրությունը պահպանվել է KUB XXII 16 տեքստում (հրատ. Carruba 1977: 162-163):

<sup>239</sup> Otten 2000: 375-376.

<sup>240</sup> Haas 1985: 276-277; Wilhelm 1989: 17.

<sup>241</sup> Gelb 1951-1952; Güterbock 1954; Beal 2001.



Թուղխալիյաս III-ի իսկական անունն էր Տաշմի-շարրի, Մուրսիլիս III-ինը՝ Ուրխի-Թեշուր, Թուղխալիյաս IV-ինը՝ Խիշմի-Շարրումա և այլն: Խուրրիական էին նաև թագուհիների անունները, որոնց անունները իրենց ամուսինների գահակալումից հետո չէին փոփոխվում (Նիկկավամտի, Ասմունիկկալ, Տադուխեպա, Պուդուխեպա և այլն):

Խուրրիների ներթափանցումը շարունակվեց նաև հետագայում, ինչի վկայությունը իսթական պաշտոնական դիցարանում մեծաքանակ խուրրիական աստվածների առկայությունն է:

Թուղխալիյաս II-ի կառավարման շրջանում նկատվում է խուրրիական անունների մեծ տոկոս արքայատոհմում, իսկ բնակչության շրջանում՝ լուվիական անունների քանակական աճ: Սա վկայում է մշակութային, նաև քաղաքական ծանրության կենտրոնի տեղաշարժ դեպի Փոքր Ասիայի խուրրի-լուվիական հարավ և հարավ-արևելք: Այս շրջանի տեքստերում զգացվում է խուրրիական միջավայրի ազդեցությունը, որն արտահայտվում էր խուրրիերեն տերմինների կիրառմամբ, կրոնա-պաշտամունքային կյանքում ավելի մեծ դեր էր հատկացվում խուրրիական դիցանուններին: Թուղխալիյաս II-ով սկիզբ դրվեց իսթական քաղաքակրթության վրա խուրրիների նշանակալից ազդեցության:<sup>242</sup>

### **Իսթական պետությունը Թուղխալիյաս II-ի գահակալման նախօրեին**

Թուղխալիյասի իշխանության գալու պահին Իսթական պետության ներքին և արտաքին քաղաքական վիճակը բավական բարդ էր: Ինդիքներ կային նույնիսկ պետության բնօրրանում ի դեմս նրանց անմիջական հյուսիսային հարևան կասկական ցեղերի կողմից եկող մշտական սպառնալիքի:

Կասկական բազմաթիվ ցեղերը, որոնց բնակության արեալը սկսվում էր մայրաքաղաք Խաթթուսասից մի քանի տասնյակ կիլոմետր դեպի հյուսիս և ընդգրկում էր Սև ծովի հարավային մերձափնյա գոտին՝ անտիկ շրջանի Պափլագոնիայից տարածվելով դեպի հյուսիս-արևելյան Փոքր Ասիա: Իսթական պետության պատմու-

---

<sup>242</sup> Houwink ten Cate 1970: 73-75.

թյան գրեթե ողջ ընթացքում կասկերը հիշատակվում են որպես իրական կամ պոտենցիալ հակառակորդներ: Կասկական վտանգը, որի առաջին իրական դրսևորումը արտացոլված է Թուրքիայի իսլամ II-ի և Առնուվանդաս I-ի տեքստերում, ուղեկցեց Խաթթիի պատմությանը բոլոր հետագա արքաների կառավարման շրջանում:<sup>243</sup>

Կասկերն ապրում էին տոհմացեղային փուլում: Կասկական առաջին ցեղը, որտեղ անցում կատարվեց դեպի արքայական կառավարման համակարգը մ.թ.ա. XIV դարի վերջերին՝ Մուրսիլիս II-ի օրոք, Տիրիան էր թերակղզու հյուսիս-արևելքում: Կասկերի պարբերաբար կրկնվող ասպատակությունները նրանց կենսապահովման կարևոր բաղադրիչն էին և մեկ անգամ չէ որ նրանք ավերում և թալանում էին սահմանամերձ երկրագործական շրջանները, իսկ երբեմն էլ նույնիսկ հասնում մինչև մայրաքաղաք: Վկայված են նաև մայրաքաղաքի գրավման դեպքեր: Կասկական ցեղերի նկատմամբ Խաթթիի արքաների արդյունավետ քաղաքականությունը կապված էր մեծ բարդությունների հետ թեկուզ այն պատճառով, որ միասնական կասկական պետականության բացակայությունը թույլ չէր տալիս հարաբերությունները կարգավորել դիվանագիտական ճանապարհով (նվաճում՝ դրան հետևող պայմանագրային փոխհարաբերություններ): Յուրաքանչյուր ցեղ գործում էր ինքնուրույն, երբեմն էլ մի քանիսը միավորվում էին միացյալ արշավանք կազմակերպելու նպատակով: Իհարկե, խեթական արքաներն օգտագործում էին կասկական ցեղերից հավաքագրված վարձկան ջոկատներ, ինչպես, օրինակ, Քադեշի ճակատամարտում, սակայն դա չէր խանգարում մյուս ցեղերին իրականացնել իրենց համար սովորական դարձած ավարառուական արշավանքներ, հատկապես դաշտերում բերքի հասունացման շրջանում:

Այդ իրավիճակը ավելի քան հետաքրքիր է այն առումով, որ խեթերը, նվաճելով Փոքր Ասիայի մեծ մասը, այնուհետև ծավալվելով մինչև Կենտրոնական Սիրիա և այլ շրջաններ, այդպես էլ չկարողա-

---

<sup>243</sup> Խեթական տեքստերում կասկական ցեղերի և Խաթթիի հետ նրանց փոխհարաբերությունների մասին տես Von Schuler 1965; Glatz and Matthews 2005:

ցան լուծել իրենց անմիջական հարևանների սպառնալիքի խնդիրը: Կասկական ցեղերի զբաղեցրած տարածքը գերազանցապես դժվարամատչ լեռնային գոտի էր, երկրագործության համար պիտանի սահմանափակ հողային ռեսուրսներով, որը մի կողմից դրդում էր նրանց կենսապահովման միջոցներ փնտրել հարավում, մինևույն ժամանակ բարդացնում էր նրանց նկատմամբ մշտական վերահսկողությունը և պատժիչ արշավանքների իրականացումը:

Խեթական տեքստերից պարզ է դառնում, որ միավորված մի քանի կասկական ցեղեր ի վիճակի էին մարտադաշտ դուրս բերել 5-9 հազար զինվոր և մինչև 800 մարտակառք, ինչը լուրջ ներուժ էր:

Ինչ վերաբերում է Փոքր Ասիայի մյուս շրջաններին, ինչպես նաև Սիրիային, ապա այստեղ խեթերն ուղղակի ի վիճակի չէին մուտք գործելու, քանի որ այս ժամանակահատվածում այստեղ իր հզորության գագաթնակետին էր գտնվում Միտտանին, որից կախյալ քաղաքական կազմավորումները եզերում էին Տավրոսի լեռնաշղթայի շրջանով անցնող Խեթական պետության հարավ-արևելյան սահմանները: Միտտանիի արքա Մաուսադատտարը (խեթական տեքստերում՝ Սաուսատտար) իր ազդեցության տակ գտնվող Կիցցուվատնայի և Իսուվայի (հետագայի հայկ. Ծոփք) հետ միասին արգելափակում էր Խաթթիի ելքը դեպի Սիրիա և Հայկական լեռնաշխարհի արևմուտքում գտնվող Վերին Եփրատի ավազան, որոնք խեթերի համար կարևոր էին ոչ միայն իրենց տնտեսական ներուժով, այլև դիրքով ժամանակի առևտրական ուղիների վրա: Հայտնի չէ թե ինչպիսին էին Միտտանիի և Կիցցուվատնայի փոխհարաբերությունները Թուդիալիյաս II-ի կառավարման սկզբում, նախքան նրա կողմից Միտտանիին հասցված պարտությունը: Խաթթիի և Կիցցուվատնայի միջև Հին թագավորության արքաների օրոք կնքված պայմանագրերը թույլ չեն տալիս որոշելու արդյոք դրանց կնքման շրջանում Կիցցուվատնան որոշակի կախվածության մեջ էր գտնվում Միտտանիից թե ոչ:

Իրավիճակը Խեթական պետության համար որոշակիորեն նպաստավոր ընթացք ստացավ փարավոն Թուրամոս III-ի միտտանական արշավանքների շրջանում, երբ եգիպտացիները պարտու-

թյան մատնեցին Միտտանիին և նույնիսկ անցան Եփրատի ձախափնյակը:<sup>244</sup> Իհարկե, եգիպտական բանակի հաջողությունները մեծ չէին, ինչի վկայությունը ձեռքբերված ռազմագերիների չափազանց փոքր քանակությունն է (3 տղամարդ, 30 կին և 600 ստրուկներ) սակայն Միտտանիի ազդեցությունը իր սիրիական կախյալ երկրներին և դաշնակիցների նկատմամբ (Քաղեշ, Կարգամիս և այլք) զգալիորեն նվազեց: Ակնհայտորեն, Թուղխալիյաս II-ը կարող էր օգտվել ստեղծված իրավիճակից, ինչը և նա ձեռնարկեց հետագայում:

Թուղխալիյաս II-ի գահակալման պահին Խեթական պետությունը պարփակված էր Փոքր Ասիայի սահմաններում: Բացի այդ, վերացել էր նաև Արևմտյան Փոքր Ասիայի նկատմամբ ունեցած քաղաքական ազդեցությունը, որը ժամանակին Խաթթին ձեռք էր բերել շնորհիվ Խաթթուսիլիս I-ի նվաճումների: Փաստացի, սկսած Հին թագավորության արքա Խաթթուսիլիս I-ի արշավանքներից, Խաթթին գրեթե ոչ մի ազդեցություն չունեի Փոքր Ասիայի արևմտյան, հյուսիսային և արևելյան շրջանների նկատմամբ: Շուրջ երկու դար տևած խոշոր ժամանակահատվածի ընթացքում այս երեք տարածաշրջաններում ձևավորվել էին մեծաքանակ փոքր քաղաքական միավորներ, որոնք, բնականաբար, իրավական առումով Խաթթիի նկատմամբ չէին կարող որևէ պարտավորություն ունենալ: Թուղխալիյաս II-ը ուղղակի ստիպված էր սկսել գրոյից:

### **Թուղխալիյասը արևմուտքում և հյուսիսում**

Արևմուտքի նկատմամբ խեթերի հետաքրքրությունը պայմանավորված էր այստեղի քաղաքական միավորների նկատմամբ կանխարգելիչ միջոցառումների անհրաժեշտությամբ: Այստեղ գոյություն ունեին երկու խոշոր միություններ՝ Արցավան թերակղզու արևմտակենտրոնական և հարավ-արևմտյան շրջաններում և դրանից հյուսիս՝ Ասսուվան: Արցավան ներառում էր մի քանի պետություններ, որոնք հետագա դարերում կանոնավոր կերպով հանդես են գալիս սկզբում որպես Խաթթիին ընդդիմադիր ուժեր, այնուհետև՝ կախյալ

---

<sup>244</sup> Drower 2008: 455-458 (Թութոս III-ի ութերորդ արշավանքի մանրամասների համար):

երկրներ (բուն Արցալա, Խապալա, Մեխա գետի երկիր): Իսկ Ասսուվան ընդգրկում էր 22 “երկրներ”, որոնք տեղադրվում են անտիկ դարաշրջանի Լիկիայից մինչև պատմական Տրոադա ընկած ընդարձակ շրջանում՝ հիմնականում Էգեյան ծովեզերքին և դրանից որոշ հեռավորության վրա: Ասսուվայի երկրների շարքում էին Լուկկան (հետագայի Լիկիա), Կիսպուվան, Ունալիյան, Դուրան, Խալլուվան, Խուվալլուսիյան, Կարակիսան, Կուրուպպիյան, Վիլուսիյան, Տարուսիսան և այլք: Ըստ գիտության մեջ գերիշխող կարծիքի,<sup>245</sup> Ասսուվան հետագայում շրջանառության մեջ մտած “Ասիա” աշխարհագրական տերմինի նախատիպն է:

Վերոհիշյալ երկու միությունները ոչ միայն խոչընդոտում էին դեպի Էգեյան ծովի ավազան ընթացող հաղորդակցությունը, այլև իրենք էլ երբեմն դիմում էին ագրեսիվ գործողությունների դեպի Խաթթիի արևմտյան շրջաններ: Ենթադրվում է, որ խեթերի արևմտյան արշավանքի նպատակը այստեղի պետությունների միավորման վտանգի կանխումն էր, ինչը լրջագույն սպառնալիք կարող էր դառնալ Խաթթիի համար,<sup>246</sup> ինչպես, օրինակ, տեղի ունեցավ Թուդխալիյասի հաջորդ Առնուվանդաս I-ից հետո՝ Թուդխալիյաս III-ի օրք (տես ստորև):

Թուդխալիյաս II-ի “Տարեգրություններում” ներկայացված են նրա մի շարք արշավանքները դեպի Արցալա և Ասսուվա: Իր կառավարման առաջին վեց տարիների ընթացքում նա նվաճեց գրեթե ողջ Փոքր Ասիա թերակղզին: Ընդ որում արքան ստիպված էր միայն Արցալայի դեմ կազմակերպել չորս արշավանքներ: Հավանաբար, զգալով վերահաս վտանգը, 22 երկրներից բաղկացած Ասսուվայի միությունը միասնաբար նախահարձակ եղավ խեթերի դեմ, չնայած այդ տեղեկությունը կարող է նաև քարոզչական նպատակներ հետապնդել, հիմնավորելու համար արշավանքի անհրաժեշտությունը:

Ըստ “Տարեգրությունների”, Թուդխալիյասը գիշերով իրականացված երթով շրջապատեց հակառակորդի գորքը և պարտության

---

<sup>245</sup> Gurney 1966: 38.

<sup>246</sup> Bryce 2005: 123-124.

մատնեց նրանց: Արշավանքի վերջնակետը Տարուխայի և Վիլուսի-  
յայի նվաճումն էր<sup>247</sup>: Գիտության մեջ գրեթե կասկած չի հարուցում  
այն հավանականությունը, որ Տարուխասն և Վիլուսիյան հումերո-  
սյան պոեմների “Տրոյա-Իլիոնի” խեթական անվանումներն են: Մի-  
մյանց մոտ գտնվող այս երկու քաղաք-պետությունները հետագա-  
յում ավանդության մեջ կարող էին միավորվել և հանդես գալ որպես  
մեկ պետություն:

Թուղիսալիյասի հետագա գործողությունները ստիպում են են-  
թադրել, որ հաղթանակից հետո նրա հաջորդ քայլը ապագայում Աս-  
սուվայի միության հնարավոր ապստամբության կանխումն էր: Ար-  
քան այստեղից որպես ռազմավար Խաթթի բերեց 10,000 հետևա-  
կային զինվորների և 600 ձիերի լծվածքներ մարտակառքերի համար՝  
իրենց կառավարներով հանդերձ: Գերեվարվածների թվում էին նաև  
տեղական ազնվականության ներկայացուցիչներ, որոնց կարգավի-  
ճակը տեքստը չի բացահայտում: Դրանցից մեկը՝ ուն Կուկկուլլիս,  
որոշ ժամանակ անց ապստամբություն բարձրացրեց, սակայն  
պարտվեց և մահապատժի ենթարկվեց: Ենթադրվում է, որ Կուկկուլ-  
լիսը Թուղիսալիյասի կողմից վերականգնվել էր իր գահին Ասսուվա-  
յում և հետո միայն ապստամբել և պատժվել:<sup>248</sup> Իսկ գերեվարվածնե-  
րը բնակեցվեցին Խաթթիի բնօրրանում և ներառվեցին զինծառայու-  
թյան մեջ:

Այն ժամանակ, երբ Թուղիսալիյասը զբաղված էր Ասսուվայի դեմ  
արշավանքով, հյուսիսից սկսվեց կասկական ցեղերի հարձակումը  
Խաթթիի կենտրոնական շրջանների վրա: Այդ է պատճառը, որ վե-  
րադարձից անմիջապես հետո արքան կասկերի դեմ ձեռնարկեց:  
Առաջին արշավանքի ընթացքում նա մտավ կասկերի երկիր և պար-  
տության մատնեց նրանց միացյալ ուժերին, գրավեց հակառակորդի  
ամրացված բնակավայրերը, իսկ հաջորդ տարում կրկնեց արշա-  
վանքը, նվաճելով նոր տարածքներ:

---

<sup>247</sup> Kretschmer 1924; Huxley 1960: 34; Singer 1983: 215; Houwink ten Cate 1983/84: 48 n.38  
և այլն:

<sup>248</sup> Cline 1996: 141.

## **Թուղխալիյասը արևելքում**

Ոչ պակաս բարդ իրավիճակ էր ստեղծվել արևելքում՝ Վերին Եփրատի ավազանում, որտեղ գտնվում էր Միտտանիի դաշնակից Իսուվան: Չնայած տեքստը որևէ տեղեկություն չի հաղորդում Իսուվայի կարգավիճակի և այնտեղ տիրող իրավիճակի մասին նախքան խեթերի արշավանքը, այնուամենայնիվ հնարավոր է, որ այստեղ իսուվացիները, օգտվելով Թուղխալիյասի բացակայությունից, կարող էին իրենք նախահարձակ լինել, այնպես ինչպես հյուսիսի կասկերը: Ամեն դեպքում, Թուղխալիյասը իր կառավարման հինգերորդ տարում, անցնելով Եփրատը, գրավեց Իսուվան: Թուղխալիյասի արշավանքից հետո, սակայն, միտտանական զորքը հարձակվել և մեծ ավերածություններ էր գործել այստեղ: Խեթերը ստիպված էին մեկ անգամ ևս գրավել Իսուվան: Այդ մասին վկայում է Թուղխալիյասի և Կիցցուվատնայի արքա Սունասսուրայի միջև կնքված պայմանագրի ("Սունասսուրա") "պատմական ներածականը": Առաջին արշավանքից հետո Միտտանիի արքա Մաուստատարը մտել էր Իսուվա և ավերել դրա քաղաքները: Թուղխալիյասը այդ պահին գտնվում էր այլ վայրում: Ավարտելով գործերը, նա երկրորդ անգամ էր նվաճել այս երկիրը: Հավանաբար, առաջին նվաճումը այն է, որը հիշատակվում է Թուղխալիյասի տարեգրությունների հինգերորդ տարում:

Այս շրջանում Իսուվան, թերևս, միտաննամետ դիրքորոշում ուներ:<sup>249</sup> Նման ենթադրության օգտին հիմքեր կան: Առաջինը «Սունասսուրայի պայմանագրի» այն վկայությունն է, ըստ որի, Թուղխալիյասի արշավանքի ժամանակ իսուվացիների մի մասը հեռացել էր Խուրրի (Միտտանի) և վերջինիս արքան հրաժարվել էր նրանց ետ վերադարձնել: Այդ մասին է վկայում նաև ավելի ուշ շրջանի տեքստերից մեկը ("Սուպպիլուլիումաս - Շատտիվագա" պայմանագիրը): Ավելին, Միտտանիի զորքը հարձակվել էր Իսուվայի ուղղությամբ և ռազմավար ձեռք բերել, թերևս նպատակ ունենալով առաջնահերթ թիրախ դարձնել խեթամետ իսուվական բնակավայրերը: Միտտանական զորքի հարձակման ժամանակ Թուղխալիյասը, հավանա-

---

<sup>249</sup> Klengel 1968: 65-66.

բար, զբաղված լինելով Արևմտյան Փոքր Ասիայում կամ հյուսիսում և ի վիճակի չէր եղել զորք ուղարկել արևելք:

Վերոհիշյալ աղբյուրները որևէ տեղեկություն չեն պահպանել արևելքում խեթերի նվաճումների աշխարհագրական շրջանակների մասին: Այնուամենայնիվ, կարելի է ենթադրել, որ Իսուվայի հարևանները նույնպես պիտի նվաճված լինեին:<sup>250</sup>

Չնայած դրան, Իսուվան և Վերին Եփրատի ավազանի մյուս երկրներում շարունակվում էին հակախեթական տրամադրությունները, ինչը հատկապես դրսևորվեց Թուդխալիյասի հաջորդ Առնուվանդաս I-ի օրոք ի դեմս Պախխուվայի և նրա դաշնակիցների ապստամբության (տես ստորև):

Այսպիսով, Թուդխալիյասը իր կառավարման առաջին տարիներին նշանակալից հաջողությունների հասավ արևմուտքում, հյուսիսում և արևելքում: Նվաճված երկրների նկատմամբ նա տարբերակված քաղաքականություն էր վարում: Դեռևս պետականություն չունեցող կասկական շրջանների պարագայում տարեգրությունները տեղեկություն չեն հաղորդում, սակայն այս տարածաշրջանում հետագա խեթական արքաների գործունեության հիման վրա կարելի է ենթադրել, որ Թուդխալիյասը չփորձեց այստեղ կազմակերպել կառավարման միասնական համակարգ, ինչը թույլ կտար ավանդաբար անհանգիստ հյուսիսում ապահովելու թեկուզև որոշ կայուն իրավիճակ: Կասկերին հնազանդության մեջ պահելու միակ միջոցը սահմանային ամրությունների կառուցումն էր, ինչպես վարվում էին նաև հետագա արքաները: Արևմուտքում և արևելքում մասամբ պահպանվեց տեղական կառավարիչների իշխանությունը՝ կախյալ կարգավիճակի հաստատագրումով: Իսուվայի և հարակից շրջանների առնչությամբ հայտնի է, որ այստեղ պահպանվեցին ցեղային կառույցները՝ տեղական ցեղապետերի (կոչվում էին <sup>15</sup>ՏՄ.ՂԻ "ծերունի/ավագ") գլխավորությամբ: Նույնպիսի քաղաքականություն էր վարում Թուդխալիյասը նաև արևմուտքում, ինչի մասին կարելի է դատել Ասուվայի կառավարիչ Կուկկուլիսի և Ցիպպասուլայի կառավարիչ Մադդուվատտասի օրինակով (վերջինիս մասին տես ստորև):

---

<sup>250</sup> Houwink ten Cate 1970: 62.



## **Թուղխալիյասը ընդդեմ Միտտանիի**

Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, խեթերի գերիշխանությունը թե արևմուտքում, թե արևելքում կայուն չէր: Արևելքում շուտով սկսվեց խոշոր ապստամբություն, հավանաբար, արդեն Թուղխալիյասի և Առնուվանդասի համատեղ կառավարման ժամանակ: Այնուամենայնիվ, վերոհիշյալ երկրները նվաճված էին և արքան իր ուշադրությունը կենտրոնացրեց հիմնական հակառակորդ Միտտանիի դեմ:

Թուղխալիյասի կառավարման շրջանում Տավրոսից հարավ մեծ ակտիվություն էր ցուցաբերում Միտտանին: Նրա արքա Մաուստատար I-ը նախ գրավեց Աշշուրը և մեծ ռազմավար տարավ իր հետ, ինչի արդյունքում Ասորեստանը դարձավ Միտտանիից կախյալ թագավորություն:<sup>251</sup> Այնուհետև Մաուստատարը սկսեց նվաճել Հյուսիսային Սիրիայի երկրները, հասնելով մինչև Միջերկրական ծով: Դրան հաջորդեց Կենտրոնական Սիրիայի կարևոր երկրներից մեկի՝ Քադեշի հետ կնքած դաշինքը,<sup>252</sup> որով Միտտանին վերածվեց նշանակալից քաղաքական ուժի: Այժմ Միտտանիի տիրույթները ձգվում էին արևելքում Ջագրոսի լեռներից մինչև Միջերկրական ծով: Միտտանիի ընդարձակումը հանդիպեց Եգիպտոսի ծավալմանը դեպի Սիրիա: Փարավոն Թութոս IV-ը արշավանք ձեռնարկեց հյուսիս ընդդեմ Միտտանիի:

Այս շրջանում էր, որ Թուղխալիյաս II-ը ռազմական գործողություններ սկսեց Տավրոսից հարավ ընկած միտտանական տիրույթների դեմ: Եվ նախքան արշավանքը նա պայմանագիր կնքեց Կիցցուվատնայի արքա Մունաստուրայի հետ ("Մունաստուրա"), դրանով իսկ ապահովելով ապագայում Սիրիայում ձեռնարկվելիք ռազմական գործողություններում Կիցցուվատնայի հավատարմությունը: Ինչ վերաբերում է Կիցցուվատնային, ապա որոշ ժամանակ անց այն ուղղակի բռնակցվեց Խաթթիին:

Այսպիսով, Թուղխալիյասն արշավեց Տավրոսից հարավ՝ դեպի Հալեպ և Միտտանի: Այդ մասին հիշատակվում է շատ ավելի ուշ

---

<sup>251</sup> Wilhelm 1989: 27.

<sup>252</sup> Wilhelm 1989: 28.

շրջանում կազմված պայմանագրում, որը կնքվել էր Մուվատալլիս II-ի և Հալեպի արքա Տալմի-Շարրումայի միջև («Տալմի-Շարրումա»): Նրան հաջողվեց գրավել Միտտանիի մայրաքաղաք Վաշշուկաննին: Տեքստում ասվում է, որ Թուղխալիյասը ոչնչացրել էր Միտտանիի (տեքստում՝ Խանիգալբատ) և Հալեպի արքաներին: Թե որքանով է այս տեղեկությունը համապատասխանում իրականությանը, դժվար է ասել, սակայն ակնհայտ է որ իրոք Թուղխալիյասը նշանակալի հաջողությունների էր հասել:

Սակայն Խաթթիի առաջխաղացումը դեպի Միրիա շարունակություն չստացավ: Ամենայն հավանականությամբ, Թուղխալիյասը սահմանափակվել էր միայն ուժի ցուցադրումով, քանի որ Սաուստատարի որդին և հաջորդը՝ Արտադամա I-ը շարունակեց հոր քաղաքականությունը՝ փորձելով վերականգնել հոր օրոք կորցրած տարածքները: Այդ նպատակով Արտադաման փորձեց մերձենալ Եգիպտոսի հետ:

Ենթադրվում է, որ Միտտանիի և Եգիպտոսի միջև դաշինքի կնքմանը նպաստել էր իսթրական սպառնալիքը, քանի որ Թուղխալիյաս II-ն արդեն ցուցադրել էր իր նկրտումները անդրտավրոսյան գոտում:<sup>253</sup>

Դեռևս Առնուվանդասի կառավարման շրջանում նախկին հակառակորդներ Միտտանիի և Եգիպտոսի փոխհարաբերությունները սկսեցին բարելավվել: Միտտանիի արքա Արտադամա I-ի և Թուրոմոս IV-ի միջև հաստատվեցին բարիդրացիական հարաբերություններ, որոնք ամրապնդվեցին դինաստիական ամուսնությամբ:<sup>254</sup> Դրա շնորհիվ երկու պետությունների միջև սկսվեց հարաբերությունների բարելավման փուլ, ինչի արդյունքում նրանք համաձայնության եկան սիրիական տարածաշրջանում իրենց տիրապետության և ազդեցության գոտիների սահմանազատման հարցում: Կնքված պայմանագրով Եգիպտոսը գերիշխանություն ստացավ Քաղեշի, Ամուրրուի (Փյունիկիա) և Ուզարիտի նկատմամբ<sup>255</sup>, իսկ Քաղեշից հյուսիս ընդ-

---

<sup>253</sup> Wilhelm 1989: 29.

<sup>254</sup> Knudzon 1915: N.29; նաև Bryce 2005: 144-145 մեկնաբանությունների համար:

<sup>255</sup> Bryce 2005: 138.

հույ մինչև Տավրոսի լեռնաշղթա ընկած շրջանները մնացին Միտտանիի տիրապետության տակ: Իսկ դա նշանակում էր, որ Սիրիայի հյուսիսում Խաթթին այսուհետև ստիպված էր հաշվի նստել, Միտտանիից բացի, նաև Եգիպտոսի շահերի հետ:

Այսպիսով, Թուղխալիյաս II-ի միտտանական արշավանքը ընդամենը ժամանակավոր հաջողություն էր, առանց հեռանկարի: Խեթական պետությունը դեռևս չունեի համապատասխան ռեսուրսներ հաստատվելու Տավրոսի լեռնաշղթայից հարավ ընկած տարածքներում: Այնուամենայնիվ, Խեթական պետությունն ընդգրկում էր մի վիթխարի տարածք արևմուտքում Էգեյան ծովից մինչև Հայկական լեռնաշխարհի արևմուտք, իսկ հարավում հասնում էր մինչև Միջերկրական ծով: Խեթերի գերիշխանությունը տարածվում էր նույնիսկ Կիպրոս կղզու վրա, ինչի մասին նշվում է “Մադդուվատտասի մեղանչանքներում”:

### **Վերաբնակեցման քաղաքականությունը**

Թուղխալիյաս II-ի կառավարման շրջանում սկսվեց խեթական արքաների կողմից նվաճված կամ Խաթթիի ազդեցության տակ գտնվող երկրների բնակչության պարբերաբար կիրառվող տեղահանության քաղաքականությունը: Եթե Թուղխալիյասը Խաթթիի վերաբնակեցրեց 10.000 զինվորների և մարտակառքերի կառավարների, որոնք պետք է համալրեին խեթական զորքը, ապա հետագայում վերաբնակեցվում էին բնակչության ամենատարբեր խավեր՝ երկրագործներ, արհեստավորներ և նույնիսկ հոգևորականներ: Այդ պրակտիկան հայտնի է Սուպալիլուլիումաս I-ի, Մուրսիլիս II-ի, Խաթթուսիլիս III-ի օրոք կազմված տեքստերից:

Եթե Թուղխալիյաս II-ի կողմից ասսուվացի զինվորների տեղահանությունը, հնարավոր է, պայմանավորված էր ապագայում նորանվաճ Ասսուվային իր ռազմական ներուժից զրկելու մտայնությամբ, ապա արդեն մ.թ.ա. XIII դարում խեթական արքաները դիմում էին այդ քաղաքականությանը տարբեր դրդապատճառներից ելնելով (համաճարակներ, հարևանների հարձակումներ, կլիմայա-

կան տատանումներ, սով, մորեխի հարձակումներ և այլն):<sup>256</sup> Դրան պատասխանաբար Տերությունը սահմանամերձ շրջանների բնակաթափ եղած բնակավայրերը վերաբնակեցնելու ցանկությունն էր: Այդ պատճառների շարքում կարելի է հիշատակել, օրինակ, Թուղխալիյաս III-ի օրոք հյուսիսի՝ կասկական ցեղերի հարևան բնակավայրերում համաճարակի հետևանքով բնակչության նվազումը, ինչը շարունակվեց նաև Մուպպիլուլիումաս I-ի և Մուրսիլիս II-ի օրոք: Մասնավորապես հիշատակելի է Մուպպիլուլիումաս I-ի կառավարման շրջանում Խեթական տերության բազմաթիվ շրջանների բնակչության փախուստը դեպի արևելք՝ Բսուվա և Հայասա:<sup>257</sup> Մուպպիլուլիումաս I-ը ստիպված էր հատուկ արշավանք կազմակերպել և վերադարձնել փախստականներին:<sup>258</sup> Արևելքից և այլ շրջաններից բնակչության մեծ խմբերի տեղահանության և Խաթթիում վերաբնակեցման մասին ուշագրավ տեքստ է պահպանվել Խաթթուսիլիս III-ի ժամանակներից:<sup>259</sup> Այստեղ անվանապես նշվում է վերաբնակեցվողների տեղահանության վայրը, նրանց քանակը և մեկնակետը: Ի դեպ, դրանց շարքում հիշատակվում են նաև Ազգիից տեղահանված 30 վերաբնակիչներ (3 ընտանիք):<sup>260</sup>

Այն մասին, որ արտաքին վտանգի պարագայում բնակավայրերի բնակչությունը կարող էր զգալի կորուստներ ունենալ, գալիս է ապացուցելու Թուղխալիյաս III-ի օրոք արքայի կողմից հյուսիսում գտնվող Տապիզգա քաղաքի կառավարիչ Կասսուին առաքված նամակը:<sup>261</sup> Այստեղ խոսվում է կասկերի հարձակման հետևանքով Տապիզգայից հյուսիս գտնվող Լիսիպրա քաղաքի բնակչության գերեվարման մասին: Արքան հանձնարարում է հասցեատիրոջը այդ կորուստը լրացնել կասկերի դեմ արշավանքի միջոցով և քաղաքում բնակեցնել 300 գերեվարված ընտանիքների: Ենթադրվում է, որ վերաբնակիչների ընտանիքները պետք է մոտավոր հաշվարկներով

<sup>256</sup> Այդ պատճառների մասին տես Hoffner 2009: 65-66:

<sup>257</sup> Տես ստորև նշված արքաների կառավարման շրջանի մասին:

<sup>258</sup> Kosyan 2021.

<sup>259</sup> Archi - Klengel 1980.

<sup>260</sup> Archi - Klengel 1980: 147.

<sup>261</sup> Alp 1991: 33-136 [N.10]; Hoffner 2009: 111-115.

բաղկացած լինեին շուրջ 10 անդամներից, այսինքն խոսքը շուրջ 3000 մարդու մասին է:<sup>262</sup>

Եթե միայն մեկ բնակավայրի բնակչությունը կարող էր կազմել 3000 մարդ կամ նույնիսկ քիչ ավելի պակաս, ապա կարելի է մոտավոր պատկերացում կազմել բնակաթափության մասշտաբների մասին միայն հյուսիսային շրջաններում:

## ԱՌՆՈՒՎԱՆԴԱՍ I

Թուղխալիյասն իր կառավարման մի ինչ-որ պահ գահակից նշանակեց իր փեսա և որդեգիր Առնուվանդասին, որն էլ հետագայում հաջորդեց նրան: Առնուվանդասը Թուղխալիյասի և թագուհի Նիկկալմատիի դուստր Ասմունիկկալի ամուսինն էր, ով որդեգրվել էր Թուղխալիյասի կողմից:<sup>263</sup> Առնուվանդասը արդեն որպես գահակից մասնակցում էր Թուղխալիյասի արևմտյան արշավանքներին, ինչի մասին վկայում է նրա “Տարեգրություններում” հանդես եկող “Մեծ արքա” տիտղոսը: Հենց այս տեքստում է հիշատակվում Արցա-վայի արքա Կուպանտա-Կուրունտայի դեմ մղված պատերազմի, վերջինիս փախուստի և նրա ընտանիքի անդամների գերեվարման մասին:<sup>264</sup> Աղբյուրը թույլ է տալիս ենթադրելու, որ Թուղխալիյասի արևմտյան արշավանքներից առավել բարդը Արցավայի խնդիրն էր, քանի որ Ասսուվայի պարագայում ընդամենը թվարկվում են վերջինիս “երկրները”, այնինչ Առնուվանդասը չի հիշատակում Ասսուվան, այլ հանգամանորեն ներկայացնում է արցավյան արշավանքի մանրամասները՝ հակառակորդից գրավված մեծաքանակ քաղաքների և լեռների թվարկմամբ (Արդուկկա, Խուլլուսիվանդա, Ասսարատտա և այլն):

<sup>262</sup> Hoffner 2009: 112. Մեկ ընտանիքի անդամների այդպիսի թվակազմն արտացոլված է ենթադրաբար Խաթթունսիլիս III-ին վերագրվող մի տեքստում (Archi - Klengel 1980), որտեղ ներկայացված է տարբեր շրջաններից բերված վերաբնակիչների քանակը: Բոլոր դեպքերում այն տատանվում է 10-12 անդամների միջև:

<sup>263</sup> Beal 1983: 116-119. Ջ.Միլլերի կարծիքով (Miller 2004: 356 n.504), Առնուվանդասը կարող էր լինել Թուղխալիյասի որդին՝ ծնված նրա առաջին կնոջից, իսկ Ասմունիկկալը՝ Նիկկալմատիի՝ առաջին ամուսնուց ծնված դուստրը: Ըստ Օ.Գըրնիի (Gurney 1979: 220), Առնուվանդասը նույնպես կրում էր խուրրիական անուն՝ Տուլպի-Թեշուր:

<sup>264</sup> Säu Carruba 1977: 166-171:

Որ արևմուտքում նրա նախորդի օրոք կազմակերպված արշավանքները ի վիճակի չեղան կայուն վերահսկողություն ապահովելու տեղի քաղաքական միավորների նկատմամբ, կասկածից վեր է Առնուվանդասի արդեն միանձնյա կառավարման ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների համատեքստում:

Առնուվանդասի միանձնյա կառավարումն անցավ ոչ պակաս բարդ արտաքին քաղաքական իրավիճակում: Նրա ուշադրությունը հիմնականում բևեռված էր Թուրքիալիյասի նվաճումների պահպանման և տարբեր շրջաններում Խաթթիի դեմ սկսված ապստամբությունների ճնշման խնդիրների վրա: Միաժամանակ նա փորձում էր ամրապնդել դեռևս իր նախորդների կողմից Կիցցուվատսայի նկատմամբ ձեռքբերված ազդեցությունը, հաշվի առնելով Կիլիկիայի տնտեսական մեծ ներուժը և ռազմավարական կարևորագույն դիրքը դեպի սիրիա-միջագետքյան տարածաշրջան տանող ճանապարհի վրա:

### **Արևմտյան Փոքր Ասիան. Մադդուվատտա**

Առնուվանդասը իր ինքնուրույն կառավարման սկզբում բախվեց երկու կարևոր արտաքին քաղաքական խնդիրների հետ: Առաջինը Փոքր Ասիայի արևմուտքում ոմն Մադդուվատտասի գործունեության հետևանքով ստեղծված լարված իրավիճակն էր, երկրորդը վերնեփրատյան գոտում ծագած ապստամբությունը: Երկու դեպքում էլ խեթերի առջև ծագած խնդիրների հիմքում ընկած էին Խաթթիից կախյալ տեղական կառավարիչների անջատողական տրամադրությունները:

Արևմտյան Փոքր Ասիայում մեծ ակտիվություն էր դրսևորում և փաստացի խեթերի վերահսկողությունից դուրս էր եկել Թուրքիալիյաս II-ի դրածոն՝ Յիպպասլա երկրի կառավարիչ Մադդուվատտասը: Այստեղ ծավալված իրադարձությունները շարադրված են Առնուվանդասի՝ Մադդուվատտասին ուղղված նամակում ("Մադդուվատտաս"): <sup>265</sup>

---

<sup>265</sup> Այս տարածաշրջանում Խաթթիի քաղաքականության և մասնավորապես Մադդուվատտասի գործունեության մասին տես Bryce 2005: 129-138:

Մադդուվատտասի ծագումը և նրա երկրի անվանումը տեքստում չի հիշատակվում: Հնարավոր է, Մադդուվատտասը կարող էր նույնիսկ Փոքր Ասիա գալ Ախիսիյավայից: Ինչ-ինչ պատճառներով նա իր ընտանիքի և մերձավորների հետ միասին փախել էր ախիսիյավացի Ատտար(իս)սիյասի հետապնդումից և Թուդխալիյասի կողմից Արևմտյան Փոքր Ասիայի Ցիպպասլա լեռնային շրջանը ստացել որպես տիրույթ: Դժվար է ասել, թե ով էր այդ ախիսիյավացին: Նամակում նա հիշատակվում է որպես "Ախիսիյայի մարդ/ախիսիյացի", ինչը կարող էր նշանակել ինչպես "ախիսիյավացի", այնպես էլ "Ախիսիյավայի արքա/կառավարիչ":<sup>266</sup> Այս անունը ժամանակին առաջարկվել է համեմատել Տրոյական պատերազմում միկենցիների միացյալ զորքի հրամանատար Ագամեմնոնի հոր՝ Ատրեոսի անվան հետ:<sup>267</sup>

Նպատակ ունենալով ընդարձակել իր տիրույթները, նա անհաջող արշավանք էր սկսել հարևան Արցավայի դեմ և վերականգնվել էր իր տիրույթում միայն խեթական զորքի միջամտության շնորհիվ: Մակայն հետագայում Մադդուվատտասը շարունակաբար դրժել էր Թուդխալիյասի հետ կնքված պայմանագիրը և նույնիսկ չէր օգնել խեթերին Ատտար(իս)սիյասի զորքի արշավանքի ժամանակ: Ըստ վերոհիշյալ պայմանագրի, դեռևս Թուդխալիյասի օրոք Մադդուվատտասը փորձում էր Խաթթիի դեմ միավորել արևմտափոքրասիական կախյալ երկրներին, երբեմն էլ ուղղակի ձգտում էր զավթել վերջիններիս տարածքները (օրինակ, Խապալլան):

Փաստացի, Մադդուվատտասը սկսում է գործել ինքնուրույն, առանց խեթական արքայի գիտության, դրանով իսկ խախտելով Թուդխալիյասի հետ կնքված պայմանագիրը: Նա նախ պատերազմ նախաձեռնեց Արցավայի արքա Կուպանտա-Կուրունտայի դեմ: Չնայած Մադդուվատտասը պարտվեց և փախավ, թողնելով իր երկիրը հակառակորդին, սակայն Թուդխալիյասը միջամտեց և, հաղթելով Արցավային, նրան վերականգնեց իր երկրում: Նույնիսկ դրանից հե-

<sup>266</sup> Խեթական տեքստերում նման ձևով են նշվում օտար երկրների կառավարիչները. Օրինակ, <sup>m</sup>Huqanaš <sup>LÚ URU</sup>Azzi "ազգեցի Խուկկանաս" (KUB XVIII 2):

<sup>267</sup> Forrer 1924a: 21.

տո, երբ Ատտար(իս)սիյասը արշավեց խեթական տարածք, Մադդու-վատտասը իր գորքով չաջակցեց Թուդիսալիյասին: Խեթերը միայնակ վտարեցին ախիսիյավացիներին: Մադդուվատտասը կրկին վերականգնվեց իր երկրում որպես կառավարիչ, իսկ խեթերը այնտեղ գորք տեղակայեցին գորավար Կիսնապիլիի գլխավորությամբ:

Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Մադդուվատտասը ակնհայտորեն ծրագրում էր ստեղծել խոշոր անկախ թագավորություն իր համար և առիթ էր փնտրում ազատվելու այստեղ գտնվող խեթական գորքի ներկայությունից: Առիթը ներկայացավ ի դեմս արևմուտքում խեթահպատակ երկու քաղաքների՝ Դալավայի (անտիկ շրջանի Տլոս) և Խինդուվայի (անտիկ Գենդոա)<sup>268</sup> հետ կապված միջադեպի: Այդ քաղաքները որոշել էին ապստամբել խեթերի դեմ: Մադդուվատտասն առաջարկեց արևմուտքում գտնվող Կիսնապիլիին համատեղ արշավել ընդդեմ ապստամբների, սակայն արշավանքի ընթացքում հորդորեց երկու քաղաքների բնակիչներին միավորվել ընդդեմ խեթերի: Մադդուվատտասի ծրագիրը հաջողվեց և անսպասելի հարձակման արդյունքում խեթական գորքը պարտվեց, իսկ գորավար Կիսնապիլին և նրա օգնական գորավար Պարտախուլլան զոհվեցին:

Մադդուվատտասի գործունեությունն ուղղված էր իրեն ենթակա տարածքների ընդարձակմանը: Այդ նպատակով նա ապահովեց Արցավայի լոյալությունը, վերջինիս արքա Կուպանտա-Կուրունտային կնության տալով իր դստերը: Հետո Մադդուվատտասը գրավեց Արցավայի դաշնության անդամ Խապալլա երկիրը, նաև տարածքներ նվաճեց Լուկկայում (հետագայի Լիկիա), միաժամանակ աշխատում էր արևմուտքի խեթահպատակ երկրներին դուրս բերել Խաթթիի վերահսկողության տակից: Իրադարձությունների այսպիսի ընթացքը կարող էր հանգեցնել այստեղ Խաթթիի ոչ միայն հեղինակության անկմանը, այլև տարածքային կորուստների: Դրան հաջորդեց Ալասիյա կղզու կամ դրա մի մասի նվաճումը նախկինում իր

---

<sup>268</sup> Գտնվում էր Լիկիայի Տլոս քաղաքից հարավ (համադրումը՝ Garstang and Gurney 1959: 79-80):



երդվյալ թշնամի Ատտար(իս)սիյասի հետ դաշնակցած: Դատելով տեքստից, ամեն անգամ Մադդուվատտասը Թուդխալիյաս II-ին հավաստիացնում էր, որ գործում է իր տիրոջ շահերից ելնելով: Ավելին քան ստիպել Մադդուվատտասին վերադարձնել Խապալլայում և Ալասիյայում ձեռքբերված գերիներին, Թուդխալիյասին և նրա գահակից Առնուվանդասին չհաջողվեց:

Մադդուվատտասի գործունեությունը նկարագրող տեքստից պարզորոշ երևում է, թե որքան անկայուն և ձևական էր խեթերի վերահսկողությունը Փոքր Ասիայի արևմուտքում: Նույնիսկ խեթական արքաների կողմից իրենց դրածոյին ուղղված նամակները որևէ կերպ չէին ազդում Մադդուվատտասի գործունեության վրա: Թերևս, Խաթթին բավարար ռեսուրսներ չունեի հարկ եղած դեպքում ռազմական միջամտություն ցուցաբերելու արևմուտքի մեծաքանակ երկրներում տեղ գտած բացասական զարգացումներին:

#### **Կասկական սպառնալիքը. Ձեռնարկումներ անդրտավրոսյան գոտում**

Ինչպես և Թուդխալիյասի օրոք, հատկապես լուրջ էր հյուսիսից եկող սպառնալիքը: Արքայի և թագուհու հանձնարարությամբ կազմված մի շարք աղոթքներում նշվում է կասկերի հարձակումների մասին: Կասկերը սկսել էին ասպատակել խեթահպատակ շրջանները՝ ավերելով և թալանելով տաճարները և նույնիսկ մայրաքաղաքին հարող խեթական բնակավայրերը:

*"Ներիկում, Խուրսամայում, Կաստամայում, Մերիսայում, Խիմուվայում, Տազգաստայում, Կամմամայում, Յալպուվայում, Կապիբրուխայում, Խուրնայում, Դանկուննայում, Տապասավայում, Տարուգայում, Իլյալուխայում, Յիխիսանայում, Սիպիդդուվայում, Վասիսայում, Պատալիյայում գտնվող և ձեզ՝ աստվածներ, պատկանող տաճարները կասկերը ավերեցին և ձեր արձանները ջարդեցին: Նրանք իրար մեջ բաժանեցին քրմերին, սրբազան քրմերին, քրմուհիներին, օձյալներին, երաժիշտներին, երգիչներին, խոհարարներին, հացթուխներին, երկրագործներին, այգեգործներին և նրանց իրենց ծառաները դարձրեցին: ... Ավելին, Խաթթիին պատկանող երկրները*

*Կասկա երկիրը՝ խոզապահները և մանածագործները, Արավաննան, Կալասման, Լուկկան և Պիտասսան, իրենց Արիննայի Արևի աստվածուհուց անկախ հայտարարեցին ... Այժմ բոլոր հարևան երկրները սկսեցին հարձակվել Խաթթիի վրա: Թող սա Արիննայի Արևի աստվածուհու համար վրեժխնդրության պատճառ դառնա: Աստվածուհի, քո անունը մի վարկաբեկիր:*"<sup>269</sup>

Կասկական ցեղերի ասպատակությանը և թալանին ենթարկվեցին Խաթթիի բնօրրանի հարևանությամբ ընկած մեծաքանակ բնակավայրեր, ներառյալ դրանցում գտնվող տաճարները: Տաճարների ողջ գույքը և հարստությունները կասկերը բաժանեցին իրենց միջև, իսկ քրմերին և սպասավորներին ստրկացրեցին: Ավելին, Խաթթիի ենթակայության տակ գտնվող մի շարք երկրներ դադարեցրին իրենց կախյալ կարգավիճակից բխող պարտավորությունները (Արավաննան, Կալասման, Լուկկան և Պիտասսան): Խաթթիի գերիշխանությունը թոթափած վերոհիշյալ երկրների ցանկը համապատասխանում է հետագայում Խաթթուսիլիս III-ի օրոք կազմված տեքստում Խաթթիի վրա հարձակումներ գործած երկրների ցուցակին ("Շրջանաձև ներխուժում", տես ստորև),<sup>270</sup> ինչը վկայում է այն մասին, որ Խեթական պետությանը համակած ճգնաժամը պետք է սկսվեր արդեն Առնուվանդաս I-ի կառավարման շրջանում:

Փորձելով ինչ-որ կերպ կայունացնել իրավիճակը, Առնուվանդասը սկսեց պայմանագրեր կնքել կասկական ցեղերի հետ, ինչի շնորհիվ կասկական ցեղերի մի մասը հավաստիացրեց, որ ցանկանում է հավատարիմ մնալ խեթական արքային: Նույնը նա կատարեց Կիլիկիայում՝ Ուրա քաղաքի, ինչպես նաև Կիցցուվատնա տեղափոխված Իսմերիգա քաղաքից ("Իսմերիգա") եկած վերաբնակիչների հետ:

Առնուվանդասը ուժերի գերագույն լարումով կարողացավ ժամանակավորապես հասնել իրավիճակի վերահսկմանը:

---

<sup>269</sup> Այս մասին հիշատակվում է Առնուվանդասի՝ աստվածներին ուղղված աղոթքի տեքստում (Singer 2002: 40-43):

<sup>270</sup> Այս տեքստում բացակայում են Լուկկան և Կալասման, սակայն հիշատակվում են նաև Արցական, Ազգին և Իսուվան:

Նա Կիցցուվատնային կցեց նախկինում Միտտանիին պատկանող որոշ շրջաններ,<sup>271</sup> այնտեղ վերաբնակեցնելով մի խումբ իսմերիգացի ազնվականների, հնարավոր է, իրենց տիրույթներով հանդերձ: Բացառված չէ, որ նույնիսկ Միտտանիի մայրաքաղաք Վաշշուկանին կարող էր կցվել Կիցցուվատնային: Ակնհայտ է, որ Թուդխալիյաս II-ի և Կիցցուվատնայի արքա Սունասսուրայի միջև կնքված պայմանագրից հետո Կիցցուվատնան փաստացի վերածվել էր Խաթթիից լիովին կախյալ երկրորդական թագավորության:

Միտտանիի պարտությունը և նրա կողմից որոշ տարածքային կորուստներն ու ազդեցության վերացումը Կիցցուվատնայի և Իսուվայի նկատմամբ զգալիորեն թուլացրին այս երբեմնի հզոր տերությունը, սակայն Սաուսատարին հաջորդած Արտադամա I-ի օրոք Միտանին սկսեց աստիճանաբար վերականգնվել: Վերջինս փորձում էր բարելավել իր պետության վիճակը շնորհիվ ոչ հեռավոր անցյալում Եգիպտոսի հետ ունեցած թշնամությունը դաշնակցային հարաբերություններով փոխարինելու միջոցով: Թերևս, Արտադամայի կարծիքով, խեթական սպառնալիքն ավելի իրական էր, քան Եգիպտոսից եկող վտանգը: Միտտանիի և Եգիպտոսի փոխհարաբերությունների բարելավումը և նքված պայմանագիրը (տես վերը՝ Թուդխալիյաս II) միառժամանակ Միտտանիին թույլ տվեց ապահովագրել իրեն հյուսիսից եկող սպառնալիքից: Եվ այդ իրավիճակը շարունակվեց շուրջ կես դար, մինչև մ.թ.ա. XIV դարի կեսերը, երբ սկսվեց Խեթական պետության վճռական առաջխաղացումը դեպի Միդիա, որի արդյունքում Միտտանին դարձավ խեթերից կախյալ երկրորդական պետություն (տես ստորև՝ Սուպպիլուլիումաս I):

### **Տագնապալից Արևելքը. Պախիսուվայի ապստամբությունը**

Իրավիճակը բարդ էր նաև Հայկական լեռնաշխարհի արևմուտքում՝ Վերին Եփրատի ավազանում, որտեղ ապստամբություն էր բռնկվել Պախիսուվա երկրում: Այդ ապստամբության հանգամանքների և ընթացքի մասին արժեքավոր տեղեկություններ է պահպանվել վերինեփրատյան երկրների առաջնորդներին խեթական արքայի

---

<sup>271</sup> Houwink ten Cate 1970: 61.

կողմից տրված հրահանգ-պայմանագրում ("Պախիսուվացի Միտաս"):<sup>272</sup> Պախիսուվայի հնարավոր տեղադրությունը Իսուվայի անմիջական հարևանությամբ (թերևս, հյուսիսում՝ Բյուրակնի լեռների շրջանում)<sup>273</sup> վկայում է արևելքում Թուդիսալիյաս II-ի նվաճումների լայն աշխարհագրության օգտին: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, խեթական տիրապետությունը արևելքում ամուր չէր: Տեղական ցեղապետերի հետ խեթական արքան կնքել էր պայմանագրեր, որոնցով պետք է ապագայում կարգավորվեին Խաթթիի և նրանց հարաբերությունները:

Պարզ չէ թե ինչ հանգամանքներում էր սկսվել ապստամբությունը, սակայն, անկասկած, այն չէր սահմանափակվում միայն Պախիսուվայով: Խեթահպատակ Պախիսուվան ինչ-որ պահ հրաժարվել էր իր կախյալ պարտավորություններից և նույնիսկ սկսել էր ասպատակել հարևան շրջանները՝ Իսուվան, Կումմախան (հայկ. աղբյուրների Անի-Կամախ) և Տիմիյան (հայկ. Ջիմին՝ Երզնկայի դաշտի արևելքում): Նրանք գրավել էին նաև Խաթթիի պատկանող չորս քաղաքներ: Ապստամբության նախաձեռնողը պախիսուվացի առաջնորդ Ուսապան էր, որին հետո միացել էր նույնպես պախիսուվացի Միտասը, ով մինչև այդ պահը գտնվում էր խեթական ծառայության մեջ: Տեքստում ասվում է, որ Միտասը դրժել էր խեթական արքային տրված իր երդումը: Անցնելով ապստամբների կողմը, Միտասն ամուսնացել էր Ուսապայի դստեր հետ: Միտասը Պախիսուվայում ապաստան էր տալիս խեթական տարածքից փախած մարդկանց: Միտասից հետո խեթական արքան Պախիսուվա էր ուղարկել ևս մեկ անձի՝ Պիզգանասին, ով նույնպես հարել էր ապստամբներին:

Պիզգանասի՝ Պախիսուվա ուղարկելուն նախորդել էր խեթական զորքի հարձակումը Կումմախայի ուղղությամբ՝ այնտեղ գտնվող Պախիսուվայի և Արխիտայի զորքերի վրա: Վերջիններս դրանից հետո ապաստանել էին Պախիսուվայում: Ապստամբության

---

<sup>272</sup> Պախիսուվայի ապստամբության, այս տարածաշրջանի պատմական աշխարհագրության, անվանաբանության և հարակից հարցերի մասին տես Ղազարյան 2009: 48-49; Քոսյան և այլք 2018: 101-141:

<sup>273</sup> Պախիսուվայի տեղադրության մասին կարծիքները տես Քոսյան 2004ա: 76:

հետագա ընթացքի և դրա առաջնորդների ճակատագրի մասին աղբյուրը այլ տեղեկություն չի հաղորդում: Նկատի առնելով այն հանգամանքը, որ Պախխուվայի ապստամբների դեմ ձեռնարկված գործողություններից հետո Առնուվանդաս I-ը Խաթթուսաս էր հրավիրել վերինեփրատյան երկրների մեծաքանակ առաջնորդների, նրանց ներկայացնելով Պախխուվայի ողջ միջադեպը և պարտավորեցրել հետագայում ապահովել Պախխուվայի լոյալությունը, կարելի է ենթադրել, որ ապստամբությունը ճնշվել էր: Ընդ որում այդ հանձնարարությունը դրվում էր երկու քաղաքների առաջնորդների վրա՝ Պիտտիյարիգայի<sup>274</sup> և Դուզգամմայի: Սրանցից երկրորդը հայտնի է հետագայում. Մուրսիլիս II-ի "Տարեգրություններում" այն հիշատակվում է որպես Հայասայի կարևոր բնակավայրերից մեկը:

Վերինեփրատյան "երկրների" ցուցակը, որոնց առաջնորդները գնացել էին Խաթթուսաս, հիմնականում ընդգրկում է Իսուվայի տարածքի բնակավայրերը, որոնց մի մասը հայտնի է նաև այլ տեքստերից: Դրանք են՝ Ալաթարմե, Խալմա, Խինձուտա, Լիլլիմա, Մարարխա, Պալիսնա, Մուլլամմա, Տախխիսա, Տախխինա, Վատարունա, Յանցալիյա:

Պախխուվայի միջադեպը վկայում է իրավիճակի ծայրաստիճան լարվածության օգտին: Դատելով տեքստից, ապստամբությունը և դրա հնարավոր ճնշումը բավական երկար ժամանակ պետք է ընդգրկեին: Այստեղ ևս կարծես գործ ունենք նույնպիսի իրավիճակի հետ, ինչն առկա էր Արևմտյան Փոքր Ասիայում՝ կապված Մադդուվատտասի գործունեության հետ: Երկու դեպքում էլ խեթերից կախյալ տեղական կառավարիչները գտնվում էին դաշնակցային հարաբերությունների մեջ իրենց հարևան քաղաքական միավորների հետ և հաշվի չէին առնում խեթական արքաների շարունակական սպառնալիքները: Դա ստիպում էր վերջիններիս ձեռնարկել արշավանքներ, որոնց հաջողությունը, անկասկած, ժամանակավոր բնույթ էր կրում:

---

<sup>274</sup> Պիտտիյարիգան կարող էր լինել միջնադարյան հայկական աղբյուրների Բթառիճը (Kosyan 2017b):

### ԹՈՒԴԻՄԱԼԻՅԱՍ III

#### “Շրջանաձև ներխուժումը”. Խաթթին փլատակների տակ

Առնուվանդաս I-ի կառավարման վերջին շրջանում Խաթթիի նախկին հպատակ երկրների հարձակումների և անջատողականության մթնոլորտում էլ ինչ-որ պահ գահ բարձրացավ նրա որդին՝ Թուղխալիյաս III-ը: Երիտասարդ արքան միառժամանակ ի վիճակի չէր հաջողությամբ լուծելու տերության առջև ծառայած խնդիրները:

Անդրտավրոսյան ճակատում ձևավորված աննպաստ իրավիճակից զատ, բուն Փոքր Ասիայում Խեթական պետությունը առավել բարդ խնդրի առջև էր կանգնած: Դեռևս Առնուվանդաս I-ի օրոք Տերության գերիշխանության տակ գտնվող ծայրամասային երկրների անջատողական միտումները նրա որդի և հաջորդ Թուղխալիյաս III-ի կառավարման սկզբնական փուլում վերաճեցին խոշոր աղետի: Տարեցտարի աճող սպառնալիքը հանգեցրեց Խաթթիի տարածքի էական կրճատման: Այս ժամանակաշրջանում Խաթթիում տիրող իրավիճակի մասին շատ ավելի ուշ՝ Խաթթուսիլիս III-ի օրոք կազմված “Շրջանաձև ներխուժում” անվանումը կրող տեքստում նկարագրվում է Առնուվանդասից հետո Խեթական տերությունում տիրող ծայրաստիճան ծանր իրավիճակը:

*“(6) Նախկինում Խաթթի երկրները թշնամիներից նվաճվեցին, (7) Գասակական թշնամին եկավ Խաթթի երկրները նվաճեց և իրեն Նենասաս քաղաքը սահման (8) դարձրեց: Ստորին երկր[ի] կողմից Արցավայի թշնամին եկավ և նա էլ (9) Խաթթի երկրները նվաճեց և [Տ]ուվանուվան ու Ուդան իրեն սահման դարձրեց: (10) Հեռվից Արավաննա[յի] թշնամին եկ[ավ] և ողջ Գասսիյա երկիրը նվաճեց: (11) Հեռվից Ազգիի թշնամին եկ[ավ] և ողջ Վերին [երկրն]երը նվաճեց (12) և իրեն Սամուխա քաղաքը սահման դարձրեց[ը]: Իսկ Իսուվայի [թշնամին] եկավ [և] Թեգարամա [երկիրը] նվաճեց: (13) Հեռվից Արմատանայի թշնամին [եկավ] և նա էլ Խաթթի երկրներ[ը] նվաճեց (14) և իրեն Գիցցուվատնա քաղաքը [սահման դարձրեց]: [Խաթթ]ուսաս քաղաքն էլ (15) հրդեհվեց: Եվ (միայն) [.....] hešti- տունը փրկվեց[ը]: (16) Երբ հորս հայրը՝ Ս[ուպպիլուլիումասը, մեծ արքայ]ն, հերոսը,*

*հայտնվեց (17) [և] արքայական գահին բազմվեց, նա թշնամիներին/ Խաթթի երկրներից (18) [վտարեց]»<sup>275</sup>*

Հատկանշական է Խաթթիի հյուսիսում գտնվող ռազմական հենակետերից մեկից՝ Տապիզգա քաղաքից հայտնաբերված արքայական նամակներից մեկի հաղորդած տեղեկությունը կապված կասկական ցեղերի հարձակումների հետ:<sup>276</sup> Տապիզգայում գտնվող խեթական պաշտոնյա Ադադբեդին գրում էր արքային այն մասին, որ թշնամիները հատվածներում ձեռք էլ պաշտպանական ամրությունների շղթան: Իսկ մեկ այլ նամակում՝ գրված միննույն տարածաշրջանի Գասիպուրա քաղաքում գտնվող ուն պաշտոնյա Պիսենիի կողմից,<sup>277</sup> խոսվում է հակառակորդի երկու խոշոր խմբերի (մեկը 600, մյուսը 400 մարդ) գիշերային հարձակման մասին, որի ընթացքում հարձակվողները որպես ռազմավար հավաքել-տարել էին դաշտերում հասունացած հացահատիկը: Այս տեղեկությունը լիովին համահունչ է Խաթթիի աստվածներին ուղղված Մուրսիլիս II-ի աղոթքներից մեկում հիշատակվող տեղեկությանը իր պապի (Թուդխալիյաս III-ի օրոք) երկրում տիրող սովի և թշնամիների հարձակումների մասին.

*“Սակայն հանկարծակի կերպով, իմ պապի օրոք Խաթթիի երկրորդ ճնշվեց, այն ամայացավ թշնամիների կողմից: Մարդկանց քանակը կրճատվեց համաճարակի պատճառով և ձեր ծառաների քանակը կրճատվեց: Իմ աստվածներ, իմ տերեր, ձեզնից մեկը տաճար չունի, մյուսի տաճարն ավերված է: Ով ծառայում էր աստծուն, մահացել է, ձեր ձեռներն անտեսվում են”<sup>278</sup>*

Փաստորեն, դեռևս Թուդխալիյաս III-ի շրջանում Խաթթիում առկա էին լուրջ տնտեսական խնդիրներ, որոնց հետագա խորացումը հանգեցրեց ճգնաժամի: Մի խնդիր, որի հետ Խեթական տերությունը պիտի պարբերաբար բախվեր նաև հետագայում և որը ի վերջո դարձավ նրա վերջնական տրոհման գլխավոր պատճառներից մեկը:

<sup>275</sup> Տե՛ս Քոսյան 2016ա: 70-71:

<sup>276</sup> Alp 1991: N.46.

<sup>277</sup> Alp 1991: N.25.

<sup>278</sup> Տե՛ս Götze 1930: 242-251; Lebrun 1980: 220-229; Singer 2002: 65 [N.13]:

“Շրջանաձև ներխուժում” պայմանական անվանումը ստացած իրադարձության էության բացահայտման հարցում մասնագետները համակարծիք չեն: Առաջին հայացքից իսկապես թվում է, որ տեղի էր ունեցել միաժամանակյա հարձակում տարբեր կողմերից, որի հետևանքով Խեթական տերությունը փլուզվել էր, կորցնելով նույնիսկ մայրաքաղաքը: Սակայն նկատի առնելով հարձակվողների աշխարհագրական դիրքը Խաթթիի բնօրրանի նկատմամբ (արևմուտք, հյուսիս, արևելք, հարավ-արևելք), առավել հավանական է թվում այն ենթադրությունը, որ վերահիշյալ արշավանքները կամ ասպատակությունները տեղի էին ունեցել տարիների ընթացքում, այլապես Խեթական պետությունը ուղղակի կդադարեր գոյություն ունենալ: Այնինչ Թուդխալիյաս III-ը իր արքունիքի հետ միասին որոշ ժամանակ անց կարողացել էր վերադասավորել ուժերը, անցնել հակահարձակման և վերագրավել կորցրածը:<sup>279</sup>

Թշնամական հարձակումների և մանավանդ մայրաքաղաքի հիմնավոր ավերման հետևանքով Թուդխալիյասը ստիպված էր արքունիքի և զորքի հետ միասին հեռանալ մայրաքաղաք Խաթթուսասից և ժամանակավորապես հաստատվել Հալիսի ափին գտնվող պաշտամունքային խոշոր կենտրոն Սամուխա քաղաքում (գետի վերին հոսանքների շրջանում):<sup>280</sup> Նա այստեղից էր կազմակերպում հակառակորդների դեմ ռազմական գործողությունները և կորցրած տարածքների վերանվաճումը:

Խեթական տերության թուլացումը պայմանավորված էր ինչպես նախկինում Խաթթիի գերիշխանության տակ գտնվող երկրների ապստամբություններով և հարձակումներով, այլև թերևս ներքին հանգամանքներով: Խաթթիի արքայի առջև կանգնած ծանրագույն

---

<sup>279</sup> Թուդխալիյաս III-ի կառավարման շրջանում Տերության առջև կանգնած ծայրաստիճան բարդ իրավիճակի մասին, ինչպես նաև աղբյուրների վերլուծության համար տես Stavi 2013:

<sup>280</sup> Սամուխայի տեղադրությունը Հալիսի ափին ենթադրվում է բավական մեծ թվով մասնագետների կողմից, սակայն առ այսօր այն հաստատող հիմնավոր փաստեր չկան: Ամենայն հավանականությամբ այն պետք է գտնվեր *Քայալըփընար* հնավայրի տեղում: Սամուխայի տեղադրության համար տես Քոսյան 2004ա: 85-91 (կարծիքների տեսություն):



խնդիրների՝ "Շրջանաձև ներխուժման", կասկերի կողմից մայրաքաղաքի գրավման և այլ իրադարձությունների պատճառների շարքում, հնարավոր է, առաջնային նշանակություն կարող էր ունենալ երկրում տիրող սովն ու համաճարակը, ինչը հիշատակվում է նրա թոռան՝ մ.թ.ա. XIV դարի վերջին քառորդում Մուրսիլիս II-ի՝ Խաթթիի աստվածներին ուղղված մի աղոթքի տեքստում (տես վերը), որտեղ խոսվում է մեծաքանակ բնակավայրերի ամայացման մասին երկրում մոլեգնող համաճարակի և սովի պատճառով: Շուրջ 20 տարի տևած համաճարակի խոշոր վնասների մասին է տեղեկացվում նրա մեկ այլ աղոթքում.<sup>281</sup>

*“[Մարդիկ մահանում էին] իմ հոր ժամանակ, մահանում էին իմ եղբոր [Առնուվանդաս II-ի - Ա.Ք.] ժամանակ, նրանք շարունակում են մահանալ [իմ ժամանակ]: ... Արդեն 20 տարի Խաթթիում [մեծ քանակությամբ] մարդիկ մահանում են: Խաթթին [շատ է տուժել] համաճարակից”:*

Իսկ Մուրսիլիս II-ի աղոթքներից մեկում՝ ուղղված Արիննա քաղաքի Արնի աստվածուհուն<sup>282</sup>, որը Է.Լարոշի „Կատալոգում“ վերագրվում է Մուրսիլիս II-ին,<sup>283</sup> սակայն իրականում տիպիկ „միջին խեթերեն“ տեքստից վերցված ներդիր է և պիտի թվագրվի Առնուվանդաս I-ի և նրա կառավարմանը անմիջապես հաջորդող շրջանով,<sup>284</sup> մի հատված ուղղակի հիշեցնում է „Շրջանաձև ներխուժումը“:

*„Այժմ բոլոր հարևան [երկրն]երը Խաթթի երկրի վրա սկսեցին [հար]ձակվել“:*

Այսպիսով, վերը հղված տեքստերի հիման վրա պարզվում է, որ արդեն Առնուվանդաս I-ի կառավարման վերջին շրջանից երկրում խոր ճգնաժամ էր սկսվել, պայմանավորված ինչպես համաճարակով և սովով, այնպես էլ, հավանաբար, որպես դրա հետևանք հանդիսացող հարևան երկրների և ցեղերի ակտիվությամբ, որը շարունակվեց նրա հաջորդի՝ Թուդիսալիյաս III-ի օրոք: Թուդիսալիյաս III-ի կառա-

<sup>281</sup> Singer 2002: 56 [N.10].

<sup>282</sup> Gurney 1940; Singer 2002: 53 [N.8].

<sup>283</sup> CTH 376C.

<sup>284</sup> Carruba 1969: 247-248., Anm.40.; Houwink ten Cate 1997: 59-60.

վարման շրջանում Փոքր Ասիայում տիրող տևական երաշտի մասին ուղղակի տեղեկություններ են հաղորդվում *Մաշատիյոյուք* հնավայրից հայտնաբերված մի շարք նամակներում:<sup>285</sup>

Խեթական բնօրրանում երաշտի մասին վերոհիշյալ տեղեկությունները, թերևս, հնարավոր չէ չառնչել Խաթթուսիլիս III-ի արդեն նշված տեքստում և Մուրսիլիս II-ի աղոթքներում ու „Մուպպիլուլիումասի գործունեությունը“ անվանումը ստացած տեքստում նկարագրվող իրավիճակին: Այստեղ ներկայացված են՝

ա) Հարևան երկրների հարձակումները Խաթթիի վրա,

բ) Մայրաքաղաք Խաթթուսասի նվաճումը և ավերումը կասկե-րի կողմից,

գ) Բնակավայրերի ամայացումը,

դ) Երաշտը, սովը և զանգվածային մահացությունը:

ե) Բնակչության զանգվածային հեռացումը իրենց բնակավայրե-րից դեպի հարևան երկրներ:

Կարծում ենք, վերոհիշյալ երևույթները չէին կարող տեղ գտնել մեկ տարում մուլեգնող երաշտի հետևանքով: Երաշտի պատճառով բնակչության արտագաղթը հարևան երկրներ, այդ թվում Բուովա և Հայասա (տես ստորև), անկասկած, խոշոր չափերի հասնող աղետի հետևանքը պետք է լիներ: Այս առթիվ կարելի է վկայակոչել Մուպպիլուլիումաս I-ի և կախյալ Միտտանիի արքա Շատտիվագայի միջև կնքված պայմանագրում ("Մուպպիլուլիումաս I - Շատտիվագա") ներկայացված շրջանների ցուցակը, որոնց բնակչությունը հեռացել էր Բուովա:<sup>286</sup> Ցուցակում ներկայացված շրջանները գտնվում էին ինչպես Արևելյան Փոքր Ասիայում, այնպես էլ Տերուրյան այլ հատվածներում՝ Գուրտալիսա, Արավաննա, Ջազգիսա, Կալասմա, Տիմ(ա)նա, Խալիվա, Կարնա, Դուրմիտտա, Ալիսա, Խուրմա, Խարա-նա, Թեգարամա, Թեպուրզիյա, Խազգա, Արմատանա:

---

<sup>285</sup> Համար 14, 24, 29, 50, 53, 65, 79, 80 (De Martino 2005: 314; Hoffner 2009: 65-66):

<sup>286</sup> Weidner 1923: ԴԿ 4-7; Beckman 1996: 38; Քոսյան և այլք 2018: 81-82; Kosyan 2021 (այն մասին, որ Խաթթիից դեպի արևելք հեռացած բնակչությունը կամ գոնե դրա մի մասը պետք է հանգրվաներ Հայաստանում):

Ներդինաստիական խնդիրները՝ կապված գահաժառանգման հետ նույնպես պետք է իրենց բացասական հետևանքներն ունենային Խաթթիիում տիրող անկայուն իրավիճակի վրա (տես հաջորդ բաժինը):

Պետության համար ստեղծված ծանրագույն իրավիճակում Թուղխալիյասն իրեն դրսևորեց որպես գործույա և նպատակալաց դեկավար: Մուրսիլիս II-ի օրոք կազմված “Մուպիլուլիումասի գործունեությունը” կոչվող տեքստում նկարագրվում են Թուղխալիյասի և նրա որդի ու գահաժառանգ Մուպիլուլիումասի հետ միասին ձեռնարկած արշավանքները, որոնք նպատակ ունեին վերագրավել հակառակորդների կողմից նվաճված տարածքները: Գահաժառանգի մասնակցությունը հոր մղած պատերազմներին կարող է բացատրվել ոչ միայն նրանց երկուսի գահակցությամբ, այլև Թուղխալիյասի տևական հիվանդությամբ: Տեքստը մի շարք դեպքերում նշում է, որ արքայի հիվանդության պատճառով Մուպիլուլիումասն ինքն էր առաջնորդում զորքը:<sup>287</sup>

Վերոհիշյալ տեքստում ներկայացված են Թուղխալիյասի և Մուպիլուլիումասի մղած պատերազմները Փոքր Ասիայի արևմուտքում, հյուսիսում և հյուսիս-արևելքում ընդդեմ Մալլապա, Մասա և Կամմալա երկրների, կասկական ցեղերի, Հայասայի: Խեթերի հենակետը ժամանակավոր մայրաքաղաք Սամուխան էր: Խեթական զորքերին հաջողվեց մի շարք ճակատամարտերի շնորհիվ վերագրավել կորցրած տարածքները, ժամանակավորապես զերծ պահելով կասկերին իրենց համար ավանդական դարձած ասպատակություններից:

### **Թուղխալիյաս III-ը և Հայասան**

Թուղխալիյաս III-ի ջանքերը՝ ուղղված արևելքում Տերոյանս ազդեցության վերականգնմանը, չէին կարող շրջանցել վերինեփրայան գոտում "Շրջանաձև ներխուժմանը" մասնակից Հայասան:

---

<sup>287</sup> Թուղխալիյասի հիվանդությունը մի քանի անգամ կրկնվել էր: Օրինակ, հայասական արշավանքից հետո Թուղխալիյասը կրկին հիվանդացել էր (Güterbock 1956: Դիպված 14, 8'-9'), սակայն շուտով՝ ապաքինվել (Idem: Դիպված 14, 22'):

Վերջինս (տեքստում նշվում է որպես Ազգի<sup>288</sup>) ներխուժել էր Վերին երկիր և հասել մինչև Սամուխա քաղաք: Սկզբում խեթական զորքը արքայազն Մուպպիլուլիումասի գլխավորությամբ փորձում էր Վերին երկրից վտարել հայասացիներին և կասկերին, սակայն վերջիններս ամեն անգամ խուսափում էին ճակատամարտից: Ի վերջո, խեթերին հաջողվեց ներթափանցել հակառակորդի տարածք և Կումմախայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում պարտության մատնել Հայասայի արքա Կարաննիսին:<sup>289</sup> Չնայած տեքստը ճակատամարտի ելքի մասում կորսված է, սակայն այդ մասին կարելի է ենթադրել Հայասայի կառավարիչ Խուկկանասի հետ Մուպպիլուլիումասի կնքած պայմանագրից ("Խուկկանաս"):<sup>290</sup>

Արևելքում Հայասայի դեմ ուղղված արշավանքի համատեքստում պետք է նշել վերոհիշյալ *Մաշատիյուլից* հայտնաբերված մի նամակ, որն առաքված է Թուդիսալիյասի III-ի կողմից Տապիզգա քաղաքում գտնվող կամ այնտեղ հատուկ առաքելությամբ ուղարկված խեթական պաշտոնյային:<sup>291</sup> Հասցեատիրոջը հանձնարարվում էր բոլոր ջանքերը գործադրելով զորաջոկատներ հավաքագրել, ընդ որում նամակի մի հատվածում առկա է "Հայասան կարգի բերել" արտահայտությունը, որը բացահայտում է վերոհիշյալ պատրաստությունների նպատակը: Ջորաջոկատները պետք է հավաքագրվեին մեծաքանակ շրջաններից, որոնք գտնվում էին Տերության տարբեր մասերում՝ Իսխուպիտտա, Իսուվա, Լա(խու)վացանտիյա, Սակադ-

---

<sup>288</sup> Ազգի երկրանունը խեթական տեքստերում հանդիպում է միայն սկսած Մուրսիլիս II-ի տարեգրություններից, ընդ որում այստեղ մեկ անգամ կրկին օգտագործվում է Հայասա անվանումը: Պատճառն այն է, որ Խաթթուսիլիս III-ի օրոք կազմված "Շրջանան ներխուժումը" հիշատակող KBo VI 28+ տեքստում ("Պիրվա") նույնպես կիրառվում է Ազգի տերմինը, սակայն "Մուպպիլուլիումասի գործունեությունում" Հայասան է միանշանակ հիշատակվում որպես Խաթթիի հակառակորդ այս տարածաշրջանում:

<sup>289</sup> Güterbock 1956: Դիպված 13.

<sup>290</sup> Խեթա-հայասական փոխհարաբերությունների պատմական ետնախորքի և խեթա-հայասական հարաբերությունների մասին տես Ղազարյան 2009: 49-52; Քոսյան 2016ա: 116-133:

<sup>291</sup> Տեքստը տես Alp 1991: 298-301 (համար 96); նաև Քոսյան 2001: Նամակը հրատարակչի կողմից թվագրվում է Թուդիսալիյասի կառավարման շրջանով:

դունուվա լեռ, Սանախուխտտա, Տուպացցիյա և Վերին երկիր: Զորահավաքի լայն աշխարհագրությունը, ինչպես նաև նամակում ներկայացվող ակնհայտ տազնապալից իրավիճակը թույլ են տալիս ենթադրելու իրադրության ողջ լրջությունը: Հատկանշական է, որ Իսուվան "Շրջանաձև ներխուժման" մասնակից էր, սակայն վերոհիշյալ նամակը թույլ է տալիս ենթադրելու, որ այդ իրադարձությունից որոշ ժամանակ անց այստեղ վերահաստատվել էր խեթերի գերիշխանությունը և տվյալ պահին այն գտնվում էր Խաթթիի որոշակի ազդեցության տակ, քանի որ ստիպված էր գորաջոկատ տրամադրել խեթական արքային:

Այսպիսով, Առնուվանդաս I-ից հետո Խեթական տերությունը փաստացի տրոհվեց, ինչպես նվաճված երկրների ապստամբությունների և հարևանների կողմից խեթական տարածքների ասպատակությունների, այնպես էլ ներքաղաքական անկայունության հետևանքով: Տերության վերականգնման գործընթացը սկսեց նույն Թուդխալիյաս III-ը և ավարտեց նրա որդին՝ Սուպալիլուլիումաս I-ը՝ մ.թ.ա. XIV դարի կեսերին: Հենց այս վերջինիս կառավարումով էլ պիտի սկսվեր Խաթթիի պատմության նոր փուլը, երբ այն վերածվեց Առաջավոր Ասիայի անվիճելի առաջատար ուժի:

## ՍՈՒՊՊԻԼՈՒԼԻՈՒՄԱՍ I

Մ.թ.ա. XIV դարի կեսերին Խեթական տերության փաստացի տրոհման գործընթացը կանգ առավ, ինչպես ցույց տրվեց վերը, Թուդխալիյաս III-ի և նրա գահակից և հաջորդ Սուպալիլուլիումաս I-ի նպատակասլաց գործունեության շնորհիվ:

Նախկին տերության արևելյան շրջաններից Թուդխալիյաս III-ը սկսեց Խեթական պետության տարածքի վերականգնման գործընթացը, որը հանգամանորեն շարադրված է Թուդխալիյասի թոռան՝ Մուրսիլիս II-ի կողմից կազմված "Սուպալիլուլիումասի գործունեությունում": Ըստ դրա, Սամուխայից խեթերը պարբերաբար արշավանքներ էին կազմակերպում կասկերի, հայասացիների, իսուվացիների և Արևմտյան Փոքր Ասիայի երկրների դեմ: Սուպալիլուլիումա-

սը ակտիվորեն մասնակցում էր հոր արշավանքներին դեռևս արքայազնի կարգավիճակով, սակայն Թուղխալիյասի՝ պարբերաբար կրկնվող հիվանդության պատճառով վերջինս հաճախ ի վիճակի չէր լինում անձամբ գլխավորելու գործը: Երկրի վերամիավորումը սկսվեց Մամուխա քաղաքից, ուր, մայրաքաղաք Խաթթուսասի անկումից հետո, ժամանակավորապես տեղափոխվել էր արքայական նստավայրը, և հիմնականում ավարտվեց արդեն Մուպպիլուլիումնա I-ի կառավարման առաջին փուլում: Մուպպիլուլիումնասի գործունեությունը նկարագրող տեքստերը չեն հիշատակում ինչպես այդ գործընթացի ավարտը, այնպես էլ արքունիքի՝ Խաթթուսաս և վերադառնալու պահը: Վերանվաճելով կորցրած տարածքները, Մուպպիլուլիումնասն անցավ նոր նվաճումների ի հաշիվ ավանդական հակառակորդ Միտտանիի, այս անգամ արդեն Տավրոսից հարավ՝ Միրիայում, որը նախկինում Խաթթիի տիրապետությունից դուրս էր գտնվում:

### **Մուպպիլուլիումնասի գահակալումը**

Մուպպիլուլիումնա I-ը, ով ակտիվորեն օգնում էր հորը պատերազմներում և հաջորդեց նրան, իշխանության եկավ պալատական հեղաշրջման միջոցով:<sup>292</sup> Թուղխալիյաս III-ի շրջանի վերաբերյալ առկա աղբյուրները որպես նրա հաջորդ նշում են Թուղխալիյաս անունով արքայազնի, ով հիշատակվում է որպես “կրտսեր Թուղխալիյաս”: Սակայն ինչ-որ մի պահ այս Թուղխալիյասն այլևս չի հիշատակվում աղբյուրներում, փոխարենը առաջին պլան է մղվում արքայազն Մուպպիլուլիումնասը: Մուպպիլուլիումնասին հաջողվեց կազմակերպել պալատական հեղաշրջում, որի ընթացքում Թուղխալիյասը սպանվեց, իսկ նրա երկու եղբայրներն աքսորվեցին Ալասիա կղզի (Կիպրոս): Հեղաշրջումը և Թուղխալիյասի սպանությունը Մուպպիլուլիումնասի կողմից ուղղակիորեն հիշատակվում է Մուրսիլիա II-ի օրոք կազմված մի տեքստում, որն իրենից ներկայացնում է Խաթթիի բոլոր աստվածներին ուղղված աղոթք՝ կապված Խեթա-

---

<sup>292</sup> Մուպպիլուլիումնասի կողմից հեղաշրջման կազմակերպման և գահակալման խնդրի մասին տես De Martino 2010; Stavi 2011: 230-233:

կան տերությունում 20 տարի մոլեգնող համաճարակի հետ:<sup>293</sup> Այստեղ նշվում է, որ աստվածները պատժել են Մուպպիլուլիումասին և բոլոր այն անձանց, ովքեր ժամանակին մասնակցել էին Թուղխալիյասի սպանությանը:

Արդյոք հեղաշրջման կազմակերպիչը Մուպպիլուլիումասն էր, թե նրա մայրը՝ Տադուխեպան կամ մեկ այլ անձ, պարզ չէ: Հայտնի է միայն այն, որ „կրտսեր Թուղխալիյասի” մայրը՝ գործող թագուհի Սատանդուխեպան այլևս չի հիշատակվում աղբյուրներում, փոխարենը հայտնվում է նոր թագուհին՝ Տադուխեպան:<sup>294</sup> Ենթադրվում է, որ “կրտսեր Թուղխալիյասը” կարող էր նույնիսկ որոշ ժամանակ կառավարել, նախքան Մուպպիլուլիումասի կողմից գահազրկվելը:<sup>295</sup> Այդ մասին նշվում է Մուրսիլիսի վերոհիշյալ տեքստում, որտեղ ասվում է, որ Մուպպիլուլիումասը երդում էր տվել “կրտսեր Թուղխալիյասին”:

#### **Կախյալ երկրների համակարգի ձևավորումը**

Մուպպիլուլիումաս I-ը արտակարգ եռանդուն և նպատակասլաց անձնավորություն էր, ում օրոք Խեթական պետությունը հասավ իր հզորության գագաթնակետին: Արդեն վերջինիս միանձնյա կառավարման օրոք խեթերը վերանվաճեցին նախկին փոքրասիական տիրույթները, որին հաջորդեց նրա միտոսնական արշավանքների շարքը:

Մուպպիլուլիումաս I-ի կառավարման ընթացքում, շնորհիվ լայն նվաճողական քաղաքականության, ձևավորվեց Խաթթիից կախյալ երկրների համակարգ, որն ընդարձակ տիրույթների արդյունավետ կառավարման նոր մեխանիզմների ձևավորման կարիք ուներ: Հին թագավորության առաջին արքաների նվաճումները ի վիճակի էին միայն պարբերաբար ձեռնարկվող ուղղակի ռազմական միջամտության և նվաճված երկրներում նշանակալից ռազմական ուժի

<sup>293</sup> CTH 378.I (հրատ.՝ Götze 1930: 164-204; Singer 2002: 61-64 [թարգմ.]).

<sup>294</sup> De Martino 2010. Կարծիք է արտահայտվել այն մասին, որ Սատան(ն)դուխեպան կարող էր լինել նույն ինքը՝ Տադուխեպան (Alp 1991: 48-52), սակայն դա չի ընդունվում մասնագետների մեծամասնության կողմից:

<sup>295</sup> Dinçol *et al.* 1993: 99; Miller 2004: 9.

ներկայության շնորհիվ ժամանակավոր ազդեցություն ապահովելու: Խեթական գորքի վերադառնալուց հետո նվաճված երկրները սովորաբար դադարում էին կատարել իրենց կարգավիճակից բխող պարտավորությունները: Այդպես եղավ Խաթթունսիլիս I-ի և Մուրսիլիս I-ի արշավանքներից հետո: Մրանց շրջանում նվաճված երկրների հետ որևէ պայմանագիր չէր կնքվում: Հին թագավորության վերջին մի քանի արքաներ փորձեցին իրենց արտաքին քաղաքականությունը կառուցել նաև դիվանագիտական ճանապարհով: Այդպիսիների շարքին են պատկանում Տելեպինուսի, Տախուրվաիլիի, Յիդանտաս II-ի և Խուցցիյաս II-ի պայմանագրերը Կիցցուվատնայի արքաների հետ: Սակայն դրանք չի կարելի որակել որպես ոչ-պարիտետային պայմանագրեր, քանի որ այստեղ խոսքը հիմնականում երկու պետությունների միջև սահմանային խնդիրների կարգավորմանն էր վերաբերում:

Սուպպիլուլիումասի անմիջական նախորդները, սկսած Թուդխալիյաս II-ից, նշանակալից քայլեր կատարեցին փորձելով ամրապնդել Խաթթիի տիրապետությունը նվաճված երկրների նկատմամբ: Թուդխալիյասը և հատկապես նրա հաջորդ Առնուվանդաս I-ը, բացահայտ ուժի քաղաքականությունը ձգտում էին զուգակցել դիվանագիտության հետ: Այդ մասին են վկայում ինչպես արևմտյան Փոքր Ասիայի խեթահպատակ երկրների նկատմամբ Թուդխալիյասի գործունեությունը, այնպես էլ Վերին Եփրատի ավազանի ցեղապետությունների հանդեպ իրականացված միջոցառումները:

“Մադդուվատտասի մեղանշանքը” անվանումը կրող տեքստը վկայում է այն մասին, որ խեթական արքային բավարարում էր այս տարածաշրջանում կախյալ կառավարիչների վրա դրված պարտականությունները՝ չխախտել գոյություն ունեցող սահմանները, միմյանց դեմ չպատերազմել և այլն: Այս առումով ավելի հստակ տեղեկատվություն է պահպանել Առնուվանդաս I-ի և վերինեփրատյան երկրների փոխհարաբերություններն արտացոլող “Պախիսուվացի Միտասի” տեքստը: Այս ընդարձակ պատմական ներածական ունեցող և հրահանգի տեսքով կազմված տեքստը հստակ արտացոլում է Խաթթիի և նրա հպատակների միջև փոխհարաբերությունները: Ըստ



դրա, Խաթթիից կախյալ երկրները պարտավորվում էին հավատարիմ լինել խեթական արքային, չթաքցնել բուն խեթական տարածքից իրենց մոտ ապաստան գտած անձանց, չասպատակել հարևան խեթահպատակ շրջանները, առանց արքայի գիտության չհարաբերվել այլ երկրների հետ, ինչպես նաև զորաջոկատներ տրամադրել և նախքան խեթական արքայի զորքի ժամանելը դիմագրավել հակառակորդին:<sup>296</sup>

Առնուվանդասը փորձում էր պայմանագրերի միջոցով կարգավորել հարաբերությունները նաև հյուսիսի ավանդաբար անհանգիստ կասկական ցեղերի հետ:<sup>297</sup> Դատելով Հայասայի կառավարիչ Մարիյասի հետ Առնուվանդասի հաջորդ Թուդիսալիյաս III-ի կնքած պայմանագրից ("Մարիյաս"), այստեղ առկա են մոտավորապես միևնույն պարտավորությունները՝ հավատարմություն խեթական արքային, ռազմական օգնություն պատերազմի ժամանակ, երրորդ կողմի հետ չհարաբերվել և այլն:<sup>298</sup>

Նվաճված երկրների նկատմամբ վարվող քաղաքականության կարևոր բաղկացուցիչ մասն էր նաև զենքի ունակ բնակչության մի մասի բռնի տեղահանությունը և վերաբնակեցումը Խաթթիի տարբեր շրջաններում: Առաջինը Թուդիսալիյաս II-ի կողմից Ասսուվայից Խաթթի բերված հազարավոր զինվորների և մարտակառքերի կառավարների տեղահանությունն էր (տես վերը՝ Թուդիսալիյաս II): Այս քաղաքականությունը շարունակվեց նաև հետագայում: Վերաբնակիչների մի մասը բնակեցվում էր այն շրջաններում, որոնք այս կամ այն պատճառով նախկինում բնակաթափ էին եղել, օրինակ, հյուսիսում՝ կասկական ցեղերի ասպատակությունների պատճառով:

Խաթթիի և նրա տիրապետության կամ քաղաքական ազդեցության տակ գտնվող երկրների նկատմամբ վարվող քաղաքականությունը շարունակվեց նաև հետագա արքաների կողմից, ինչը հատկապես վառ դրսևորում գտավ արդեն Սուպլիլուլիուս I-ի և նրա

---

<sup>296</sup> Տեքստում պահպանված պարտավորությունների մասին տես Քոսյան *և այլք* 2018: 14-33:

<sup>297</sup> Կասկական ցեղերի հետ կնքված պայմանագրերը տես Von Schuler 1965: 109-151:

<sup>298</sup> Քոսյան 2016ա: 61-65:

հաջորդների օրոք (Մուրսիլիս II, Մուվատալլիս II, Խաթթուսիլիս III և Թուղխալիյաս IV): Մուպպիլուլիումասի ջանքերով ստեղծված անծայրածիր տերությունը կազմակերպական նոր եղանակների կարիք ուներ: Բացառությամբ բուն խեթական տարածքների, նրա մեջ էին մտնում ընդարձակ շրջաններ, որտեղ գոյություն ունեին տեղական արքայատոհմերի կողմից կառավարվող մանր թագավորություններ: Նորանվաճ երկրների, ինչպես նաև նախկինում Խաթթիի ազդեցության տակ գտնվող երկրների ինտեգրումը Տերության քաղաքական համակարգի մեջ սկսեց լայնորեն ներդրվել հենց Մուպպիլուլիումաս I-ի կողմից: Նրա օրոք սկսեց կիրառվել դինաստիական ամուսնությունների միջոցով այսպես կոչված „քույր-թագավորությունների“ ստեղծման պրակտիկան:<sup>299</sup>

Այդպիսի նպատակ էր հետապնդում նորանվաճ կամ նախկինում խեթերի վերահսկողության տակ գտնվող շրջաններում Խաթթիից կախյալ թագավորությունների կազմավորումը: Սկիզբ առնելով Մուպպիլուլիումասից, այն լայն թափ ստացավ Մուրսիլիս II-ի օրոք: Դա թույլ տվեց Խաթթիի տիրակալներին Տերության բնօրրանին անմիջականորեն հարող կամ նույնիսկ զգալի հեռավորության վրա գտնվող երկրներում խեթական արքայատոհմի հետ ազգակցական կապերով կապված տեղական արքաների և այլ կարգավիճակ ունեցող կառավարիչների ենթակայության տակ գտնվող քաղաքական միավորների լայն շղթա ստեղծել: Ընդ որում, համաձայն դրանց հետ կնքվող պայմանագրերի, հենց այդպիսի ամուսնություններից ծնված արքայազնը պետք է ժառանգեր գահը: Այդպիսի դինաստիական կապեր հաստատվեցին Միտտանիի, Ամուրրուի, Սեխա գետի երկրի, Խապալայի, Միրա-Կուվալիյայի, Հայասայի, Իսուվայի և այլ երկրների արքայատոհմերի միջև: Ընդ որում այդպիսի ամուսնությունների պրակտիկան սկսվեց Հայասայի կառավարիչ Խուկկանասաի և Մուպպիլուլիումասի քրոջ ամուսնությամբ:

Բացի դինաստիական ամուսնությունների պրակտիկայի ներդրումից, Մուպպիլուլիումասը Խաթթիի ազդեցության տակ գտնվող

---

<sup>299</sup> Խաթթիի արքաների կողմից ներդրված դինաստիական ամուսնությունների պրակտիկայի մասին մ.թ.ա. XIII դարի կեսերին տես Houwink ten Cate 1996:

կարևոր ռազմավարական գոտիներում նշանակում էր ժառանգական իշխանությամբ օժտված կառավարիչների՝ արքայատոհմի անդամներից: Այսպես, նա իր որդիներից երկուսին նշանակեց Տերության հարավային սահմաններին մոտ գտնվող շրջանների ժառանգական արքաներ: Տելեպիևուսին հանձնվեց Կիցցուվատնան (Կիլիկիա), իսկ Պիյասսիլիին՝ Կարգամիսը (Հյուսիսային Միդիայում Միտտանիից նվաճված շրջանները):

Խաթթիից կախյալ երկրների նկատմամբ Սուլպիլուլիումասի քաղաքականությունը ամրագրվում էր ոչ-պարիտետային պայմանագրերով: Փաստացի, կախյալ երկրների վրա դրված պարտավորությունները գրեթե նույնն էին, որոնք առկա էր շուրջ կես դար առաջ Թուդիսալիյաս II-ի և Առնուվանդաս I-ի կողմից ենթակա քաղաքական միավորների նկատմամբ կիրառվող քաղաքականությունը ամրագրող պայմանագրերում կամ հրահանգներում: Դրանք հիմնականում հանգում էին հետևյալ կետերին.

1) Հավատարմությունն արքայի անձի, արքայական ընտանիքի անդամների, նրա սերնդի և Խաթթիի հանդեպ:

2) Պատերազմի դեպքում ռազմական աջակցություն. զորք տրամադրելուց բացի, կախյալ արքան պարտավոր էր նաև պատերազմի ժամանակ հանդես գալ որպես առաջապահ ուժ:

3) Արգելք երրորդ կողմի հետ ինքնուրույն հարաբերությունների վրա:

Ժամանակագրական առումով այդպիսի ամենավաղ պայմանագիրը կնքվել էր Հայաստանի կառավարիչ Խուլկանասի հետ (տես վերը): Հաջորդը Նուխաշշեի արքա Տետտեի հետ կնքված պայմանագիրն է, այնուհետև՝ Ուգարիտի արքա Նիքմադու II-ի և Ամուրրուի արքա Ազիրուի հետ: Եվ, իհարկե, սրանք շարքին պետք է դասել Միտտանիի արքա Շատտիվագայի պայմանագիրը, որը, չնայած կողմերի վերցրած պարտավորություններն իրավական ձևակերպման առումով զգալիորեն տարբերվում են վերոհիշյալ պայմանագրերից, այնուամենայնիվ զգացվում է Շատտիվագայի կախյալ կարգավիճակը:

Ըստ դրանց, կախյալ երկրներին արգելվում էր միմյանց դեմ պատերազմներ մղել: Այսպես, օրինակ, Խապալլայի արքա Տարգաս-

նալիսի հետ Մուրսիլիս II-ի կնքած պայմանագրում ("Տարգասնալիս") ասվում է հետևյալը.

*"Հիմա իմ տերության ներսում երեք ազատ մարդիկ կան. դու՝ Տարգասնալիսը, Մասիտուիլուվասը (Միրայի արքան) և [Մանապաթարխունտասը (Մեխա գետի երկրի արքան)]: Ոչ մեկը չպիտի վիճի մյուսի հետ, ոչ էլ [փախչի] մյուսի մոտ որպես ենթակա/կախյալ անձ: [Եվ մեկը] չպիտի վիճի մյուսի հետ: Եթե նա գնա որևէ մեկի մոտ, նա պետք է [վտարի] նրան: [Եվ մեկը մյուսի] հետ չպիտի վիճի և ոչ էլ ձգտի սպանել մյուսին կամ ձերբակալել: Եվ եթե դու, Տարգասնալիս, [վնասես] նրանց, ես նրանց կպաշտպանեմ: Դու կդառնաս իմ թշնամին: Իսկ եթե նրանք վնասեն [քեզ], ես կպաշտպանեմ քեզ: Նրանք [կդառնան իմ թշնամիները]:"<sup>300</sup>*

Միննույն պահանջն առկա է նաև Մուրսիլիսի և Միրա-Կուվալիյայի արքա Կուպանտա-Կուրունտայի միջև կնքված պայմանագրում:

Հատկանշական է կախյալ երկրների արքաների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: Դրանք կազմվում էին խեթական մայրաքաղաքի արքունի գրիչների կողմից՝ Մեծ արքայի հանձնարարությամբ, ընթերցվում նրա մոտ, և միայն դրանից հետո ուղարկվում էին հասցեատերերին ի ղեկավարումն: Այդպիսի պայմանագրերի կետերն այլևս փոփոխման ենթակա չէին: Այս առումով հատկանշական է Մուվատալիս II-ի և Վիլուսայի կառավարիչ Ալաքսանդուսի միջև կնքված պայմանագրի համապատասխան հատվածը.

*"Ալաքսանդուս, այս աղյուսակը (պայմանագիրը - Ա.Ք.), որ ես պատրաստեցի քո համար, պիտի ընթերցվի քո առջև տարեկան երեք անգամ և դու, Ալաքսանդուս, պետք է իմանաս դա":<sup>301</sup>*

Բավական սուղ են խեթական աղբյուրներում տեղեկությունները կախյալ երկրների վրա դրվող հարկերի մասին: Դրանք պահպանվել են պայմանագրերից մեկում և մի շարք արքայական նամակներում՝ ուղղված սիրիական կախյալ պետությունների կառավարիչներին:

---

<sup>300</sup> Beckman 1996: 66.

<sup>301</sup> Beckman 1996: 86.

Այսպես, Մուպպիլուլիումաս I-ի և Ամուրբուի (Փյունիկիա) արքա Ազիբուի միջև կնքված պայմանագրում ("Ազիբու") վերջինս պարտավոր էր խեթական արքային տարեկան վճարել 300 սիկլ բարձրորակ ոսկի:<sup>302</sup> Մովորաբար, ոչ հավասարազոր պայմանագրերում տարեկան հարկի չափը խեթերը չէին արձանագրում: Ավելի շատ տեղեկատվություն է պահպանվել արքայական նամակներում:

Մուպպիլուլիումաս I-ի հռչակագրում<sup>303</sup> հիշատակվում է Ուգարիտի արքա Նիքմադուի հարկի չափը: Այն կազմում է 12 մինա և 20 սիկլ ոսկի և մեկ ոսկե գավաթ, ինչպես նաև բուրդ (500 սիկլ կապտաբոսորագույն և 500 սիկլ կարմրա-բոսորագույն երանգի) և գործվածքեղեն. այս բոլորը անձամբ խեթական արքայի համար: Դրան հավելվում էր թագուհուն հասանելիք հարկը (30 սիկլ կշռող ոսկե գավաթ և 100-ական սիկլ կշռի կապտա-բոսորագույն և կարմրա-բոսորագույն երանգի բուրդ): Բացի այդ, Ուգարիտը պարտավորվում էր ոսկե գավաթներ, գործվածքեղեն և բուրդ հատկացնել գահաժառանգին և այլ պաշտոնատար անձանց: Մեկ այլ տեքստում, որը ենթադրվում է, որ նախորդ տեքստում հիշատակվող հարկի չափի վերանայված տարբերակն է, որոշակիորեն տարբերվում է այնտեղ ներկայացված մուծումից:<sup>304</sup> Նման բովանդակությամբ մեկ այլ տեքստում (Մուրսիլիս II-ի հռչակագիրը) ներկայացված է կրկին Ուգարիտից ստացվող հարկի չափը:<sup>305</sup>

Ամենայն հավանականությամբ սա միանվագ մուծում էր, այլ ոչ թե տարեկան հարկ, ինչի մասին ակնարկում է օգտագործվող "նվեր" բառը: Հետաքրքիր է այստեղ տեղ գտած հետևյալ կետը: Եթե Խաթթիի արքան գա Ուգարիտ, վերջինիս արքան ցանկության դեպքում կարող է նրան նվեր մատուցել, իսկ եթե այդպիսի ցանկություն չունի, ապա կարող է և չմատուցել:

---

<sup>302</sup> Beckman 1996: 33. Հետաքրքիր է, որ պայմանագրում հստակ նշվում է այն մասին, որ այդ հարկը պետք է չափվեր համաձայն Խաթթիում ընդունված կշռային հարաբերության:

<sup>303</sup> Beckman 1996: 151-153 (համար 28A).

<sup>304</sup> Beckman 1996: 153-154 (համար 28B).

<sup>305</sup> Beckman 1996: 160-162 (համար 31B).

Մուպպիլուլիումասի կառավարման շրջանում ներդրված այս քաղաքականությունն ընդհատվեց նրա մահից հետո ստեղծված քաղաքական բարդությունների պատճառով և վերականգնվեց միայն Մուրսիլիա II-ի վարած հաղթական պատերազմներից հետո:

### **Մուպպիլուլիումասը արևելքում**

Մակայն նախքան Տավրոսից հարավ հարձակողական գործողություններին անցնելը անհրաժեշտ էր կարգավորել հայասական խնդիրը: Հայասան և Իսուվան արևելքում Խաթթիի անմիջական հարևաններն էին, որոնք “Շրջանաձև ներխուժման” ժամանակ խեթական տարածքներ էին նվաճել և, դատելով աղբյուրներից, սրանց տարածքում վերաբնակվել էր նաև Խաթթիից փախած զգալի քանակությամբ բնակչություն:

Մուպպիլուլիումասը ազգեցի ազնվական Խուկկանասին նշանակեց Հայասայի կառավարիչ, նրա հետ կնքելով պայմանագիր:<sup>306</sup> Պայմանագրի տեքստը հնարավորություն չի ընձեռում վստահաբար վերականգնելու դրա կնքմանը նախորդած իրադարձությունները: Համենայնդեպս դրանք չի կարելի բարիդրացիական համարել, քանի որ պայմանագրում հիշատակվում է խեթական արքայի հոր (Թուդխալիյաս III) կողմից Հայասայի արքա Մարիյասի մահապատիժը Խաթթուսասում:

Համաձայն “Մուպպիլուլիումասի գործունեության” համապատասխան հատվածի, Թուդխալիյաս III-ի օրոք և արքայազն Մուպպիլուլիումասի անմիջական մասնակցությամբ, Կումմախայի մոտ տեղի էր ունեցել ճակատամարտ Հայասայի արքա Կարաննիսի և խեթերի միջև: Չնայած վնասվածքի պատճառով տեքստն ընդհատվում է ճակատամարտի ելքն ակնկալող մասում, համընդհանուր կարծիք կա այն մասին, որ դրանից հետո Հայասան հայտնվել էր Խաթթիի գերիշխանության տակ: Նման եզրակացության համար հիմք է ծառայում Հայասայի հետ կնքված պայմանագիրը, որը չէր

---

<sup>306</sup> Մուպպիլուլիումասի և Հայասայի կառավարիչ Խուկկանասի միջև կնքված պայմանագրի, դրա պատմական ետնախորքի, Հայասայի արքայատոհմի և Հայասայի վրա դրված պարտավորությունների մասին տես Քոսյան 2016ա; 2016բ:

կարող տեղի ունենալ Հայասայի դեմ մղված պատերազմում հաջողության բացակայության դեպքում: Իրոք, ըստ պայմանագրի, Խուկկանասը նշանակվել էր Հայասայի կառավարիչ Սուպայիլուլիումասի կողմից, ինչի մասին ակնարկում է դրա ներածական մասը.

*“Այսպես (ասում եմ) Արևս՝ Սուպայիլուլիումասը, Խաթթիի արքան: Տես, քեզ՝ Խուկկանայիդ, շարքային հերոսիդ ես բարձրացրեցի և քեզ ազնվական դարձրեցի: Խաթթուսասում քեզ հայասացիների շարքում բարի կամքով ընտրեցի և քրոջս քեզ կամովին կնության տվեցի: Քո մասին ողջ Խաթթի երկիրը, [Հայ]ասա երկիրը և երկրները բոլոր՝ „հարևան, ու „ներքին,, լսեցին: Դու՝ Խուկկանա, միայն Արևիս կամովին պիտի ճանաչես որպես տեր: Եվ որդուս, ում Արևս կասեմ՝ ‘Բոլորդ սրան պիտի ճանաչեք’: Եվ նրան կընտրեմ, դու, Խուկկանա, նրան ճանաչ[իր]:”<sup>307</sup>*

Հայտնի չէ նաև Խուկկանասի առնչությունը Հայասայի նախկին արքաների հետ (Կարաննիսի և Մարիյասի): Պարզ է միայն, որ Խուկկանասը կարող էր խնամիական կապ ունենալ առնվազն Մարիյասի հետ, եթե հաշվի առնենք պայմանագրի տեքստում նրա դստեր և Մարիյասի՝ ամուսիններ լինելու մասին հիշատակությունը:

Հայասայի հետ պայմանագիրը նշանակում էր, որ Սուպայիլուլիումասին հաջողվել էր ամբողջությամբ վերականգնել բուն Փոքր Ասիայում և դրան արևելքից հարող շրջաններում խեթերի ազդեցությունը:

### **Սուպայիլուլիումասը և Միտտանին. Եգիպտական միջադեպը**

Դատելով հետագա իրադարձություններից, արքան հեռուն գնացող արտաքին քաղաքական ծրագրեր ուներ՝ կապված Տավրոսի լեռնաշղթայից հարավ ընկած տարածքների հետ, որոնք գտնվում էին Միտտանիի գերիշխանության տակ: Անկախ այն հանգամանքից, որ Միտտանին այս շրջանում արդեն նախկին հզորությունը չուներ, սակայն դեռևս տիրում էր խոշոր տարածքների Հյուսիսային Միդիայում ի դեմս բազմաթիվ ենթակա փոքր քաղաքական միավորների: Բացի այդ, Միտտանին վաղուց ի վեր դաշնակցային հարաբե-

<sup>307</sup> Քոսյան 2016ա: 21:

բություններ էր հաստատել Եգիպտոսի հետ: Այնուամենայնիվ, դա չխանգարեց Սուլպպիլուլիումասին նպատակաւալաց կերպով անցնել իր ծրագրերի իրագործումը:

Նա փորձեց օգտվել Միտտանիում ստեղծված նպաստավոր իրավիճակից կապված արքայատոհմի ներսում ընթացող գահակալական պայքարից: Բանն այն է, որ Միտտանիի արքա Շուտտարնա II-ի մահից հետո նրա երկու որդիների միջև սկսվել էր գահակալական պայքար: Ավագ որդի Արտաշումարան սպանվել էր զորավար Ուտիսի կողմից և իշխանության էր եկել կրտսեր որդի Տուշրաթթան: Մակայն արքայատոհմի մեկ այլ անդամ՝ Արտադաման պայքար սկսեց Տուշրաթթայի դեմ: Այս իրավիճակում Սուլպպիլուլիումասը վճռեց միջամտել Միտտանիի ներքին գործերին՝ իր ազդեցությունը տարածելու ակնկալիքով: Բնական է, որ Սուլպպիլուլիումասը պետք է փորձեր հարաբերվել Տուշրաթթայի հակառակորդ Արտադամայի հետ, ինչը և կատարվեց, որով Տուշրաթթայի դիրքերը որոշակիորեն սասանվեցին: Սուլպպիլուլիումասը Արտադամային անվանում էր “Մեծ արքա”, այդպիսով ճանաչելով նրան որպես Միտտանիի արքա:

Խեթերի հակամիտտանական գործողությունները սկսվեցին Միտտանիից կախյալ հյուսիսսիրիական Նուխաշշե պետության ապստամբությունից ընդդեմ Տուշրաթթայի: Նուխաշշեի արքա Շարրուպշին հարեց Սուլպպիլուլիումասին և միտտանական զորքի պատժիչ արշավանքին դիմագրավելու նպատակով խեթական արքան զորք ուղարկեց նրան աջակցելու:

Այս նույն շրջանում ծագեց Բուուվայի խնդիրը: Վերջինս արդեն երկար տասնամյակներ ավանդաբար կապված էր Միտտանիի հետ, ինչն արձանագրված է Թուդիսալիյաս II-ի և Կիցցուվատնայի արքա Սունասսուրայի միջև կնքված պայմանագրում (“Սունասսուրա”): Հայտնի չէ արդյոք արշավանքի առիթը իսուվացիներն էին տվել, թե խեթերը փորձում էին հերթական հարվածը հասցնել Միտտանիին, այս անգամ հյուսիսից: Ինչպիսին էլ որ լիներ դեպի Բուուվա կազմակերպված արշավանքի ենթատեքստը, հայտնի է, որ այն ավարտվեց լիակատար հաջողությամբ:



Մուպպիլուլիումսար մտավ Իսուվա և Խաթթի վերադարձրեց նախկինում այստեղ ապաստան գտած խեթական բնակչությանը:

Ահա այսպես է նկարագրում արքան իր իսուվական արշավանքը. *“Ես անցա Եփրատը և գնացի Իսուվա երկիր: Երկրորդ անգամ ես հաղթեցի Իսուվա երկրին և երկրորդ անգամ նրանց դարձրեցի իմ ենթակաները: Կուրտալիսսայի ջոկատները, Արավաննայի ջոկատները, Ջազզիսա երկիրը, Կալասմա երկիրը, Տիմանա երկիրը, Խալիվա լեռը, Կարնա լեռը, Տուրմիտտայի ջոկատները, Ալխա երկիրը, Խուրմա երկիրը, Խարանա լեռը, Թեգարամա երկրի կեսը, Տեպուրզիյայի ջոկատները, Խազկայի ջոկատները, Արմատանայի ջոկատները, այս ջոկատներին և երկրներին ես հաղթեցի և վերադարձրեցի Խաթթի ... Բոլոր ժողովուրդները, որոնց ես ազատեցի, միավորվեցին իրենց ժողովուրդների հետ և Խաթթին միացրեց նրանց տարածքները”*:<sup>308</sup>

Իսուվայից խեթական գորքը ընթացավ Հայասա և այնտեղից Խաթթի վերադարձրեց խեթական բնակչությանը, որը նախկինում հեռացել և բնակություն էր հաստատել այստեղ:<sup>309</sup>

Իսուվայից հետո խեթական գորքը ընթացավ դեպի Հյուսիսային Միդիա ընկած ճանապարհին գտնվող Ալզի (հայկ. Աղձնիք): Ալզին գրավվեց, ներառյալ դրա Կուսմար անունով շրջանը, որը Մուպպիլուլիումսար, իր իսկ խոսքերով, նվիրեց Ալզիի կառավարիչ Անտարատիին (կարող է ընթերցվել նաև Անտարատայ): Այնտեղից էլ նա շարժվեց դեպի Միտտանի (“Մուպպիլուլիումսա - Շատտիվազա”), մուտք գործեց նրա մայրաքաղաք Վաշշուկաննիի մերձակայքը և ռազմավար տարավ (անասուններ և գերիներ). Միտտանիի արքա Տուշրաթթան հեռացավ՝ դիմադրություն ցույց չտալով:<sup>310</sup>

Այնուհետև խեթական գորքը ընթացավ դեպի արևմուտք՝ մեկը մյուսի ետևից գրավելով Միտտանիին ենթակա քաղաքական միա-

<sup>308</sup> Beckman 1996: 39.

<sup>309</sup> Güterbock 1956: 83-84 (Դիպված 25)(տես նաև Քոսյան 2016ա: 96-101; Kosyan 2021.

<sup>310</sup> Խեթա-միտտանական այս բախման մասին հիշատակվում է Տուշրաթթայի՝ Եզիպտոսի փարավոն Ամենհոտեպ III-ին ուղղված նամակում, որտեղ Միտտանիի արքան նշում է իր հաղթանակի մասին (Knudtzon 1915: 131-134; Moran 1992: 41-42): Այս արշավանքի մանրամասների մեկնաբանության համար տես Gurney 1979: 157:

վորները: Որոշ դեպքերում դրանց կառավարիչները իրենք էին հայտնում իրենց ցանկությունը ենթարկվելու Սուպալիլուլիումասին: Արշավանքի արդյունքում խեթերի վերահսկողությունը հաստատվեց Հալեպի, Սուկիշի, Նիյայի, Նուխաշշեի, Ուզարիտի, Կինձայի (Քադեշ), Աբինայի (Դամասկոսի շրջանը) նկատմամբ, ըստ տեքստի՝ “Նիբլանի (Լիբանանի – Ա.Ք.) լեռներից մինչև Եփրատ“: Այն բոլոր տեղական կառավարիչները, ովքեր դիմադրություն էին ցույց տվել, ընտանիքներով հանդերձ տարվեցին Խաթթուսաս: Այս տարածաշրջանի միակ կարևոր կենտրոն Կարգամիսն էր առայժմ մնում անվաճ:

Այսպիսով, իր այս արշավանքի ընթացքում խեթական արքան նվաճեց գրեթե ողջ Հյուսիսային Սիրիայի տարածքը ընդհուպ մինչև Դամասկոս, գրկելով Տուշրաթթային իր պետության կարևոր շրջաններից և կտրելով Եգիպտոսի հետ կապից:

Ձգտելով ամրապնդել իր գերիշխանությունը նորանվաճ երկրների նկատմամբ, դեռևս նախքան Միտտանիի վերջնական նվաճումը, Սուպալիլուլիումասը նրանց կառավարիչների հետ կնքեց կախյալ պայմանագրեր, որոնք պետք է կարգավորեին Խաթթիի հետ հարաբերությունները: Որոշ ժամանակ անց, ցանկանալով էլ ավելի ամուր կերպով հիմնավորվել Սիրիայում, նա իր որդիներից Տելեպիհնուսին նշանակեց Հալեպի արքա:

Նախքան Միտտանիի դեմ վճռական արշավանք կազմակերպելը, Սուպալիլուլիումասը վերադարձել էր Խաթթուսաս, ինչից որոշեց օգտվել Տուշրաթթան: Նրա գորքը փորձեց վերանվաճել սիրիական տարածքները, սակայն անհաջողության մատնվեց և ստիպված էր նահանջել, իսկ Տելեպիհնուսը գրավեց Կարգամիսին պատկանող տարածքները և Արցիյան:<sup>311</sup> Տելեպիհնուսը որոշ ժամանակով ստիպված էր գնալ Փոքր Ասիա՝ հոր հետ հանդիպելու, ինչից օգտվեցին թե Տուշրաթթան, թե Եգիպտոսի փարավոն Թութանխամոնը: Միտտանական գորքը պաշարեց Մուրմուրիգա քաղաքում գտնվող փոքրաթիվ խեթական կայազորը, իսկ եգիպտացիները՝ Կինձան: Ահա այս-

---

<sup>311</sup> Güterbock 1956: 92 (Դիպված 28).

պիսի իրավիճակում Սուպպիլուլիումասը վերջապես վճռեց անցնել ակտիվ ռազմական գործողությունների, պատերազմ սկսելով ընդդեմ Միտտանիի, որը սովորաբար անվանում են Սիրիական երկրորդ պատերազմ:<sup>312</sup>

Սուպպիլուլիումասը Սիրիա ուղարկեց թագաժառանգ Աոնուվանդասին, որպեսզի վերջինս նախքան իր ժամանելը կարգավորի այնտեղ ծագած խնդիրները: Միաժամանակ խեթական բանակի մի միավորում՝ գորավար Լուպակկիի և Թարխունդացավմայի գլխավորությամբ շարժվեց դեպի Կենտրոնական Սիրիա, որը հարվածեց Եգիպտոսի տիրապետության տակ գտնվող Ամքա երկրին: Այս գործողության պատճառը խեթական արքայի վրդովմունքն էր եգիպտացիների կողմից Կինձայի պաշարման կապակցությամբ:<sup>313</sup>

Ամքայի վրա հարձակման շրջանում տեղի ունեցավ մի հետաքրքիր իրադարձություն՝ կապված մահացած փարավոն Թութանխամոնի այրի Անխեսենամոնի դեսպանության հետ, որի հետևանքով շուտով պետք է սրվեին Խաթթիի և Եգիպտոսի փոխհարաբերությունները:

Ըստ “Սուպպիլուլիումասի գործունեության”, վերջինս խեթական արքային խնդրել էր իր որդիներից մեկին ուղարկել Եգիպտոս՝ որպես իրեն ամուսին և փարավոն: Ահա թե ինչ էր գրել փարավոնուհին.

*“Ես որդի չունեմ, բայց նրանք ասացին, որ դու շատ որդիներ ունես: Նա իմ ամուսինը կդատնա: Ես իմ ծառային չեմ վերցնի և ինձ ամուսին դարձնի.”*<sup>314</sup>

Լինելով կասկածամիտ անձնավորություն, Սուպպիլուլիումասը իր մերձավորներից Խաթթուսացիտիին փարավոնուհու դեսպան Խանիի հետ միասին ուղարկեց Եգիպտոս, որպեսզի նա տեղում համոզվի այդ առաջարկի անկեղծության մեջ: Նրա կարծիքով, եգիպտացիները խեթական արքայազնին իրենց երկիր տանելով, փորձում

---

<sup>312</sup> Արշավանքի մասին “Սուպպիլուլիումասի գործունեության” համապատասխան հատվածը կորսված է և այդ մասին առկա է ընդամենը երկու աղբյուր՝ “Շատտի-վազա”-ի և “Տետտե”-ի պայմանագրերը:

<sup>313</sup> Güterbock 1956: 93-94 (Դիպված 28).

<sup>314</sup> Güterbock 1956: 94 (Դիպված 28).

էին այդ ճանապարհով ազդեցություն ձեռք բերել Խաթթիի նկատմամբ:

Իսկ այդ ընթացքում նա պաշարեց Կարգամիսը և մի քանի օր անց գրավեց այն: Կարգամիսի կառավարիչ նա նշանակեց իր որդիներից Պիյասսիլիին (խուրրիական անունը՝ Շարրի-Կուշուկ):<sup>315</sup> Ավելի ուշ Սիրիայի հյուսիսում նա ստեղծեց քույր-թագավորություն՝ Կարգամիս մայրաքաղաքով, իսկ Պիյասսիլին դարձավ դրա ժառանգական արքան: Կարգամիսի թագավորությանը վերապահված էին մեծ լիազորություններ Խաթթիի հյուսիսիրիական տիրույթների անվտանգության, ինչպես նաև Խաթթիից կախյալ հարևան քաղաքական միավորների նկատմամբ վերահսկողության հարցերում:

Ինչ վերաբերում է փարավոնուհու ծրագրին, ապա այն չիրականացավ: Եգիպտոսի սահմանների մոտ Սուպպիլուլիումասի չորրորդ որդին՝ Ցաննանցան դավադրաբար սպանվեց, թերևս, հետագայում փարավոն դարձած Էյեյի հանձնարարությամբ: Հետագայում Էյեն խեթական արքային ուղղված նամակում հավաստիացնում էր նրան, որ ինքը մասնակցություն չի ունեցել արքայազնի սպանությանը, դրանով իսկ փորձելով կանխել Սուպպիլուլիումասի վրեժխնդրությունը:<sup>316</sup> Մակայն նախքան այդ, ստանալով արքայազնի մահվան լուրը, Սուպպիլուլիումասը հրամայեց խեթական զորքին թագաժառանգ Առնուվանդասի գլխավորությամբ արշավել Եգիպտոսի կողմից վերահսկվող Հարավային Սիրիա (Ամքա), ով այնտեղ խոշոր ավերածություններ կատարեց և հազարավոր ռազմագերիներ տարավ Փոքր Ասիա<sup>317</sup>:

Այս իրադարձությունների ընթացքում Միտտանիում Տուշրաթթայի դեմ դավադրություն կազմակերպվեց, որի արդյունքում նրա որդին՝ Շատտիվազան սպանեց հորը: Եվ քանի որ Տուշրաթթայի կողմնակիցները դուրս եկան ընդդեմ Շատտիվազայի, վերջինս ստիպված էր փախչել Խաթթի՝ ակնկալելով Սուպպիլուլիումասի ա-

<sup>315</sup> Güterbock 1956: 95-96 (Դիպված 28).

<sup>316</sup> KUB XIX 20 (տեքստի ամբողջական հրատարակությունը տես Hout den 1994). Այս նամակը Սուպպիլուլիումասի պատասխանն է Էյեյից ստացած նամակին:

<sup>317</sup> Güterbock 1956: 111 (Դիպված 36).

ջակցությունը: Մուպպիլուլիումասն օգտվեց հարմար առիթից և ակտիվորեն միջամտեց միտտանական գործերին: Խեթերի օգնությամբ Շատտիվազան նշանակվեց Միտտանիի արքա և նրան կնության տրվեց Մուպպիլուլիումասի դուստրերից մեկը: Շատտիվազայի հետ կնքվեց պայմանագիր, որով Միտտանին վերածվեց Խաթթիի դաշնակցի՝ կախյալ կարգավիճակով: Միտտանիից վերցվեցին մի շարք քաղաքներ արևմուտքում և հանձնվեցին Կարգամիսի թագավորությանը: Ի դեմս Կարգամիսի և կախյալ Միտտանիի, խեթերը լուծեցին երկու կարևոր խնդիր: Առաջինը կայուն ներկայությունն էր տնտեսական մեծ նշանակություն ունեցող Միրիայում, երկրորդը՝ գլխավոր հակառակորդ Եգիպտոսի դեմ ամուր արգելապատնեջի ստեղծումը: Այսուհետև Կարգամիսը և Միտտանին պետք է համատեղ իրականացնեին եգիպտական ճակատի (իսկ քիչ ավելի ուշ՝ նաև ասորեստանյան) վերահսկողությունը:

Միտտանիի մասնատումը այս երբեմնի տերությունը վերածեց խեթերից կախյալ երկրորդական պետության: Միտտանիի հյուսիսային շրջաններն ընկան Ասորեստանի և Ալգիի տիրապետության տակ, որոնք նախկինում Միտտանիից կախյալ կարգավիճակ ունեին: Միտտանիի թուլացումից հատկապես շահեց Ասորեստանը, որն այսուհետև շարունակաբար ձգտելու էր տարածվել դեպի արևմուտք: Խաթթիի համար իրավիճակը բարդացավ կապված դեռևս Տուշրաթթայի օրոք նրա դեմ գործող միտտանական գահի հավակնորդ Արտադամայի հետ Մուպպիլուլիումասի կնքած համաձայնագրի խախտման հետևանքով: Արտադամայի որդի Շուտտարնան պայքար սկսեց Շատտիվազայի դեմ և վերջինս ստիպված էր ապաստան գտնել Խաթթիում: Շուտտարնան դարձավ Միտտանիի արքա և, փորձելով դաշնակիցներ գտնել ընդդեմ Խաթթիի, մերձեցավ Ասորեստանի հետ:

Այս իրավիճակում Մուպպիլուլիումասն անցավ կտրուկ գործողությունների: Նա Շատտիվազային ուղարկեց Կարգամիս, որպեսզի Պիյասսիլիի հետ միասին նախապատրաստեն Միտտանիի վերանվաճումը և Շատտիվազային վերականգնեն որպես արքա: Արշավանքը դեպի Վաշշուկաննի հաջող ընթացք ունեցավ և Շատտիվա-

զան կրկին նստեց Միտտանիի գահին: Ասորեստանի արքա Աշշուրուբալլիտ I-ը նախընտրեց խուսափել խեթերի հետ առճակատումից և նահանջեց:

## ՄՈՒՐՄԻԼԻՍ II

### Տերության վերականգնումը

Փոքր Ասիայից Մուպպիլուլիումասի տևական բացակայությունից՝ կապված միտտանական և սիրիական գործերի հետ օգտվեցին Խաթթիի անմիջական հարևանները՝ հյուսիսի կասկական ցեղերը և Արևմտյան Փոքր Ասիայի պետությունները, որոնք միավորված էին Արցալա հավաքական անվանումը կրող միության մեջ: Մուպպիլուլիումասը չհասցրեց լուծել այդ խնդիրները, դրանք թողնելով իր հաջորդներին: Թերևս, այս շրջանում Փոքր Ասիայում սկսված նոր համաճարակի բռնկումն էր պատճառը, որ խեթերը հնարավորություն չունեցան ավարտին հասցնելու ինչպես փոքրասիական, այնպես էլ եգիպտական խնդիրները: Շուտով Մուպպիլուլիումասը, իսկ քիչ անց նրան փոխարինած ավագ որդի Առնուվանդաս II-ը, զոհ գնացին համաճարակին: Վերջինիս մահվանից հետո գահ բարձրացավ Մուպպիլուլիումասի կրտսեր որդին՝ Մուրսիլիս II-ը:

Մուրսիլիսը գահակալեց աննպաստ իրավիճակում: Ըստ նրա “Տարեգրությունների”, օգտվելով հոր և եղբոր մահից, բոլոր նվաճված երկրները ապստամբել և դուրս էին եկել խեթերի ենթակայությունից:

*"Նախքան իմ հայրական գահին նստելը, իմ դեմ հարևան բոլոր թշնամական երկրները թշնամություն սկսեցին: Հայրս երբ աստված դարձավ, Առնուվանդասը, եղբայրս, իր հայրական գահին նստեց, իսկ հետո նա հիվանդացավ: Իսկ երբ թշնամական երկրները Առնուվանդասի՝ եղբորս հիվանդության մասին լսեցին, թշնամական երկրները թշնամություն սկսեցին: Երբ Առնուվանդասը՝ եղբայրս, աստված դարձավ, թշնամական երկրները, որոնք թշնամություն չէին սկսել, նրանք, այդ թշնամական երկրները ևս թշնամություն սկսեցին: Եվ օտար թշնամական երկրները այսպես ասացին. «Նրա*

*հայրը ով Խաթթիի արքան էր, նա հերոս արքա էր», նա թշնամական երկրները ճնշված էր պահում: (Սյժմ) նա մահացել է, իսկ նրա որդին, ով նստել էր իր հայրական գահին, նախկինում ռազմի հերոս էր, նա էլ հիվանդացավ և նա էլ աստված դարձավ: Իսկ այժմ նա ով իր հայրական գահին է նստել, երեխա է, նա Խաթթիի երկիրը և Խաթթիի սահմանները չի կարող փրկել»:<sup>318</sup>*

Դատելով նույն տեքստից, կասկերի և մյուս հարևանների հարձակումները Խաթթիի տարածքների վրա սկսվել էր դեռևս Մուսլիմ-լուլիումասի սիրիական պատերազմների շրջանում:

Ըստ "Տարեգրությունների", իր կառավարման առաջին տաս տարիների ընթացքում նա կարողացավ հաջողության հասնել բոլոր թշնամիների նկատմամբ և վերականգնել Խեթական տերության տարածքային ամբողջականությունը:

### **Կասկական խնդիրը**

Ինչպես և նախորդ արքաների օրոք, Խեթական պետության առաջնահերթ խնդիրը բնօրրանի և մասնավորապես մայրաքաղաքի անվտանգության ապահովումն էր կասկերի հարձակումներից: Մուրսիլիս II-ը իր կառավարման առաջին երկու տարիներին ստիպված էր զբաղվել կասկերով, քանի որ վերջիններիս գործողությունները անմիջականորեն սպառնում էին մայրաքաղաք Խաթթուսասին:

Ըստ "Տարեգրությունների", կասկերն իրենք էին նախահարձակ եղել: Կասկական երկու քաղաքներ (այն է՝ ցեղեր)՝ Խալիլան և Դուդուսգան հարձակվել էին խեթական Դուրմիտտա քաղաքի շրջանի վրա: Որպես պատասխան Մուրսիլիսը հարձակվել և ավերել էր այդ քաղաքները, որից հետո "ողջ կասկական երկիրը օգնության էր հասնել" վերոհիշյալ քաղաքներին: Սրանց ևս պարտության մատնելուց և գերեվարված կասկերին զինձառայության վերցնելուց հետո Մուրսիլիսը ստիպված էր բախվելու մեկ այլ կասկական քաղաքի՝ Իսխուպիտտայի հետ: Այս պատերազմների արդյունքը մի շարք կասկական ցեղապետությունների տարածքների գրավումն ու ավերումն էր, որն ուղեկցվում էր մեծաքանակ թշնամիների բնաջնջումով:

<sup>318</sup> Götze 1933: 14-21; Grelois 1988: 54-55; Ղազարյան 2013ա: 16-18 և այլն.

Այժմ արդեն Խաթթիի փոքրասիական տիրույթների անվտանգության համար որոշակի սպառնալիք էր պարունակում հյուսիսարևելյան ուղղությունը: Այստեղ խեթերի համար առավել մեծ վտանգ էր ներկայացնում կասկական Տիրիյա քաղաքի կառավարիչ Պիխխունիյան, ով, ըստ "Տարեգրությունների" քիչ ավելի շրջանի՝ յոթերորդ տարվա գրառման, կասկերից առաջինը սկսեց կառավարել "արքայավարի": Սա նշանակում է, որ Փոքր Ասիայի այս հատվածում կասկական մեծաքանակ ցեղերից մեկում ստեղծվել էր պետականության ավելի բարձր մակարդակի կազմավորում:

"Տարեգրություններում" նշվում է, որ դեռևս այն ժամանակ երբ Սուպպիլուլիումաս I-ը գտնվում էր Միտտանիում, Պիխխունիյան շարունակաբար ասպատակում էր Վերին երկիրը<sup>319</sup> և գրավել էր Իստիտինա երկիրը<sup>320</sup> ու այն իր համար արոտավայր էր դարձրել: Նշանակում է, տիրիյացի կասկերը բավական երկար ժամանակով էին հաստատվել Խաթթիի ազդեցության արևելյան գոտում, ընդ որում Սուպպիլուլիումասի կառավարման վերջին շրջանում: Մուրսիլիսը Պիխխունիայից պահանջեց վերադարձնել գերեվարված բնակչությանը, սակայն վերջինս մերժեց և նույնիսկ սպառնաց պատերազմ վարել խեթերի դեմ նրանց իսկ տարածքում: Մուրսիլիսի պատասխանը կտրուկ էր: Իր կառավարման յոթերորդ տարում նա արշավեց Տիրիյա, հաղթեց և գերեվարեց Պիխխունիային: Արշավանքից հետո Մուրսիլիսը վերականգնեց Իստիտինայի ավերված բնակավայրերը և այնտեղ խեթական կայագորներ տեղադրեց:

Մուրսիլիսի հաջողությունները հյուսիսում չի կարելի վերջնական համարել, քանի որ "Տարեգրության" մեջ արդեն հաջորդ տարի դեպի Փոքր Ասիայի արևմուտք կազմակերպած արշավանքին նվիրված հատվածում կրկին հիշատակվում են կասկերը (Իսխուպիտտա, Տասմախա, Պալխուխաս), որոնց դեմ իրականացվեցին ռազմական

---

<sup>319</sup> Հալիսի միջին հոսանքներից դեպի արևելք, ընդհուպ մինչև Երզնկայի դաշտ (տես Քոսյան 2004ա: 90-91):

<sup>320</sup> Իստիտինան պետք է որոնել խեթա-հայասական շփման գոտում, հնարավոր է՝ ժաման. Ռեֆահիեի (հայկ. աղբյուրների Գերջանիս) հովտում (Քոսյան 2004ա: 59-60, նաև կարծիքների տեսությունը):



գործողություններ: Նշանակում է, արքան ստիպված էր ընդհատել արցավյան արշավանքը կասկերի վերսկսված հարձակումների պատճառով:

Կասկերի դեմ ուղղված ռազմական գործողությունները շարունակվում էին նաև հինգերորդ և վեցերորդ տարիներին: Այս անգամ ևս Մուրսիլիսը ստիպված էր պայքարել հյուսիսային և հյուսիսարևմտյան ուղղություններում: Տեքստից պարզ է դառնում, որ այստեղ կասկական ցեղերը տարածքներ էին զավթել դեռևս Մուսպիլիլուումաս I-ի սիրիական պատերազմների ընթացքում: Մասնավորապես ասվում է, որ նրանք կտրել էին խեթերի բնօրրանից դեպի Պալա (հետագայի Պափլագոնիա) տանող ճանապարհները: Իրենց հերթին Արավաննայի բնակիչները շարունակաբար ասպատակում էին Կիսսիյան, իսկ Տարիկարիմու լեռների կասկերը անմիջականորեն սպառնում էին խեթական մայրաքաղաքին: Պալայի և Արավաննայի մոտավոր տեղադրությունը հետագայի Պափլագոնիայի շրջանում, իսկ Տարիկարիմուի շրջանում դրանցից ավելի արևելք կարող է նշանակել, որ Մուրսիլիսի գահակալման պահին Խեթական պետության բնօրրանը այս ուղղություններում իսկապես վտանգված էր:

Մուրսիլիսը ստիպված էր արշավել և գոնե ժամանակավորապես վերագրավել կասկական ցեղերի զավթած շրջանները և զգալի քանակությամբ ռազմագերիների վերաբնակեցնել: Տարիկարիմուի պարագայում հիշատակվում է միայն արքայի կողմից 3500 գերիների ձեռքբերման մասին, չհաշված գորավարների և զինվորների վերցրածը:

### **Արևմտյան Փոքր Ասիա. Արցավա**

Կասկական խնդրի ժամանակավոր կարգավորման առաջին փուլին հաջորդեց արքայի կառավարման երրորդ և չորրորդ տարիներին ձեռնարկված մեծ արշավանքը դեպի Արևմտյան Փոքր Ասիայում գտնվող Արցավա անվամբ հանդես եկող երկրների համադաշնություն՝ Ապասաս մայրաքաղաքով (անտիկ Եփեսոս քաղաքը):

Արցավայի արքա Ուխիսացիտին դաշինք էր կնքել Ախիսիյավայի արքայի հետ և դրդել էր Էգեյան ծովափին գտնվող խեթահպատակ Միլլավանդա քաղաքին (անտիկ Միլեթ) նույնպես միանալ Ախիսիյա-

վային: Ուխխացիտին մերժեց Մուրսիլիսի պահանջը ետ վերադարձնել խեթական տարածքից Արցավա հեռացած բնակչությանը: Խեթական զորքը երկու զորավարների՝ Գուլլայի և Մալացիտիի գլխավորությամբ ուղարկվեց Միլլավանդա և քաղաքն իր շրջակայքով գրավվեց ու ավերվեց: Սակայն Ուխխացիտին չդադարեցրեց իր հակախեթական գործունեությունը: Նա շարունակում էր ապաստան տալ Խաթթիից եկած փախստականներին: Այդ էր պատճառը, որ Մուրսիլիսն անցավ ավելի վճռական գործողությունների:

Մուրսիլիսն անձամբ առաջնորդեց բանակը, ստանալով նաև Կարգամիսից Պիյասսիլիի գլխավորությամբ եկած զորքի աջակցությունը: Արշավանքն ավարտվեց լիակատար հաջողությամբ: Ուխխացիտին իր մերձավորների հետ միասին հեռացավ Էգեյան ծովի կղզիներից մեկը, որտեղ էլ շուտով մահացավ: Հաջորդ տարում արքան ավարտեց արևմուտքի հպատակեցումը, պարտության մատնելով Ուխխացիտիի որդուն՝ Տապալացունաուլիին: Վերջինս փորձեց ապաստան գտնել Ախիլիյավայում, սակայն նրա արքան, չցանկանալով բախվել Խաթթիի հետ, Տապալացունաուլիին ձերբակալեց և հանձնեց Մուրսիլիսին: Այս պահից ի վեր Արցավան այլևս չի հիշատակվում խեթական աղբյուրներում, ինչը նշանակում էր սույն դաշնության վերացում:<sup>321</sup>

Արցավական արշավանքի անմիջական արդյունքը ողջ Արևմտյան Փոքր Ասիայի պետությունների հպատակեցումն էր: Բացառությամբ Ուխխացիտիի տիրույթների և Միլլավանդայի, Արցավայի դաշնության մեջ մտնող պետությունները կամովին ընդունեցին Խաթթիի գերիշխանությունը: Այստեղի երեք երկրներում նշանակվեցին արքաներ՝ տեղական արքայատոհմերի անդամներից: Մանապա-Թարխունտասը դարձավ Մեխա գետի երկրի (Միրայից հյուսիս՝ Հերմոս գետի հովտում), Տարգասնալլիսը՝ Խապալլայի (հավանաբար, Միրայից արևելք), իսկ Մասիուիլուվասը՝ Միրայի (Մեանդրոս գետի ավազանում) արքա: Այս արքաների հետ կնքվեցին ոչ-պարիտետային պայմանագրեր: Արցավայի դաշնության տարածքից

---

<sup>321</sup> Bryce 2005: 197.

Խաթթիում վերաբնակեցվեց, ըստ աղբյուրի, 65.000 մարդ, ինչը վկայում է այդ գործողության լայն մասշտաբների մասին: Ինչ վերաբերում է Լուկկային (անտիկ աղբյուրների Լիկիա), ապա այստեղ միասնական պետականություն չստեղծվեց:

Արևմտյան Փոքր Ասիայում, Մուրսիլիսի հաղթական արշավանքի համատեքստում, ներկայումս էլ պարզ չէ Ախիսիյավայի և Միկենյան Հունաստանի հարաբերակցության խնդիրը: Այս հարցում մասնագիտական կարծիքները էականորեն տարբերվում են: Առաջինը Ախիսիյավայի և միկենյան աշխարհի հետ նույնացումը առաջարկել էր դեռևս Է.Ֆորերը:<sup>322</sup> Նրա կարծիքով, Ախիսիյավան հունական աղբյուրների Achaioi-ի համարժեքն է:<sup>323</sup> Հետագայում այդ տեսակետի արդարացվածության և խեթական աղբյուրների Ախիսիյավայի տեղայնացման հարցով զբաղվող մասնագետները առաջարկեցին խնդրի լուծման մեծ թվով տարբերակներ:

Ումանց կարծիքով, դա կարող էր լինել մայրցամաքային Հունաստանի մի խոշոր պետական կազմավորում կամ ուղղակի Արևմտյան Փոքր Ասիայում ձևավորված միկենյան որևէ պետություն:<sup>324</sup> Ախիսիյավան առաջարկվել է տեղադրել նաև Դոդեկանեզյան կղզիներում (Էգեյան ծովի փոքրասիական ծովեզերքի կղզիախմբում) կամ Բեռտիայում (Միջին Հունաստան):<sup>325</sup> Կան նաև այդ նույնականության դեմ արտահայտվող մասնագետներ, որոնց հիմնական փաստարկը աղբյուրների անբավարար քանակն է կամ ուղղակի նշվում է, որ վերոհիշյալ համադրությունը երկու անվանումների պատահական նմանության հետևանք է:<sup>326</sup>

---

<sup>322</sup> Forrer 1924a; 1924b.

<sup>323</sup> Է.Ֆորերի տեսակետը ընդունվեց շատերի կողմից, օրինակ, Güterbock 1983; Mellink 1983; Vermeule 1986; Bryce 1989a; 1989b; 2005: 58-59; Niemeier 1998 և այլք:

<sup>324</sup> Ախիսիյավա Achaioi-ի նույնականացման և խեթա-ախիսիյական հարաբերությունների մասին առկա են մեծաքանակ ուսումնասիրություններ (Sommer 1932; Schachermeyr 1935; Kretschmer 1954; Huxley 1960; Güterbock 1983; 1984; Houwink ten Cate 1983-84; Քոսյան 1997 [մասնագիտական կարծիքների տեսությունը]; Singer 2000; De Martino 2011: 182-83):

<sup>325</sup> Niemeier 1998: 20-23.

<sup>326</sup> Sommer 1932; Ünal 1989: 285.

Սակայն, դատելով մ.թ.ա. XIII դարի խեթական արքաներ Խաթրուսիլիս III-ի և Թուդիսալիյաս IV-ի տեքստերից, Ախիսիյավան պետք է լիներ բավական խոշոր և ռազմական լուրջ ներուժ ունեցող քաղաքական միավոր: Այդ մասին կարելի է եզրակացնել Խաթրուսիլիսի օրոք գրված "Տավագալավասի նամակից", որտեղ նրա արքան հիշատակվում է որպես խեթական արքայի հետ միևնույն կարգավիճակն ունեցող կառավարիչ: Այդպիսի տպավորություն է ստեղծվում նաև Թուդիսալիյաս IV-ի և Ամուրրուի արքա Սաուսգամուվասի միջև կնքված պայմանագրից ("Սաուսգամուվաս"): Թերևս Ախիսիյավայի անանուն արքան, ով հիշատակվում է Մուրսիլիսի տարեգրություններում, միկենյան աշխարհի աչքի ընկնող պետություններից մեկն էր, հնարավոր է Միկենքը:<sup>327</sup> Իզուր չէ, որ Հումերոսը Միկենքի արքա Ագամեմնոնին էր վերագրում հունական միացյալ գործի հրամանատարությունը:

### **Մուրսիլիս II-ը և Հայասան**

"Տարեգրության" մեջ Տիբիյայի կողմից խեթահպատակ Վերին երկրի նվաճմանը հաջորդում է Հայասայի հիշատակությունը: Ըստ տեքստի, այն նույն ժամանակ էրք Մուպպիլուլիումասի օրոք Պիլիսիսիյան սկսել էր ասպատակել Վերին երկիրը, Հայասան հարձակումներ էր գործում Խաթթիի ազդեցության տակ գտնվող Դանկուվա երկրի վրա և ռազմավար տանում Հայասա:<sup>328</sup>

Մուրսիլիսն իր կառավարման յոթերորդ տարում նամակ ուղարկեց Հայասայի կառավարիչ Աննիյասին, նրան մեղադրեց իր երկիրն ասպատակելու մեջ և պահանջեց վերադարձնել բնակչությանը և ռազմավարը: Աննիյասը զանց առավ Մուրսիլիսի պահանջը, որից հետո խեթական գործը գրոհեց Հայասայի (տեքստում՝ Ագզի) ամրոց Ուրան: Սակայն ռազմական գործողությունները Աննիյասի դեմ ձգձգվեցին ևս չորս տարի՝ կապված այլ ուղղություններում

---

<sup>327</sup> Bryce 2003: 192.

<sup>328</sup> Դանկուվան ենթադրաբար տեղադրվում է Գալլ գետի միջին հոսանքների շրջանում՝ Երզնկայի դաշտի հարևանությամբ և պետք է սահմանակից լիներ Հայասային (տեղադրության մասին կարծիքները տես Քոսյան 2004ա: 95-96, կարծիքների տեսությունը):

Մուրսիլիսի առջև կանգնած կարևոր խնդիրների հետ: Հավանաբար, դրա պատճառը Տավրոսի լեռնաշղթայից հարավ նոր լարվածությունն էր:

Իր կառավարման իններորդ տարում Մուրսիլիսը գորավար Կուրունտային ուղարկեց Սիրիա, իսկ "Գլխավոր մատովակ" Նուվանցասին՝ Վերին երկիր՝ ընդդեմ Հայասայի: «Տարեգրության» մեջ խոսվում է Նուվանցասի և Աննիյասի միջև ընթացած մարտերի մասին: Ընդ որում նշվում է, որ Ազգիի արքան ուներ 10.000 հետևակային զինվոր և 700 մարտակառքեր: Հնարավոր է, այս թվերը չափազանցեցված են, սակայն ամեն դեպքում պարզ է դառնում, որ ազդեցիկները զգալի ռազմական ուժ ունեին: Նրանք պաշարել էին Կաննուվարա քաղաքը,<sup>329</sup> որտեղ էլ Նուվանցասին հաջողվեց հաղթանակ տանել: Սակայն խեթական զորքը բավարարվեց այդքանով:

Միայն հաջորդ տարում Հայասան փաստացի գրավվեց, այն բանից հետո երբ Մուրսիլիսը, ավարտելով Կարգամիսում և Հալեպում իր մահացած եղբայրներ Պիյասսիլիի և Տելեպիևուսի որդիներին արքաներ նշանակելու գործը, գնաց Թեգարամա, որպեսզի անձամբ զբաղվի Աննիյասի խնդրով: Սակայն արշավանքը դեպի Հայասա այդ տարի տեղի չունեցավ, քանի որ, ըստ տեքստի, առջևում ձմեռն էր և նպատակահարմար չէր պատերազմ սկսել: Հաջորդ՝ տասներորդ տարվա գարնանը Մուրսիլիսը ձեռնարկեց իր արշավանքը:

Մուրսիլիսը նշում է, որ հայասացիները խուսափում էին ճակատամարտ տալուց, այլ ամրացել էին լեռների վրա գտնվող դժվարամատչ վայրերում և միայն գիշերով էին հարձակումներ գործում: Խեթական զորքը նվաճեց հայասական երկու կարևոր քաղաքներ Դուգգամման<sup>330</sup> և Արիպսան:<sup>331</sup> Իսկ թե ինչու Մուրսիլիսը, գրավելով հայասական քաղաքները, ավարտին չհասցրեց իր արշավանքը, պարզ

---

<sup>329</sup> Կաննուվարան մոտավորապես պետք է տեղադրվի Եփրատի կեռմանի շրջանում, հավանաբար գետից արևմուտք (տեղադրության մասին կարծիքները տես Քոսյան 2004ա: 64):

<sup>330</sup> Տեղադրությունը պարզ չէ (կարծիքների համար տես Քոսյան 2004ա: 98-99):

<sup>331</sup> Կարծիքների համար տես Քոսյան 2004ա: 39: Տեղադրության խնդրին կարող էր նպաստել տեքստում հիշատակվող «ծովի մեջ» արտահայտությունը, սակայն պարզ չէ թե ինչ ծովի մասին է խոսքը (Սև ծով թե Վանա լիճ):

է դառնում նրա օրոք Խաթթուսատում կազմակերպված դավադրության մասին ակնարկող մի տեքստից:<sup>332</sup> Այստեղ ասվում է, որ երբ արքան Ազգի էր արշավել, Արևը նշան էր տվել, այնուհետև հիշատակվում է Ամմիննայան և հետևում է այսպիսի նախադասություն. “Արդյոք Խաթթիի բնակիչները ուրիշ մեկին իշխանության համար չպիտի ընտրեն”: Ենթադրվում է, որ այստեղ խոսքը արևի խավարման մասին է, որից փորձել էր օգտվել տավանաննա Ամմիննայան՝ Մուպպիլուլիումաս I-ի վերջին կինը և Մուրսիլիսի խորթ մայրը: Չնայած “Տարեգրություններում” այդ մասին չի հիշատակվում, այլ ընդամենը ասվում է, որ “տարին կարճացել էր” (այսինքն ձմեռնամուտ էր) և նա չէր հասցրել “կարգավորել Ազգիի երկիրը”, սակայն վերոհիշյալ տեքստի հիման վրա կարելի է բացատրել խեթական արքայի շուտափույթ վերադարձը:

Միայն 11-րդ տարում Մուրսիլիսը վերադարձավ Հայասա, սակայն ռազմական գործողությունների մասին այլևս որևէ հիշատակություն չի պահպանվել: Հայասացիները Խալիմանա քաղաքից ոմն Մուտտիսի բանագնաց էին ուղարկել արքայի մոտ՝ հայտնելով իրենց հպատակության մասին:<sup>333</sup> Հայասացիները նաև վերադարձրեցին իրենց մոտ գտնվող խեթական ռազմագերիներին:

Չնայած “Տարեգրությունները” հայտնում են Հայասայի հպատակեցման մասին, սակայն Աննիյասի մասին այնտեղ ոչ մի հիշատակություն չկա, ինչը տարօրինակ է: Մուրսիլիսի մյուս բոլոր հաղթական արշավանքների շարադրանքում կանոնավոր կերպով հայտնվում է հակառակորդ երկրների արքաների հպատակեցման ամ փախուստի մասին, սակայն Հայասայի դեպքում դա բացակայում է: Հնարավոր է, որ Մուրսիլիսին չէր հաջողվել վերջնականապես նվաճել այդ երկիրը:

---

<sup>332</sup> KUB XIV 4 (տե՛ս Քոսյան 2004բ: 199-201, հղումներով):

<sup>333</sup> Մուրսիլիսի հայասական արշավանքները հանգամանորեն քննարկվել են մեծաքանակ ուսումնասիրություններում՝ Forrer 1931; Капанцян 1948: 27-36; Манандян 1956: 85-101; Garstang and Gurney 1959: 32-39; Дьяконов 1968: 95-96; Хачатрян 1971: 19,20,61,62,130-132; Խաչատրյան 1998: 68-78; Ադոնց 1972: 39-45: Ավետիսյան 2002: 76-82; Քոսյան 2004բ; 2008: 281-289; Ղազարյան 2007; 2013ա:

## **Մուրսիլիսն ընդդեմ Եգիպտոսի և Ասորեստանի**

Հայասական խնդրի կարգավորման հետ միաժամանակ սիրիական տարածաշրջանում նկատվում էր երկու խոշոր ուժերի ակտիվության աճ: Հարավից Եգիպտոսը փորձում էր վերականգնել իր կորցրած ազդեցությունը Սիրիայում, իսկ Ասորեստանը նկրտումներ ուներ Կարգամիսի ենթակայության տակ գտնվող նախկին միտոսական տարածքների նկատմամբ: Մուրսիլիսը մեծ ակտիվություն էր ցուցաբերում անդրտավրոսյան գոտում, որտեղ Եգիպտոսի դրդմամբ սկսվել էին ապստամբություններ: Մասնավորապես, Նուխաշշեի արքա Տետտեն, ով հանդիսանում էր Խաթթիից կախյալ կառավարիչ, ապստամբեց՝ ակնկալելով Եգիպտոսի ռազմական աջակցությունը: Եգիպտոսի փարավոն Հորեմհեբը զորք ուղարկեց Նուխաշշե, սակայն նախքան Մուրսիլիսի ժամանելը Սիրիա գորավար Կուրունտան ճնշեց Նուխաշշեի և Քադեշի ապստամբությունները և ստիպեց եգիպտացիներին նահանջել: Իսկ Սիրիայի հյուսիսում Կարգամիսի արքա Պիասսիլին, Մուրսիլիսի եղբայրը, առայժմ հաջողությամբ զսպում էր խեթահպատակ Միտտանիի նկատմամբ Ասորեստանի նկրտումները:

Հավանաբար, Մուրսիլիսը հենց այս իրավիճակի պատճառով Կիցցուվատնայում գտնվող կարևոր պաշտամունքային կենտրոն Կումմաննի հրավիրեց եղբորը՝ Պիասսիլին՝ քննարկելու իրենց անելիքները: Սակայն Կումմաննիում Պիասսիլիի անսպասելի մահը Մուրսիլիսին կանգնեցրեց բարդագույն խնդիրների առջև:

Եղբոր մահից ոչ շատ առաջ մահացել էր նրա մյուս եղբայրը՝ Հալեպի արքա Տելեպինուսը: Իր հերթին Ասորեստանը հարձակվել և գրավել էր Կարգամիսի տիրույթների մի մասը, բացի այդ Նուխաշշեում կրկին ակտիվացել էին հակախեթական ուժերը, իսկ Քադեշի խեթահպատակ արքա Այտագաման հրաժարվել էր իր կախյալ կարգավիճակից բխող պարտավորություններից, հավանաբար, փարավոն Հորեմհեբի դրդմամբ:

Մուրսիլիսի ժամանումով Սիրիա իրավիճակը սկսեց փոխվել հոգուտ Խաթթիի: Քադեշի ապստամբ կառավարիչ Այտագաման սպանվեց իր որդու կողմից, ով էլ Մուրսիլիսի կողմից նշանակվեց քաղաքի կառավարիչ: Մուրսիլիսն անձամբ ղեկավարեց զորքը ընդ-

դեմ Ասորեստանի և վերջինիս ուժերին դուրս մղեց Կարգամիսին ենթակա տարածքից: Նա այնուհետև Կարգամիսի արքա նշանակեց Պիյասսիլի որդի Մախուրունուվային, իսկ Հալեպում՝ Տելեպինուսի որդի Տալմի-Շարրունային:

Լուծելով պետության առջև կանգնած հրատապ խնդիրները, Մուրսիլիսը հետագա տարիներին երբեմն ստիպված էր սպառնալիքի կամ պատժիչ արշավանքների միջոցով ճնշել իր տերության տարբեր շրջաններում, հատկապես Արևմտյան և Հյուսիսային Փոքր Ասիայում ծագող անհնազանդության դրսևորումները:

### **Փոքրասիական տարածաշրջանը. դինաստիական խնդիրներ**

Բուն Փոքր Ասիայում ծագած խնդիրների շարքում առաջինը Արևմուտքում կախյալ Միրա-Կուվալիայի արքա (այս երկու հարևան երկրները արդեն միավորվել էին) Մասխուիլուվասի անհնազանդությունն էր և Խաթթիի դեմ դաշինք ստեղծելու փորձը: Ոմն անանուն անձ ապստամբեց Խաթթիի դեմ և նրան միացավ կախյալ Միրա-Կուվալիայի արքա Մասխուիլուվասը: Մուրսիլիսն անձամբ առաջնորդեց զորքը դեպի Մալլապա<sup>334</sup> և պահանջեց Մասխուիլուվասին ներկայանալ իրեն: Վերջինս մերժեց պահանջը և ապաստանեց Մասա երկրում (Մալլապայից արևմուտք): Մակայն մասացիները, վախենալով պատժվելուց, նրան հանձնեցին Մուրսիլիսին, ով Միրայի արքային որպես պատանդ տարավ Խաթթուսաս: Միրա-Կուվալիայում նրա փոխարեն նշանակվեց եղբորորդին՝ Կուպանտա-Կուրունտան: Վերջինս նախկինում որդեգրվել էր Մասխուիլուվասի կողմից, քանի որ նրա կինը՝ Մուպալիլուվուսա I-ի դուստր Մուվատտիսը անժառանգ էր: Կուպանտա-Կուրունտայի հետ նոր պայմանագիր կնքվեց:

Ինչ վերաբերում է հյուսիսի կասկական ցեղերին, ապա Մուրսիլիսը, տարբեր շարժառիթներից ելնելով, պարբերաբար արշավանքներ էր ձեռնարկում այս կամ այն կասկական ցեղի կամ ժամանակավորապես միավորված ցեղերի դեմ: Պատճառները տարբեր էին՝ կասկերի կողմից խեթական տարածքի ասպատակություն, անհնա-

---

<sup>334</sup> Ենթադրվում է ներայիս Սիվրիհիսարի շրջանում (RGTC VI.1: 333):



զանդություն, հրաժարում օգնական գորաջոկատներ տրամադրելուց և այլն: Պատժիչ արշավանքները, սակայն, միայն ժամանակավոր հաջողություն էին բերում, քանի որ պետականորեն չկազմակերպված այս ցեղերի հետ տնական պայմանագրային հարաբերությունների հաստատումը հնարավոր չէր, ինչպես դա եղավ Արևմտյան Փոքր Ասիայում:

Իր կառավարման հետագա շրջանում Մուրսիլիսը ժամանակ առ ժամանակ ստիպված էր զբաղվելու հյուսիսի կասկերի հնազանդեցմամբ, ինչը նրան այդպես էլ վերջնականապես չհաջողվեց: Նրա կառավարման 19-րդ տարվանից սկսած Մուրսիլիսը ստիպված էր պարբերաբար զբաղվելու կասկական խնդրով: Ընդ որում այս տարածաշրջանում խեթերի հակառակորդների մի մասը անմիջապես էր մնացել դեռևս Մուպպիլուլիումաս I-ի ժամանակներից ի վեր: Այդպես էր, օրինակ, Խատենցուվայի<sup>335</sup> գրավումը այդ նույն տարում, ինչպես նաև Տումաննա երկրում<sup>336</sup> դեռևս իր հոր ժամանակներից հայտնի ոմն Պիտտագատալլիսը: Հազիվ էր արքան հասցրել հաղթել Պիտտագատալլիսին, երբ ապստամբություն բռնկվեց Կալասմալում,<sup>337</sup> որը հաջորդ տարում ձնշվեց Պալայի կառավարիչ Խուտուպիյանցասի կողմից:

Մուրսիլիսը փորձում էր լուծել նաև պատերազմների և այլ պատճառների հետևանքով Տերության սահմանամերձ շրջանների բնակաթափ եղած բնակավայրերի վերաբնակեցման խնդիրը: Այդ նպատակով տասնյակ հազարավոր մարդիկ նվաճված երկրներից, այդ թվում Խաթթիի տարբեր շրջաններից վերաբնակեցվեցին այստեղ: Վերաբնակիչները տեղաբաշխվում էին արքայական և ազնվականական տնտեսություններում, տաճարապատկան բնակավայրերում կամ ռազմավարական նշանակություն ունեցող սահմանամերձ շրջաններում:

---

<sup>335</sup> Տեղադրության համար տեղ Del Monte und Tischler 1978: 103:

<sup>336</sup> Թերես, նույն է ինչ անտիկ աղբյուրների Դոմանիտիսը Պափլագոնիայում (Del Monte und Tischler 1978: 438):

<sup>337</sup> Հավանաբար, անտիկ շրջանի Պափլագոնիայում (Del Monte und Tischler 1978: 164):

Մուրսիլիսի օրոք, հակառակ արտաքին քաղաքականության ասպարեզում ունեցած ակնառու հաջողություններին, լուրջ խնդիրներ կային կապված համաճարակի նոր բռնկման և արքայատոհմի ներսում լարված իրավիճակի հետ: Երկրորդ դեպքում պատճառը արքայի և Սուլպիլուլիումաս I-ի վերջին կնոջ՝ բաբելոնյան արքայադուստր Ամմինայայի միջև բախումն էր (տես ստորև):

Ի թիվս վերոհիշյալ բարդությունների, ծագեցին նաև ժողովրդագրական խնդիրներ կապված դեռևս Սուլպիլուլիումասի օրոք սկսված համաճարակի հետևանքների հետ:

Մուրսիլիսի կառավարման առաջին շրջանում կազմված՝ աստվածներին ուղղված արքայի աղոթքներում նա դիմում է աստվածներին, որպեսզի վերջիններս հայտնեն Խաթթիին վրա հասած դժբախտությունների պատճառների մասին:<sup>338</sup> Նշվում է նաև, որ բնակավայրերը դատարկվել են, մարդիկ մահացել են և այլևս ոչ ոք չկա, որպեսզի մշակի տաճարապատկան հողերը և երկրպագի աստվածներին: Եվ օգտվելով դրանից, հարևան թշնամական երկրները սկսել են հարձակվել Խաթթիի վրա:

Փորձելով պարզել աստվածների գայրույթի պատճառները, արքան դիմեց գուշակների օգնությանը: Մասնավորապես, վերջիններս գուշակային գործողությունների միջոցով հանգեցին այն եզրակացության, որ արքայի հայրը՝ Սուլպիլուլիումասը ժամանակին ոչ աստվածահաճո արարքներ էր թույլ տվել, ինչի պատճառով աստվածները որոշել էին պատժել Խաթթի երկրին: Սուլպիլուլիումասի թույլ տված այդպիսի արարքների շարքում նշվում էին մասնավորապես երկուսը: Առաջինը Մալա գետին (Եփրատ) տրվող ամենամյա երկրպագության անտեսումն էր, իսկ երկրորդը՝ նրա կողմից իր ավագ եղբորը՝ թագաժառանգ “Թուդիսալիյաս կրտսերին” տրված հավատարմության երդման խախտումն էր և սպանությունը:

Հաջորդ ներքին խնդիրը կապված էր Սուլպիլուլիումասի վերջին կնոջ՝ բաբելոնյան արքայադուստր Ամմինայայի գործունեության հետ: Վերջինս նույնիսկ ամուսնու մահից հետո, Առնուվանդաս

---

<sup>338</sup> Այդ աղոթքների հրատարակությունը տես Singer 2002: 49-68; Czizewska 2012: 140-247:

II-ի և Մուրսիլիսի կառավարման շրջանում շարունակում էր ակտիվորեն միջամտել պետության ներքին գործերին, արքունիքում ներդրել էր օտար աստվածների երկրպագություն և սովորույթներ: Նա իր մերձավորների և օտար աստվածների երկրպագության վրա ծախսում էր խոշոր միջոցներ: Ըստ Մուրսիլիսի մի տեքստի, Տավանանան (խեթական թագուհիների պատվատիտղոսը) սպառնում էր արքայադուստրերին զանազան պատիժներով:<sup>339</sup> Մուրսիլիսի և Տավանանանայի միջև լարված փոխհարաբերությունները հասան իրենց բարձրակետին իններորդ տարում թագուհի Գասսուլիյավիայի մահվան պատճառով: Արքան Տավանանային մեղադրեց սև մոգության մեջ և վտարեց արքունիքից: Թերևս, արքայի այս որոշմանը նպաստեց նաև նույն իններորդ տարում նրա երկու եղբայրների՝ Պիյասսիլիի և Տելեպինուսի անսպասելի մահը: Գուշակային հարցումների միջոցով "պարզվեց" Տավանանանայի մեղավորությունը այդ բուլբո իրադարձություններում: Մուրսիլիսի մի տեքստում նույնիսկ խոսվում է արքայի հայասական արշավանքի ընթացքում (տասներորդ տարում) Տավանանանայի նյութած դավերի մասին: Ըստ դրա, նա ստիպված էր դադարեցնել արշավանքը, քանի որ կասկած կար թագուհու դավերի մասին, որոնց նպատակը Մուրսիլիսին գահազրկելն էր (տես վերը):<sup>340</sup>

Ամփոփելով Մուրսիլիսի կառավարման շրջանի իրադարձությունները, կարելի է վստահաբար եզրակացնել հետևյալը: Մուրսիլիսի օրոք Խեթական տերությունը կրկին լիովին վերականգնվեց և նույնիսկ ավելի կայուն ներքաղաքական իրավիճակ ձևավորվեց, քան առկա էր Մուսպիլուլիումասի ժամանակ: Անկասկած, Խաթթին այս փուլում հանդիսանում էր Առաջավոր Ասիայի հզորագույն ռազմաքաղաքական ուժը, քանի որ ոչ Ասորեստանը, ոչ էլ Եգիպտոսը չունեին այն ներուժը, ինչը թույլ կտար վիճարկել Խաթթիի առաջնայնությունը Միջինասիայում:

---

<sup>339</sup> Մուրսիլիսի և Տավանանանայի հարաբերությունների մասին և դրանց վերաբերող տեքստերի հրատարակությունը տես Hoffner 1983; Bin-Nun 1975: 186ff.; De Martino 1998; Singer 2002: 71-79; Քոսյան 2002: 232-233; 2004բ: 198-203 [հղումներով]:

<sup>340</sup> Ska Hout van den 1998: 42-43:

## ՄՈՒՎԱՏԱԼԻՄ II

### Արևմտյան Փոքր Ասիան. Պիյամարադուս

Մուրսիլիսի որդի Մուվատալլիս II-ը գահ բարձրացավ համեմատաբար կայուն իրավիճակում: Բուն փոքրասիական թատերաբեմում առայժմ լուրջ խնդիրներ չկային: Մուվատալլիս II-ի կառավարման սկզբում արևմուտքում գոյություն ունեցող Խաթթիի հետ դաշնակցային պարտավորություններով կապված երկրների համակարգ, իսկ հյուսիսի կասկերը ժամանակավորապես դադարեցրել էին ասպատակությունները: Չնայած Մուպպիլուլիումաս I-ը և Մուրսիլիս II-ը կարողացել էին պարբերաբար կրկնվող պատժիչ արշավանքների միջոցով ժամանակավորապես զսպել կասկական ցեղերին, որոնք ժամանակ առ ժամանակ ասպատակում էին մայրաքաղաք Խաթթուսասին հյուսիսից և հուսիս-արևելքից անմիջականորեն հարող շրջանները, այնուամենայնիվ կասկական վտանգը նախկինի պես մշտապես առկա էր:

Սակայն շուտով Արևմտյան Փոքր Ասիայում ծագեց լարվածության մի նոր օջախ՝ կապված այստեղ ոմն Պիյամարադուսի գործունեության հետ: Հնարավոր է, վերջինս պատկանում էր խեթական արքայատոհմին, ով ինչ-ինչ պատճառներով հայտնվել էր Փոքր Ասիայի արևմուտքում և այստեղ փորձում էր իր համար թագավորություն ստեղծել տարածաշրջանի խեթահպատակ պետությունների մի մասի տարածքում: Նա ամուսնացրեց իր դստերը արդեն Ախիյավայից կախյալ Միլլավանդայի կառավարիչ Ատպասի հետ: Թե ինչպես էր խեթերից կախյալ Միլլավանդան հայտնվել Ախիյավայի տիրապետության տակ, պարզ չէ: Հնարավոր է, դա տեղի էր ունեցել հենց Մուվատալլիսի օրոք, բայց ոչ ռազմական գործողությունների, այլ բանակցությունների հետևանքով:<sup>341</sup>

Ինչպիսին էլ որ լինեց Միլլավանդայի օտարման պատճառը, Պիյամարադուսը շուտով գրավեց խեթերից կախյալ Վիլուսան (Տրոադայում) և պարտության մատնեց Սեխա գետի երկրի արքա

<sup>341</sup> Ska Bryce 2005: 224.

Մանապա-Թարխունտասին, ով, հավատարիմ մնալով իր վրա դրված պարտավորություններին, փորձում էր ընդդիմանալ դրան: Մուվատալլիսը արևմուտք ուղարկեց գորավար Գասսուին, ով Միրա-Կուվալիյայի գորքի հետ միասին ետ նվաճեց Վիլուսան, իսկ Պիյամարադուսը փախավ Ախիլյավա: Արևմուտքում դիրքերն ամրապնդելու նպատակով Մուվատալլիսը վերականգնեց գերիշխանությունը Վիլուսայի նկատմամբ, իսկ նրա արքա Ալաքսանդուսի հետ պայմանագիր կնքվեց: Պայմանագրում հանգամանորեն ներկայացված էին Վիլուսայի արքայի վրա դրված պարտավորությունները, այդ թվում՝ պատերազմի կամ Խաթթիում ներքին խնդիրների ծագման դեպքում ռազմական աջակցություն ցույց տալը:

### **Խեթերը և Եգիպտոսը. Քաղեշի ճակատամարտը**

Այլ էր իրավիճակը Խաթթիի սիրիական տիրույթներում: XIX դի-նաստիայի երկրորդ փարավոն Սեթի I-ի օրոք նկատելի էր Եգիպտոսի արտաքին քաղաքական ակտիվությունը, որը ակնհայտ նպատակ էր հետապնդում վերականգնել նախորդ տասնամյակներում Սիրիայում կորցրած գերիշխանությունը: Փարավոնը արշավանքներ ձեռնարկեց խեթերից կախյալ Ամուրրուի և Քաղեշի դեմ, ինչը բացահայտ մարտահրավեր էր նշանակում: Արդյոք Սեթիին հաջողվել էր գրավել Խաթթիից կախյալ այս երկու երկրները, ինչպես հայտարարում էր փարավոնը Կառնակի իր հաղթական հուշարձանի վրա գրված արձանագրության մեջ, պարզ չէ: Սակայն Սեթի I-ի ձեռնարկումներն արդեն իսկ բավական էին ցույց տալու Եգիպտոսի նկրտումները: Հնարավոր է, որ լարվածության այս փուլում կողմերը կարող էին համաձայնության գալ՝ Քաղեշից հյուսիս ընկած շրջանները թողնելով խեթերին, իսկ բուն քաղաքը պետք է անցներ Եգիպտոսին: Սակայն որոշ ժամանակ անց Քաղեշը, առայժմ անհայտ իրադարձությունների հետևանքով, կրկին անցավ խեթերին, ինչն արձանագրված է մ.թ.ա. 1274թ. խեթա-եգիպտական բախման ժամանակ:

Եգիպտոսի դեմ պատերազմի նախօրեին Մուվատալլիսը մայրաքաղաքը տեղափոխեց հարավային Փոքր Ասիայում գտնվող

Թարխունտասասա քաղաք:<sup>342</sup> Նա իր հետ տարավ նաև աստվածների արձանները և մայրաքաղաքում գտնվող պետական արխիվը: Ենթադրվում է, որ այդ քայլով արքան նպատակ ուներ նստավայր դարձնել Միրիային շատ ավելի մոտ գտնվող քաղաքը, որտեղից հեշտ էր դեկավարել սպասվող պատերազմը Եգիպտոսի դեմ:

Խաթթուսասում կառավարիչ նշանակվեց Միտաննամուվասը, իսկ կասկերին հարող ողջ սահմանամերձ գոտին, այդ թվում Վերին երկիրը, հանձնվեց արքայի կրտսեր եղբայր Խաթթուսիլիսին:<sup>343</sup> Խաթթուսիլիսին տրված տարածքում կազմակերպվեց ռազմականացված գոտի: Այն արևմուտքից արևելք ձգվում էր մոտավորապես Ժամանակակից Մերզիֆոնից մինչև Միվաս-Մեբաստիա՝ ընդգրկելով կասկական ցեղերին հարող մի շարք առանցքային շրջաններ (Բսխուպիտտա, Մարիստա, Կատապա, Խանխանա, Դուրմիտտա և այլն): Այս գործողություններն արդարացված էին այն առումով, որ նախկին մայրաքաղաքի շրջակայքի և ընդհանրապես Վերին երկրի բնակավայրերի մեծ մասի բնակչությունը խիստ նոսրացած էր և հնարավոր չէր պաշտպանել նախկինի պես:

Մայրաքաղաքի տեղափոխումը, թերևս, կարող էր պայմանավորված լինել դրա խոցելի դիրքով հյուսիսի կասկերի մշտական սպառնալուծությունների պարագայում: Մա Խաթթի պատմության մեջ աննախադեպ քայլ էր, որի արդարացվածությունը հետագայում կասկածի տակ էր առնում նույնիսկ Մուվատալլիսի եղբայրը՝ Խաթթուսիլիս III-ը: Եթե վստահենք նրա ինքնակենսագրական տեքստում (“Արդարացում”) հաղորդվող տեղեկությանը, ապա մայրաքաղաքի տեղափոխումից հետո սկսվեցին կասկական ցեղերի լայնածավալ հարձակումները խեթերի բնօրրանի վրա: Նրանք գրավեցին Խաթթուսասից հյուսիս ընկած սահմանամերձ Բսխուպիտտա և Մարիստա երկրները ու մի շարք ամրացված քաղաքներ և, անցնելով Մարասանտիյա գետը (Հալիս), նույնիսկ հասան Քանես:

---

<sup>342</sup> Թարխունտասասան պետք է գտնվեր խեթական տեքստերի “Ստորին երկրում” ներկայիս Կոնյայի հարթավայրում (Del Monte und Tischler 1978: 469; 6.2: 163):

<sup>343</sup> Otten 1981: 14-15.

Մայրաքաղաքի փոխադրումը Թարխունտասսա եթե ոչ իրավական առումով, ապա փաստացի նշանակում էր տերության մասնատում երկու մասի՝ հյուսիսային և հարավային, մի ձեռնարկում, որը հետագայում, արդեն Խաթթուսիլիս III-ի և ավելի ակնառու կերպով՝ Թուղխալիյաս IV-ի օրոք հանգեցրեց երկու խեթական պետությունների համագոյակցության, ինչպես նաև երբեմն բռնկվող հակամարտության:

Իսկ այդ ընթացքում իրադարձությունները Սիրիայում արագորեն զարգանում էին: Մեթի I-ին մ.թ.ա. 1279թ. հաջորդած Ռամզես II-ը իր կառավարման չորրորդ տարում անցավ վճռական գործողությունների: Առաջին արշավանքը ուժի ցուցադրում էր արդեն իսկ Եգիպտոսին պատկանող Քանաանում և փյունիկյան քաղաքներ Տյուրոսում և Բիբլոսում: Իսկ հաջորդ տարում (1275թ.) Ռամզեսի բանակը շարժվեց դեպի Քադեշ:

Քադեշի ճակատամարտի և դրան նախորդած եգիպտական ուժերի նախապատրաստության ու անցած ճանապարհի մասին առկա են հինգ եգիպտական արձանագրություններ՝ փորագրված Եգիպտոսի մի շարք տաճարների պատերի վրա (Կառնակ, Լուքսոր, Աբու Սիմբել և այլն): Խեթական տեքստերում ճակատամարտի նկարագրությունը բացակայում է:

Մուվատալլիսը Քադեշ տարավ բուն խեթական զորքը, նրա դաշնակիցներին և, ըստ եգիպտական աղբյուրների, նաև վարձկան ուժեր: Ըստ դրանց, Մուվատալլիսը Քադեշի մոտ բերել էր 47.500 զինվորներ (որից 37.000 հետևակային) և 3500 մարտակառքեր:<sup>344</sup> Նույնիսկ եթե այս թվերը չափազանցեցված են, այնուամենայնիվ, դատելով Մուվատալլիսի դաշնակիցների և վարձկանների աշխարհագրությունից, նա լուրջ ռազմական ներուժ ուներ:

Ահա Ռամզեսի տեքստի համապատասխան հատվածը::

*“... Նա (խեթական արքան – Ա.Ք.) եկել էր և հավաքել բոլոր օտար երկրներին մինչև ծովի վերջը: Ողջ Խաթթի երկիրը եկել էր, նաև Նախարինան, Արցավան, դարդանացիները, Քեշքեշը, Մասան, Պեդասսան, Արվենը, Կարկիսան, Լուկկան, Կիցցուվատնան, Կար-*

---

<sup>344</sup> Խեթական զորքի թվաքանակի մասին տես Beal 1992: 291-296:

*քեմիշը, Ուզարիտը, Քեդեն, ողջ Նուխաշշե երկիրը, Մուշանեթը, Քաղեշը: Նա չթողեց ոչ մի օտար երկիր, որպեսզի չբերի յուրաքանչյուր հեռավոր շրջանից՝ իրենց առաջնորդների հետ միասին .... Նա իր երկրում արծաթ չթողեց, ամբողջը կտրեց իր ունեցվածքից և տվեց բոլոր օտար երկրներին որպեսզի իր հետ բերի ճակատամարտի»<sup>345</sup>*

Մուվատալլիսի բանակի աշխարհագրությունը հիմնականում որևէ խնդիր չի ստեղծում: Փաստացի, հիշատակվող երկրները Խաթթիից կախյալ քաղաքական միավորներն էին՝ Նախարինան (Միտտանի), Արցավան, դարդանացիները (Վիլուսա), կասկերը, Մասան (ապագա Մեծ Փոյուզիան), Պեդասասան, Արավաննան, Կարկիսան (երեքն էլ արևմտակենտրոնական Փոքր Ասիայում), Լուկկան (հետագայի Լիկիա), Կիցցուվատնան, Կարգամիսը, Ուզարիտը, Քեդեն (Կիպրոս), Նուխաշշեն:

Ռամզեսի բանակը բաղկացած էր չորս գորամասերից, որոնցից յուրաքանչյուրը նախապես տեղակայված էր Եգիպտոսի տարբեր քաղաքներում (Թեբե, Շեխուպուլիս, Մեմֆիս և Թանիս) և ինքնուրույն կերպով էր շարժվում դեպի հյուսիս: Այսպիսով, Ռամզեսի բանակը սկսեց իր արշավանքը ոչ միասնաբար և այս հանգամանքը իր ազդեցությունը ունեցավ ճակատամարտի ելքի վրա: Ռամզեսի արձանագրությունը հստակ նշում է այն հանգամանքը, որ եգիպտական բանակի չորս գորամիավորումները վստահորեն առաջ էին շարժվում, ենթադրելով, որ խեթերը չէին համարձակվի նախահարձակ լինել: Ռամզեսի հետ էր միայն Թեբեից բերված Ամոն աստծո անունը կրող գորամասը, որը հասել էր Քաղեշից հյուսիս-արևելք: Մյուսները գտնվում էին մարտադաշտից տարբեր հեռավորությունների վրա:

Ճակատամարտը սկսվեց մ.թ.ա.1274թ. Քաղեշ քաղաքի մոտ: Ըստ ամենայնի, Մուվատալլիսը նախօրոք ծրագրել էր ճակատամարտի պլանը, քանի որ, նախքան Ռամզեսի գորամասի հետ բախվելը, խեթական մարտակառքերի մեծաքանակ ջոկատը Օրոնտեսի գետանցման վայրում, Քաղեշից հարավ, անսպասելի հարձակումով մեծ կորուստներ պատճառեց Ամոնի գորամասի ետևից եկող Ռա

<sup>345</sup> Տեքստը հղվում է ըստ Gardiner 1960: 8 (Այստեղ էլ ճակատամարտի մանրամասների մասին):



աստժո անունով կոչվող գորամասին: Դրան հաջորդեց Ռամզեսի կողմից առաջնորդվող գորամասի մասնակցությունը ճակատամարտին, որը նույնպես պարտվեց: Ըստ տեքստի, խեթերը նրա դեմ հանել էին 2500 մարտակառքեր, ինչը հազիվ թե իրականությանը համապատասխանի: Փարավոնը նշում է, որ ինքը միայնակ ստիպված էր մարտնչել թշնամիների դեմ, քանի որ սեփական զորքը փախել էր: Իրադրությունը փրկեցին Քաղեշ հասած եգիպտական մյուս գորամասերը:

Ռամզեսի արձանագրությունը հավաստում է, որ փարավոնը հաղթանակ էր տարել և Մուվատալլիսը ստիպված էր հաշտություն խնդրել: Այնուամենայնիվ, չնայած ճակատամարտն ավարտվեց առանց կողմերից որևէ մեկի շոշափելի առավելության, սակայն արդյունքում խեթական գերիշխանությունը Հյուսիսային և Կենտրոնական Սիրիայի նկատմամբ մնաց անասան: Ավելին, ճակատամարտից հետո Ռամզեսը իր բանակը ետ տարավ դեպի բուն եգիպտական տիրույթներ, իսկ Մուվատալլիսը գրավեց Աբա երկիրը (Ժաման. Դամասկոսի շրջանը), որտեղ որպես ժամանակավոր կառավարիչ նշանակեց եղբորը՝ Խաթթուսիլիսին: Խեթական բանակի առաջխաղացման մասին իր արձանագրության մեջ հետագայում հայտնում է Խաթթուսիլիս III-ը:<sup>346</sup> Քաղեշի ճակատամարտի արդյունքում Եգիպտոսը ոչ միայն տարածքային զավթումներ չունեցավ, այլև կորցրեց Ամուրրուն, որը կրկին անցավ խեթերի գերիշխանության տակ:<sup>347</sup>

Քաղեշում կրած անհաջողությունից հետո Ռամզեսը հաջորդ տարիներին փորձեր ձեռնարկեց վերականգնելու իրավիճակը: Նրան հաջողվեց որոշ տարածքներ գրավել Օրոնտեսի ստորին հովտում, սակայն Էական ձեռքբերումներ չունեցավ: Այնուամենայնիվ, Մուվատալլիսի կառավարման վերջին շրջանում իրավիճակը Սիրիայում կրկին սկսեց լարվել և նոր առճակատումը թվում էր անխուսափելի: Մի խնդիր, որը լուծվեց արդեն Խաթթուսիլիս III-ի օրոք (տես ստորև):

---

<sup>346</sup> Sten Beal 1992: 307.

<sup>347</sup> Այս մասին ասվում է Թուդխալիյաս IV-ի և Ամուրրուի արքա Սաուսգամուվայի միջև կնքված պայմանագրում (“Սաուսգամուվա”):

Մուվատալլիս II-ի կառավարման շրջանում դրվեցին Խեթական տերության ներքաղաքական իրավիճակի ապակայունացման հիմքերը՝ կապված գահաժառանգման խնդրի հետ, որին հավելվել էր նաև մայրաքաղաքի տեղափոխումը Թարխունտասսա: Արքայի լարված հարաբերությունները խորթ մոր՝ Մուրսիլիս II-ի վերջին կին Դանուխեպայի հետ սրվեցին այն աստիճան, որ նա ստիպված էր դատական գործ հարուցել և վերջինիս վտարել արքունիքից, ինչպես ժամանակին վարվել էր Մուրսիլիսը իր խորթ մոր հետ (տես վերը): Ամենայն հավանականությամբ, Դանուխեպան ծրագրում էր Մուվատալլիսից հետո արքա հռչակել իր որդիներից մեկին: Այդ էր պատճառը, որ Մուվատալլիսը դեռևս նախքան Քադեշի ճակատամարտը իր մյուս որդուն՝ Կուրունտային ուղարկեց հյուսիս՝ Խակպիս քաղաք, որտեղ կառավարում էր եղբայրը՝ Խաթթունսիլիսը:

### ՄՈՒՐՍԻԼԻՍ III (ՈՒՐՄԻ-ԹԵՇՈՒԲ)

Մուվատալլիսն իրեն հաջորդ նշանակեց հարձից ծնված որդուն՝ Ուրխի-Թեշուբին (գահակալական անունը՝ Մուրսիլիս III): Վերջինիս գահակալումը միանշանակ չընդունվեց արքունիքում, ինչպես և հորեղբոր՝ Խաթթունսիլիսի կողմից, ով այդ պահին մեծ հեղինակություն էր վայելում տերությունում, հանդիսանալով Խաթթի-իի համար կարևորագույն ռազմավարական նշանակություն ունեցող Վերին երկրի կառավարիչ: Չնայած հետագայում, արդեն արքա հռչակվելուց հետո Խաթթունսիլիսն իր “Արդարացման” մեջ նշում է, որ ինքը, հարգելով ավագ եղբոր որոշումը, հովանավորեց Ուրխի-Թեշուբին և նրան դրեց գահին, սակայն այս խոսքերը կարելի է դիտարկել որպես քարոզչության արտահայտություն: Իրականում դեռևս Մուվատալլիսի կառավարման շրջանում Ուրխի-Թեշուբն արդեն հանդիսանում էր հոր գահակիցը, այսինքն իր գահակալմամբ նա պարտական չէր Խաթթունսիլիսին:

Ուրխի-Թեշուբը փորձեց վերացնել Տերության փաստացի երկատումը, կրկին մայրաքաղաք դարձնելով Խաթթունասար: Նա կատարեց մի շարք քայլեր, որոնք հակասում էին Մուվատալլիսի ձեռնար-

կումներին: Մասնավորապես, աքսորից ետ վերադարձվեց Արևմտյան Փոքր Ասիայի Սեխա գետի երկրի նախկին խեթահպատակ արքա Մանապա-Թարխունտասը, սակայն արդեն ոչ արքայի կարգավիճակով: Այդ պահին Սեխայի արքան նրա որդին էր՝ Մաստուրիսը, ում կնության տրվեց Ուրխի-Թեշուբի հորաքույրը՝ Մուրսիլիս II-ի դուստր Մասանաուցցին: Նույն կերպ վարվեց արքան իր հոր կողմից գահազարկված Ամուրբուի արքա Բենտեշինայի հետ, ում Մուվատալիսը ժամանակին մեղադրում էր Եգիպտոսի հետ դաշնակցելու մեջ: Նա նաև մայրաքաղաք վերադարձրեց և վերականգնեց իր իրավունքներում աքսորված թագուհի Դանուխեպային (Մուրսիլիս II-ի կնոջը):

Արտաքին ոլորտում Ուրխի-Թեշուբի օրոք նկատվում էին լուրջ խնդիրներ: Դրանցից առաջինը Միտտանիի արքա Շաթթուարա I-ի կողմից նախաձեռնած պատերազմն էր Ասորեստանի արքա Ադադ-նիրարի I-ի դեմ, որն ավարտվեց նրա պարտությամբ: Շաթթուարան ձերբակալվեց, բերվեց Աշշուր քաղաք և երդվեց հավատարիմ լինել ասորեստանյան արքային, որից հետո վերադարձավ իր երկիր: Այսուհետև Միտտանին (ասորեստանյան տեքստում՝ Խանիգալբատ) դուրս եկավ Խաթթիի ենթակայությունից և հարկատու դարձավ Ասորեստանին:<sup>348</sup> Որոշ ժամանակ անց Ասորեստանը էլ ավելի հեռուն գնաց, օգտվելով Շաթթուարայի որդի Վասաշատտայի ապստամբությունից: Ասորեստանյան սպառնալիքի պայմաններում Վասաշատտան գնաց Խաթթուսաս օգնության խնդրանքով, սակայն Ուրխի-Թեշուբը չկարողացավ աջակցություն ցույց տալ Վասաշատտային:<sup>349</sup> Տեքստում ասվում է, որ "խեթերը վերցրեցին նրա նվերները, սակայն աջակցություն ցույց չտվեցին": Միտտանին մնաց միայնակ ընդդեմ Ասորեստանի: Ասորեստանյան զորքը գրավեց ողջ Միտտանիի տարածքը, գերեվարեց արքայական ընտանիքին, պալատի բոլոր հարստությունները և, ըստ արքայի տեքստի, Միտտանին դադարեց գոյություն ունենալ: Չնայած Միտտանին վերացնելու մասին Ադադնիրարի I-ի հայտարարությանը, նրա հաջորդ Սալմա-

<sup>348</sup> Grayson 1987: 136 (Տեքստ համ. A.O.76.3).

<sup>349</sup> Grayson 1987: 136 (Տեքստ համ. A.O.76.3).

նասար I-ի տեքստը թույլ է տալիս եզրակացնելու, որ միտտանական խնդիրը դեռևս լուծված չէր (տես ստորև՝ Թուդխալիյաս IV):

Մրանով լրջորեն վտանգվեցին Խաթթիի սիրիական տիրույթները, քանի որ այսուհետև Ասորեստանը գործողությունների ազատություն ստացավ իսթերի սիրիական տիրույթների և այնտեղ նրանց գլխավոր հենակետ Կարգամիսի անմիջական հարևանությամբ:

Միտտանին նվաճելուց հետո Ադադնիրարի I-ը հավակնություններ ուներ իրեն համարելու "Մեծ արքա": Խեթական արքային ուղղված նամակում նա դիմեց Ուրխի-Թեշուբին՝ նրան անվանելով "եղբայր", սակայն սպառնալից պատասխան ստացավ:<sup>350</sup>

Այս իրադարձությունների շրջանում, որոշ ժամանակ անց արքայի և Խաթթուսիլիսի հարաբերությունները սկսեցին ընդունել բացահայտ առճակատման բնույթ: Կրկին Խաթթուսիլիսի օրոք կազմված տեքստում հիշատակվում է արքայի կողմից Խաթթուսիլիսի քաղաքական ազդեցության կրճատմանն ուղղված քայլերի մասին: Մասնավորապես ասվում է, որ ինքը յոթ տարի դիմացել էր իր դեմ ուղղված գործողություններին: Սկզբում Ուրխի-Թեշուբը Խաթթուսիլիսից վերցրել էր Վերին երկրի որոշ քաղաքներ, իսկ այնուհետև նաև նրա նստավայր Խակալիս քաղաքը և կարևորագույն պաշտամունքային կենտրոն Ներիկը: Ըստ տեքստի, Խաթթուսիլիսն այլև չէր կարող համբերել և ստիպված էր պատերազմ սկսել Ուրխի-Թեշուբի դեմ ("Արդարացում"): Բհարկե, սա պետք է դիտել որպես քարոզչական քայլ, որը միտված էր արդարացնելու Խաթթուսիլիսի կողմից իշխանության գավթումը: Անկախ այն հանգամանքից, թե ով էր Ուրխի-Թեշուբի մայրը, նա Մուվատալլիս II-ի կողմից պաշտոնապես հայտարարվել էր արքա:

Խաթթուսիլիսի ապստամբությունը նրա համար հաջող ընթացք ստացավ: Արքան շարժվեց դեպի Վերին երկիր, սակայն շուտով պաշարվեց Մամուխա քաղաքում և գերեվարվեց Խաթթուսիլիսի կողմից: Նա գահազրկվեց և ուղարկվեց Միրիա որպես կախյալ Նուխաշ-շեի տարածքում գտնվող մի շրջանի կառավարիչ: Խաթթուսիլիսի

---

<sup>350</sup> Beckman 1996: 138 (N.24a).

կարծիքով, Ուրխի-Թեշուբն այլևս չէր կարող հավակնել խեթական գահին:

Սակայն հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Ուրխի-Թեշուբը չէր դադարեցնել պայքարը իր իշխանությունը վերադարձնելու համար: Որոշ ժամանակ անց նա սկսեց հարաբերվել Բաբելոնիայի արքայի հետ, թերևս, նախապատրաստելով իր վերադարձը: Այդ էր պատճառը, որ Խաթթուսիլիսը նրան քսոթեց Արևմտյան Փոքր Ասիա կամ Ալասիա կղզի: Սակայն Ուրխի-Թեշուբը երկար չմնաց այստեղ, այլ փախավ Եգիպտոս՝ ապավինելով Խաթթի գլխավոր թշնամի Ռամզես II-ի հովանավորությանը: Ռամզեսն անպատասխան թողեց Խաթթուսիլիսի նամակը, որտեղ վերջինս հորդորում էր հանձնել նախկին խեթական արքային (այդ մասին տես Խաթթուսիլիս III):<sup>351</sup>

Ուրխի-Թեշուբի կյանքի հետկառավարման շրջանը և դրան հաջորդած գործունեությունը Խեթական պետության շուրջ հինգհարյուրամյա պատմության մեջ եզակի երևույթ է:

### **ԽԱԹԹՈՒՍԻԼԻՍ III**

#### **Կառավարման սկիզբը**

Խաթթուսիլիսը եռանդուն, կայացած քաղաքական գործչին հատուկ ունակություններով օժտված անձնավորություն էր, ով հաջողությամբ զուգակցում էր ուժի և դիվանագիտության քաղաքականությունը: Նրա կառավարման շրջանում Խեթական տերությունը հասավ ակնհայտ հաջողությունների ինչպես արտաքին, այնպես էլ ներքաղաքական կյանքում: Խաթթուսիլիսը ռազմական և վարչական գործունեության ասպարեզում մեծ փորձ ունեցող անձնավորություն էր, ով Մուվատալիսի օրոք ակտիվորեն մասնակցել էր Եգիպտոսի դեմ մղված ռազմական գործողություններին, մայրաքաղաքը Թարխունտասա տեղափոխելու շրջանում նշանակվել էր ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող Վերին երկրի կառավար-

---

<sup>351</sup> Ուրխի-Թեշուբի կառավարման վերաբերյալ տես Houwink ten Cate 1974; 1994.

րիչ և, դատելով իր տեքստից, մեծ հաջողությունների էր հասել: Նախքան արքա դառնալը, ունենալով փոքրաքանակ զինուժ, Խաթթուսիլիսը կարողացել էր կազմակերպել իր տիրույթների անվտանգությունը, ստեղծելով ամրացված բնակավայրերի մի ողջ ցանց՝ իր նստավայր դարձնելով Խակպիս քաղաքը: Մուվատալլիսի կողմից նա ստացել էր "արքա" տիտղոսը, ինչը էլ ավելի էր ընդգծում Խաթթուսիլիսի հեղինակությունը:

Խաթթուսիլիսի հաջողությունների շարքում կարևոր նշանակություն ուներ խեթա-կասկական շփման գոտում ամբողջապես կամ մասնակիորեն լքված բնակավայրերի բնակեցումը: Միրիայից վերադառնալու ճանապարհին նա Կիցցուվատնայի կարևորագույն պաշտամունքային կենտրոն Լավացանտիյա քաղաքում ամուսնացավ Իշտար աստվածուհու տաճարի քրմապետ Բենտիպշարրիի դստեր՝ նույն տաճարի քրմուհի Պուդուխեպայի հետ: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին այս արքայական գույզի կառավարման արդյունավետությունը: Արքա հռչակվելու պահին Խաթթուսիլիսն արդեն տարեց անձնավորություն էր (շուրջ 50 տարեկան):

Այսպիսով, չնայած Ուրխի-Թեշուբի գահագրկման հետևանքով պետության ներսում և միջազգային ասպարեզում ծագած բարդություններին, Խաթթուսիլիս III-ը ձեռնարկեց տերության ներքին իրավիճակի կայունացման և արտաքին քաղաքական խնդիրների լուծման գործը:

Խաթթուսիլիսը ձեռնպահ էր մնում Խաթթիի հետ պայմանագրային պարտավորություններով կապված կախյալ պետություններից դուրս տարածքային նոր ձեռքբերումներ իրականացնելու հարցում: Նա բավարարվում էր Տերության հետ վերջիններիս ամուր կապելու քաղաքականությամբ: Բիհարկե, հարկ եղած դեպքում նա դիմում էր նաև հարկադրանքի, ինչպես դա եղավ Արևմտյան Փոքր Ասիայում դեռևս Մուվատալլիսի օրոք իրավիճակը սրած Պիյամաբադուսի պարագայում:

## **Թարխունտասսայի և Իսուվայի քույր-թագավորությունները. Դինաստիական ամուսնությունները**

Տերության հեռավոր շրջանների նկատմամբ ունեցած վերահսկողությունը կայունացնելու, ինչպես նաև Ուրխի-Թեշուբի համակիրների հետ հարաբերությունները բարելավելու նպատակով նա հարավային Փոքր Ասիայում ստեղծեց Թարխունտասսայի քույր-թագավորությունը, որի առաջին արքա նշանակվեց Ուրխի-Թեշուբի եղբայրը՝ Կուրունտան: Կուրունտայի՝ արքա նշանակվելու նախապատմությունը հիշատակվում է Թուդխալիյաս IV-ի և նրա միջև կնքված պայմանագրում՝ «Բրոնզե տախտակում»:<sup>352</sup> Դեռևս պատանեկության տարիներին Կուրունտան Մուվատալլիսի օրոք դրվել էր Խաթթունսիլի խնամակալության տակ: Արքայատոհմի ներսում և ընդհանրապես խեթական բարձր ազնվականության շրջանում ավելորդ լարվածություն չստեղծելու նպատակով Խաթթունսիլիս III-ը Կուրունտային հանձնեց Թարխունտասսան ողջ Ստորին երկրի հետ միասին: Մանավանդ, որ Ուրխի-Թեշուբի դեմ մղված պատերազմում Կուրունտան չեզոք դիրք էր բռնել, ինչի մասին հիշատակվում է "Բրոնզե տախտակում": Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, չնայած Թարխունտասսայի թագավորության և Խաթթունսասի տիրակալների միջև կնքված պայմանագրերին, ժամանակ առ ժամանակ սկսվում էին լարվածության փուլեր: Հետագայում, արդեն Թուդխալիյաս IV-ի կառավարման շրջանում երկուսի փոխհարաբերությունները վերաճեցին քաղաքացիական պատերազմի:

Արևելքում ձևավորվեց Իսուվայի թագավորությունը, որի առաջին արքան Խաթթունսիլիսի ավագ եղբայր Խալպասուլուպիսն էր: Նրա մահից հետո արքա դարձավ Ալի-Շարբուման: Այս երկուսի միջև ազգակցական կապի խնդիրը առայժմ լուծված չէ:<sup>353</sup> Իսկ Ալի-Շարբումայից հետո այստեղ հիշատակվում է Արի-Շարբուման: Այս-

---

<sup>352</sup> Otten 1988: 10-11. Թարխունտասսայի հետ խեթական արքայի կնքած մեկ այլ պայմանագրի ("Ուլլի-Թեշուբ") թվագրման հարցում չկա միասնական կարծիք (տես Otten 1988: 6; Hoffner 1989; Van den Hout 1989; 1995: 11-19; Houwink ten Cate 1994: 233 և այլն):

<sup>353</sup> Խալպասուլուպիսի և Ալի-Շարբումայի միջև կապի մասին տես Glocker 2011:

պիսով, Տերության սահմանամերձ շրջաններում ստեղծվեց Խաթթու-սասի արքայատոհմի հետ ազգակցական կապերով կապված և բարձր կարգավիճակով օժտված կախյալ պետությունների շղթա:

Արտաքին ասպարեզում Խաթթուսիլիսը հակված էր հրաժարվելու տարածքային նոր նվաճումներից և Խաթթիի ավանդական հակառակորդների հետ հարաբերությունները խաղաղ ճանապարհով կարգավորելու:

Նա փորձեց վերականգնել դաշնակցային հարաբերությունները Բաբելոնիայի հետ: Սակայն վերջինիս արքա Կադաշման-Տուրգուի մահից հետո նրա հաջորդը՝ Կադաշման-Էնլիլ II-ը նախապատվությունը տվեց Բաբելոնիայի ավանդական դաշնակից Եգիպտոսի հետ հարաբերությունների հաստատմանը, այդպիսով հեռանալով Խաթթիից: Անցանկալի իրավիճակը հարթելու նպատակով Խաթթուսիլիսը նամակով հորդորում էր Բաբելոնիայի արքային հետևելու հոր քաղաքականությանը, հակառակ դեպքում նույնիսկ սպառնալով գրավել Բաբելոնիան: Դատելով հետագա իրադարձություններից, արքայի փորձը վերականգնելու դաշնակցային հարաբերությունները Բաբելոնիայի հետ առանձնապես լուրջ հեռանկար չուներ: Խեթաբաբելոնյան փոխհարաբերությունները սահմանափակվեցին միայն գահաժառանգ Թուղիսալիյասի հետ բաբելոնյան արքայադստեր ամուսնությամբ:

Ասորեստանի արքա Ադադնիրարի I-ին ուղղված Խաթթուսիլիսի նամակից ակնհայտ է դառնում խեթական արքայի ցանկությունը երկու պետությունների միջև խաղաղ հարաբերություններ հաստատել: Նամակից այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ նախկին խեթահպատակ Միտտանին (Խանիգալբատ), Խաթթուսիլիսի կարծիքով, պատկանում էր Ասորեստանին: Այս քայլով Խաթթուսիլիսը ցանկանում էր չարել հարաբերությունները Ասորեստանի հետ, քանի որ դեռևս պահպանվում էր լարվածությունը Եգիպտոսի հետ:

Հաջորդը Եգիպտոսի հետ շփման գոտում գտնվող Ամուրրուի արքա Բենտեշինայի հետ կնքված կախյալ պայմանագիրն էր, որն ամրապնդվեց արքայազն Ներիկկաիլիի և Բենտեշինայի դստեր, ինչպես նաև Խաթթուսիլիսի դուստր Գասսուլիյավիայի և Բենտեշինայի



ամուսնությամբ: Գասսուլիյավիյան պետք է դառնար Բենտեշինայի առաջին կինը, իսկ նրանց որդին՝ Ամուրբուի ժառանգական արքա:

Խաթթուսիլիսի արտաքին քաղաքականության համար հատկանշական էր դինաստիական ամուսնությունների պրակտիկան, որը սկսվել էր դեռևս Սուլայիլուլիումաս I-ից, սակայն աննախադեպ թափ ստացավ հենց նրա օրոք: Այսպես, կրկնակի ամուսնություն կազմակերպվեց Բաբելոնիայի արքայատոհմի հետ, ավելի ուշ՝ մ.թ.ա. 1258թ. կնքված խեթա-եգիպտական պայմանագրից հետո Խաթթուսիլիսի երկու դուստրերը հերթով կնության տրվեցին Ռամզես II-ին, նրա դուստր Կիլուշխեպան դարձավ Իսուվայի (հայկ. Ծոփք) արքա Արի-Շարբումայի կինը,<sup>354</sup> իսկ Խաթթուսիլիսի մեկ այլ դուստրը՝ արդեն Թուրքիայի IV-ի օրոք դարձավ Ամուրբուի արքա Մաուզամուվասի կինը:

Դինաստիական ամուսնությունների քաղաքականության հարցում Խաթթուսիլիսը մեծ հետևողականություն էր դրսևորում, որի նպատակը կախյալ պետություններում խեթական արքայադուստրերի սերունդներին գահաժառանգ դարձնելն էր: Պահպանվել է մի հետաքրքիր նամակ, որը գրված է Ռամզես II-ի կողմից Խաթթուսիլիսին: Նամակից պարզ է դառնում, որ Խաթթուսիլիսը դիմել էր Ռամզեսին բժիշկ ուղարկել, ով կօգներ իր քրոջը՝ Սեխա գետի երկրի թագուհի Մասսանաուցցիին երեխա ունենալ: Ռամզեսի պատասխանը այսպիսին էր.

*"Ես ասում եմ եղբորս. Մատանացին՝ եղբորս քույրը, քո եղբայր արքան նրան ճանաչում է: Ասում ես, որ նա 50 կամ 60 տարեկան է: 50 տարեկան կինը արդեն ծեր է, իսկ ինչ ասել 60 տարեկանի մասին: Ոչ ոք չի կարող դեղ ստեղծել որպեսզի նա երեխաներ ունենա ... Ես, քո եղբայր արքան կուղարկեմ հմայության մասնագետ քուրմ և բժիշկ և նրանք կարող են դեղ ստեղծել, որը կօգնի նրան երեխաներ ունենալ":*<sup>355</sup>

<sup>354</sup> Կիլուշխեպայի՝ Խաթթուսիլիսի դուստր լինելու հարցում չկա միասնական կարծիք (տես De Roos 1987; 2005):

<sup>355</sup> Bryce 2005: 284.

## **"Հավերժական Բարեկամության" պայմանագիրը**

Խաթթուսիլիս III-ի արտաքին քաղաքական կարևորագույն ձեռքբերումը խեթա-եգիպտական դարավոր հակամարտության ավարտն էր:

Ք.ա.1259թ. Խաթթուսիլիս III-ը Եգիպտոս ուղարկեց երկու պետությունների միջև կնքվելիք պայմանագրի խեթական տարբերակը՝ գրված աքքադերեն լեզվով, որը փորագրված էր արծաթե սկավառակի վրա: Իր հերթին Ռամզես II-ը Խաթթի ուղարկեց, նույնպես աքքադերենով, պայմանագրի եգիպտական տարբերակը: Երկու տարբերակների միջև էական տարբերություններ չկային, քանի որ երկու արքաների վստահված անձինք նախապես համաձայնեցրել էին դրա կետերը:

“Հավերժական խաղաղության և բարեկամության պայմանագիրը”<sup>356</sup> վերջ տվեց երկու տերությունների միջև դեռևս XV դարում սկիզբ առած լարված, երբեմն նաև թշնամական հարաբերություններին: Ըստ պայմանագրի, կողմերը պարտավորվում էին երբևէ չարշավել մեկը մյուսի տարածք, օգնության գալ մեկը մյուսին թշնամու կողմից հարձակման ենթարկվելու կամ ապստամբության դեպքում: Հատուկ նշվում էր կողմերից որևէ մեկից մյուս երկիր գնացած փախստականների պարտադիր կերպով վերադարձնելը: Փաստացի, այդ պայմանագրով իրավական կարգավորում էր ստանում ապագայում երկու պետությունների միջև հարաբերություններում բոլոր վիճելի տարածքային և այլ խնդիրների կարգավորումը միայն խաղաղ բանակցությունների միջոցով լուծելու անհրաժեշտությունը: Եվ որ շատ կարևոր էր Խաթթուսիլիսի համար, Ռամզես II-ը նրան ճանաչում էր որպես Խաթթիի օրինական արքա, ընդունելով նրա լեգիտիմությունը. “... իրավամբ դու Խաթթի երկրների մեծ արքան ես, Արևի աստվածը քեզ իրավունք է տվել նստել Խաթթի երկրում քո հոր տեղում”:<sup>357</sup>

<sup>356</sup> Պայմանագրի տեքստը և կից ուսումնասիրությունը տես Edel 1997; նաև Spalinger 1981:

<sup>357</sup> Ska Archi 1971: 209:

Պայմանագրում հատուկ նշվում էր Խաթթիի գահին Խաթթուսիլիսի սերունդների իշխելու իրավունքը, որով բացառվում էր Մուվատալիսի ժառանգների՝ իշխանության գալու հնարավորությունը (Ուրիսի-Թեշուրը և նրա ժառանգները): Եզիպտոսը ճանաչում էր առաջինների իրավունքը:

Պայմանագիրն ամրապնդվեց խեթական արքայադուստրերից մեկին՝ Գասսուլավիյային Եզիպտոս ուղարկելով որպես Ռամզեսի առաջին կին (մ.թ.ա. 1246թ.):<sup>358</sup> Ավելի ուշ ևս մեկ խեթական արքայադուստր՝ Կիլուշխեսյան համալրեց Ռամզեսի հարեմը: Ավելին, Ռամզեսը նույնիսկ Խաթթուսիլիսին հրավիրեց Եզիպտոս անձամբ հանդիպելու "իր եղբոր" հետ: Սակայն Խաթթուսիլիսը այդպես էլ չընդունեց հրավերը, տարբեր պատճառաբանություններով և իր փոխարեն որպես Գասսուլավիյային ուղեկցող ուղարկեց Պուրուխեսպային:

Պայմանագրի կնքումից որոշ ժամանակ անց կրկին բարձրացավ Ուրիսի-Թեշուրի խնդիրը, ով, հնարավոր է, այդ պահին գտնվում էր Եզիպտոսում: Ըստ Խաթթուսիլիսի կառավարման միջնամասում՝ խեթա-եզիպտական հարաբերությունների բարելավումից հետո գրված որոշ նամակների, վերջինս դեռևս մտահոգված էր նախկին արքայի գործունեությամբ: Այդ մասին է վայում Արևմտյան Փոքր Ասիայի խեթահպատակ արքա Կուպանտա-Կուրունտայի՝ Ռամզես II-ին առաքված նամակը, որտեղ նամակագիրը հորդորում էր Եզիպտոսի փարավոնին Ուրիսի-Թեշուրի ձեռքից վերցնել նրա ունեցվածքը և զորքը: Թերևս նա գործում էր Խաթթուսիլիսի հանձնարարությամբ: Ի պատասխան դրան, փարավոնը գրում է անմիջականորեն Խաթթուսիլիսին և դիվանագիտորեն պատասխանում, որ ինքը հավատարիմ է "իր եղբայր" Խաթթուսիլիսի հետ կնքած պայմանագրին:<sup>359</sup> Ենթադրվում է, որ Ռամզեսն իր նամակով հավաստիացնում էր խեթական արքային, որ ինքը չի դրժի իրենց միջև կնքված "հա-

---

<sup>358</sup> Ամուսնությունը նկարագրող եզիպտական տեքստը պահպանվել է մի շարք տաճարների պատերին (տես Kitchen 1996: 86-99: Խեթական արքայադուստրը ստացավ նոր՝ եզիպտական անուն՝ Մաստհորնեֆերուրե): Դստեր ծնվելուց որոշ ժամանակ անց Գասսուլավիյան մահացավ:

<sup>359</sup> Singer 2006: 29-31.

վերժական բարեկամության պայմանագիրը” և մասնակցելու Խաթթուսիլիսի դեմ ուղղված Ուրիսի-Թեշուբի ծրագրերին, բայց և միաժամանակ չի պատրաստվում հանձնել վերջինիս: Ինչ-որ մի պահ Ռամզեսը որոշեց նրան վերադարձնել Խաթթուսիլիսին, սակայն Խաթթի փախստական արքան գաղտնի հեռացավ Եգիպտոսից անհայտ ուղղությամբ: Նրա հետագա ճակատագիրը պարզ չէ: Հայտնի է միայն, որ Խաթթուսիլիսը բավական երկար ժամանակ նամակներով դիմում էր Ռամզես II-ին խնդրելով, երբեմն նաև պահանջելով հայտնել իրեն Ուրիսի-Թեշուբի գտնվելու վայրը: Վերջինս վստահեցնում էր Խաթթուսիլիսին, որ տեղյակ չէ նրա գտնվելու վայրի մասին և, փորձելով օգնել իր դաշնակցին, ներկայացնում էր այն շրջանների անվանումները, որտեղ կարող էր ապաստան գտնել Ուրիսի-Թեշուբը (Քադեշ, Հալեպ, Կիցցուվաստա): Հնարավոր է, Ուրիսի-Թեշուբը կարող էր հաստատվել Թարխունտասսայում, որտեղ այս շրջանում արքայի կարգավիճակով կառավարում էր նրա կրտսեր եղբայր Կուրունտան:<sup>360</sup>

Խեթա-եգիպտական պայմանագիրը հարատևեց ընդհուպ մինչև դարավերջը և կարևոր նշանակություն ունեցավ Առաջավոր Ասիայում հարաբերական խաղաղության պահպանման գործում: Անկախ Խաթթուսիլիսի և Ռամզեսի միջև ծագող որոշ բարդություններից, երկու պետությունների փոխհարաբերությունները ավելի քան բարիդրացիական էին, ինչի վկայությունը արքաների և թագուհիների միջև ինտենսիվ նամակագրությունն է: Այդ հարցում հատկապես ակտիվ էր խեթական թագուհի Պուդուխեպան: Դեռևս Խաթթուսիլիսի կենդանության օրոք, նաև որդու՝ Թուդխալիյաս IV-ի կառավարման շրջանում Պուդուխեպան արտակարգ մեծ հեղինակություն էր վայելում: Նա ակտիվորեն մասնակցում էր տերության ոչ միայն ներքին գործերին, այլև արտաքին քաղաքական ձեռնարկումներին: Հայտնի են նրա գրությունները ուղղված կախյալ կառավարիչներին, որտեղ նա խեթական արքաների պես իրեն անվանում է "Արևս":

---

<sup>360</sup> Singer 1996: 70; Hawkins 1998: 20-21; Bryce 2003: 211.

Կարգավորելով Եգիպտոսի հետ հարաբերությունները և ապահովագրելով Տերությունը հարավից, Խաթթուսիլիսը ձեռնարկեց Փոքր Ասիայում առկա քաղաքական խնդիրների լուծման գործը: Այստեղ ամեն ինչ չէ որ հարթ էր ընթանում:

### **Խաթթուսիլիսը Արևմտյան Փոքր Ասիայում**

Արևմուտքում կրկին հայտնվել էր Պիյամարադուսը, ով դեռևս Մուվատալլիս II-ի կառավարման սկզբնական շրջանում փորձել էր այստեղ ստեղծել սեփական թագավորություն: Այս անգամ, ըստ աղբյուրի, նա համագործակցում էր Ախիլիյավայի արքա Տավագալավասի հետ (“Տավագալավաս”):

Թե ինչպիսին էր Փոքր Ասիայի արևմուտքում՝ “Լուկկա երկրներում” (հետագայի Լիկիա, Լիկատնիա և Պիսիդիա) ծագած խոշոր ապստամբության էտնախորքը, պարզ չէ: Ախիլիյավայի արքային ուղղված նամակում (“Տավագալավաս”) ներկայացվում է Պիյամարադուսի գործունեությունը, որը վտանգի տակ էր դնում խեթական շահերը այս տարածաշրջանում: Նամակում խոսվում է այն մասին, որ Ախիլիյավայի արքայի եղբայր Տավագալավասը եկել էր Լուկկա որպեսզի այստեղ գտնվող փախստական բնակչությանը տեղափոխի Ախիլիյավա: Օգտվելով հարմար առիթից, նա փորձել էր տեղահանել նաև Լուկկայի այն բնակչությանը, որը փախստականների հետ առնչություն չունեի: Վերջիններս օգնություն էին խնդրել խեթական արքայից: Խեթական զորքը շտապել էր օգնության և մուտք գործել Ախիլիյավային ենթակա Միլլավանդա՝ պահանջելով դրա կառավարիչ Ատպասին իրեն հանձնել Պիյամարադուսին, սակայն վերջինս արդեն հասցրել էր ծովով հեռանալ Ախիլիյավա: Համենայնդեպս առայժմ առկա աղբյուրներում նա այլևս չի հիշատակվում:

Այնուամենայնիվ կարելի է ենթադրել, որ Խաթթուսիլիսին հաջողվել էր ժամանակավորապես լուծել Ախիլիյավայի դրդմամբ այստեղ տարիներ շարունակ իրավիճակը սրող Պիյամարադուսի խնդի-

րը<sup>361</sup>, որով միառժամանակ արևմուտքը կրկին անցավ խեթերի վերահսկողության տակ:

Խաթթուսիլիս III-ի կառավարումը շատ առումներով հաջողված էր: Եգիպտոսի հետ կնքված խաղաղության և բարեկամության պայմանագիրը թույլ տվեց ապահովել Տավրոսից հարավ ընկած սիրիական տիրույթների անվտանգությունը: Խաթթիի ազդեցության արևելյան գոտում Բսուվայի արքայատոհմի հետ ունեցած խնամիական կապերը հնարավորություն էին տալիս արգելապատնեշ ստեղծել դեպի հյուսիս ձգտող Ասորեստանի դեմ: Այնուամենայնիվ, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, Բսուվան ի վիճակի չէր ապահովելու դեպի Խաթթիի ազդեցության արևելյան գոտի ձգտող Ասորեստանի առաջխաղացումը: Բուն փոքրասիական տարածաշրջանում նույնպես հաստատվեց հարաբերական անդորր:

Սակայն այդ ամենը միայն տվյալ պահին: Խաթթուսիլիսի հաջորդ Թուդիսալիյաս IV-ի կառավարման շրջանում ի հայտ եկան լուրջ բարդություններ ինչպես արտաքին քաղաքականության ոլորտում, այնպես էլ Տերության ներսում, որոնց շարքում առաջնային նշանակություն ուներ ներդինաստիական պայքարը:

## **ԹՈՒԴԻՍԱԼԻՅԱՍ IV**

### **Թուդիսալիյասի գահակալումը**

Խաթթուսիլիսն իր երկրորդ որդուն՝ Թուդիսալիյասին նախընտրեց ավագ որդի Ներիկկաիլիի փոխարեն նշանակել իրեն հաջորդ, չնայած նրա ընտրությունը նախապես կանգ էր առել ավագ որդու վրա: Դեռևս նախքան գահաժառանգ նշանակվելը Թուդիսալիյասը պաշտամունքային խոշոր կենտրոն Ներիկ քաղաքի Ամպրոպի աստծո տաճարի քրմապետն էր: Սակայն առայժմ անհայտ պատճառներով Խաթթուսիլիսը նրան փոխադրեց աշխարհիկ ոլորտ: Թուդիսալիյասը դարձավ Խակպիս քաղաքի կառավարիչը, ստանալով այն նույն կարգավիճակը ինչ Խաթթուսիլիսն ուներ դեռևս Ուրխի-Թեշուբի

---

<sup>361</sup> Պիլամարադուսի գործունեության և խեթերի արևմտյան քաղաքականության մասին տես Bryce 1979; Heinhold-Krahmer 1983 և այլն:

կառավարման շրջանում: Խակալիսը Խաթթիի հյուսիս և հյուսիս-արևելյան սահմանամերձ գոտում ձևավորված ռազմականացված շրջանի կենտրոնն էր, որը ռազմավարական մեծ նշանակություն ուներ կասկական ցեղերի դեմ արդյունավետ պաշտպանություն կազմակերպելու գործում: Վերջապես, Թուղխալիյասը ստացավ “Գլխավոր թիկնապահ” (*GAL.MEŞEDI*) բարձր պաշտոնը, դրանով իսկ գլխավորելով արքայի անձնական թիկնագորը: Հնարավոր է, որ Թուղխալիյասը հոր կառավարման վերջին շրջանում հանդիսանում էր նրա գահակիցը: Գահակալումից որոշ ժամանակ առաջ Թուղխալիյասը, Պուղուխեպայի ջանքերի շնորհիվ, ամուսնացավ Բաբելոնիայի արքայադստեր հետ:<sup>362</sup>

Ինչպես և Խաթթիի պատմության նախորդ փուլերում, այս շրջանում ևս բարդություններ ծագեցին արքայատոհմի ներսում՝ կապված *տավանաննա* Պուղուխեպայի հետ: Վերջինս շարունակում էր վայելել իր կարգավիճակից բխող արտոնություններն ու իշխանությունը և ինչ-որ պահ բախում առաջ եկավ նրա և գործող թագուհու՝ Թուղխալիյասի կնոջ միջև: Նույնիսկ կարծիք է հայտնվել այն մասին, որ Պուղուխեպան կարող էր վտարվել արքունիքից:<sup>363</sup>

Թուղխալիյաս IV-ը իշխանության եկավ հոր՝ Խաթթուսիլիս III-ի՝ քաղաքական իրադարձություններով հարուստ, սակայն որոշակիորեն պայթյունավտանգ մթնոլորտում: Խեթա-եգիպտական պայմանագրի շնորհիվ Սիրիայում *status quo*-ի հաստատագրումը կայունացրել էր Խաթթիի հարավային շրջաններում տիրող իրավիճակը: Սակայն մյուս ուղղություններում՝ Փոքր Ասիայի արևմուտքում և արևելքում դժվար լուծելի խնդիրներ էին հասունանում: Հարավ-արևելքում տարեցտարի էլ ավելի մեծ ակտիվություն էր ցուցաբերում Ասորեստանը, նաև արևմուտքում իրադրությունը մնում էր լարված՝ հղի հետագա բարդացման հեռանկարով: Նույնիսկ Փոքր Ասիայի հարավային շրջաններում իրադրությունը անհանգիստ էր: Այստեղ ապստամբություն էր բռնկվել Լալանդա երկրում (Ստորին երկրի մի մասը): Հենց նշված ճակատներն էլ հանդիսացան Թուղ-

<sup>362</sup> Beckman 1983b: 109; Singer 1991: 330-338.

<sup>363</sup> Singer 1991: 332.

խալիյասի արտաքին քաղաքական գործունեության գլխավոր ուղղությունները:

### **Ներդինաստիական խնդիրներ**

Թուղխալիյասի կառավարման սկզբնական շրջանում սկսվեց և բավական երկար ժամանակ շարունակվեց դեռևս Խաթթուսիլիս III-ի և Մուրսիլիս III-ի միջև ընթացած գահակալական պայքարի նոր փուլը: Այս անգամ գործող արքայի դեմ հանդես էին գալիս խիստ ճյուղավորված արքայատոհմի որոշ ներկայացուցիչներ:

Մասնավորապես, աղբյուրները վկայում են այն մասին, որ Թուղխալիյասի դեմ ծրագրվել էր դավադրություն, որի նպատակը նրա ֆիզիկական ոչնչացումն էր իր մերձավորների հետ միասին: Դավադրության առաջնորդը արքայազն Խեսնին էր՝ Թուղխալիյասի խորթ եղբայրը, իսկ մասնակիցները արքայատոհմի մի շարք անդամներ էին, որոնց մի մասը անվանապես հիշատակվում է («Խեսնի-ի դավադրությունը»):<sup>364</sup> Թե որքանով էր դավադիրներին հարում Թարխունասասայի արքա Կուրունտան, պարզ չէ. վերջինիս ակտիվությունը դեռևս առջևում էր: Դավադրության մասնակիցների շարքում հիշատակվում են, մասնավորապես, «կառավար» Լուպակկին և «Իսուվայի արքան» (թերևս, Արի-Շարրուման): Սակայն դավադրությունը ժամանակին բացահայտվեց և նրա մասնակիցները պատժվեցին:

Թուղխալիյասի որոշ տեքստերում ուղղակի խոսվում է արքայատոհմի անդամների մեծաքանակության, ինչպես նաև իր օրինական իշխանության պահպանման մասին: Օրինակ, տեքստերից մեկում ուղղակի հայտարարվում է հետևյալը.<sup>365</sup>

*“Արևս շատ եղբայրներ ունի և նրա հոր շատ որդիներ: Խաթթի երկիրը լի է արքայատոհմի անդամներով՝ Մուպպիլուլիումասի սերունդները, Մուրսիլիսի սերունդները, Մուվատալլիսի սերունդները, Խաթթուսիլիսի սերունդները բազմաթիվ են: Արքայական իշխանության հետ կապված դուք պետք է ճանաչեք միայն մեկ անձի և պաշտպանեք միայն Թուղխալիյասի թոռանը, ծոռանը և ժառանգներին”:*

<sup>364</sup> Դավադրության մանրամասների համար Tani 2001; Խանգաղյան 2004.

<sup>365</sup> Տեքստը տես Schuler von 1957: 9:



Վերոհիշյալ հայտարարությունը միանշանակ վկայում է Խաթրիիում արքայատոհմի տարբեր ճյուղավորումների ներկայացուցիչների կողմից արքայական իշխանության համար պոտենցիալ պայքարի հնարավորության մասին: Եթե դրան ավելացնենք նաև արտաքին քաղաքական լուրջ խնդիրները, ապա պարզ կդառնա, թե ինչպիսի ծանր պայմաններում էր ստիպված գործելու Թուղխալիյասը: Նա փորձեց հարթել իրավիճակը՝ արքայատոհմի որոշ ակնառու ներկայացուցիչներին տարբեր շնորհներ տրամադրելով՝ նրանց ապագա լոյալությունն ապահովելու նպատակով: Պայմանագիր կնքվեց Թարխունտասայի արքա Կուրունտայի հետ (“Բրոնզե տախտակը”): Կուրունտան այսուհետև կարող էր ինքնուրույն նշանակել իր հաջորդին, նաև նվազեցվեց Թարխունտասայից եկող հարկի և այլ պարտավորությունների չափը: Ավելին, Թուղխալիյասի միջամտությամբ ծանր հիվանդ Կուրունտան առողջացավ շնորհիվ Եգիպտոսից հրավիրված բժիշկների: Կարգամիսի արքա Մախուրունուվային ևս տրամադրվեցին լրացուցիչ արտոնություններ:

Սակայն ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, պայքարը գահակալման համար արքայատոհմի տարբեր ներկայացուցիչների կողմից դեռևս առջևում էր, ընդ որում քաղաքացիական պատերազմի տեսքով (տես ստորև):

### **Խաթրին և Ասորեստանը. Նիխրիյայի ճակատամարտը**

Թուղխալիյասի գործունեության սկիզբը համընկավ Ասորեստանի առաջխաղացման հետ դեպի Հյուսիսային Սիրիա և Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտք: Սալմանասար I-ը իր կառավարման վերջին շրջանում ծանրագույն հարված հասցրեց Միտտանիի արքա Շաթթուարա II-ին: Ասորեստանյան տեքստը Միտտանիի (տեքստում՝ Խանիգալբատ) որպես Շաթթուարայի դաշնակիցներ հիշատակում է խեթերին և արամեական *ախլամու* կոչվող ցեղին: Ըստ դրա, Սալմանասարին հաջողվել էր հաղթել հակառակորդին, գրավել ինը ամրացված բնակավայրեր, ավերել 180 բնակավայրեր և գերեվարել թշնամու 14.400 զինվորների:<sup>366</sup>

---

<sup>366</sup> Grayson 1987: 183-184 (համ. A.O.77.1).

Ասորեստանյան առաջխաղացումը դեպի Հյուսիսային Միջագետք, Վերին Եփրատի և Վերին Տիգրիսի ավազանների՝ խեթերից կախյալ շրջաններ շարունակվեց նոր թափով Թուկուլթի-Նինուրտա I-ի օրոք: Հնարավոր է, որ Թուղխալիյասը տեղյակ էր Ասորեստանի նոր արքայի հեռուն գնացող ծրագրերի մասին՝ կապված “Մուբարի երկրների” հետ (Տուր Աբդին լեռների և Վերին Տիգրիսի միջև): Այստեղի մեծաքանակ երկրների (Պապխի, Կադմուխի, Բուշշե, Մումմե և այլն) նվաճումը կարող էր Թուկուլթի-Նինուրտա I-ի համար բացել ճանապարհները դեպի Արևելյան Փոքր Ասիա և հատկապես Էրզրանի մադենի հարուստ պղնձահանքերը: Բացի այդ, կախյալ Միտտանիի նկատմամբ տարած հաղթանակը Սալմանասարի կողմից կարող էր վերացնել այն արգելապատնեշը, որը Կարգամիսի քույր-թագավորության շնորհիվ առժամանակ զսպում էր Ասորեստանին: Հարավ-արևելյան Փոքր Ասիայի մատույցներում ուժերի հարաբերակցությունը աստիճանաբար կարող էր փոխվել հօգուտ Ասորեստանի: Այդ էր պատճառը, որ Թուղխալիյաս IV-ը չէր կարող անտարբեր դիտորդի դերում մնալ:

Թուկուլթի-Նինուրտայի գահակալումից որոշ ժամանակ անց Թուղխալիյասը գրեց նրան՝ շնորհավորելով այդ կապակցությամբ, միաժամանակ առաջարկելով իր օգնությունը տարածաշրջանի երկրներում հնարավոր ապստամբությունների ճնշման գործում, ինչպես նաև հորդորելով ճանաչել Սալմանասարի օրոք երկու պետությունների միջև հաստատված սահմանները:<sup>367</sup> Մակայն Ասորեստանի արքան չանսաց այդ թաքնված “հորդորներին” և սկսեց արշավանքը դեպի Մուբարի երկրներ:<sup>368</sup> Դրան հետևեց նոր արշավանքը Մուբարիից հյուսիս՝ դեպի Նաիրի երկրներ:<sup>369</sup> Հենց այս երկրորդ արշավանքի շրջանում է որ Թուղխալիյասը վճռեց ակտիվորեն միջամտել իրադարձություններին:

Մ.թ.ա.1234/3թ. ասորեստանյան զորքի առաջխաղացման և խեթական զորքի դեմ մղված հաղթական ճակատամարտի մասին

<sup>367</sup> Hagenbuchner 1989: 249-260 (N.191).

<sup>368</sup> Grayson 1987: 234-239 (տեքստ համ. A.O.78.1).

<sup>369</sup> Grayson 1987: 244 (տեքստ համ. A.O.78.5).

պահպանվել է Թուկուլթի-Նինուրտայի նամակը ուղղված Ուգարիտի արքա Ամմուրապիին:<sup>370</sup> Նամակում խոսվում է այն մասին, որ խեթական արքայի հրամանով ամրացվել էր Նիխրիյա քաղաքը, որն այս տարածաշրջանի կարևոր կետերից էր: Խեթական արքան մերժել էր Թուկուլթի-Նինուրտայի պահանջը և գորքը դուրս չէր բերել Նիխրիյայից: Ասորեստանի արքայի նամակում ասվում է, որ Նիխրիյան իր դեմ թշնամություն էր սկսել և խեթերի քայլը նա համարում էր իր դեմ թշնամության նշան: Վերջապես, Նիխրիյայի<sup>371</sup> մոտ տեղի ունեցած ճակատամարտում ասորեստանյան զորքը հաղթել էր, ինչում կարևոր դեր էր խաղացել խեթերի դաշնակից Բուուվայի զորքի չժամանելը ճակատամարտի վայր:<sup>372</sup> Թուդիսալիյասի մի տեքստում այս իրադարձության մասին ուղղակիորեն ասում է որ ինքը միայնակ էր մնացել Նիխրիյայի և Ալաթարմեի (Բուուվայի հարավում կամ հարավ-արևմուտքում) մոտ:<sup>373</sup>

Նիխրիյայի մոտ տեղի ունեցած խեթա-ասորեստանյան ճակատամարտի հարցում չկա միասնական կարծիք: Ըստ մասնագետների մի մասի, դա կարող էր լինել փոքրածավալ սահմանային բախում,<sup>374</sup> քանի որ ասորեստանցիները չգարգացրեցին այն, այլ զբաղված էին Նաիրիի երկրների հարցով, իսկ քիչ ավելի ուշ իրենց ուշադրությունը սնեռեցին դեպի հարավ՝ Քաբելունիայի վրա: Կարևոր է նշել, որ Թուկուլթի-Նինուրտայի նամակից բացի, նրա պաշտոնական արձանագրություններից ոչ մեկում Նիխրիյայի ճակատամարտի մասին որևէ ակնարկ չկա, ինչը միանգամայն սպասելի էր Խաթթիի "Մեծ արքայի" նկատմամբ տարած հաղթանակի դեպքում: Թուկուլթի-Նինուրտայի ուշ շրջանի երկու տեքստերում է միայն հանդիպում խե-

---

<sup>370</sup> Lackenbacher 1982.

<sup>371</sup> Նիխրիյան նույնն է, ինչ հին ասորեստանյան Nihria, Nahiria, Nahria, Niharia-ն, ավելի ուշ շրջանի Niri և Na'iri և ուրարտական Nihiriani-ն: Այն պետք է գտնվեր կամ Խաբուրի կամ Բալիխի վերին հոսանքների շրջանում (Götze 1953: 61-62) կամ Վերին Տիգրիսի հովտում (Astour 1979: 5; Diakonoff and Kashkai 1981: 60-61; Арутюнян 1985: 155):

<sup>372</sup> Ճակատամարտի ընթացքի և մեկնաբանությունների համար տես Singer 1985; Քոսյան 1997բ: 184-185:

<sup>373</sup> Singer 1985: 100.

<sup>374</sup> Singer 1985: 104; Liverani 2001: 27.

թական տարածքի հիշատակությունը՝ կապված Մուբարի երկրների դեմ կազմակերպված արշավանքի հետ: Այնտեղ ընդամենը ասվում է, որ նա իր կառավարման սկզբում Եփրատի հակառակ ափից 28.800 գերիներ էր տեղահանել և տարել Ասորեստան:<sup>375</sup> Ակնհայտ է, որ Իսուվան չէր անցել Ասորեստանի վերահսկողության տակ, ինչի վկայությունը Թուղխալիյասի՝ Իսուվայի արքային ուղղված նամակի առկայությունն է:

Ինչպիսին էլ որ լինեք Ասորեստանի հաջողությունը Հայկական Տավրոսի լեռնագոտում, պարզ է միայն, որ Խաթթին այս տարածաշրջանում չէր տիրապետում բավարար քանակությամբ ռեսուրսների վստահորեն պաշտպանելու իր համար կարևոր ռազմավարական ուղղությունները: Ասորեստանյան առաջխաղացումը և խեթահպատակ Միտտանիի կորուստը Տերությանը կանգնեցրել էին բարդ խնդիրների առջև այս ճակատում:

Թուղխալիյաս IV-ի կառավարման վերջին շրջանում խեթասորեստանյան փոխհարաբերությունները սկսում են որոշակիորեն բարելավվել, ինչի վկայությունը Ասորեստանի արևմտյան շրջաններից հայտնաբերված արխիվների նյութերն են:<sup>376</sup> Այդ տեքստերի ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրելու, որ հեռավոր անցյալում երկու հակամարտող պետությունների հարաբերություններում սկսում են հայտնվել մերձեցման նշաններ: Դրա վկայությունը դիվանագիտական հարաբերությունների հաստատմանն ուղղված քայլերն էին, ինչպես նաև առևտրատնտեսական կապերի առկայությունը: Այդ տեքստերը թվագրվում են Թուկուլթի-Նինուրտա I-ի կառավարման այն ժամանակաշրջանով, երբ Ասորեստանի արքան հաղթել էր Բաբելոնիային և գերեվարել նրա արքա Կաշտիլիաշուին (մ.թ.ա. 1215թ. և դրանից մի քանի տարի անց): Հայտնի է նաև մ.թ.ա. 1213 կամ 1212թ. Աշշուր քաղաք գնացած խեթական դիվանագիտական առաքելության մասին՝ Տիլի-Շարրումայի գլխավորությամբ:

Թե ինչով էր պայմանավորված Խաթթիի և Ասորեստանի միջև հարաբերությունների “ջերմացումը”, պարզ չէ: Ամենայն հավանա-

<sup>375</sup> Grayson 1987: 272 (տեքստ համար A.0.78.10 և A.0.78.24).

<sup>376</sup> Այդ տեքստերի ընդհանրական ներկայացումը տես Singer 2008:

կանությամբ, Ասորեստանի պարագայում դա հարևան Բաբելոնիայի հետ ունեցած խնդիրներն էին, որոնք հանգեցրին բախման: Ինչ վերաբերում է Խեթական տերությանը, սպա այստեղ հնարավոր պատճառները ավելի շատ կարող էին լինել (Կուրունտայի ապստամբությունից հետո ստեղծված իրավիճակը, Արևմտյան Փոքր Ասիան և այլն):

### **Թուղխալիյասը արևմուտքում. “Տրոյական պատերազմը”**

Շատ ավելի հաջողված էին Թուղխալիյասի ձեռնարկումները Արևմուտքում: Իհարկե, ասորեստանյան ուղղությունը կարևոր էր, սակայն Խաթթիի համար ավելի մեծ կենսական նշանակություն ունեւր հենց այս ուղղությունը, քանի որ այստեղից կարելի էր անմիջականորեն սպառնալ նրա բնօրրանին: Այդ պատճառով, այնուամենայնիվ, Թուղխալիյասի արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրը Արևմտյան Փոքր Ասիան էր, որտեղ Խաթթուսիլիս III-ի ջանքերով ժամանակավորապես հաստատված կայուն իրավիճակը սկսել էր սասանվել: Ամենուրեք՝ Փոքր Ասիայի հարավ-արևմուտքում և արևմուտքում գլուխ էին բարձրացրել այն երկրները, որոնք Խաթթուսիլիս III-ի ջանքերով կրկին մտել էին Խաթթիի հովանու տակ: Ինչպես նախկինում, այժմ էլ արևմտափոքրասիական անջատողական ուժերի ետևում կանգնած էր Ախիսիյավան, որն առիթը բաց չէր թողնում աջակցելու Խաթթիի ենթակայության տակ գտնվող երկրներին:

Ներկայիս Կոնյա քաղաքից հյուսիս-արևմուտք ընկած Էմիրգազի կոչվող վայրից հայտնաբերված հիերոգլիֆային արձանագրության մեջ ներկայացված է Թուղխալիյասի արշավանքը հարավ-արևմտյան ուղղությամբ՝ դեպի “Լուկկա երկրներ” և Վիյանավանդա (“Էմիրգազի”): Խեթական արքային հաջողվեց գրավել Լուկկայի գլխավոր քաղաքներ Տալավան (անտիկ Տլոս), Ավարնան (անտիկ Արիննա) և Պինալեն (անտիկ Պինալե/Պինարա):

Լարվածության հաջորդ կենտրոնը Մեխա գետի երկիրն էր, որի՝ իշխանությունը Խաթթիից կախյալ արքա Մաստուրիսից բռնագավթած կամ նրա մահից հետո առանց խեթերի թույլտվությունը ստա-

նալու իշխանության եկած արքա Թարխունարադուն, հույսը դնելով Ախիսիյավայի վրա, հրաժարվել էր իր երկրի կախյալ պարտավորություններից և ապստամբել էր: Թուդխալիյասի պատժիչ արշավանքը հաջողությամբ ավարտվեց և Թարխունարադուն իր ընտանիքի ու ռազմավարի հետ միասին փոխադրվեց պաշտամունքային կենտրոն Արիննա քաղաք:

Նման բարդ իրավիճակ էր ստեղծվել արևմուտքի մեկ այլ երկրի հետ կապված, ինչի մասին հիշատակվում է Թուդխալիյասի՝ անհայտ հասցեատիրոջն (Արևմտյան Փոքր Ասիայի ինչ-որ արքա) առաքված նամակում (“Միլավատա”): Կարծիք է հայտնվել այն մասին, որ նամակի հասցեատերը այս տարածաշրջանի կարևոր պետություններից Միրայի արքա Տարկասնավան է, ով հիշատակվում է հիերոգլիֆային *Karabel* անվանումը կրող արձանագրության մեջ որպես դրա հեղինակ:<sup>377</sup>

Այստեղ ներկայացվում է բավական լարված իրավիճակ Վիլուսայի և Միլլավանդայի առնչությամբ: Նամակից պարզվում է, որ նախքան Թուդխալիյասի արևմտյան արշավանքները, Վիլուսայի խեթամետ արքա Վալմուն գահագրկվել էր Ախիսիյավայի դաշնակից Միլլավանդայի արքա Ատպասի կողմից: Թուդխալիյասը ոչ միայն վերադարձրեց Վալմուին իր տիրույթը, այլև, գրավելով Միլլավանդան, այնտեղ արքա նշանակեց Ատպասի որդի Մասխուիտտային:<sup>378</sup> Նամակը ուղղակիորեն նշում է այն մասին, որ Միրայի արքան որոշակի ազդեցություն ուներ Վիլուսայի նկատմամբ: Ըստ նամակի, Միրայի արքային հանձնարարվում էր վերականգնել Վալմուին իր գահին: Այդպիսի իրավիճակը, թերևս, արևմուտքում ձևավորված նոր իրողությունների արտացոլումն է: Սա Խաթթիի արտաքին քաղաքականության մեջ նոր երևույթ չի կարելի համարել, երբ մի կախյալ պետություն անմիջականորեն վերահսկում է մեկ այլ կախյալ պետության, ինչպես ակնարկում է Թ.Բրայսը:<sup>379</sup> Նման պատկեր կարելի է

---

<sup>377</sup> Hawkins 1998: 19.

<sup>378</sup> Վիլուսայի և Միլլավանդայի վերաբերյալ իրադարձությունների վերականգնումը տես Hoffner 1982; Singer 1983; Bryce 1985; Güterbock 1992a: 242 և այլն:

<sup>379</sup> Bryce 2005: 308.

տեսնել Հյուսիսային Միրիայում Մուպպիլուլիումաս I-ի օրոք, երբ այդպիսի լիագորություններ էին տրամադրվել Կարգամիսի քույր-թագավորությանը սիրիական կախյալ քաղաքական միավորների և նույնիսկ Միտտանիի նկատմամբ:

Միլլավանդայում խեթամետ արքայի նշանակումով Ախիսիյավան դուրս մղվեց Փոքր Ասիայում իր ունեցած գլխավոր հենակետից, այլևս հնարավորություն չունենալով ակտիվորեն միջամտելու այս տարածաշրջանի գործերին:

Սակայն դրանով Թուդիսալիյասը չավարտեց Ախիսիյավայի խնդրի լուծումը: Ամեն դեպքում վերջինս դեռևս իրենից պոտենցիալ վտանգ էր ներկայացնում կամ կարող էր ներկայացնել: Այդ էր պատճառը, որ, ասորեստանյան և արևմտափոքրասիական ճակատներում ստեղծված իրադրությունից ելնելով, Թուդիսալիյասը ավելի հեռու գնաց դիմելով կտրուկ միջոցների:

Կախյալ Ամուրրուի արքա Սաուսգամուվասի հետ կնքված պայմանագրում (“Սաուսգամուվաս”)<sup>380</sup> արտացոլված է քննարկվող ժամանակահատվածում գոյություն ունեցող ուժերի հարաբերակցությունը և աշխարհաքաղաքական իրավիճակը: Պայմանագրի համապատասխան մասը դիվանագիտության պատմության մեջ թերևս առաջին դեպքը պետք է համարել, երբ ամրագրվում էր հակառակորդ պետությունների ցամաքային շրջափակման քաղաքականությունը:

(4) *“Եթե Եզիպտոսի արքան Արևիս բարեկամ է, (5) քեզ էլ պիտի բարեկամ լինի, (6) Բայց եթե նա Արևիս թշնամի է, (7) նա քո թշնամին պիտի լինի, (8) Եվ եթե Բաբելոնի արքան (9) Արևիս բարեկամ է, քեզ էլ նա (10) բարեկամ պիտի լինի, և եթե նա Արևիս (11) թշնամի է, քեզ էլ պիտի նա թշնամի լինի, (12) Եթե Ասորեստանի արքան Արևիս թշնամի է, (13) քեզ էլ պիտի նա թշնամի լինի: (14) Քեզնից առևտրականը թող Ասորեստան (15) չգնա, իսկ նրանից առևտրականին (16) դու քո երկիր մի թողնի, (17) քո երկրով թող նա չանցնի: (18) Եվ եթե նա քո երկիր գա, բռնիր նրան և ուղարկիր նրան*

<sup>380</sup> Kühne und Otten 1971: 14-17; Beckman 1996: 101.

*Արևիս մոտ: Այնուհետև. (23) 'Ոչ մի ախիսիյավյան նավ թող չգնա նրա մոտ':*

Նույն պայմանագրում արքան թվարկում է կարգավիճակով իրեն հավասար արքաներին (Եգիպտոսի, Բաբելոնիայի և Ասորեստանի), ընդ որում նախապես տեքստում տեղ էր գտել նաև Ախիսիյավյաի արքան, սակայն հետո նրա անվան վրա գիծ էր քաշվել, այսինքն վերջինս այլևս որպես այդպիսին չէր դիտարկվում: Ամենայն հավանականությամբ, տեքստի վերջնական խմբագրման պահին Ախիսիյավյան կարող էր կորցնել իր ազդեցությունը Արևմտյան Փոքր Ասիայում, ինչը պետք է արտացոլվեր նրա կարգավիճակի վրա: Ենթադրվում է, որ դրա պատճառը պետք է փնտրել արևմուտքում Թուդիսալիյասի հաջող ռազմաքաղաքական ձեռնարկումների համատեքստում:<sup>381</sup>

Վերոհիշյալ հատվածից կարելի է եզրակացնել, որ Խաթթիի արքան Ասորեստանը և Ախիսիյավյան դիտում էր որպես թշնամական երկրներ, որոնց հետ Տերության բոլոր կախյալ երկրներին արգելվում էր որևէ շփում ունենալ: Հակառակ դրան, Եգիպտոսը և Բաբելոնիան դիտվում էին որպես բարեկամական երկրներ:

### **Թարխունտասսայի խնդիրը. Կուրունտայի ապստամբությունը**

Արևմուտքում և հարավ-արևելքում ընթացող իրադարձությունների շրջանում կամ գուցե քիչ ավելի ուշ սկսվեց ներքաղաքական լարվածության մի նոր փուլ, որը արքայի կառավարման սկզբից ևեթ հասունանում էր և ինչ-որ մի պահ հասավ իր գագաթնակետին: Արտաքին ուժերի նկատմամբ ունեցած հաջողությունները չեզոքացվեցին Թարխունտասսայի ապստամբության և նրա արքա Կուրունտայի՝ պետական հեղաշրջման փորձ կատարելու հետևանքով:<sup>382</sup>

Կուրունտայի կողմից կազմակերպված դավադրության խնդրի վերաբերյալ առկա են երկու աղբյուրներ, որոնց մեկնաբանությունը

---

<sup>381</sup> Bryce 2005: 310.

<sup>382</sup> Հնարավոր է, Կուրունտայի հեղաշրջումը տեղի ունեցած լինել խեթա-ասորեստանյան բախման շրջանում կամ քիչ ավելի ուշ (Bryce 2005: 320): Ապստամբության խնդիրների հետ կապված տես, մասնավորապես Singer 2001:



առ այսօր տարածայնությունների առարկա է: Դրանցից առաջինը 1987թ. Խաթթունասում հայտնաբերված՝ Կուրունտայի անունը կրող հիերոգլիֆային կնիքի դաջվածքներն են, որոնց առկայությունը կարող է վկայել նրա անթաքույց նկրտումների մասին (“Մեծ արքա, լաբարնա Կուրունտա”):<sup>383</sup> Երկրորդը 1996թ. Կոնյա քաղաքից 9 կմ հարավ-արևմուտք ընկած Հատիպ կոչվող բնակավայրի մոտ գտնվող ժայռի վրա հայտնաբերված ռեյլեֆային արձանագրությունն է, որտեղ գրված է. “Կուրունտա, մեծ արքա, [հերոս], Մուվատալլահի՝ մեծ արքայի, հերոսի որդի”:<sup>384</sup> Այլ աղբյուրներ, որտեղ ուղղակի կհիշատակվեր Կուրունտայի և Թուդխալիյասի միջև ընթացած քաղաքացիական պատերազմ կամ որևէ բախում, գոյություն չունի: Հաշվի առնելով հենց այդ հանգամանքը, կարծիք է հայտնվել այն մասին, որ վերոհիշյալ կնիքի և Հատիպի ժայռագիր արձանագրության առկայությունը պետք է ընդունել որպես ապացույց, որ տվյալ պահին Փոքր Ասիայում գուգահեռաբար գործել են երկու “մեծ արքաներ”:<sup>385</sup>

Եթե իրոք վերոհիշյալ աղբյուրները պետք է ընդունել որպես Կուրունտայի կողմից իշխանությունը զավթելու փորձ, ապա դժվար է խուսափել այն եզրակացությունից, որ Կուրունտան դրժել էր Թարխունտասայի տիրակալների և Խաթթունսիլիսի, այնուհետև Թուդխալիյասի հետ կնքված պայմանագրերը (“Ուլմի-Թեշուր” և “Բրոնզե տախտակ”): Ամեն դեպքում կարելի է վստահաբար ենթադրել, որ Թուդխալիյասին հաջողվել էր ետ նվաճել մայրաքաղաքը, իսկ հետո նա չեղյալ էր հայտարարել Կուրունտայի հետ իր կնքած պայմանագիրը: Իրադարձությունների այդպիսի ընթացքը կարող է հավանական թվալ, եթե նկատի ունենանք Հ.Հոֆների դիտարկումը: Նրա կարծիքով, “Բրոնզե տախտակը” հայտնաբերվել է դամբարան հիշեցնող մի վայրում: Հավանաբար, վտարելով, գուցե նաև պատժելով

---

<sup>383</sup> Neve 1987.

<sup>384</sup> Dinçol *et al.* 1998.

<sup>385</sup> Singer 1996; 2000: 26. Սակայն այդպիսի ենթադրության դեմ բերվում են փաստարկներ: Օրինակ, Թարխունտասայի ենթադրվող տարածքից հայտնաբերված ժայռագիր արձանագրություններում (Karadağ և Kızıldağ) հանդես է գալիս ոմն “Մեծ արքա” Խարտապուսը, որի անունը վերցված է էդիկուլայի մեջ և որը միայն խթակալան արքաների անունների գրության ժամանակ է հայտնվում (Hawkins 1995a: 63, n.261):

Կուրունտային, Թուղխալիյասը ապաստարանագործել էր աստվածների վկայությամբ կնքված պայմանագիրը, թաղելով այն սրբավայրում:<sup>386</sup> Բացի այդ, Կուրունտայի և Թուղխալիյասի միջև ընթացած պատերազմում վերջինիս հաղթանակի վկայություն պետք է համարել իշխանության փոխանցումը նրա ուղղակի ժառանգներին՝ Առնուվանդաս III-ին և Սուպպիլուլիումաս II-ին:

Ինչպիսի ընթացք էլ որ ունենար Խաթթուսասի և Թարխունտասասայի տիրակալների միջև պատերազմը, պարզ է, որ Թուղխալիյասի օրոք երկու պետությունների միջև հակամարտությունը չէր կարող բացասաբար չանդադառնալ Տերության տարածքային ամբողջականության պահպանման և անհանգիստ հարևանների հարձակումների դեմ սահմանների պաշտպանության կազմակերպման վրա: Տերության ներքաղաքական կառույցը ակնհայտորեն քայքայվում էր: Եվ եթե Թուղխալիյասին հաջողվեց ժամանակավորապես կայունացնել իրավիճակը և հաղթող դուրս գալ Կուրունտայի դեմ մղված պայքարում, ապա նրա հաջորդ Առնուվանդաս III-ի կարճատև կառավարումից հետո իշխանության եկած մյուս որդու՝ Սուպպիլուլիումաս II-ի շրջանի իրադարձությունները Տերությունը անդառնալիորեն ուղղում էին դեպի անկում:

### **Իրավիճակը արևելքում**

Արևելքում՝ Հայկական Տավրոսի գոտում, Սառքեստանից գատ խնդիրներ կային կապված Վերին Եփրատի ավազանի քաղաքական միավորների հետ հարաբերություններում: Արքայի՝ Տերության սահմանամերձ շրջանների կառավարիչներին ուղղված հրահանգներում<sup>387</sup> վերջիններիս հանձնարարվում էր ուշադիր լինել դեպի Լուկկա և Ազզի նայող սահմանների ամրությունների նկատմամբ: Սա միանշանակ կարող է վկայել վերոհիշյալ երկու երկրների կախյալ հարաբերությունների եթե ոչ վերացման, համենայնդեպս փաստացի կորստյան մասին:

---

<sup>386</sup> Hoffner 1992: 48.

<sup>387</sup> KUB XXVI 12 ԴԿ II 12-15 (հրատ.՝ Schuler von 1957: 24-25).

Խաթթուսիլիս III-ի օրոք խեթերը դեռևս որոշ ազդեցություն ունեին վերինեփրատյան գոտում, ինչի վկայությունը մի շարք տարբեր բնույթի տեքստերն են: Դրանցից առաջինում հիշատակվում է Կունմախայի (հայկ. Կամախ-Անին՝ Եփրատի հյուսիսային ափին) մոտ գտնվող լեռան վրա տեղակայված "պահակակետը",<sup>388</sup> ինչը կարող է վկայել այս կարևոր ռազմավարական կետում խեթական ներկայության օգտին: Մեկ այլ տեքստում խոսվում է Ազգիից դեպի Խաթթի որոշ քանակությամբ հարկադրաբար բերված բնակչության մասին:<sup>389</sup> Ամեն դեպքում, հաշվի առնելով Իսուվայում խեթամետ արքայատոհմի կառավարման փաստը, Խաթթուսիլիսի օրոք Արևելքում իրավիճակը դեռևս այնքան էլ բարդ չպետք է լիներ: Բնչը, սակայն, չի կարելի ասել Թուդիսալիյաս IV-ի կառավարման շրջանի վերաբերյալ:

Խեթական գուշակային տեքստերից մեկը նկարագրում է դեպի Ազգի ուղղված խեթական զորքի արշավանքը գորավար Տատտամարուի գլխավորությամբ:<sup>390</sup> Այստեղ հիշատակվում են Ազգիի մի շարք բնակավայրեր, որոնք գտնվում էին ռազմական գործողությունների ծավալման շրջանում (Խարսալասա, Իստիտինա, Տախնիսարա, Ուրա, Տավատենա, Խիմմուվա): Արշավանքի ելքը հայտնի չէ, սակայն Թուդիսալիյասի վերոհիշյալ հրահանգների լույսի ներքո պարզ է դառնում, որ մ.թ.ա. XIII դարի վերջին տասնամյակներին արևելքում, ինչպես նաև Տերության սահմանամերձ մյուս ուղղություններում իրավիճակը ծայրաստիճան բարդ էր և խեթերը դժվարությամբ էին կարողանում պահպանել նախկին ազդեցությունը կամ առնվազն դրա մի մասը: Ակնհայտորեն սկիզբ էր առել ծայրամասային շրջանների նախկին հպատակ երկրների անկախացման գործընթացը:

Արտաքին և ներքին ասպարեզներում ճգնաժամի ակնհայտ դրսևորումներին գումարվեց դեռևս Խաթթուսիլիս III-ի օրոք նկատ-

---

<sup>388</sup> KUB LV 1 ԴԿ II 7'-10' (տես Քոսյան 2002: 233).

<sup>389</sup> Մի տեքստում հիշատակվում է Ազգիից դեպի Խաթթի 30 վերաբնակիչների տեղափոխման մասին (KUB XLVIII 105 ԴԿ 21' [տես Archi - Klengel 1980: 144], տես նաև վերը Թուդիսալիյաս III):

<sup>390</sup> Տեքստի հրատարակությունը տես Kosyan 2011:

վող մի խնդիր՝ կապված երաշտի և սովի հետ:<sup>391</sup> Հենց այդ ժամանակից են սկսում աղբյուրներում հանդես գալ տեղեկություններ հացահատիկի՝ պարբերաբար տեղ գտնող առաքումների մասին Եգիպտոսից և Քանաանից դեպի Փոքր Ասիա: Հավանաբար, այս համատեքստում պետք է դիտել Թուղխալիյասի ծովային արշավանքը Ալասիա (Կիպրոս) և դրա գրավումը: Այս արշավանքի մասին տեղեկությունը պահպանվել է Թուղխալիյասի որդի Սուպպիլուլիումաս II-ի տեքստում:<sup>392</sup> Կիպրոս կղզին կարող էր իսկապես արգելք հանդիսանալ Եգիպտոսից Կիլիկյան ծովափ ուղևորվող նավերի համար, եթե այնտեղ խեթական գերիշխանությունը ավարտվեր կամ այն գրավված լիներ քիչ ավելի ուշ աղբյուրներում հիշատակվող “Օովի ժողովուրդների” կողմից: Ըստ տեքստի, խեթական արքան Խաթթուսաս էր տարել Ալասիայի արքային իր ընտանիքի և կղզու բնակչության մի մասի հետ միասին:

Ամփոփելով Թուղխալիյաս IV-ի կառավարման շրջանը, կարելի է եզրակացնել, որ, չնայած արտաքին և ներքաղաքական մեծաքանակ խնդիրների, նա անկասկած կարողացավ ապահովել իր Տերության տարածքային ամբողջականությունը և հաղթող դուրս գալ գրեթե բոլոր մարտահրավերներում: Ըստ էության, Թուղխալիյասը վերջին խեթական մեծ արքան էր, ով կարողացավ ռազմական և դիվանագիտական միջոցներով լուծել բոլոր հիմնական խնդիրները: Թուղխալիյասից հետո խեթական տերությունը սկսում է արագ տեմպերով անկասելիորեն ընթանալ դեպի տրոհում:

---

<sup>391</sup> Այդ մասին տես Klengel 1974:

<sup>392</sup> CTH 121 = KBo XII 38 (հրատարակությունը և մեկնաբանությունը՝ Otten 1963; Güterbock 1967). Ալասիայի գրավումը Խաթթիում սկսված սովով բացատրելու մասին տես Bryce 2005: 322-323. Այս տեքստը հանդիսանում է Սուպպիլուլիումաս II-ի հիերոգլիֆային արձանագրության (Südburg) "սևագիր" տարբերակը: Südburg-ի առաջին մասում ներկայացված են Թուղխալիյաս IV-ի, իսկ երկրորդ մասում՝ իր օրոք տեղի ունեցած իրադարձությունները:

## ՍՈՒՊՊԻԼՈՒԼԻՌՈՒՄԱՍ II

### Սուպպիլուլիումասի արշավանքները

Թուդիսալիյաս IV-ի կառավարման բուռն և հաճախ լուրջ բարդություններով հագեցած շրջանը իր շարունակությունը ստացավ հաջորդաբար կառավարած որդիների՝ Առնուվանդաս III-ի և Խաթթիի վերջին արքա Սուպպիլուլիումաս II-ի օրոք: Վերջինիս կառավարումը ամենայն հավանականությամբ կարող էր սկսվել Ասորեստանի արքա Թուկուլթի-Նինուրտա I-ի վերջին շրջանում (մոտ. մ.թ.ա. 1210թ. սահմաններ) և նա այդ դեպքում պետք է լիներ Եգիպտոսի փարավոն Մերենպտահի ժամանակակիցը:

Սուպպիլուլիումաս I-ի արձանագրությունում, որը հավանաբար կազմվել էր նրա գահակալման առթիվ, նշում է երկրում տիրող անհանգիստ իրավիճակը, որտեղ ուղղակի հիշատակվում են Առնուվանդաս III-ի դեմ սկսված ելույթների, ինչպես նաև այն մասին, որ նախորդ արքան ժառանգներ չունեւ:<sup>393</sup> Ամենայն հավանականությամբ, հուզումները կարող էին կապված լինել գահին հավակնող տարբեր թեկնածուների նկրտումների հետ:

Նախկինի պես գլուխ էին բարձրացրել կախյալ երկրների կառավարիչները, ինչը հատկապես լավ է դրսևորվում Ուգարիտի արքա Իբիրանուի պարագայում: Սուպպիլուլիումասի որդի, արքայազն Պիխավալվիի նամակից՝ ուղղված Ուգարիտի արքա Իբիրանուին, պարզ է դառնում, որ վերջինս չէր եկել շնորհավորելու նորընտիր արքային կամ բանազնաց չէր ուղարկել նրա մոտ:<sup>394</sup>

*“Դու ինչու չեկար Արևիս առջև, երբ դարձար Ուգարիտի արքա: Եվ դու ինչու բանազնացներ չուղարկեցիր: Այժմ Արևս շատ զայրացած է այդ առթիվ: Այժմ քո բանազնացներին արագ ուղարկիր Արևիս առջև և ուղարկիր արքայի նվերները իմ նվերների հետ միասին:”*

Սուպպիլուլիումասի կառավարման իրադարձությունների մասին, հատկապես արտաքին ոլորտում, պահպանվել են Խաթթուսա-

<sup>393</sup> CTH 125 = KUB XXVI 33 (հրատ. և մեկնաբանությունը՝ Otten 1963; Güterbock 1967). Սուպպիլուլիումաս II-ի շրջանից պահպանված տեքստերի մասին տես Laroche 1953.

<sup>394</sup> Beckman 1996: 121.

սում հայտնաբերված հիերոգլիֆային ժայռագիր մի արձանագրություն ("Ձյուղբուրգ"), դեպի Ալասիա ուղղված արշավանքի մասին մի տեքստ, ինչպես նաև Ուգարիտի հետ նամակագրությունը:<sup>395</sup>

"Ձյուղբուրգում" հիշատակվում է արքայի արշավանքը դեպի հարավային և հարավ-արևելյան Փոքր Ասիա, որի ընթացքում գրավվել էին մի շարք երկրներ՝ Վիյանավանդան, Տամինան, Մասան, Լուկկան և Իկունան (վերջինս՝ անտիկ շրջանի Իկոնիոնը, ժաման. Կոնյա): Սրանք այն շրջաններն են, որոնք Թուղխալիյաս IV-ի կառավարման վերջին շրջանում նույնպես ապստամբել էին: Նշանակում է, վերջինիս չէր հաջողվել ավարտին հասցնել այդ երկրների հնագանդեցման գործը:

Սուպալիուլիումասի նշված արշավանքի նպատակակետի և հնարավոր հակառակորդի խնդիրը ավելի քան պարզ է: Տեքստում երկու տարբեր հատվածներում ուղղակիորեն նշվում է Թարխունտասսա երկրի նվաճման մասին, ընդ որում ասվում է, որ իր նախնիներից ոչ ոք այն չէր գրավել: Կարելի է ենթադրել, որ իրոք այս փուլում Թարխունտասսայի հետ հարաբերությունները սովորական լարվածությունից վերաճել էին բացահայտ հակամարտության: Բհարկե, բացառված չէ նաև այս արշավանքի համատեքստում նշված տարածաշրջանում այլ հակառակորդի գործունեությունը:

Թարխունտասսայի դեմ ուղղված արշավանքը, ավելի քան հնարավոր է, որ հարկադրված քայլ էր լուծելու Եգիպտոսից Փոքր Ասիա հացահատիկի անվտանգ փոխադրման խնդիրը: Թարխունտասսան վերահսկում էր Հարավային Փոքր Ասիայով դեպի Խաթթի կենտրոնական շրջաններ տանող ճանապարհները: Այդ խնդիրն առկա էր դեռևս Թուղխալիյաս IV-ի օրոք: Փարավոն Մերենպտահի՝ Կառնակի արձանագրության մեջ հիշատակվում է Խաթթի ուղարկված հացահատիկի մասին:<sup>396</sup> Խաթթուսասից Ուգարիտի արքային ուղղված նամակում խեթական կողմը պահանջում էր ապահովել նավ և անձնակազմ Եգիպտոսից 450 տոննա հացահատիկ տանելու համար:<sup>397</sup>

<sup>395</sup> Hawkins 1995a.

<sup>396</sup> Breasted 1906: 243-244 (§ 580).

<sup>397</sup> Nougayrol *et al.* 1968: 105-107 n. 33; Astour 1965: 254-255.

Որ իրավիճակն ավելի քան բարդ էր Խաթթիի համար հատկապես վառ է դրսևորվում դեպի Ալասիա ուղղված արքայի արշավանքը նկարագրող տեքստում:<sup>398</sup> Այստեղ հիշատակվում են այդ արշավանքի որոշ մանրամասներ: Մասնավորապես, խոսվում է երեք ծովային ճակատամարտերի մասին, որոնց հաջորդել էր արդեն կղզում մղված ցամաքային ճակատամարտը: Պարզ չէ թե ում դեմ էր կռվում խեթական զորքը: Արդյոք դա կղզու բնակչությունն էր, որը դուրս էր եկել Խաթթիի ենթակայության տակից, թե կղզին գրաված անհայտ հակառակորդը:<sup>399</sup> Հազիվ թե կղզու բնակչությունը ի վիճակի լիներ այդպիսի տևական դիմադրություն ցույց տալու խեթական ուժերին: Առավել քան հավանական է, որ այստեղ արդեն հասցրել էին հիմնավորվել "Օռվի ժողովուրդները", ովքեր այս շրջանում կամ քիչ ավելի ուշ եգիպտական և ուգարիտյան աղբյուրներում հանդես են գալիս որպես Լևանտյան տարածաշրջանում գործող ակտիվ և ապակայունացնող ուժ, որն ասպատակում էր ծովափնյա բնակավայրերը:

Մուպպիլուլիումաս II-ի վերը ներկայացված արշավանքներն ակնհայտորեն չի կարելի դիտել որպես խեթերի անվիճելի հաջողություն: Այլ աղբյուրներից հայտնի տեղեկությունների լույսի տակ ուրվագծվում է քննարկվող ժամանակաշրջանում տեղ գտած իրադարձությունների իրական պատկերը:

### **Խաթթիի անկումը**

Խեթական տերության պատմության ավարտական փուլում Փոքր Ասիայում ծավալված քաղաքական զարգացումները վաղուց ի վեր մասնագետների ուշադրության կենտրոնում են եղել և ներկայումս էլ դեռ վերջնական լուծում չեն ստացել: Խնդրի լուծման ճանապարհին ընկած հիմնական բարդությունը, բացի առկա սկզբնաղբյուրների համեմատական սակավությունից, այն անվիճելի իրողությունն է, որ Խեթական պետության պատմության բոլոր փուլերում, սկսած Հին թագավորությունից, վկայված են մի շարք ճգնաժամային

---

<sup>398</sup> Otten 1963; Güterbock 1967.

<sup>399</sup> Դեպի Ալասիա Մուպպիլուլիումասի կազմակերպած արշավանքի դրդապատճառների մասին տես Astour 1965: 256 n. 23; Singer 1983: 217; 1985: 122; 2000: 27; Muhly 1984: 44.

իրավիճակներ, որոնք միայն ուժերի գերագույն լարման շնորհիվ էր հաջողվում հաղթահարել և վերականգնել պետության տարածքային ամբողջականությունը: Այդպես եղավ Մուրսիլիս I-ի սպանությունից հետո ընդհուպ մինչև Տելեպինուսի կառավարումը, Առնուվանդաս I-ից հետո մինչև Մուպպիլուլիումաս I-ի հաջող արշավանքները, ներառյալ ավելի փոքր ժամանակահատվածներ ընդգրկող տարիները: Խեթական պետությունը, իր յուրահատուկ աշխարհագրական դիրքի հետևանքով, եզերված էր պոտենցիալ հակառակորդներով, գրեթե չունեի բնական սահմաններ և մեծ ջանքեր էին պահանջվում պահպանելու այս կամ այն փուլում ծագող մարտահրավերները հաջողությամբ չեզոքացնելու ուղղությամբ: Եթե դրան ավելացնենք Փոքր Ասիայում խեթական տեքստերով վկայված համաճարակների և սովի հետևանքով ստեղծվող տնտեսական և սոցիալական բարդ իրավիճակները, ապա պարզ կդառնա, որ Խաթթիի անկման և պատմության ասպարեզից դուրս գալու պատճառները շատ էին և, նմանապես, դրանում դերակատարների պակաս չէր զգացվում:

Խեթական տեքստի անկման խնդիրը<sup>400</sup> կարևոր է այն առումով, որ դրա պարզաբանումը թույլ կտա արժեվորել Փոքր Ասիայում մոտավորապես մ.թ.ա. 1200թ. հետո տեղ գտած քաղաքական զարգացումները և բնականոն կապ ստեղծել մ.թ.ա. XII-VIII դարերում ձևավորված և այդ խոշոր ժամանակահատվածում գոյատևած պետականությունների միջև:

Խաթթիի անկման "մեղավորների" շարքում խնդրի վաղ շրջանի ուսումնասիրողները միանշանակ հակված էին տեսնելու մի շարք արտաքին ուժերի մասնակցություն: Որպես այդպիսիք առաջին հերթին նշվում էին Բալկանյան թերակղզու հյուսիսից Տրոադայի վրայով դեպի Փոքր Ասիա թրակա-փոյուզական ցեղերի տեղաշարժը, որի արդյունքում կործանվեց *Տրոյա VIIb 1*-ը, Փոքր Ասիայի հյուսիսում և հյուսիս-արևելքում բնակվող՝ խեթերի ավանդական թշնա-

---

<sup>400</sup> Խաթթիի անկման խնդրի վերաբերյալ առկա են մեծաքանակ ուսումնասիրություններ (Götte 1936: 154; Bittel 1950: 73-74; 1970: 134; 1973: 171; von Schuler 1965: 65; Дьяконов 1968: 117-119; Lehmann 1970; Otten 1983; Singer 1985; 1987; Macqueen 1986: 51-52; Hoffner 1992; Güterbock 1992b; Քոսյան 1999ա: 112-117 և այլն):



մի կասկական ցեղերը "Շովի ժողովուրդների" և Բալկանցիների հետ միասին:

Այդ տեսակետները ավելի շուտ ենթադրություններ էին, որոնց հեղինակները փորձում էին եղած սուղ տեղեկությունների հիման վրա ներկայացնել Խեթական տերության փլուզման եղանակը, ժամանակը և կոնկրետացնել արտաքին գործոնը, այսինքն, մոտավորապես մ.թ.ա. 1200թ. մոտերքում դեպի կենտրոնական Փոքր Ասիա տեղաշարժված ժողովուրդներին: Իսկ քանի որ Խաթթին գտնվում էր Բալկանների, Լևանտի, Միջագետքի և Հայկական լեռնաշխարհի խաչմերուկում, իսկ բուն Փոքր Ասիայում և հարակից տարածքներում շրջապատված լինելով ամեննին ոչ լոյալ մեծ ու փոքր երկրներով ու ժողովուրդներով, ինչի վկայությունը նրա ողջ պատմության ընթացքում վկայված մշտական բախումներն էին հարևանների հետ, ապա, բնականաբար, խեթերի յուրաքանչյուր հարևան՝ մերձավոր թե հեռավոր, կարող էր համարվել նրանց պոտենցիալ թշնամին: Իհարկե, բացառությամբ Խաթթիի դաշնակից Եգիպտոսի, որի հետ կնքված խաղաղության պայմանագիրը հարատևեց մինչև առաջինի անկման պահը: Խեթերի այդպիսի հարևանությունը մասնագետների առջև ընտրության չափազանց լայն հնարավորություններ է ստեղծում "ծովի ժողովուրդներ", խեթերի հյուսիս-արևելյան հարևան կասկեր, արևելյան հարևան Հայասա և Ազգի, հյուսիսբալկանյան ցեղեր և, իհարկե, Ասորեստանը:

1970-ական թվականներին արտաքին գործոնին ավելացավ նաև Խաթթիում մ.թ.ա. XIII դարի վերջերին եգիպտական աղբյուրների կողմից հիշատակվող սովը:<sup>401</sup> Ստորև ներկայացնենք Խաթթիի անկմանն առնչվող տեղեկությունները:

Խաթթիի անկման արտաքին գործոնի օգտին առկա են որոշ՝ առաջին հայացքից անվիճելի թվացող փաստեր:

Ուգարիտի վերջին արքա Ամմուրապիի նամակից<sup>402</sup> պարզվում է, որ նրա ողջ նավատորմը ուղարկվել էր Լուկկա՝ խեթական ար-

<sup>401</sup> Աղբյուրների քննարկումը տես Klengel 1974:

<sup>402</sup> RS 20.238 (հրատ.՝ Lehmann 1970: 54).

քային օգնելու և որ հակառակորդի 7 նավեր (տեքստում չի նշվում դրանց պատկանելությունը) սպառնում են քաղաքին: Իսկ դրանից քիչ անց Ամմուրապիին առաքված նամակում հիշատակվում է ուգարիտյան նավատորմի ոչնչացման մասին:<sup>403</sup>

Վերոհիշյալ նամակների համադրումը Սուպպիլուլիումասի տեքստերի հետ թույլ է տալիս ենթադրելու, որ Լուկկայից մինչև Ուգարիտ ընկած շրջանում, ներառյալ Կիպրոս կղզին, խեթերը գործ ունեին մի հակառակորդի հետ, որը հիմնականում գործում էր ծովում և կարողացել էր ոչնչացնել ուգարիտյան նավատորմը, ինչի հետևանքով քաղաքն անպաշտպան էր մնացել: Անկասկած, այստեղ հնարավոր է նշմարել այսպես կոչված “ծովի ժողովուրդների” ներկայությունը, որոնք այս իրադարձությունների շրջանում՝ մ.թ.ա. 1208թ. վկայված են եգիպտական փարավոն Մերենպտահի արձանագրության մեջ որպես արևմուտքից՝ Լիբիայի կողմից դեպի Եգիպտոս շարժվող հակառակորդ:<sup>404</sup> Այսինքն, խեթական արքայի վերոհիշյալ արշավանքները կարելի է մեկնաբանել որպես Փոքր Ասիայի առափնյա շրջաններ մուտք գործել ցանկացող “ծովի ժողովուրդների” խմբերի նկատմամբ խեթական արքայի կանխարգելիչ միջոցառումներ, որոնց նպատակն էր խոչընդոտել վերջիններիս հաստատվելու Տերության տարածքում: Սպառնալիքի լրջության օգտին է վկայում այն, որ Կիպրոսը նվաճելիս խեթերը մղել էին երեք ծովային և մեկ ցամաքային ճակատամարտ:

Միննույն ժամանակ կան տեղեկություններ այն մասին, որ ոչ պակաս լարված էր իրավիճակը հենց բուն Կենտրոնական Փոքր Ասիայում, այն է՝ Խաթթիի բնօրրանում: Երկրում սկսվել էին ապստամբություններ, ավերվում և թալանվում էին նույնիսկ տաճարապատկան հողերը:<sup>405</sup> Տեքստերից մեկում ասվում է, որ Խաթթիի ժողովուրդը այլևս հաշվի չի նստում մահացած արքաների հոգիներին նվիրված տաճարի կավվածքների անձեռնմխելիության իրավունքի

---

<sup>403</sup> RS 20.18. Նամակի հեղինակը ոմն Էշուվարան է, թերևս, Ալասիայի խեթական կառավարիչը (Lehmann 1970: 59).

<sup>404</sup> Breasted 1906: 238-264; Lehmann 1970: 63-64.

<sup>405</sup> Օրինակ, ABoT 56-ում (= CTH 256)(տես Singer 1985: 120):

հետ: Խաթթիում տիրող խառնակ իրավիճակը կարող էր որոշակիորեն կապված լինել տևական երաշտի հետ, որը ստիպում էր խեթերին Եգիպտոսից հացահատիկ ներմուծել:<sup>406</sup>

Այսպիսի ծայրահեղ վտանգավոր իրավիճակում, մ.թ.ա. XII դարի սկզբներին Խեթական տերությունը հեռացավ պատմության ապարեզից, ինչի վկայությունը խեթական գրավոր ավանդույթի ընդհատումն էր և մայրաքաղաք Խաթթուսասի ու Կենտրոնական Փոքր Ասիայի մի շարք քաղաքներում տեղ գտած ավերածությունները և ապաքնակեցումը:

Մակայն վերջին երեք տասնամյակներում կուտակված սկզբնաղբյուրների, հատկապես խեթական մի շարք հնավայրերի հնագիտական ուսումնասիրությունների լույսի ներքո վերոհիշյալ իրադարձությունը մասնագետները հակված են համարելու ոչ թե օտար նվաճման հետևանք, այլ ներքին բազմերանգ զարգացումների արդյունք, որը զգալիորեն խթանվել էր առաջավորասիական ճգնաժամն ուղեկցող երևույթների (էթնիկական տեղաշարժեր, ապաքնակեցում, գերբնակեցում և այլն) ազդեցության հետևանքով: Մասնավորապես, ներկայումս գերիշխում է Խաթթիի “տրոհման” տեսությունը իր մի շարք տարբերակներով:<sup>407</sup> Խաթթիի անկման խնդրի ուսումնասիրությունը առաջավորասիական ճգնաժամի փուլում ինչպես Փոքր Ասիայում, այնպես էլ Էգեյան ծովի ավազանում և այլուր վկայված համանման իրողությունների հետ համադրման լույսի տակ թույլ է տալիս ենթադրելու ոչ թե պետականության ավարտ արտաքին ուժերի վճռական միջամտությամբ, այլ տրոհում բաղկացուցիչ մասերի: Մի իրավիճակ, որի լավագույն ապացույցը արդեն մ.թ.ա. XII դարում Փոքր Ասիայում և հարակից շրջաններում Խեթական տերության քաղաքական-մշակութային ժառանգորդ հանդիսացող, սակայն տարածքով շատ ավելի փոքր պետությունների առկա-

---

<sup>406</sup> Երաշտի և դրա պատճառով Եգիպտոսից ներմուծվող հացահատիկի առաքման մասին տես Klengel 1974:

<sup>407</sup> Bittel 1976; Otten 1976; 1983; Mellaart 1984: 71-72; Singer 1985: 120-123; Helck 1987; Hoffner, 1992: 51; Güterbock 1992b; Yakar 1993: 20-22; Քոսյան 1991; 1994թ; 1996; 1997; 1999 (համապատասխան բաժինները):

յութունն է Հյուսիսային Սիրիայում (Կարգամիս), Արևելյան Փոքր Ասիայում (Մելիդ-Մալաթիա) և այլն:<sup>408</sup> Ընդ որում Կարգամիսում շարունակում էին կառավարել դեռևս Սուպպիլուլիումաս I-ի կողմից ստեղծված քույր-թագավորության խեթական արքայատոհմի ուղղակի ժառանգները:<sup>409</sup>

Անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի ընթացք կարող էր ունենալ Խեթական տերության տրոհումը, պարզ է որ իշխող արքայատոհմը ի դեմս իր մի ճյուղի շարունակել էր կառավարել Տերության հարավում և արևելքում՝ Կարգամիսի «Մեծ արքայի» գերակայությամբ: *Լիդարիոյուք* հնավայրից հայտնաբերված հիերոգլիֆային կնիքի<sup>410</sup> վրա հիշատակվում է Կարգամիսի արքա Կուցի-Թեշուբը՝ արքա Տալմի-Թեշուբի որդին, ով հայտնի է խեթական վերջին տեքստերից որպես Սուպպիլուլիումաս II-ի ժամանակակիցը: Ավելին, ետիեթական շրջանի Մալաթիայի շրջանից հայտնաբերված չորս հիերոգլիֆային արձանագրություններում պահպանված արքայանուններից պարզ է դառնում, որ վերոհիշյալ Կուցի-Թեշուբի առնվազն երկու թոռներն իշխել են Մելիդի թագավորությունում մ.թ.ա. XII երկրորդ կեսին, այսինքն Խաթթիի տրոհումից շուրջ կես դար անց (Ռունտիյաս և Առնուվանտիս): Սա կարող է նշանակել, որ Խաթթիի անկումը չի կարելի մեկնաբանել որպես Տերության հիմնավոր ավերում արտաքին և ներքին ուժերի ազդեցության տակ:

Խաթթիի անկման գործընթացի մեկնաբանությունը պետք է հենվի երկու կարևոր չափանիշների պարզաբանման վրա, որոնք վճռական դեր պետք է ունենային այս խոշոր, բազմակառույց տերության ավարտական փուլի գնահատման հարցում՝ 1. Պետության միջուկը անկումից հետո, 2. Քաղաքական ավանդույթների շարունակականության կամ դրա բացակայության խնդիրը:

---

<sup>408</sup> Փոքր Ասիայում և Հյուսիսային Սիրիայում ետիեթական դարաշրջանում ձևավորված և ընդհուպ մինչև մ.թ.ա. VIII դարի վերջերը - VII դարի սկզբները գոյատևած այսպես կոչված "ուշխեթական պետությունների" մասին տես Hawkins 1982; 1995b; Косян 1994; Jasink 1995; Քոսյան 1999: 142-145; 2013: 201-212, 213-215; 1999բ; Giusfredi 2008; Bryce 2012 և այլն:

<sup>409</sup> Այդ մասին տես Hawkins 1988: 99-102.

<sup>410</sup> Sørenhagen 1986.

Այս հարցում վճռական դեր ունեն Հալիսի ոլորանի ներսում գտնվող խեթական մի շարք քաղաքների տարածքում իրականացված հնագիտական ուսումնասիրությունների արդյունքները:<sup>411</sup> Այդ ուսումնասիրությունների շնորհիվ մասնագետները եկել են հետևյալ եզրակացության:

Առաջին հերթին անհրաժեշտ է նշել, որ Խաթթուսասի պեղումները թույլ են տալիս ենթադրելու, որ բացակայում են քաղաքի պաշարման և նվաճման, ինչպես նաև դրա խոշոր կառույցների (արքայական պալատ, հիմնական տաճարներ) ավերման մասին վկայող ապացույցներ:<sup>412</sup> Ավելին, ենթադրվում է նույնիսկ, որ մայրաքաղաքի բնակչությունը կենսամիջոցների բացակայության պատճառով կարող էր ապստամբել և կամավոր կերպով լքել այն: Արդյոք հենց այս իրադարձությունների համատեքստում կարող էր ավարտվել Սուլպիլուիլումաս II-ի կառավարումը, ներկայումս հնարավոր չէ պարզել:

Խաթթիի բնօրրանը, ներառյալ մայրաքաղաք Խաթթուսասը, մոտավորապես 1200թ. հետո իրենից ներկայացնում էր պետականագուրկ տարածք, ինչը վկայում է քաղաքական վակուումի առկայության օգտին: Բոլոր երբեմնի հայտնի քաղաքային կենտրոնների տարածքում վկայված է կամ բնակչության բացակայություն կամ պարզունակ հասարակության գոյություն: Ավելի քան հավանական է, որ Խաթթուսասի կենտրոնական վարչակազմի վերացումը կամ տեղաշարժը դեպի Տերության ինչ-որ մի շրջան<sup>413</sup> կարող էր թողնել տեղում մնացած բնակչությանը իր սեփական հայեցողությանը: Խաթթիի անկումից հետո նրա մայրաքաղաքի մի հատվածում հնագիտորեն վկայված է պարզունակ կենցաղավարմամբ բնութագրվող մի փոքր բնակավայր, որը նույնիսկ ամրություններ չունեի:<sup>414</sup>

---

<sup>411</sup> Yakar 1993; 2003; Seeher 2000; Genz 2003; 2005; 2011; 147; Kealhofer, Grave, Genz and Marsh 2009 և այլն:

<sup>412</sup> Seeher 1998; 2001; De Martino 2009 և այլն.

<sup>413</sup> Առաջարկվել է Խաթթուսասի լքումը բացատրել արքայատոհմի և արքունիքի՝ մայրաքաղաքից ավելի ապահով վայր տեղափոխվելու ցանկությամբ (Seeher 2001; De Martino 2009 և այլն):

<sup>414</sup> Genz 2003: 179; Seeher 2010.

